



**ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԾԻԱԿԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՄՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՏԱՆՈՒՄ**



Ուսումնասիրությունը պատրաստվել և հրատարակվել է Համագործակցության զարգացման միջեկեղեցական կազմակերպության (ICCO) աջակցությամբ:

Զեկույցը կազմեցին և խմբագրեցին՝

Արթուր Սաքունց
Արմինե Սաղիկյան

Լուսանկարները՝

Արմինե Սաղիկյանի

Համակարգչային ձևավորումը՝

Արմեն Օսիպովի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 4
- 2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5
- 3. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 11
 - Ազգային իրավական նորմեր և ռազմավարական փաստաթղթեր 11
 - Միջազգային փաստաթղթեր և նորմեր 17
- 4. ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ 20
- 5. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ 22
 - ՀՀ պաշտպանական բյուջեի փոփոխության մոնիթորինգի հնարավորությունը 27
 - ՀՀ պաշտպանական բյուջեի վերլուծությունը՝ ըստ զինծառայողների աշխատավարձերի և նրանց սոցիալական խնդիրների լուծման նպատակով հատկացված միջոցների (լրատվական միջոցներով հրապարակված տվյալների հիման վրա) 31
 - Սպառազինությունների ձեռքբերման նպատակով պաշտպանական բյուջեի ծախսերի գնահատումը 34
- 6. ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 37
 - Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները գորակոչի ու զինծառայության անցնելու ընթացքում 37
 - Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները զինծառայության ընթացքում 41
- 7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 46
- 8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 47
- 9. ՎԵՆԵԼԻՆ ԳԵՐՈՂԻՆ, Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի անվտանգության և պաշտպանության կառավարման կենտրոնի ներկայացուցիչ, դոկտոր, փոխգնդապետ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 48
- 10. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 158

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

| | |
|------------|--|
| ԱԺ | - Ազգային ժողով |
| ԱՊՀ | - Անկախ պետությունների համագործակցություն |
| ԲՍՓ | - Բժշկասոցիալական փորձաքննություն |
| ԵԱՀԿ | - Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն |
| ԺՀՄԻԳ | - Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ |
| ԵԽ | - Եվրոպայի խորհուրդ |
| ԵԽԽՎ | - Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով |
| ԶՈՒ | - Զինված ուժեր |
| ՀԿ | - Հասարակական կազմակերպություն |
| ՀՀ | - Հայաստանի Հանրապետություն |
| ՀԲԱ | - Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա |
| ՆԱՏՕ | - Հյուսիսատլանտյան դաշինք |
| ՊՆ | - Պաշտպանության նախարարություն |
| ICCO/Inter | church Organization for Development Cooperation - Զարգացման համագործակցության միջեկեղեցական կազմակերպություն |

ՆԵՐՎԾՈՒԹՅՈՒՆ

Յելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի գործունեության կարևոր ուղղություններից է աջակցությունը դարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորմանը, որին հասնելու ուղիներից մեկը կոնֆլիկտից տուժածների՝ անհայտ կորածների, նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների շահերի և իրավունքների պաշտպանությունն է, հասարակության իրազեկվածության բարձրացումը կոնֆլիկտից տուժածների իրավունքների և խնդիրների վերաբերյալ:

Կոնֆլիկտի խաղաղ կարգավորման կարևոր միջոց է հանդիսանում հակամարտող կողմերի զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական, քաղաքացիական և հասարակական վերահսկողության ձևավորումը, որը կարող է նվազեցնել հակամարտող երկրներում ռազմականացման աճը:

2001 թվականից ՀՀ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվել են մի շարք ծրագրեր դարաբաղյան պատերազմից տուժածների՝ անհայտ կորածների, նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների իրավունքների ու շահերի պաշտպանության ուղղությամբ¹:

Նշված ծրագրերի շրջանակներում ուսումնասիրվել են դարաբաղյան պատերազմում անհայտ կորածների անհետանալու հանգամանքները, նրանց ընտանիքների սոցիալական ապահովության, առողջապահական, իրավական և այլ խնդիրները, մշակվել է «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը դեռևս 2005 թ-ին շրջանառության մեջ էր դրվել ՀՀ ԱԺ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի կողմից²: ՀՀ Վանաձորի գրասենյակի նախաձեռնությամբ և Նիդերլանդական «Միջեկեդեցական խաղաղության խորհուրդ» կազմակերպության աջակցությամբ կազմակերպվել են Անհայտ կորածների միջազգային օրվան նվիրված մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին հասարակության իրազեկման բարձրացմանը անհայտ կորածների և նրանց ընտանիքների խնդիրների վերաբերյալ³:

ՀՀ Վանաձորի գրասենյակը կարևոր համագործակցություն է ձևավորել Հարավային Կովկասում տարբեր կոնֆլիկտների հետևանքով անհայտ կորածների խնդիրներով զբաղվող այլ ՀԿ-ների հետ (վրացական «Մոլոդինի»/«Սպասում» կազմակերպությունը, ՀՀ Ադրբեջանի կոմիտեն, ՀՀ Վրաստանի կոմիտեն, Լեռնային Ղարաբաղի «Յելսինկյան Նախաձեռնություն-92» կազմակերպությունը, ՀՀ Գյանջայի գրասենյակը): Հարավային կովկասում անհայտ կորածների խնդիրը բարձրացվել է ԵԽ-ում, որին անդամագրվելու հետ կապված և՛ Հայաստանը, և՛ Ադրբեջանը պարտավորվել են Լեռնային Ղարաբաղի խնդիրը լուծել միայն խաղաղ ճանապարհով⁴:

Հարավային կովկասում անհայտ կորածների խնդիրների վերաբերյալ 2006 թ-ին ընդունվել է ԵԽ **1797 (2007)** հանձնարարականը⁵ ԵԽԽՎ Հարավային Կովկասի երկրների անհայտ

¹ <http://www.yellowtulips.hcav.am/vanadzor.htm>
[http://www.hcav.am/attachments/_d8e56_geneva\[1\].pdf](http://www.hcav.am/attachments/_d8e56_geneva[1].pdf)
http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2006-12-02/article_597/page.html
http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2007-06-22/article_1069/Public_Action_For_Refugee_Day.html
http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2006-11-28/article_581/The_Problems_of_Missing_Persons_in_South_Caucasus.html
² http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2007-07-24/article_1121/On_the_necessity_of_adopting_the_bill_On_Missing_Persons.html
³ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2006-08-30/article_381/August_30_is_the_International_Day_of_Missing_Persons.html
http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2007-08-30/article_1173/Unaccounted.html
http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2009-08-28/article_3209/page.html
⁴ http://coe.am/index.php?cat_id=35
⁵ <http://www.assembly.coe.int/Mainf.asp?link=/Documents/AdoptedText/ta07/EREC1797.htm>
http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2006-06-12/article_177/Report_on_the_Missing_in_South_Caucasus_to_Be_Presented_at_PACE_Winter_Session.html
<http://www.panarmenian.net/arm/world/news/19224/>

կորածների հարցերով զեկուցող Լեո Պլատվոետի զեկույցի⁶ հիման վրա, որում նշվում էր անհայտ կորածների իրավական կարգավիճակի հստակեցման ուղղությամբ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի նախագծի նախաձեռնությունը՝ որպես Հայաստանում գործող հանձնաժողովի դերի և գործունեության և նրա Աշխատանքային խմբի վերաբերյալ հետագա առաջարկությունների համար լավ սկիզբ: Ձեկուցողը առաջարկում է իշխանություններին քննարկելու այդ նախագիծը:

2007 թ-ին Քառույթերփարթ ինթերնեշնլ կազմակերպության աջակցությամբ իրականացված «Նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների շահերի և իրավունքների պաշտպանության և հասարակության մեջ նրանց ինտեգրման նպաստումը» ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել է Հայաստանում նախկին ռազմագերիների առողջական, սոցիալական, հոգեբանական, աշխատանքային և այլ խնդիրները, մշակվել են մի շարք առաջարկություններ և ներկայացվել համապատասխան պետական մարմիններին⁷:

Կոնֆլիկտից տուժածների իրավունքների պաշտպանության ուղղությամբ իրականացված կարևոր քայլերից մեկը հանդիսացել է Հայաստանում Բրիտանիայի դեսպանատան աջակցությամբ 2008 թ-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից «Երիտասարդ խաղաղասերների բրիգադի ձևավորում» ծրագրի իրականացումը, որի շրջանակներում մասնակից երիտասարդներին ուսուցանվել է կոնֆլիկտից տուժածների խնդիրների ուսումնասիրման հմտություններ և կարողություններ, որոնց միջոցով նրանք հնարավորություն ունեցան ուսումնասիրել Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտից տուժածների խնդիրները, մշակել առաջարկություններ և ներկայացնել Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի կառավարություններին և պատգամավորներին⁸:

2006-2010 թթ-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ռազմավարության⁹ կարևոր ուղղություն ձևակերպվեց զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական, քաղաքացիական և հասարակական վերահսկողության մեխանիզմների ձևավորման, իրականացման ու զարգացման աջակցությունը:

2008 թ-ին ռազմավարության շրջանակներում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը Բաց հասարակության ինստիտուտի աջակցության հիմնադրամի Հայաստանի և Բուդապեշտի գրասենյակների ֆինանսական աջակցությամբ իրականացրել է «Քաղաքացիական վերահսկողության ձևավորումը զորակոչի գործընթացի նկատմամբ» ծրագիրը, որն ուղղված էր ՀՀ Լոռու մարզում զորակոչի գործընթացի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների մշակմանը և ներդրմանը, զորակոչի ընթացքում իրավախախտումների բացահայտմանը և զորակոչիկների իրավունքների վերաբերյալ քաղաքացիների իրազեկման մակարդակի բարձրացմանը: Ծրագրի շրջանակներում ոչ միայն իրավական խորհրդատվություն է տրամադրվել զորակոչիկներին ու նրանց հարազատներին, այլև մշակվել են առաջարկություններ, որոնք հասցեագրվել են ՀՀ պաշտպանության նախարարությանը¹⁰:

2009 թ-ին ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի,

<http://www.a1plus.am/am/society/2006/05/4/15135>

<http://assembly.coe.int/ASP/APFeaturesManager/defaultArtSiteView.asp?ID=470>

⁶ <http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/WorkingDocs/Doc07/EDOC11196.htm>

⁷ [http://www.hcav.am/attachments_/79c44_pow\[1\].pdf](http://www.hcav.am/attachments_/79c44_pow[1].pdf)

⁸ http://www.hcav.am/attachments_/7167f_youth_main_arm.pdf

⁹ http://www.hcav.am/Downloads/strategy_arm.pdf

¹⁰ [http://www.hcav.am/attachments_/5f854_zekuyc_zorakoch_2008\[1\].pdf](http://www.hcav.am/attachments_/5f854_zekuyc_zorakoch_2008[1].pdf)

«Պրոակտիվ հասարակություն» և «Զինվորի մայր» ՀԿ-ների կողմից իրականացվել է «Հայաստանում գորակոչի գործընթացի մոնիթորինգ» ծրագիրը: Ծրագրի արդյունքները համատև գեկույցի միջոցով 2010 թ-ի ապրիլի 22-ին ներկայացվել է ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Հասարակական վերահսկողությունը զինված ուժերի համալրման նկատմամբ» թեմայով ընդլայնված աշխատանքային քննարկմանը, որը նաև լայնորեն լուսաբանվել է ՋԼՄ-ներով¹¹:

2006-2007 թթ. ՀԲԱ Վանաձորի գրասենյակի կողմից մշակվել է «ՀՀ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ձևավորումը ծրագիրը», որի նպատակն էր բարձրացնել ՀԿ-ների փորձագետների կարողությունները զինված ուժերի հասարակական վերահսկողության բնագավառում: Ծրագրով նախատեսվում էր լուծել հետևյալ խնդիրները.

- Հայաստանի Հանրապետության զինված ուժերում մարդու իրավունքների, հատկապես մահացության դեպքերի վիճակագրության ձևավորում և դրանց բացահայտման ուղղությամբ քննության արդյունավետության բարձրացումը
- պաշտպանության բնագավառի թափանցիկությանը և հաշվետվողականության մակարդակի բարձրացումը
- միջազգային պարտավորությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի բարեփոխումների կատարման նկատմամբ հասարակական վերահսկողության ձևավորումը:

Ծրագիրն իրականացվել է նիդերլանդական Զարգացման համագործակցության միջեկեղեցական կազմակերպության (ICCO) աջակցությամբ: Ծրագրի շրջանակներում ձևավորվել է աշխատանքային խումբ¹² տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավմամբ:

¹¹ http://www.hcav.am/attachments_/2df5c_zorakochi_zequyc.pdf
http://parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=22&month=04&year=2010&NewsID=3893&lang=arm
¹² ՀԲԱ Վանաձորի գրասենյակ, Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Համայնքների ֆինանսիստների միություն, Հելսինկյան Ասոցիացիա, Համագործակցություն հանուն ժողովրդավարության, Լրագրողներ հանուն մարդու իրավունքների

Աշխատանքային խմբի համար կազմակերպվել է դասընթաց, որի համար որպես ուսուցանող ներգրավվել է Ժողովրդավարական վերահսկողության ժնկյան կենտրոնի ներկայացուցիչ, Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի անվտանգության և պաշտպանության կառավարման կենտրոնի ներկայացուցիչ, դոկտոր, փոխգնդապետ Վենելին Գեորգիևը:

Զեկույցում հավելվածի տեսքով ներկայացված են նրա կողմից դասընթացի ժամանակ տրամադրված նյութերը հայերեն թարգմանությամբ (տես էջ 48-157):

Աշխատանքային խումբը բաժանվել է տարբեր խմբերի, որոնց կողմից կատարվել են հետևյալ բնագավառների ուսումնասիրությունները. Հայաստանի Հանրապետության ՊՆ հանրային իրազեկման հայեցակարգի ուսումնասիրություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանական բյուջեի փոփոխությունների վերլուծություն՝ ըստ աշխատակազմի և պետական գնումների:

Ներկայացվող գեկույցում ամփոփված են նշված խնդիրների ուղղությամբ ուսումնասիրության արդյունքները:

Նկատի ունենանք, որ նման ուսումնասիրություն և ծրագիր առաջին անգամ է իրականացվել, և քաղաքացիական հասարակության ինստիտուտները շատ քիչ փորձ ունեն զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության բնագավառում:

Որպես ուսումնասիրությունների համար անհրաժեշտ տեղեկատվության աղբյուր հանդիսացել են զանգվածային լրատվական միջոցների հրապարակումները, ինչպես նաև մասնագիտական պարբերականներում տարբեր վերլուծական կենտրոնների, վերլուծաբանների կողմից հրատարակված ուսումնասիրությունները: Առանձին հարցերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կազմակերպության կողմից, համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի, տեղեկատվության հարցումներ են ուղարկվել ՀՀ պաշտպանության նախարարությանը¹³:

¹³ www.lragir.am, www.azatutyun.am, www.a1plus.am, www.hrarak.am, www.1in.am, www.zhamanak.com, www.hzh.am, www.aravot.am, www.tert.am, www.tesankyun.am, www.hcav.am, www.mil.am, www.aravot.am, www.news.am

Ծրագրի շրջանակներում կազմվել է 2010-2011 թթ. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում մահացության դեպքերի վիճակագրությունը, մահացության դեպքերի հանգամանքների նկարագրությունները, դրանց բացահայտման վերաբերյալ քննության ընթացքը¹⁴:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերում 2010 թ-ի մահացության դեպքերի ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմված տեղեկանքը ներկայացվել է Բաց հասարակության հիմնադրամների և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից 2011 թ-ի փետրվարի 22-ին կազմակերպված կլոր սեղանի ընթացքում, որին մասնակցում էին ՀՀ ՊՆ, ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներ, միջազգային և տեղական փորձագետներ, ՀԿ ներկայացուցիչներ¹⁵:

Ուսումնասիրությունների իրականացման ընթացքում կարևոր նշանակություն են ունեցել խորհրդատվությունները ռազմական տարբեր մասնագետների և փորձագետների հետ:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի նկատմամբ հասարակական հետաքրքրությունը և իրազեկման մակարդակը ավելի բարձրացավ 2011 թ-ին, որն արտահայտվեց ոչ միայն զանգվածային լրատվական միջոցներով առանձին փաստերի վերաբերյալ հրապարակումներով, վերլուծություններով, այլև տարբեր փորձագետների տարաբնույթ կարծիքներով և գնահատականներով:

2011 թ-ի օգոստոսի 26-ին դաժանորեն սպանվեց զինծառայող Ադասի Աբրահամյանը, որի մահվան փաստը մեծ և բուռն արձագանք ստացավ հասարակության շրջանում և սոցիալական ցանցերում, իսկ 2011 թ-ի սեպտեմբերի սկզբին ձևավորվեց «Բանակն իրականում» հասարակական նախաձեռնող խումբը: Նախաձեռնության կողմից կազմակերպվեցին տարբեր հասարակական միջոցառումներ (երթեր, բողոքի ցույցեր, կլոր սեղան, մամլո ասուլիսներ) տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, քաղաքացիների, քաղաքացիական ակտիվիստների մասնակցությամբ, որոնք ուղղված էին մահացության դեպքերի ոչ պատշաճ քննության, ՀՀ պաշտպանության նախարարության ղեկավարության և իրավապահ մարմինների կողմից դրսևորվող ոչ պատշաճ վերաբերմունքի դեմ¹⁶:

¹⁴ Հավելված 5 և 6

¹⁵ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2011-02-22/article_3960/Report_During_2010_42_death_cases_occurred_in_the_Armenian_Army.html
<http://www.azatutyun.am/content/article/2317209.html>

¹⁶ <http://organize-now.am/am/%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%B1%D5%A5%D5%BC%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/%C2%AB%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B6-%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4%C2%BB-%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B6%D5%A1%D5%AD/>

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազգային իրավական նորմեր և ռազմավարական փաստաթղթեր

Հայաստանի Հանրապետության **Սահմանադրության**¹⁷ **8.2-րդ հոդվածի** համաձայն՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո:

Հայաստանի Հանրապետության **Սահմանադրության 46-րդ հոդվածի** համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:

«**Պաշտպանության մասին**» **ՀՀ օրենքի**¹⁸ **4-րդ հոդվածի 1-ին մասի** համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը կազմակերպվում և իրականացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության և քաղաքացիների ընդգրկվածության, օրինականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունները հարգելու, զինված ուժերի գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա:

Սրանք այն իրավական նորմերն են, որոնցով ամրագրվում է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը:

Քաղաքացիական վերահսկողության իրականացման ինստիտուտներից է մարդու իրավունքների պաշտպանը (օմբուդսմենը):

«**Մարդու իրավունքների պաշտպանի մասին**» **ՀՀ օրենքի**¹⁹ **հոդված 8-ի և 12-ի** համաձայն՝ Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչն իրավունք ունի իր նախաձեռնությամբ անարգել այցելել զորամիավորումներ, ձերբակալման վայրեր, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներ:

Քաղաքացիական վերահսկողության իրականացման մյուս ինստիտուտը **ՀՀ պաշտպանության նախարարի 2009 թ. օգոստոսի 7-ի N 862 հրամանով ստեղծված ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդն է**: Խորհրդի կանոնադրության 1.3 կետի համաձայն՝ Խորհուրդը կոչված է պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության ձևավորման և իրականացման գործում հասարակական մասնակցության և վերահսկողության ապահովմանը՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության բարձրացման, իսկ կանոնադրության 2.2 կետի համաձայն՝ հասարակական խորհրդի նպատակների և խնդիրների շարքին է դասվում զինված ուժերում հասարակական վերահսկողության ընդլայնումը, վերահսկողական գործուն մեխանիզմների ներդրումը:

Այնուամենայնիվ, հասարակական խորհուրդը չի կարող հանդիսանալ ՀՀ զինված ուժերի նկատմամբ անկախ վերահսկողական մարմին՝ հաշվի առնելով այն փաստը, որ հասարակական խորհրդի նախագահը միևնույն ժամանակ հանդիսանում է պաշտպանության նախարարի խորհրդակալը:

¹⁷ <http://www.parliament.am/parliament.php?id=constitution>
¹⁸ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=3420&lang=arm>
¹⁹ <http://www.arlis.am/>

Հասարակական վերահսկողության իրականացման իրավական մեխանիզմ է հանդիսանում **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը²⁰, որի 7-րդ հոդվածի** համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող տեղեկատվություն, որը մասնավորապես վերաբերում է տեղեկատվությունը տնօրինողի բյուջեին, գրավոր հարցումների ձևերին, և դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումներին, հաստիքացուցակներին, ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալներին, այդ թվում՝ մերժման հիմքերին և այլն:

Մինևույն ժամանակ, **«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով²¹** սահմանվում են տեղեկատվության ազատության սահմանափակումները: Մասնավորապես, նշված **օրենքի 4-րդ, 8-րդ, 12-րդ և 19-րդ հոդվածներով** սահմանվում են պետական և ծառայողական գաղտնիքներ պարունակող բնագավառները, ինչպես նաև գաղտնի տեղեկությունների ցանկի սահմանման ընթացակարգերը: **ՀՀ կառավարության 19.08.1997 թ. N 350 որոշմամբ** ՀՀ պաշտպանության նախարարը իրեն վերապահված լիազորությունների սահմաններում գաղտնի հրամանով սահմանում է «ՀՀ պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը», որը **«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի** համաձայն՝ գաղտնագրված է և հրապարակման ենթակա չէ:

2004 թ-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է **«Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը²²**, որով սահմանվում է այլընտրանքային աշխատանքային և զինվորական ծառայության անցնելու քաղաքացիների իրավունքը: Ի դեպ, չնայած միջազգային և տեղական փորձագետների կարծիքներին, որ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը չի համապատասխանում միջազգային նվազագույն չափանիշներին (ծառայության տևողությունը, ծառայության վերահսկողությունը քաղաքացիական ինստիտուտների կողմից, այլընտրանքային աշխատանքային ծառայությունը և այլն), այնուամենայնիվ օրենքում համապատասխան փոփոխություններ չեն կատարվել, և այն մնում է դեռևս անկիրառելի:

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում²³ սահմանված են, անկախ ծառայության տեսակից (պարտադիր ժամկետային զինծառայողներ, սպաներ), հանգստի, նյութական ապահովության, աշխատանքային երաշխիքների, արձակուրդի, առողջապահական և այլ իրավունքները:

Զինված ուժեր-քաղաքացիներ հարաբերությունների կարգավորման է վերաբերում **«Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքը²⁴**, որով կարգավորվում է զինվորական ծառայության անցնելու ընթացակարգերը, ծառայողական առաջխաղացման և որակավորման սկզբունքները, ծառայության տեսակներն ըստ պաշտոնների ու կոչումների և այլն:

Հետաքրքիր է, որ զինծառայողների սոցիալական իրավունքներին վերաբերող շատ իրավական նորմեր ամրագրված են ոչ միայն նշված օրենքում, այլև **«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում:**

Հայաստանի Հանրապետությունում պարտադիր զինվորական ծառայության ինստիտու-

²⁰ <http://www.arlis.am/>

²¹ տե՛ս նույն աղբյուրը

²² տե՛ս նույն աղբյուրը

²³ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1317&lang=arm>

²⁴ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1317&lang=arm>

տը կարգավորվում է «**Զինապարտության մասին» ԶԶ օրենքով**²⁵: Օրենքով սահմանվում են պարտադիր զինվորական ծառայության անցնելու պայմանները, պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման հիմքերը, մինչ ծառայության անցնելը կցագրման գործընթացները: Ի դեպ, առողջական խնդիրների դեպքում պարտադիր զինվորական ծառայության անցնելու պիտանիության վերաբերյալ **ԶԶ պաշտպանության նախարարի 2010 թ-ի 175 հրամանով**²⁶ սահմանված է հիվանդությունների ցանկը, ռազմաբժշկական հանձնաժողովների գործունեության կարգը, որով ղեկավարվում են զորակոչային հանձնաժողովները զորակոչի կազմակերպման ընթացքում: Պետք է նշել, որ պարտադիր զինվորական ծառայությունից առանձին դեպքերում, որոնք հստակեցված չեն օրենքով, տարկետման տրամադրման իրավունք է վերապահված անմիջականորեն ԶԶ կառավարությանը (**«Զինապարտության մասին» ԶԶ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետ**), որը սովորաբար կիրառվում է Հայ առաքելական եկեղեցու սպասավորների և արտասահմանում ուսումնառություն ստացող քաղաքացիների նկատմամբ: Նման տարբերակված մոտեցումը, երբ մի դեպքում պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տրամադրվում է ռազմաբժշկական հանձնաժողովի որոշմամբ, իսկ մյուս դեպքում կառավարության որոշմամբ՝ որևէ հիմնավորում և տրամաբանություն չունի:

Զինվորական ծառայության ընթացքում զինվորական կարգապահության ապահովումը կարգավորվում է **ԶԶ կառավարության 12 օգոստոսի 1996 թվականի N 247 որոշմամբ հաստատված «ԶԶ զինված ուժերի կարգապահական կանոնադրությամբ»**²⁷:

2010 թ-ի սեպտեմբերի 7-ին ԶԶ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի կողմից կազմակերպված խորհրդարանական լսումների ժամանակ քննարկվել է «**Հայաստանի Հանրապետության ԶՈՒ կարգապահական կանոնագիրք**» ԶԶ օրենքի նախագիծը²⁸: Քննարկման արդյունքում ներկայացվել են առաջարկություններ և կարծիքներ նախագծի վերաբերյալ: Նախագիծը ուղարկվել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի փորձագիտական կարծիքը ստանալու համար: Նախագծի վերաբերյալ ստացվել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի փորձագիտական եզրակացությունը, որում ներկայացված են նախագծի վերաբերյալ մի շարք մտահոգություններ և առաջարկություններ:

Մասնավորապես, հստակեցված չեն զինծառայողների կողմից դիմումների, բողոքների քննարկման կարգը, չեն մատնանշված այն դատական մարմինները (վարչական, ընդհանուր իրավասության դատարանները), որտեղ զինծառայողները կարող են բողոքարկել հրամանատարների կողմից ընդունված որոշումները կամ կարգադրությունները:

Պաշտպանության բյուջեի նախագծի քննարկման և ընդունման գործընթացները բոլոր երկրներում ունեն գաղտնիության որոշակի աստիճան: ԶԶ Պետական բյուջեում պաշտպանական բյուջեն արտահայտված է միայն մեկ տողով՝ բյուջեից հատկացված ընդհանուր գումարի չափը: Մանրամասն բյուջեն ամբողջովին համարվում է գաղտնիք:

ԶԶ Ազգային ժողովի կանոնակարգի²⁹ **5-րդ հոդվածի 1-ին կետի է) ենթակետի** համաձայն՝ պատգամավորն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ծանոթանալ Ազգային ժողովին և (կամ) հանձնաժողովներին հասցեագրված ցանկացած փաստաթղթի հետ, բացառությամբ անվանական կամ անձնական նյութերի, ինչպես նաև պետական և ծառայողական գաղտնիք կազմող այնպիսի տեղեկատվության, որին իրավասու չէ իրագել լինել:

²⁵ <http://www.arlis.am/>
²⁶ տե՛ս նույն արդյուրը
²⁷ տե՛ս նույն արդյուրը
²⁸ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=4272&Reading=0>
²⁹ <http://www.arlis.am/>

Համաձայն **Սույն օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ կետի**³⁰ Բյուջեի նախագծի պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածներին վերաբերող օրենսդրությամբ նախատեսվող փակ ծրարի նյութերը քննարկվում են ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ դռնփակ նիստում, որին կարող են մասնակցել պատգամավորները, ՀՀ Վերահսկիչ պալատի նախագահը, ինչպես նաև վարչապետի լիազորած անձինք:

Սույն օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածներին վերաբերող փակ ծրարի նյութերը քննարկվում են ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ դռնփակ նիստում, որին կարող են մասնակցել պատգամավորները, ՀՀ Վերահսկիչ պալատի նախագահը և վարչապետի լիազորած անձինք:

Ըստ էության Ազգային ժողովը հաստատում է ամբողջ պետական բյուջեն, սակայն պաշտպանության բյուջեի մանրամասն տողերի քննարկման ժամանակ մասնակցում են միայն համապատասխան իրավասություն ունեցող պատգամավորները:

«**Բյուջետային համակարգի մասին**» **ՀՀ օրենքի**³⁰ **8-րդ հոդվածով** սահմանվում է բյուջեների հրապարակայնության սկզբունքը, համաձայն որի հաստատված բյուջեները և դրանց կատարման մասին հաշվետվությունները պարտադիր պետք է հրապարակվեն լրատվական միջոցներով: Բացի այդ, պարտադիր թափանցիկ պետք է լինեն հասարակության և զանգվածային լրատվության միջոցների համար բյուջեների նախագծերի քննարկման և որոշումների ընդունման գործընթացը: Ըստ **Սույն օրենքի 8-րդ հոդվածի** պետական բյուջեի կազմում կարող են հաստատվել գաղտնի հոդվածներ:

Սույն օրենքի 21-րդ հոդվածի 14-րդ կետը սահմանում է Պետական բյուջեի նախագծի կազմումը. Պետական բյուջեի պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածները, բացված տեսքով, սույն օրենքով սահմանված դասակարգմամբ, ներկայացվում են Ազգային ժողով՝ առանձին փակ ծրարով:

Օրենքի 24-րդ հոդվածով սահմանվում է Պետական բյուջեի կատարման հսկողությունը և վերահսկողությունը, **25-րդ հոդվածով** սահմանված Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մասին դրույթներում որևէ անդրադարձ չկա պաշտպանական բյուջեի կատարման հսկողության, վերահսկողության և տարեկան հաշվետվությանը: Մինևսյն ժամանակ **26-րդ հոդվածում** (պետական բյուջեի հրապարակայնությունը) նշվում է լրատվական միջոցներով պետական բյուջեի մասին օրենքի նախագծի հրապարակման և քննարկման պահանջների մասին, որոնք, սակայն, չեն վերաբերում պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին:

Չնայած Հայաստանի Հանրապետության որևէ իրավական ակտով սահմանված չէ պաշտպանական բյուջեի քննարկման, ընդունման գործընթացը, սակայն **սուվորույթի ուժով** ԱԺ պատգամավորները, որոնք ցանկանում են մասնակցել պաշտպանական բյուջեի քննարկմանը, նախապես պետք է ձեռք բերեն համապատասխան իրավունքը ՀՀ ԱԺ աշխատակազմի հատուկ բաժնում՝ պետական գաղտնիքը չհրապարակելու մասին պարտավորությունը ստանձնելուց հետո:

Ինչպես է կարգավորվում և ինչպես է իրականացվում պաշտպանական բյուջեի նախագծի կազմումը, քննարկումը, հսկողությունը և վերահսկողությունը՝ որևէ իրավական ակտով կարգավորված չէ:

³⁰ <http://www.arlis.am/>

Պաշտպանական բյուջեն հաստատվում է պետական բյուջեի հետ միասին ամբողջությամբ **ՀՀ ԱԺ** կողմից:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության կարևոր մեխանիզմներից է հանդիսանում պաշտպանական բյուջեի ծախսերի նկատմամբ վերահսկողությունը:

«**Վերահսկիչ պալատի մասին**» **ՀՀ օրենքի³¹ 1-ին հոդվածի** համաձայն՝ Վերահսկիչ պալատը բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ արտաքին պետական վերահսկողություն իրականացնող անկախ պետական մարմին է:

Նույն օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ Վերահսկիչ պալատի վերահսկողություն իրականացնող աշխատակիցներն իրավունք ունեն վերահսկողության թեմայի շրջանակներում ծանոթանալու այն բոլոր փաստաթղթերին, որոնք վերաբերում են վերահսկվող օբյեկտի ֆինանսատնտեսական գործունեությանը, բացառությամբ պետական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ պարունակող փաստաթղթերին, որոնց կարող են ծանոթանալ միայն համապատասխան թույլտվություն ունեցող աշխատակիցները:

Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական, քաղաքացիական և հասարակական վերահսկողության վերաբերյալ դրույթներն ամրագրված են **2007 թ. դեկտեմբերի 25-ի ՀՀ Նախագահի ՆՅ-308-Ն հրամանագրով հաստատված Ռազմական դոկտրինում³²**:

Ըստ այս փաստաթղթի, ռազմական դոկտրինի իրավական հիմքերն են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Ռազմական անվտանգության համակարգին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և օրենքները, Ազգային անվտանգության ռազմավարությունը և այլ իրավական ակտեր:

Համաձայն դոկտրինի՝ Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության սպառնալիքները նվազեցնող գործոններ են համարվում տարածաշրջանի կայունության ամրապնդմանը նպաստող՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) և առանձին պետությունների գործունեությունը:

Կարևոր է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունը, ըստ ռազմական դոկտրինի՝ որպես ռազմական անվտանգության սպառնալիքները նվազեցնող գործոններ է դիտարկում մարդու իրավունքները և ժողովրդավարության սկզբունքները, որոնք հանդիսանում են ՄԱԿ-ի, ՆԱՏՕ-ի և ԵԱՀԿ-ի՝ որպես միջազգային կառույցների գործունեության հիմքերը (5-րդ կետ, 4-րդ ենթակետ):

Ռազմական դոկտրինի 9-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ռազմական անվտանգության ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությունը պետության ռազմական անվտանգության համակարգի ձևավորման հիմնական ուղիների թվում կարևորում է զինված ուժերի քաղաքացիական վերահսկման ապահովումը:

Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը դիտարկվում է ժողովրդավարական, իրավական, մարդու և քաղաքացու իրավունքների ապահովման ու պաշտպանության վրա հիմնված պետության կառուցման, սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացման և քաղաքացիական հասարակության կայացման համատեքստում (կետ 10):

Հայաստանի Հանրապետությունը պաշտպանության նախապատրաստմանն ուղղված գործողությունների թվում կարևորվում է հասարակության նախապատրաստումը հանրության և զինված ուժերի միջև կապի ապահովման միջոցով՝ ըստ **ՀՀ պաշտպանության նախարարի**

³¹ <http://www.ariis.am/>
³² <http://www.mil.am/files/mil-doctrine-arm.pdf>

Կողմից 2010 թ-ի դեկտեմբերի 9-ին հաստատված Հանրային իրազեկման հայեցակարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի:

Ռազմական դոկտրինի կարևոր նպատակ է սահմանված ռազմական անվտանգության համակարգի բարեփոխումները, որոնց հիմքում պետք է ընկած լինեն *քաղաքացիական վերահսկման և պաշտպանական պլանավորման ու կառավարման ժողովրդավարական հիմնարար սկզբունքները* (46-րդ կետ):

Դոկտրինի 47-րդ կետի համաձայն՝ Ռազմական անվտանգության համակարգի բարեփոխումները պետք է ապահովեն ռազմական անվտանգության ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործումը, զինված ուժերում օրինականության ամրապնդումը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և օրենքներով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների և ազատությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովման խնդիրներին համապատասխան *այլընտրանքային ծառայության իրավունքի երաշխավորումը*:

Ռազմական դոկտրինով սահմանված են խնդիրներ, որոնց պետք է լուծում տրվի ռազմական անվտանգության համակարգին վերաբերող օրենսդրությամբ և հայեցակարգային փաստաթղթերով (51-րդ կետ): Մասնավորապես, պաշտպանական պլանավորման և բյուջետավորման ոլորտում կարևորվում է. «Ջինված ուժերի քանակական և որակական չափանիշների սահմանման, կարիքների գնահատման, ինչպես նաև այդ խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների պլանավորման *առավել թափանցիկ և արդյունավետ համակարգի ստեղծումը*» (51-րդ կետ, 5-րդ ենթակետ): Ընդ որում, պաշտպանական պլանավորման և բյուջետավորման ոլորտի բարեփոխումը ներառում է նաև ռեսուրսների առավել նպատակային և արդյունավետ օգտագործման ու *քաղաքացիական վերահսկողության եղանակների բարելավում* (51-րդ կետ, 5-րդ ենթակետի դ/ կետ):

Պետք է ուշադրություն դարձնել, որ ռազմական դոկտրինում որպես ռազմական անվտանգության ներքին սպառնալիք է սահմանված Հայաստանի Հանրապետության *Ջինված ուժերի վարկաբեկմանն ուղղված գործողությունները կամ դրանց փորձը* (4-րդ կետ, 4-րդ ենթակետ), որը, ըստ էության, լուրջ հակասության մեջ է **33 Սահմանադրության 27-րդ հոդվածի** հետ («Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»):

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից 2010 թ-ի դեկտեմբերի 9-ին հաստատվել է Հանրային իրազեկման հայեցակարգը³³, որի հիմնական նպատակն է սահմանել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի գործունեության մասին հանրային իրազեկման քաղաքականության իրականացման ուղիներն ու միջոցները, նպաստել պաշտպանության բնագավառի կատարելագործմանն ու արդիականացմանը նպատակաուղղված ծրագրերի, բարեփոխումների վերաբերյալ հանրության տեղեկացվածության աստիճանի բարձրացմանը:

Հայեցակարգով սահմանված են մի շարք խնդիրներ, այդ թվում.

- *պաշտպանական քաղաքականության թափանցիկության ապահովում, հանրությանը հաշվետու լինելու միջոցների կատարելագործում*

³³ <http://www.mil.am/1320692449>

- *զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ընդլայնում*
- *զինծառայողների շրջանում մարդու իրավունքների պաշտպանությանը նպատակաուղղված աշխատանքների բարելավման գործընթաց՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, շահագրգիռ այլ կառույցների և կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրականացմամբ:*

Առաջնահերթությունների թվում կարևորվում է նաև

- հանրության մասնակցության ապահովումը պաշտպանության և անվտանգության ոլորտի ռազմավարական և հայեցակարգային փաստաթղթեր կազմելու և պաշտպանական քաղաքականություն ձևավորելու ծրագրերին
- բանակաշինության արդի պահանջներին համապատասխան կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանը զուգընթաց գորամասային օդակի հանրային իրազեկման գծով սպաների մասնագիտացումը՝ հասարակության հետ տարվող աշխատանքներում այդ սպաների առավել ակտիվ ու արդյունավետ ներգրավվածությունն ապահովելու նպատակով:

Հայեցակարգով սահմանվում են մի շարք գործողություններ, որոնցով նախատեսվում է ընդլայնել համագործակցությունը ՀԿ-ների, ԶԼՄ-ների հետ, կազմակերպել հանրային քննարկումներ, համաժողովներ զինված ուժերում իրականացվող բարեփոխումների ընթացքի, պաշտպանության բնագավառի վերաբերյալ օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ և այլն:

Միջազգային փաստաթղթեր և նորմեր

Միջազգային կազմակերպությունները, որոնց անդամագրված է Հայաստանի Հանրապետությունը, ընդունել են ժողովրդավարական պետություններում զինված ուժերի դերին, կառավարմանը, զինված ուժերում մարդու իրավունքներին, զինված ուժերի քաղաքացիական, հասարակական և ժողովրդավարական վերահսկողության սկզբունքների վերաբերյալ մի շարք փաստաթղթեր:

Ետ կառույցները պարբերաբար անդրադառնում են անդամ պետությունների զինված ուժերում մարդու իրավունքների խնդրին: ԵՆԽՎ-ի և ԵՆ նախարարների կոմիտեի կողմից ընդունվել են մի շարք հանձնարարականներ³⁴, բանաձևեր, որոնցում կարևորվում է անդամ պետությունների զինված ուժերում մահացության դեպքերի պատշաճ քննությանը, անձնակազմի պատրաստմանը, ինչպես նաև որպես անկախ քաղաքացիական ինստիտուտ՝ ռազմական օմբուդսմենի ձևավորմանը և առնչվող հարցերը:

Մասնավորապես, **ԵՆԽՎ-ն «Զինված ուժերի անդամների մարդու իրավունքները» 1742 (2006) հանձնարարականում**³⁵ կարևորում է և ընդգծում հետևյալ հարցերը.

- լիազորել զինված ուժերի ներկայացուցիչներին անդամակցել մասնագիտական միավորումներին կամ արհեստակցական միություններին, որոնք իրավասու են վարձատրության և պայմանների վերաբերյալ հարցեր քննարկել, ստեղծել խորհրդակցական մարմիններ բոլոր մակարդակներում՝ վերոնշյալ մարմինների ներգրավմամբ, որոնք կներկայացնեն անձնակազմի բոլոր տեսակները
- ներդնել քաղաքացիական ինքնավար հաստատություն՝ ի դեմս ռազմական օմբուդսմենի

³⁴ http://www.assembly.coe.int/Mainf.asp?link=/Documents/AdoptedText/ta06/EREC1742.htm#P16_97
<http://assembly.coe.int/Mainf.asp?link=http://assembly.coe.int/Documents/AdoptedText/ta98/erec1380.htm#1>
<http://assembly.coe.int/Mainf.asp?link=/Documents/AdoptedText/ta02/EREC1572.htm>
³⁵ http://www.assembly.coe.int/ASP/Doc/ATListingDetails_E.asp?ATID=10737 (հատվածի թարգմանությունը մեր կողմից)

ինստիտուտի, որը պատասխանատու կլինի զինված ուժերի ներկայացուցիչների հիմնարար իրավունքների խթանման համար, իրավաբանական աջակցություն կտրամադրի զինծառայողներին, նրանցից բողոքներ կստանա իրենց իրավունքների խախտման վերաբերյալ, և որին զինվորական անձնակազմը կարող է դիմել աշխատանքի կամ պարտականությունների կատարման ժամանակ առաջացած հարցերի դեպքում

- վերացնել զինված ուժերի ներկայացուցիչների համար առկա ընտրական իրավունքների սահմանափակումները
- լիազորել զինված ուժերի ներկայացուցիչներին և ռազմական անձնակազմին անդամակցել քաղաքական կուսակցություններին
- ընդունել կամ փոփոխել օրենսդրությունը և սահմանված կանոնակարգերը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիային և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին, այդ թվում՝ ռազմական օրենսգրքերը և ռազմական ներքին կանոնները, որոնք պետք է հստակ ամրագրեն զինված ուժերի անձնակազմի իրավունքներն ու պարտականությունները
- վերացնել Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածների կիրառման հետ կապված բոլոր մնացած վերապահումները
- օրենսդրության մեջ ներդնել խղճի ազատության իրավունքի ապահովումը ցանկացած պահի, մասնավորապես նախքան զինվորական ծառայությունը, դրա ընթացքում և դրանից հետո
- անհրաժեշտության դեպքում անհապաղ միջոցներ ձեռնարկել զինված ուժերում վատ վերաբերմունքի դրսևորումների, ինչպես նաև զինված ուժերում տեղի ունեցող խախտումների վերաբերյալ լռելու պրակտիկայի վերացման համար, որը ծնում է անպատժելիություն
- ապահովել, որպեսզի յուրաքանչյուր խախտման դեպք մանրակրկիտ, բաց և արագ հետաքննության ենթարկվի, և որպեսզի իրավախախտները ենթարկվեն պատասխանատվության:

Ջինված ուժերում մարդու իրավունքների խնդիրներին անդրադարձել է նաև ԵՄ մարդու իրավունքների հանձնակատարը: ԵՄ մարդու իրավունքների հանձնակատարը, 2011 թ-ի հունվարի 18-21-ը Չայաստան կատարած այցելության արդյունքների հիման վրա կազմված իր գեկույցում անդրադառնալով Չայաստանի Չանրապետության զինված ուժերում մարդու իրավունքների վիճակին, իր մտահոգությունն է արտահայտել ՀՀ զինված ուժերում չարաշահումների մասին հաճախակի հաղորդումների վերաբերյալ: Չնայած այն հանգամանքին, որ այդ խնդիրները կարող են այժմ հանրային քննարկման մաս կազմել, և որ իշխանությունները պատրաստակամություն են հայտնել լուծել դրանք, հանձնակատարը շարունակում է խորապես մտահոգված լինել այն տեղեկատվությամբ, որ հատկապես դեպքերի առնչությամբ հետաքննությունները անարդյունավետ են, մեղավորները չեն ենթարկվում պատասխանատվության: Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ, որպեսզի զոհերի հարազատների մոտ նվազի անվստահությունը՝ կապված դեպքերի հետաքննության հետ:

Չանձնակատարը անդրադարձել է նաև «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության ներկայացուցիչների խնդիրներն, որպես խղճի բանտարկյալներ, որոնք չեն ցանկանում անցնել այլընտրանքային ծառայության այն պատճառով, որ այլընտրանքային ծառայությունը գտնվում է ռազմական կառույցի վերահսկողության ներքո:

Չայաստանի Չանրապետության զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի բարելավման ուղիներից մեկը, ըստ հանձնակատարի, կարող է լինել մարդու իրավունքների մո-

Նիթորինգի անցկացման անկախ ինստիտուտի հիմնադրումը, որը կապահովի պարբերական և բազմակողմանի գնահատականներ և կոնկրետ առաջարկություններ կներկայացնի երկրի ղեկավարությանը, թե ինչպես կարելի է լուծել մարդու իրավունքների խախտումները և անհամապատասխանությունը ազգային օրենսդրությանը և միջազգային չափանիշներին³⁶:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի վերաբերյալ ընդունվող իրավական փաստաթղթերի համար ուղենիշներ են հանդիսանում **ԵԱՀԿ «Անվտանգության ռազմաքաղաքական ոլորտի վարքագծի կանոնները»**, որի 20-րդ կետի համաձայն՝ *«Մասնակից պետությունները զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքական վերահսկողությունը համարում են կայունության և անվտանգության անփոխարինելի տարր»*: Նույն փաստաթղթի 21-րդ կետի համաձայն՝ *պետությունները պետք է զինված ուժերի ղեկավարումը իրականացնեն սահմանադրությանը համապատասխան հիմնադրված, ժողովրդավարական լեգիտիմություն ունեցող իշխանության մարմինների միջոցով*: Միաժամանակ զինված ուժերում պետք է գործեն մարդու իրավունքների խախտումները կանխարգելող կամ խախտված իրավունքների պաշտպանությունն ապահովող արդյունավետ իրավական մեխանիզմներ:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ժողովրդավարական բարեփոխումները կարևորվում են **«Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում իրականացվող ՆԱՏՕ-Հայաստան անհատական գործընկերության գործողությունների ծրագրով**³⁷ *նախատեսված գործողություններում*: Հայաստանի Հանրապետությունը «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին միացել է դեռևս 1994 թ-ին, իսկ Անհատական գործընկերության գործողությունների 1-ին ծրագիրը հաստատվել է 2005 թ-ին: Անհատական ծրագրի կարևոր պահանջներից է զինված ուժերի ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների զարգացումը և ամրապնդումը, ինչպես նաև պաշտպանական և անվտանգության քաղաքականության մշակման գործում քաղաքացիական մասնագետների և հասարակության շրջանակների ներգրավման նպաստումը:

Որպես ԱՊՀ անդամ պետություն՝ Հայաստանի Հանրապետության համար որպես ուղենիշ կարող է հանդիսանալ նաև 2001 թ. նոյեմբերի 24-ին ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովում ընդունված **«Պետության ռազմական կառույցի խորհրդարանական վեհակողության մասին»** մոդելային օրենքը³⁸, որում, սակայն, բացակայում են խորհրդարանական վերահսկողության մեխանիզմների մասին կոնկրետ դրույթներ:

Բացի վերոնշյալ իրավական ակտերից, գործում են բազմաթիվ գերատեսչական նորմատիվ ակտեր (ՀՀ կառավարության որոշումներ, ՀՀ ՊՆ հրամաններ, կարգադրություններ), որոնցով կարգավորվում են զորակոչի կազմակերպման, զինծառայության անցնելու, զորացրվելու, զինծառայողների սոցիալական, իրավական և բազմաթիվ այլ խնդիրներ, որոնք, սակայն, մատչելի չեն հանրությանը:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում իրավական դաշտի ձևավորման առանձնահատկությունները՝ որպես խնդիր պետք է դիտարկել գործող օրենսդրությանը, ՀՀ միջազգային պարտավորություններին նշված գերատեսչական նորմատիվ ակտերի (որոնք անմիջապես կիրառվում են զինծառայողների հետ կապված խնդիրները լուծելու և կարգավորելու դեպքում) համապատասխանելիության ուսումնասիրությունը՝ ըստ մարդու իրավունքների չափանիշների:

³⁶ <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1784273>
³⁷ <http://www.mil.am/1298096798>
³⁸ http://spravka-jurist.com/base/part-wq/tx_xsxfqu.htm

ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական, քաղաքացիական և հասարակական վերահսկողության հնարավորությունը պայմանավորված է պաշտպանական բնագավառի վերաբերյալ որոշումների ընդունման և իրականացման թափանցիկության աստիճանով և հաշվետվողականության սահմաններով: Թափանցիկության աստիճանը և հաշվետվողականության սահմանները վերաբերում են և՛ պաշտպանական ոլորտի ֆինանսավորմանը, և՛ բյուջետային միջոցների իրացմանը, այդ թվում՝ պետական գնումների գործընթացներին, զինված ուժերի պլանավորմանը, զարգացմանը և օգտագործմանը:

Զինված ուժերի թափանցիկությունը և հաշվետվողականությունը պայմանավորված է նաև զինծառայողների իրավունքների խախտման, սոցիալական ապահովության վիճակի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությամբ:

Պաշտպանության բնագավառի թափանցիկությունը գնահատվել է պաշտպանության նախարարությունից տարբեր խնդիրների վերաբերյալ կազմակերպության կողմից տեղեկատվության հարցումներին տրված պատասխանների հիման վրա:

2010-2011 թթ. ՀՀ պաշտպանության նախարարությանը հասցեագրված գրությունների, տեղեկատվության հարցումների, նամակների և նրանց պատասխանների վերաբերյալ տեղեկատվությունը ամփոփված է ՀԱՎԵԼՎԱԾ 1-ում:

2010-2011 թ-ին ՀԶԱ Վանաձորի գրասենյակի կողմից ՀՀ պաշտպանության նախարարությանը և նրա առանձին ստորաբաժանումներին (ռազմական ոստիկանություն, զինկոմիսարիատներ) հասցեագրվել է ընդհանուր թվով 39 տեղեկատվության հարցում (2010 թ-ին՝ 19 հարցում և 2011 թ-ին՝ 20 հարցում): Ընդհանրապես որևէ պատասխան չի տրվել 5 տեղեկատվության հարցմանը (2-ը՝ 2011 թ-ին, որը կապված էր զորակոչիկին կրկնակի բժշկական փորձաքննության ենթարկելու և հիվանդությունների ցանկում կատարված փոփոխությունների ու ոչ շարային ծառայության կարգի հետ, 3-ը՝ 2010 թ-ին, որոնք կապված են եղել 2009 թ-ի զորակոչի վերաբերյալ տվյալների, ՋԼՄ-ներում ՊՆ-ի կողմից անշարժ գույքի օտարման, սեփականաշնորհման վերաբերյալ տեղեկությունների ստացման հետ: 2010-ին՝ 5 և 2011 թ-ին՝ 3 տեղեկատվական հարցումներին ի պատասխան հայտնվել է, որ պահանջվող տեղեկատվությունը համարվում է ծառայողական կամ պետական գաղտնիք: 2011 թ-ի տեղեկատվություն ստանալու երկու հարցումը բավարարվել է մասնակիորեն, քանի որ տեղեկատվության մյուս մասը համարվել է գաղտնիք (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

| ՊՆ-ից ստացված տեղեկատվության հարցումների պատասխանների վիճակագրությունը | | | | | |
|--|------------------|-------------------|--------------------|--|------------------|
| Տարեթիվ | Հարցումների թիվը | Պատասխան չի տրվել | Համարվել է գաղտնիք | Մասամբ պատասխան է տրամադրվել և մասամբ համարվել գաղտնիք | Պատասխան տրվել է |
| 2010 | 19 | 3 | 5 | 0 | 11 |
| 2011 | 20 | 2 | 3 | 2 | 13 |
| Ընդամենը | 39 | 5 | 8 | 2 | 24 |

Ինչպես երևում է աղյուսակ 1-ում ներկայացված տեղեկատվության հարցումներին տրված պատասխանների վիճակագրությունից, 39 տեղեկատվական հարցումներից դրական պատասխան է տրվել 24-ին: Ջուտ քանակական տեսակետից, կարելի է կարծիք կազմել, որ ՊՆ-ն «բավական թափանցիկ» է տեղեկատվություն տրամադրելու հարցում: Միևնույն ժամանակ, պետական և ծառայողական գաղտնիք համարվող տեղեկությունների բովանդակության վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ ըստ տեղեկատվության բնույթի ՊՆ գաղտնիության աստիճանը բավական մեծ է, և այդ տեսակետից թափանցիկ չի կարելի համարել: Ինչպես արդեն նշել ենք, գաղտնիք համարվող տեղեկությունների ցանկը, ըստ ՀՀ կառավարության 19.08.1997 թ. N 350 որոշման, սահմանվում է համապատասխան գերատեսչության ղեկավարի կողմից:

Հետևաբար, գաղտնիության ծավալի սահմանումը գերատեսչության կողմից կարող է լինել խիստ սուբյեկտիվ և կամայական: Այսինքն, ի սկզբանե օրենսդրական դաշտը ձևավորվել է գաղտնիության լայն շրջանակների և թափանցիկության խիստ ցածր աստիճանի ձևավորման տրամաբանությամբ:

Հասարակական վերահսկողության արդյունավետության կարևոր նախապայման է տվյալ բնագավառի գործունեության վերաբերյալ ամբողջական տեղեկատվության մատչելիությունը:

Ըստ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի³⁹ 10-րդ հոդվածի 2-րդ մասի՝ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել՝

1. միայն օրենքով
2. ժողովրդավարական հասարակությանը բնորոշ պետական և հասարակական անվտանգության, տարածքային ամբողջականության պահպանման
3. հասարակական անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու
4. անձանց առողջությունը, բարոյականությունը և հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու
5. խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու և
6. արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Ինչպես տեսնում ենք, Կոնվենցիան նախատեսում է տեղեկատվության ազատության սահմանափակումների սահմանափակման հստակ շրջանակ: Այսինքն, ԵԽ անդամ պետությունը ազգային օրենսդրությամբ տեղեկատվության ազատության սահմանափակումները պետք է հիմնավորի նշված սկզբունքների տրամաբանությամբ և ոչ թե կամայականորեն: Ի դեպ, պետք է հաշվի առնել նաև Կոնվենցիայի 18-րդ հոդվածի տրամաբանությունը՝ իրավունքների սահմանափակումները պետք է լինեն սահմանափակ և նպատակային:

Ելնելով Կոնվենցիայի տրամաբանությունից՝ Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվության ազատության սահմանափակումները պետք է սահմանվեն ոչ թե կառավարության որոշմամբ և առանձին գերատեսչությունների ղեկավարների որոշումներով, այլ օրենքով և պետք է լինեն նպատակային, հասկանալի և ճանաչելի քաղաքացիների համար:

Առանց նման պայմանների ապահովման, պաշտպանության գերատեսչության թափանցիկության և հաշվետվողականության մասին, ինչպես նաև պաշտպանության բնագավառի ժողովրդավարական, քաղաքացիական և հասարակական վերահսկողության մասին խոսելը դառնում է անհնար:

³⁹ www.healthrights.am/arm/more/213/

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱՀԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

2010-2011 թթ-ին կազմակերպության կողմից տեղեկատվության հարցում է ներկայացվել պաշտպանության նախարարությանը՝ ստանալու զինծառայողների թվի, զինված ուժերում աշխատավարձի ֆոնդի, ըստ կոչումների և հաստիքների աշխատավարձի չափի, պետական գնումների, մատակարարող կազմակերպությունների, ՆԱՏՕ-Հայաստան ծրագրի շրջանակներում իրականացված բարեփոխումներին առնչվող ծրագրերի և գործողությունների, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկեր պարունակող հարցերի վերաբերյալ:

Նշված հարցերի վերաբերյալ տեղեկատվական հարցումներին տրվել է պատասխան, որ դրանք համարվում են գաղտնի տեղեկատվություն: Հարցումներին, որոնք կապված են պաշտպանության նախարարության կողմից անշարժ գույքի սեփականաշնորհման և վերավաճառման հետ, դեռևս ոչ մի պատասխան չի տրամադրվել, չնայած, որ հարցման օրվանից անցել է արդեն ավելի քան մեկ տարի: (ՀԱՎԵԼՎԱԾ 1-ում նշված 2010 թ-ի հոկտեմբերի 25-ին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին ուղարկված 2010 թ-ի թիվ 16 և 17 գրությունները):

Ի դեպ, զինծառայողների աշխատավարձերի վերաբերյալ հրապարակված է միայն 2007 թ-ի ՀՀ կառավարության 13 դեկտեմբերի 2007 թ. N 1554-Ն որոշումը⁴⁰, որով սահմանվում է ՀՀ ՊՆ համակարգի զինծառայողների դրույքաչափերը: Մինևույն ժամանակ նախորդող և հետագա տարիների դրույքաչափերի փոփոխության վերաբերյալ կառավարության որոշումները համարվել են որպես գաղտնի տեղեկություն:

Նմանապես, եթե դեռևս 2006 թ-ի «Քաղաքացիական նախաձեռնություն» շաբաթաթերթի լրագրողի կողմից ՊՆ-ին հասցեագրված հարցմանը զինված ուժերին հազուստ, գրեթե անկախ ախտույթներ, սնունդ և այլ ապրանքներ մատակարարող կազմակերպությունների ցանկի վերաբերյալ տրվել էր պատասխան (տե՛ս նամակը և պատասխանը ՀԱՎԵԼՎԱԾ 2-ում), ապա հետագա տարիներին այդ տեղեկատվությունը համարվեց գաղտնիք:

Այսպիսով, գաղտնիք համարվող տեղեկությունների ցանկում փոփոխությունները կատարվում են գերատեսչության ղեկավարի կամ ՀՀ կառավարության կողմից, և որևէ տրամաբանական հիմնավորում չունենալով՝ կարելի է համարել տեղեկատվության ազատության իրավունքի խախտում:

Հաշվի առնելով այն փաստը, որ պաշտպանական գերատեսչությունը պարբերաբար հղում է կատարում ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան գաղտնի հրամանով գործողության մեջ դրված «ՀՀ պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքին և մշտապես մերժում է տեղեկատվության տրամադրումը՝ 2010 թվականին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դատական գործընթաց սկսեց ՀՀ պաշտպանության նախարարության նկատմամբ: Մինչ այդ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2010 թ. փետրվարի 10-ին գրությամբ դիմել էր ՀՀ պաշտպանության նախարարություն՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն հետևյալ հարցերի մասին.

- ՀՀ զինված ուժերում 2009 թ-ին ծառայության ընթացքում քանի ժամկետային և պայմանագրային զինծառայող է մահացել
- Նրանց անուն, ազգանունը
- Նրանց հասցեն:

⁴⁰ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=67628&DocID_AM=67628&DocID_RU=0&DocID_EN=0

Բացի այդ, ՀՀ Վանաձորի գրասենյակը 2010 թ-ի մարտի 15-ին դիմել էր պաշտպանության նախարարությանը տեղեկատվության հարցմամբ՝ խնդրելով տրամադրել այն կազմակերպությունների ցանկը, որոնք հազուստ, գրենական պիտույքներ, սնունդ և այլ ապրանքներ են տրամադրում ՀՀ զինված ուժերին, որը վերստին մերժվեց (տե՛ս նամակը և պատասխանը ՀԱՎԵԼ-ՎԱԾ 3-ում):

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի պատասխան այդ գրությունների, հայտնել է, որ պահանջվող տեղեկատվությունը, ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան գաղտնի հրամանով գործողության մեջ դրված «ՀՀ պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի» համաձայն, հանդիսանում է գաղտնի տեղեկատվություն և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջների համաձայն համարվում է ծառայողական գաղտնիք:

ՀՀ Վանաձորի գրասենյակը 2010 թ-ի փետրվարի 27-ին նոր տեղեկատվության հարցմամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան գաղտնի **հրամանը** (որով գործողության մեջ է դրվել «ՀՀ պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկատվությունների ընդլայնված գերատեսչական ցանկը») և ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան գաղտնի հրամանով գործողության մեջ դրված «ՀՀ պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկատվությունների ընդլայնված գերատեսչական **ցանկը**» ստանալու հարցով:

Ի պատասխան այդ գրության՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» ենթակետի համաձայն՝ ՀՀ կառավարությունը մշակում և հաստատում է պետական գաղտնիքների շարքին դասվող տեղեկությունների ցանկը և հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը չի կարող կազմակերպությանը տրամադրել ՀՀ պաշտպանության նախարարի գաղտնի հրամանով սահմանված «ՀՀ պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը»:

2010 թ. ապրիլի 7-ին ՀՀ Վանաձորի գրասենյակը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով

1. վերացնել «ՀՀ պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի մասին» հրամանը
2. պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը տրամադրել տեղեկատվություն
3. ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Հայրապետյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 50.000 ՀՀ դրամի չափով
4. ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետ ՔԿԾ 2-րդ դասակի պետական խորհրդական Ս. Սեդրակյանին ենթարկել վարչական պատասխանատվության 50.000 դրամի չափով:

Վարչական դատարանի կողմից 26.04.10 թ. որոշում է կայացվել այն մասին, որ հայցադիմումի ընդունումը մասնակիորեն ենթակա է մերժման, իսկ մի մասով հայցադիմումը ենթակա է վարույթ ընդունման, հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ սահմանադրական դատարանն իր 05.02.2010 թ. թիվ ՍԴՈ 864 որոշմամբ մասնավորապես արձանագրել է. «... սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական կարգով անձանց, այդ թվում՝ անձի իրավունքը խախտած պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելը չի հանդիսանում անձի խախտված իրավունքների պարտադիր բաղադրատարր և, հետևաբար, անձանց՝ վարչական պատասխանատվության ենթարկելու հայցադիմումով դատարան դիմելու իրավասություն չվերապահելը չի կարող խոչընդոտել այդ անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության, դատական պաշտ-

պանության արդյունավետ միջոցի իրավունքների իրացմանը, և խնդրո առարկա հարցով դատարան դիմելու իրավասությունը բացառապես վարչական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց վերապահելն իրավաչափ է ու օրենսգրքի իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության շրջանակներում է»։ Դատարանը եզրահանգել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151 հոդվածը համապատասխանում է ՀՀ սահմանադրությանը։

Նշվածի հաշվառմամբ դատարանը գտնում է, որ հայցադիմումում նշված 3-րդ և 4-րդ պահանջները ներկայացվել են դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից։

Վերոգրյալի հաշվառմամբ, դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքերով հայցադիմումի ընդունումը՝ հայցադիմումում նշված 3-րդ և 4-րդ պահանջների մասով, ենթակա է մերժման։

Ներկայացված 1-ին և 2-րդ պահանջների կապակցությամբ դատարանը փաստել է, որ դրանք ներկայացվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ և 73-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, ուստի, այդ մասով հայցադիմումը պետք է ընդունել վարույթ։

ՀՀ վարչական դատարանը 2010 թ. նոյեմբերի 23-ին իր վճռով մերժել է կազմակերպության կողմից ներկայացված վերոնշյալ դիմումը՝ պատճառաբանելով, որ կազմակերպության կողմից պահանջվող տեղեկատվությունը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն, տեղեկատվություն չի հանդիսանում։ Միաժամանակ դատարանը վճիռը հիմնավորել էր «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետով, համաձայն որի ՀՀ նախարարները իրավունք ունեն սահմանել գաղտնագրման ցանկի մասին հրամաններ և տվյալ հրամանները համարել գաղտնի։

Վճռի դեմ 2011 թ. դեկտեմբերի 22-ին կազմակերպության կողմից լիազորված ներկայացուցիչ Արտակ Զեյնալյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 2010 թ. նոյեմբերի 23-ի որոշման դեմ։

Վերաքննիչ դատարանի կողմից 2011 թ. հունվարի 13-ի որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ։

2011 թ. մարտի 16-ին Վարչական վերաքննիչ դատարանը որոշմամբ մերժել է կազմակերպության ներկայացրած վերաքննիչ բողոքը։

Վարչական վերաքննիչ դատարանի որոշման դեմ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ՀՀ վճռաբեկ դատարան բողոք է ներկայացրել մեկ ամսվա ընթացքում՝ պահանջելով բեկանել ՀՀ վարչական դատարանի վճիռը։

2011 թ. մայիսի 18-ին ՀՀ վճռաբեկ դատարանը որոշում է ընդունել կազմակերպության վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին։

2011 թ-ի նոյեմբերի 23-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դիմում է ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 12-րդ հոդվածների դրույթները ՀՀ սահմանադրության 3-րդ, 5-րդ, 6-րդ, 27-րդ, 43-րդ, 83.5-րդ, 117-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ։ Ներկայումս ՀՀ սահմանադրական դատարանը ընդունել է վարույթ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիմումը։ 2012 թ. մարտի 6-ին ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է կայացրել. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթը՝ այնքանով, որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկատվության, ճանաչել ՀՀ սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր։ Ինչպես նաև, որոշել է, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի գ) ենթակետը և 12-րդ հոդվածի 6-րդ մասը համապատասխանում են ՀՀ սահմանադրությանը⁴¹։

⁴¹ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2011-12-12/article_4390/page.html
<http://www.concourt.am/armenian/timeline/index.htm>; <http://www.concourt.am/armenian/decisions/common/2012/pdf/sdv-1010.pdf>

2011 թ-ին փորձ է արվել նման հարցերի շուրջ տեղեկատվություն ստանալ 2011 թ-ի վերաբերյալ, սակայն ՀՀ ՊՆ կողմից կրկին հղում է արվում «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքին և «ՀՀ պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկատվությունների ընդլայնված գերատեսչական ցանկը» սահմանող ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան գաղտնի հրամանին:

Առանձին հանդիպումների ժամանակ ՊՆ ներկայացուցիչները հայտնում են, որ ներկայումս աշխատանքներ են տարվում որոշ տվյալների գաղտնագերծման ուղղությամբ⁴²:

Այսպիսով, չնայած ՀՀ սահմանադրական և օրենսդրական նորմերին, ինչպես նաև ՀՀ կողմից վավերացրած միջազգային պարտավորություններին, որևէ իրավական մեխանիզմ գոյություն չունի ոչ միայն պաշտպանական բյուջեի, այլև նրա ոչ ռազմական բնույթի հատվածի (գրենական պիտույքներ, սնունդ, հագուստ), քաղաքացիական, ժողովրդավարական և հասարակական վերահսկողության իրականացման համար:

Պաշտպանական բյուջեի նկատմամբ վերահսկողության տեսակետից կարևոր նշանակություն ունի «**Ղնումների մասին**» ՀՀ օրենքը: **Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն**՝ «Պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող զնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հինգ օրացուցային օրվա ընթացքում»: Ինչպես տեսնում ենք, քանի որ պաշտպանության բնագավառի համար սննդամթերք, հագուստ, դեղորայք, գրենական պիտույքներ և այլ ապրանքներ մատակարարող կազմակերպությունների ցանկը, դրանց քանակը համարվում է պետական գաղտնիք, ապա դրանց գնման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությունը նույնպես համարվում է գաղտնիք: Նմանապես, գաղտնիքներ են համարվում պետական և ծառայողական գաղտնիք պարունակող զնումների վերաբերյալ կնքված պայմանագրի մասին հայտարարությունը (տե՛ս հոդված 10), գնման պլանավորումը և ֆինանսավորումը (տե՛ս հոդված 14), նույնիսկ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելը (տե՛ս հոդված 35): Հետաքրքիր է տեղեկությունների գաղտնիության պահպանման պահանջը գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի նկատմամբ (տե՛ս հոդված 23): Հարց է առաջանում՝ ինչպես կարող են հանձնաժողովի անդամները կամ քարտուղարը որոշել, թե հայտով ներկայացված տեղեկատվությունը համարվում է գաղտնիք, թե ոչ:


«**Պետական բյուջեի մասին**» ՀՀ օրենքում ներկայացված է միայն պաշտպանական բյուջեի ընդհանուր թիվը: Աղյուսակ 2-ում և նկար 1-ում ներկայացված է 2005-2011 թթ. ՀՀ պետական բյուջեի և պաշտպանական բյուջեի փոփոխության դինամիկան:

Աղյուսակ 2. ՀՀ պետական բյուջեի և պաշտպանական բյուջեի փոփոխության դինամիկան

| Թվական | Պետական բյուջե (հազար ՀՀ դրամ) | Պաշտպանական բյուջե (հազար ՀՀ դրամ) | Պաշտպանական բյուջեի չափաբաժինը պետական բյուջեում՝ արտահայտված %-ով |
|-------------|--------------------------------|------------------------------------|--|
| 2005 | 394,600,142.7 | 61,004,602.1 | 15.45% |
| 2006 | 482,193,912.5 | 74,125,561.1 | 15.37% |
| 2007 | 558,677,064.6 | 100,435,685.7 | 17.9% |
| 2008 | 822,054,378.3 | 125,436,245.3 | 15.25% |
| 2009 | 945,449,770.0 | 149,611,982.0 | 15.82% |
| 2010 | 935,524,584.0 | 135,715,659.4 | 14.5% |
| 2011 | 1,001,054,275.8 | 146,222,766.3 | 14.6% |

⁴² <http://henaran.am/?p=58692#.TuNdITZp6ws.facebook>

Նկար 1. ԳՅ պետական բյուջեի և պաշտպանական բյուջեի փոփոխության դինամիկան



Համեմատության համար աղյուսակ 3-ում և նկար 2-ում ներկայացված է Հարավային Կովկասի երեք պետությունների 2000-2010 թթ-ի պաշտպանական բյուջեների դինամիկան ԱՄՆ դոլարով:


Ռազմական բյուջեն ԱՄՆ դոլարով (արտահայտված միլիոններով)

Աղյուսակ 3. Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ռազմական բյուջեն 2000-2011 թթ.

| Թվական | Հայաստան | Ադրբեջան | Վրաստան |
|--------|----------|----------|---------|
| 2000 | 165 | 251 | 43.4 |
| 2001 | 160 | 284 | 55 |
| 2002 | 159 | 306 | 78.7 |
| 2003 | 183 | 382 | 92.2 |
| 2004 | 201 | 463 | 129 |
| 2005 | 246 | 542 | 341 |
| 2006 | 291 | 1112 | 580 |
| 2007 | 341 | 1210 | 1148 |
| 2008 | 396 | 1635 | 1090 |
| 2009 | 405 | 1434 | 665 |
| 2010 | 347 | 2150 | 520 |

Աղբյուրը՝ <http://milexdata.sipri.org/result.php4>

Նկար 2. Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ռազմական բյուջեն 2000-2010 թթ.



Չունենալով պաշտպանության մանրամասն բյուջեն, բացառությամբ ռազմական նշանակության հատվածի՝ փորձ է արվել գնահատել պաշտպանական բյուջեի՝ ըստ տարիների փոփոխությունների տրամաբանությունը:

ՀՀ պաշտպանական բյուջեի փոփոխության մոնիթորինգի հնարավորությունը⁴³

Բյուջեի մոնիթորինգի բաղկացուցիչ և հիմնական մասերից է բյուջեի ֆինանսական վերլուծությունը: Այն իրենից ներկայացնում է բյուջեով նախատեսված ծախսերի նպատակայնության և արդյունավետության վերլուծություններ:

Բյուջետային ծախսերի նպատակայնությունը կարող է գնահատվել երկու մակարդակներում: Առաջին մակարդակում դիտարկվում է կոնկրետ ծրագրի նպատակայնությունը, այսինքն՝ թե ծախսված ֆինանսական միջոցները կոնկրետ ծրագրերի իրականացմամբ որքանով են նպաստում պետության (հանրության) կողմից պաշտպանության բնագավառում սահմանված նպատակների իրականացմանը: Երկրորդ մակարդակում վերլուծության է ենթարկվում ծրագրերով նախատեսված ծախսային հոդվածների նպատակայնությունը, այսինքն՝ հաստատված ծրագրով կոնկրետ ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտությունը: Նման վերլուծությունների համար հաճախ օգտագործվող մեթոդներից է «այլընտրանքների վերլուծությունը» (Analysis of Alternatives): Այս մեթոդը կիրառելի է ինչպես ծրագրերի գնահատման, այնպես էլ ծրագրերի իրականացման համար ծախսային հոդվածների անհրաժեշտության հիմնավորման համար: Նման վերլուծության կիրառման արդյունքում հստակեցվում է ծրագրի իրականացման (կամ ապրանքների և ծառայությունների) գնման նպատակը և անհրաժեշտությունը, սահմանվում են ակնկալվող արդյունքները, որով հիմք է դրվում ծրագրերի իրականացման արդյունքում ձեռք բերված արդյունքների վերլուծության համար: Նման վերլուծություններ կատարվում են կառավարման պետական մակարդակում, սակայն դրանց արդյունքները վերահսկողության իրականացման հնարավորություն են տալիս քաղաքացիական հասարակության սուբյեկտներին: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 27 նոյեմբերի 2008 թ. N 48 արձանագրային որոշումը, որով նախատեսվում է պետական կառավարման մակարդակում ծրագրային բյուջետավարման համակարգի ներդրումը, հարկ է նշել հետագայում նման վերլուծությունների և համապատասխան տեղեկատվության հնարավորությունը, քանզի հենց ծրագրերն են և ծրագրային բյուջետավարումն է հիմք հանդիսանում «այլընտրանքների վերլուծություն» մեթոդի և նմանատիպ այլ մեթոդի կիրառելիության համար: Բյուջետավորման ներկա համակարգը նման հնարավորություն չի ընձեռնում, իսկ բյուջեի բացարձակ մեծությունը, աճը կամ կատարողականները լույս չեն սփռում ռազմական ծախսերի նպատակայնության գնահատման վրա:

Բյուջետային ծախսերի արդյունավետությունը, ի տարբերություն ծախսերի նպատակայնության, դիտարկում է կատարված ծախսերի տնտեսական կողմը: Արդյունավետության վերլուծություն կատարելիս հիմք են ընդունվում աշխատանքների կատարման, ապրանքների կամ ծառայությունների գնահատման տնտեսապես հնարավոր շահավետ տարբերակները:

Քաղաքացիական վերահսկողության բաղադրիչներից է գնումների գործընթացի մոնիթորինգը: Մոնիթորինգի ընթացքում գնահատականներ են տրվում գնումների գործընթացին վերաբերող բնագավառներին, ինչպիսիք են օրինակ՝ համեմատականությունը՝ այլ գործակալությունների կողմից նույն ապրանքների գնման գնային համեմատություն, վիճակագրական տվյալների օգտագործում անցած տարիների ձեռքբերման գների համեմատության համար և այլն: Կարող են դիտարկվել նաև ժամանակայնությունը՝ օրենքով սահմանված ժամկետ-

⁴³ Վերլուծությունը կատարվել է ռազմական բյուջեի մոնիթորինգի խմբի անդամ, Համայնքների ֆինանսիստների միության մասնագետ Արրահամ Արտաշեսյանի կողմից

ներին համապատասխանությունը, գնումների մասին տեղեկատվության հասանելիությունը կամ տեղեկատվության տարածումը, որոնց միջոցով հնարավորություն է ստեղծվում հնարավորինս մեծացնել գնումներին մասնակից մատակարարների թիվը և ավելացնել ամենացածր գնով ապրանքների և ծառայությունների ձեռքբերման հավանականությունը:

ՀՀ ՊՆ պաշտոնական կայքում պարբերաբար գետեղվում են նպատակային և պարբերական մրցույթների հայտարարությունները, որոնց միջոցով ապահովվում է մրցույթի մասին տեղեկատվության տարածումը: Մինևոյն ժամանակ, այդ հայտարարություններում առկա տեղեկատվությունը հնարավորություն չի ընձեռնում նույնիսկ ապրանքներ և ծառայություններ մատակարարող սուբյեկտներին ամբողջական պատկերացում կազմելու պահանջվող ապրանքների ծավալի և որակի մասին: Առավել ևս, գնումների գործընթացի վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը⁴⁴ խոչընդոտ է հանդիսանում քաղաքացիական հասարակության կողմից համապատասխան դիտարկումների և վերլուծությունների իրականացման համար:

Միջազգային պրակտիկայում արդյունավետության գնահատման եղանակներից են նաև «ծախս-արդյունք» (cost-effectiveness), «արժեք փողի դիմաց» (value-for-money) և այլն: Այս եղանակները իրենցից ներկայացնում են տնտեսական վերլուծության ձևեր, որոնք հիմնված են կատարված ծախսերի և դրանցից բխող արդյունքների համադրության վրա: Սակայն ՀՀ ՊՆ ծախսերի նկատմամբ նման վերլուծությունների իրականացումը նույնպես անիրատեսական է անհրաժեշտ տվյալների գաղտնիության, իսկ շատ դեպքերում՝ նաև բացակայության պատճառով:

Պաշտպանական բյուջեի վերլուծությունների համար կիրառելի են նաև վիճակագրական և էկոնոմետրիկ մեթոդները: Նման մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս մոդելների միջոցով պատկերացում կազմել ծախսվող ֆինանսական միջոցների նպատակայնության և արդյունավետության վերաբերյալ: Մեթոդի էությունը հենվում է այն գաղափարի վրա, որ կառուցվի այնպիսի մոդել, որի միջոցով հնարավոր կլինի կանխատեսել պաշտպանական բյուջեն՝ կախված այդ բյուջեի մեծության վրա ազդող գործոններից: Ցանկացած էական շեղում կանխատեսված բյուջեի մեծությունից, կարող է հիմք հանդիսանալ կարծելու, որ ֆինանսական միջոցները ոչ արդյունավետ են ծախսվել: Սակայն շեղումները կարող են լինել նաև էքստրապոլյացիայի հետևանքով, մոդելի կառուցման ընթացքում կատարված վերապահումների (ենթադրությունների) չպահպանման, կամ լրացուցիչ գործոնի (տեղեկատվության) ազդեցության պատճառով: Ընդ որում, վերջինս ուղղակի կմատնանջի այն, որ բյուջեից կատարվել են ծախսեր, որոնց մասին հանրությանը չի տեղեկացվել:

Կախված մոդելից և մոդելի կառուցման համար կատարված ենթադրություններից, բյուջեի վրա ազդող գործոնները կարող են տարբել լինել: ՀՀ ՊՆ բյուջեն նման վերլուծության ենթարկելու համար, կարելի է ենթադրել, որ պաշտպանական բյուջեն գծային կախվածության մեջ է գտնվում հիմնականում սննդամթերքի, վառելիքի և քսանյութերի գներից, վճարվող աշխատավարձերի մեծությունից և ներդրումների ծավալից: Նման ենթադրությունը թույլ է տալիս վերլուծության մոդելները կառուցել հանրությանը հասանելի աղբյուրներում հրապարակված տվյալների հիման վրա:

Մասնավորապես, սննդային ապրանքների գները հասու են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կայքից⁴⁵: Վիճակագրական ծառայությունը հրապարակում է նաև ՀՀ տարածքում վառելիքի և քսանյութերի գները: Նշված ապրանքների գները, ենթադրաբար, պետք է քիչ շեղում ունենան ՊՆ կողմից այդ ապրանքների գնման գներից: Աշխատավարձերի գծով տեղեկատվությունը հասու է մասնակիորեն՝ ՀՀ ՊՆ գրավոր հարցման հիման վրա: Աշխատավարձի բացարձակ մեծության փոխարեն կարելի է օգտագործել նաև աշխատավարձե-

⁴⁴ «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 8, 10, 14, 35, 23

⁴⁵ www.armstat.am

րի աճը⁴⁶ և զինծառայողների թվի փոփոխությունը: Նմանատիպ մոտեցում կարելի է կիրառել ներդրումների հաշվարկի ժամանակ ևս: Սպառազինության քանակի փոփոխությունը կարող է պատկերացում տալ կատարված ծախսերի մասին: Ընդ որում, չնայած զինծառայողների թիվը և սպառազինության քանակը տեղական աղբյուրներից հասանելի չէ, սակայն այդ տեղեկատվությունը պարբերաբար տպագրվում է Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի կողմից⁴⁷: Նման տեղեկատվություն հասանելի է նաև մի շարք այլ ոչ պաշտոնական աղբյուրներից⁴⁸:

Այնուամենայնիվ, չնայած նման եղանակների կիրառումը ինչ-որ չափով լուծում է տեղեկատվության պակասի և գաղտնիության խոչընդոտը, այն ունի իր սահմանափակումները նույնպես: Սահմանափակումներից առաջինը պետք է նշել տվյալների փոքրաթիվ լինելը: Նման վերլուծությունները պահանջում են 30-ից ոչ պակաս դիտարկումներ, այն էլ, երբ դիտարկումների շեղումները զգալի չեն: Ուստի, եթե հաշվի առնենք բանակի համեմատաբար երիտասարդ տարիքը և դրան հավելենք պատերազմական և հետպատերազմական դրությունը, որոնք զգալի շեղումներ են առաջացնում, հասկանալի է դառնում, որ նման վերլուծությունների համար պահանջվող տվյալները անբավարար են: Ցանկացած այլ ոլորտի համար նման խնդիրը լուծելի է, եթե տվյալների հավաքագրումը կատարվի ամսական կամ նույնիսկ եռամսյակային կտրվածքով, սակայն պաշտպանության բնագավառի դեպքում նման տվյալների հավաքագրումը անհնար է:

Երկրորդ էական սահմանափակող գործոն է մոդելի ընտրությունը: Քանզի ոչ մի մոդել չի կարող ամբողջությամբ բացատրել իրականությունը, և բոլոր մոդելները գործում են որոշակի տիրույթում և որոշակի ճշտությամբ, պաշտպանության ծախսերի գաղտնիության պարագայում, մոդելի ընտրության հիմնավորումը բավականին դժվար խնդիր է դառնում: Նման դեպքում ճիշտ կլինի, եթե պետական կառավարման մարմինն ինքը առաջարկի մոդել՝ հիմնվելով իրեն հասանելի տեղեկատվության վրա, որ լավագույնս կկարողանա բնութագրել պաշտպանական բյուջեն և հնարավորություն կտա քաղաքացիական հասարակությանը իրականացնել վերլուծություններ:

Ամփոփելով պաշտպանական բյուջեի ֆինանսական վերլուծության հնարավորությունները՝ կարելի է նշել, որ միջազգային ասպարեզում կիրառվող վերը նշված գործիքները այսօրվա դրությամբ ՀՀ-ում գործնականորեն կիրառելի չեն քաղաքացիական հասարակության կողմից բյուջեի արդյունավետ վերլուծության համար: Իսկ նման վերլուծությունները հանրային ֆինանսների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ձևավորման հիմնական գործոններից մեկն է, որի միակ նպատակը կարող է լինել միայն հանրային ֆինանսների նպատակային և արդյունավետ օգտագործման ապահովումը, և ոչ թե պետական կամ ռազմական գաղտնիքի բացահայտումը կամ տարածումը: *Ներքևում ներկայացվում է Էկոնոմետրիկ վերլուծությունը:*

Ռեգրեսիոն վերլուծության մոդելը կառուցվել է հիմնվելով պաշտպանական բյուջեի վրա ազդող, մեր կարծիքով առավել ազդեցիկ, գործոնների վրա: Մասնավորապես մոդելը ներառում է.

ա) *պարենային ապրանքների գների ինդեքսը*. պարենային ապրանքների գների աճը կարող է զգալի ազդեցություն ունենալ բյուջետային ծախսերի վրա, ելնելով այն տրամաբանությունից, որ պարենային ապրանքների գնման ծախսերը մեծ տեսակարար կշիռ են կազմում բյուջետային ծախսերում, և այդ ապրանքների գների փոփոխությունը պետք է, որ զգալի ազդեցություն ունենա բյուջեի բացարձակ մեծության վրա: Ենթադրվում է, որ պարենային ապրանքների գները միջին հանրապետական ցուցանիշներից քիչ են շեղվում և մոդելում

⁴⁶ ՀՀ կառավարության 13.12.2007թ. N 1554-Ն որոշում
⁴⁷ The International Institute for Strategic Studies, London <http://www.iiss.org/>
⁴⁸ http://img.rg.ru/i/mics/sng_army.gif; <http://www.kp.ru/daily/24497.3/650037/>; <http://www.armscontrol.ru/pubs/eta-az-nk-ar-061121.pdf>;
<http://milkavkaz.net/?q=node/20>;

օգտագործվել են 33 Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված տվյալները:

բ) *դիզալային վառելանյութի գները*. հիմք ընդունելով դիզալային վառելիքի, բենզինի և այլ քսանյութերի միջև վիճակագրորեն էական կոռելացիան՝ պետք է վերցնել նշվածներից միայն մեկը՝ խուսափելու համար փոփոխականների միջև զուգահեռ կոռելացիայից (multicollinearity): Այստեղ ևս ենթադրվում է, որ վառելիքի և քսանյութերի գները զգալի չեն շեղվում միջին հանրապետականից և այն զգալի բաժին ունի պաշտպանական բյուջեում:

գ) *աշխատավարձ*. քանի որ պաշտպանության բյուջեի աշխատավարձի ֆոնդի բացարձակ մեծությունը չի հրապարակվում, դիտարկվել է պետական ծառայողներին պետական բյուջեից վճարված աշխատավարձի ֆոնդի տարեկան աճը: Ենթադրություն է արվել, որ պետական ծառայողների և զինծառայողների աշխատավարձի աճերը համընկնում են կամ մոտ են: Աշխատավարձի աճի և պայմանագրային զինծառայողների թվի լոգարիթմի արտադրյալը համարվել է պաշտպանության բյուջեի աշխատավարձի ֆոնդի աճի ցուցանիշ:

Մեր ունեցած տվյալների⁴⁹ համաձայն՝ 33 զինված ուժերում ժամկետային զինծառայողների թվի զգալի փոփոխություն չի եղել: Փոփոխություն չի եղել նաև սպառազինության և տեխնիկայի քանակի մեջ: Հետևաբար, սպառազինության և տեխնիկայի պահպանման վրա կատարված ներդրումները պարբերական հաստատուն բնույթ են կրում: Սա նշանակում է, որ ներդրումների մեծությունը համեմատաբար պետք է կայուն լինի և չառաջացնի զգալի շեղումներ պաշտպանական բյուջեում: Ուստի, թե՛ ժամկետային զինծառայողների թիվը, և թե՛ սպառազինության ու տեխնիկայի վրա կատարված ներդրումների մեծությունները վերլուծության մեջ հաշվի չեն առնվել:

Պաշտպանական բյուջեի գնահատման մոդելի վերջնական ֆունկցիան սահմանվել է հետևյալ բանաձևով՝

$$Y'_i = a + \beta_1 * x_{1t} + \beta_2 * x_{2t} + \beta_3 * x_{3t}$$

Որտեղ՝

$Y' = \ln(Y)$ և Y ռազմական բյուջեի բացարձակ մեծությունն է ըստ տարիների

x_{1t} -ը պարենային ապրանքների գների աճն է ըստ տարիների

$x_{2t} = \ln(x_2)$ և x_2 դիզալային վառելիքի գներն են ըստ տարիների

x_{3t} -ը պաշտպանական բյուջեի աշխատավարձի ֆոնդի աճն է

Ռեգրեսիայի արդյունքում ստացվում է՝

$$Y' = 1.115 + (-1.392) * x_{1t} + 2.183 * x_{2t} + (-0.057) * x_{3t}$$

$$t_{\text{test}} \quad (-1.500) \quad (-0.427) \quad (1.737) \quad (-1.097)$$

$$\text{sig.} \quad (0.205) \quad (0.619) \quad (0.111) \quad (0.197)$$

Դատելով ստացված արդյունքներից՝ կարելի է փաստել, որ պարենային ապրանքների, դիզալային և աշխատավարձի փոփոխությունները վիճակագրորեն չեն կարող հիմնավորել պաշտպանական բյուջեի տատանումները: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ այս գործոնները քիչ են ազդում, կամ ընդհանրապես չեն ազդում բյուջեի վրա, եթե իհարկե ընդունում ենք, որ վերը նշված ենթադրությունները ճիշտ են և անտեսում ենք դիտարկումների փոքր քանակը:

⁴⁹ Պայմանագրային և ժամկետային զինծառայողների թվերը մատչելի են Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի հրապարակած տվյալներից: Military Balance զեկույցը

ՀՀ պաշտպանական բյուջեի վերլուծությունը՝ ըստ զինծառայողների աշխատավարձերի և նրանց սոցիալական խնդիրների լուծման նպատակով հատկացված միջոցների (լրատվական միջոցներով հրապարակված տվյալների հիման վրա)

ՀԲԱ Վանաձորի գրասենյակը փորձել է վերլուծել ՀՀ պաշտպանության բյուջեի փոփոխության տրամաբանությունը՝ ըստ ՀՀ ՊՆ աշխատակազմի և զինծառայողների աշխատավարձերի փոփոխությունների դինամիկայի:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ 4) «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածի, ՀՀ կառավարության 27.11.2000 թ. N 778 որոշման 2-րդ ու 3-րդ կետերի և ՀՀ կառավարության 13.12.2007 թ. N 1554-Ն որոշման համաձայն՝ ՀՀ ՊՆ համակարգի զինծառայողներին հաշվարկվում են.

- ա) պաշտոնային դրույքաչափ, հետևյալ չափերով՝ կենտրոնական ապարատի պաշտոններ, զինվորական միավորումների և ստորաբաժանումների պաշտոններ, պայմանագրային զինվորական ծառայության շարքային կազմ
- բ) պայմանագրային զինծառայողների զինվորական կոչման դրույքաչափեր
- գ) զինվորական ծառայության ստաժի համար հավելումներ՝ ամսական պաշտոնային դրույքաչափի և զինվորական կոչման դրույքաչափի նկատմամբ համապատասխան տոկոսաչափերով:

Բացի վերը նշվածներից, ՀՀ կառավարության 13.12.2007 թ. N 1554-Ն որոշման 2.1 կետի համաձայն՝ ՀՀ պետական բյուջեով նախատեսված աշխատավարձի ֆոնդի սահմաններում տնտեսված գումարների հաշվին զինծառայողներին վճարվում են նաև պարբերական բնույթ չկրող լրավճարներ և պարգևավճարներ, որի քանակական ցուցանիշների վերաբերյալ պաշտոնական հաշվետվության ձև սահմանված չէ: ՊՆ աշխատակիցների, զինծառայողների աշխատավարձերի փոփոխման վերաբերյալ այլ պաշտոնական փաստաթղթեր մատչելի չեն, և դրանց փոփոխությունների մասին տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ԶԼՍ հրապարակումները:

Զինծառայողների աշխատավարձերի, նրանց բնակարանային, սոցիալական և այլ խնդիրների լուծման նպատակով ՊՆ բյուջեից հատկացվող գումարների վերաբերյալ ԶԼՍ-ներով տեղեկությունները խիստ սահմանափակ են:

2007 թ-ի նոյեմբերի 2-ին ՀՀ պաշտպանության նախարար Մ. Հարությունյանը հայտարարել է, որ «2008 թ. պաշտպանության նախարարության բյուջեի աճը հնարավորություն կտա բարձրացնել զինծառայողների աշխատավարձերը: Այսպես, սպաների աշխատավարձը պետք է կազմեր 560 ԱՄՆ դոլար, ենթասպաների աշխատավարձը՝ 338 ԱՄՆ դոլար, պայմանագրային ծառայողների աշխատավարձը՝ 277 ԱՄՆ դոլար, իսկ քաղաքացիական ծառայողների աշխատավարձը՝ ավելի քան 185 ԱՄՆ դոլար»⁵⁰:

2008 թ-ի հունվարի 18-ին կայացած մամլո ասուլիսում ՀՀ պաշտպանության նախարար Մ. Հարությունյանը նշել է, որ «2007 թ-ին տեղի են ունեցել կառուցվածքային փոփոխություններ, մասնավորապես՝ մշակվել են խաղաղապահ բրիգադի հաստիքացուցակները, կազմավորման ընթացքում է եղել շտաբը և ևս մեկ գումարտակ: Պայմանագրային հիմունքներով կազմավորվել են ինժեներասակրավորային և հետախուզական նոր վաշտեր, հրաձգային գումարտակներ: Ընթացքում է անձնակազմի՝ պայմանագրային զինծառայողներով, սերժանտներով ու հատուկ քաղաքացիական ծառայողներով, սպառազինությամբ

⁵⁰ <http://www.nr2.ru/148287.html>

ու ռազմական տեխնիկայով համալրման գործընթացը, հակաօդային պաշտպանության հետախուզության համակարգի արդիականացումը: 2007 թ-ին ՀՀ-ում կառուցվել է 11 բնակելի շենք, արդյունքում զինծառայողներին է հանձնվել 346 ծառայողական բնակարան (ԼՂՀ-ում 6 շենք՝ 132 բնակարան): 2008 թ-ին նախատեսվում է դրանց թիվը հասցնել 475-ի, իսկ ԼՂՀ-ում 150-ի, շահագործման հանձնել նաև կապիտալ վերանորոգված 233 բնակարան: Պետական բյուջեից պաշտպանական կարիքների համար նախատեսված ընդհանուր հատկացումները կատարվել են 100%-ով և ծախսվել նպատակին: 2007 թ. ֆինանսական տարվա ընթացքում անձնակազմին կատարվող վճարումների չափն ավելացել է 20%-ով, իսկ նյութատեխնիկական բազայի համալրման և պահպանման, ինչպես նաև կապիտալ շինարարության և շենքերի, շինությունների հիմնական նորոգումների ծախսերի գծով ընդհանուր հատկացումներն աճել են 30%-ով նախորդ տարիների համեմատ: 2008 թ-ին ևս 10 տոկոսով կբարձրանա զինծառայողի դրամական բավարարումը, քաղծառայողների աշխատավարձը՝ այսպիսով սպայի միջին ամսական դրամական բավարարումը հասցնելով մոտ 180.000 դրամի, ենթասպայինը՝ 109.000 դրամի, պայմանագրային զինծառայողինը՝ 91.000, իսկ ծառայողինը՝ 57.000 դրամի: 2008 թ-ից կսկսվի բանակի համալրումը պրոֆեսիոնալ սերժանտական կազմով, որի միջին ամսական դրամական բավարարումը կկազմի 125.000 դրամ: Համեմատության համար նշեմ, որ 2006 թ-ին սպայի միջին ամսական դրամական բավարարումը կազմել է մոտ 137.000 դրամ, իսկ 2007 թ-ին՝ 165.000⁵¹:

Համաձայն ՀՀ պաշտպանության նախարար Ս. Հարությունյանի կողմից ՁԼՍ ներկայացուցիչներին ներկայացված հաշվետու զեկույցի՝ կառավարության ծրագրի համաձայն 2008 թ-ի հունվարի 1-ից զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին նշանակված կենսաթոշակի չափն ավելացվել է 60%-ով: Զոհված, 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ զինծառայողների 448 անօթևան ընտանիքների՝ բնակարան ձեռք բերելու համար 2007 թ-ին հատկացվել է 3 միլիարդ դրամ փոխհատուցում, ևս 3 միլիարդ դրամ Կառավարությունը նախատեսել է հատկացնել 2008 թ-ին: 2007 թ-ի ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից զինծառայողներին, զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքներին, հասարակական կազմակերպություններին ընդհանուր առմամբ հատկացվել է մոտ 421 միլիոն դրամ ֆինանսական օգնություն:

2008 թ-ի տվյալների համաձայն՝ ՀՀ զինված ուժերում մասնագիտական ծառայություն են անցնում 8 հազար շարքային և սերժանտական զինծառայող, 10 հազար սպայական և 5 հազար եֆրեյտոր (պրապորշչիկ), որը կազմում է ամբողջ բանակի ավելի քան 1/3 մասը: ՀՀ զինված ուժերի ընդհանուր թիվը մոտավոր 60 հազար է⁵²:

Ըստ պաշտպանության նախարարության գլխավոր ֆինանսիստ գնդապետ Վաղարշակ Ավետիսյանի, 2010 թ-ին պաշտպանական բյուջեն 2009 թ-ի համեմատ պետք է նվազեր մոտ 30 տոկոսով: Իրապես, եթե համեմատենք պաշտոնական թվերը, ապա իրականում պաշտպանական բյուջեն 2009 թ-ի համեմատ 2010 թ-ին նվազել է մոտ 14 տոկոսով: Նման նվազումը պայմանավորված էր 2008 թ-ի ֆինանսական ճգնաժամի հետևանքով ստեղծված դժվարություններով:

Եթե դիտարկենք ՀՀ պետական բյուջեի հիմքում դրված դրամ-դոլար հաշվարկային փոխարժեքի փոփոխությունը 2005-2012 թթ-ին, ապա կարելի է եզրակացնել, որ այն կարող է լուրջ ազդեցություն ունենալ պաշտպանական բյուջեի իրական ծախսերի վրա: Մինչդեռ, ինչպես նշել է պաշտպանության նախարարության գլխավոր ֆինանսիստ գնդապետ Վաղարշակ Ավետիսյանը. «Ամեն դեպքում, դրամի արժեզրկումը չի ազդի պաշտպանության նախարար-

⁵¹ <http://www.mil.am/old-1299194272>

⁵² տե՛ս նույն աղբյուրը

րության «ծախսային հիմնական ուղղությունների վրա»⁵³:

Եթե համեմատենք «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 27.11.2000 թ. N 778 որոշման 2-րդ ու 3-րդ կետերով և ՀՀ կառավարության 13.12.2007 թ. N 1554-Ն որոշմամբ հաշվարկվող սպաների աշխատավարձի միջին չափը, դրամական բավարարման մասին լրատվական միջոցներով ներկայացված տվյալների հետ, ապա կհամոզվենք, որ աշխատավարձի չափը կազմում է դրամական բավարարման առավելագույնը 50 տոկոսը:

Հաշվի առնելով, որ կենսաթոշակները հաշվարկվում են աշխատավարձի հիման վրա և ոչ թե դրամական բավարարման չափով, կարելի է եզրակացնել, որ զինծառայողների կենսաթոշակի չափերը անհամեմատ քիչ են ծառայության ընթացքում նրանց ստացած դրամական վարձատրության չափից:

Փորձենք վերլուծել սպայի միջին ամսական դրամական բավարարման վերաբերյալ տվյալների փոփոխությունը 2006, 2007 և 2008 թվականներին նույն տարիներին պաշտպանական բյուջեի փոփոխությունների հետ: Տվյալները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4.

| Տարեթիվ | Սպայի միջին ամսական դրամական բավարարման փոփոխությունը | | | ՀՀ պաշտպանական բյուջեն | | |
|---------|---|---------------|-------------|------------------------------|---------------------|-------------|
| | Բացարձակ թիվը, ՀՀ դրամ | Աճը ՀՀ դրամով | Աճը %-ներով | Բացարձակ թիվը, ՀՀ հազար դրամ | Աճը ՀՀ հազար դրամով | Աճը %-ներով |
| 2006 | 137000 | - | | 74,125,561.1 | - | - |
| 2007 | 165000 | 28000 | 20.44 | 100,435,685.7 | 26 310 124 | 35.5 |
| 2008 | 180000 | 15000 | 9.1 | 125,436,245.3 | 25 000 560 | 24.9 |

Ինչպես երևում է երկու տվյալների համեմատությունից, պաշտպանական բյուջեն 2007 և 2008 թթ. բացարձակ թվերով ունեցել է զրեթե նույն չափով աճ (2007 թ-ին 2006 թ-ի համեմատ 26 310 124 հազար դրամով, 2008 թ-ին 2007 թ-ի համեմատ 25 000 560 հազար դրամով), սակայն ըստ տոկոսային արտահայտության՝ մոտ 10 տոկոսի նվազում: Սպայի միջին ամսական դրամական բավարարումը 2007 թ-ին 2006 թ-ի համեմատ աճել է 20.44 տոկոսով, իսկ 2008 թ-ին 2007 թ-ի համեմատ՝ ընդամենը 9.1 տոկոսով: Այսինքն, աճը նվազել է երկու անգամ:

Այսպիսով, պաշտպանական բյուջեի աճի նվազումը ավելի շատ բացասական ազդեցություն է ունեցել զինծառայողների աշխատավարձերի և դրամական բավարարման վրա, չնայած պաշտպանական բազմաթիվ հակառակ հավաստիացումներին:

⁵³ <http://yan-news.ru/news/2009-10-07-1715>

Սպառազինությունների ձեռքբերման նպատակով պաշտպանական բյուջեի ծախսերի գնահատումը

Հաշվի առնելով դարաբաղյան կոնֆլիկտի չլուծվածությունը, նաև դիվանագիտական և այլ հարաբերությունների բացակայությունը Ադրբեյջանի Հանրապետության հետ՝ Հայաստանի Հանրապետության՝ որպես Լեռնային Ղարաբաղի անվտանգության երաշխավոր, ազգային անվտանգության ռազմավարության կարևոր խնդիրներից է հանդիսանում «զինված ուժերի մարտունակության, անվտանգության և իրավապահ մարմինների գործունեության արդիականացումն ու արդյունավետության բարձրացումը»⁵⁴: Ազգային անվտանգության ռազմավարության մեջ ուղղակիորեն նշված է. «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանդեպ զինված ուժի կիրառման բացահայտ սպառնալիքներ են հնչում Ադրբեյջանի Հանրապետության կողմից»⁵⁵:

ՀՀ ռազմական դոկտրինում որպես ռազմական անվտանգության սպառնալիք է արձանագրված. «Լեռնային Ղարաբաղի հակամարտության առկայությունը, Հայաստանի Հանրապետության հանդեպ ռազմական գերազանցության հասնելու և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու Ադրբեյջանի Հանրապետության ձգտումները, այդ նպատակով Հայաստանի Հանրապետության և (կամ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ռազմական գործողությունների նախապատրաստումը»⁵⁶:

Հասկանալի է, որ պաշտպանության ապահովման անհրաժեշտության տեսակետից զինված ուժերը պետք է ապահովվեն ժամանակակից ռազմական տեխնիկայով և միջոցներով: Այդ նպատակով պաշտպանական բյուջեի հոդվածների կարևոր մասը հանդիսանում է սպառազինությունների պահպանման, ձեռքբերման և շահագործման համար իրականացվող ծախսերը: Նշված ծախսերի իրականացումը տարբեր երկրներում ունի գաղտնիության տարբեր աստիճան:

ՀՀ պաշտպանական բյուջեից ինչքան միջոցներ են ծախսվում ռազմական տեխնիկայի սպասարկման, շահագործման, պահպանման և ձեռքբերման համար՝ ՀՀ պետական մարմինները որևէ տեղեկատվություն չեն տարածում, քանի որ այն համարվում է պետական գաղտնիք⁵⁷:

Մինևույն ժամանակ, տարբեր փորձագիտական կենտրոնների կողմից, մասնավորապես՝ Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտ (IISS), Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտության ինստիտուտ (SIPRI), Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևյան կենտրոն (DCAF), իրականացվում են ուսումնասիրություններ աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, սպառազինությունների ձեռքբերման, դրանց որակական և քանակական կազմի փոփոխությունների վերաբերյալ:

ԵԱՀԿ Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին պայմանագրի համաձայն՝ Հայաստանի վերաբերյալ սպառազինությունների քանակի չափաբաժինները ներկայացված են աղյուսակ 5-ում: Համեմատության համար ներկայացված է նաև Ադրբեյջանի և Վրաստանի վերաբերյալ տվյալները:

⁵⁴ <http://www.mil.am/files/NATIONAL%20%20SECURITY%20STRATEGYarm.pdf>

⁵⁵ տե՛ս նույն աղբյուրը

⁵⁶ <http://www.mil.am/files/mil-doctrine-arm.pdf>

⁵⁷ <http://www.arlis.am/>

Աղյուսակ 5.

| Երկիր | Տեխնիկայի իրական առկայությունը առ 2011 թ-ի հունվարի 1-ը | Երկրի չափաբաժինը | Տեխնիկայի իրական առկայությունը առ 2011 թ-ի հունվարի 1-ը | Երկրի չափաբաժինը | Տեխնիկայի իրական առկայությունը առ 2011 թ-ի հունվարի 1-ը | Երկրի չափաբաժինը | Տեխնիկայի իրական առկայությունը առ 2011 թ-ի հունվարի 1-ը | Երկրի չափաբաժինը | Տեխնիկայի իրական առկայությունը առ 2011 թ-ի հունվարի 1-ը | Երկրի չափաբաժինը |
|----------|---|------------------|---|------------------|---|------------------|---|------------------|---|------------------|
| | Տանկ | | ԵՅՄ | | 100 մմ հրետանային համակարգեր | | Մարտական ինքնաթիռ | | Հարվածային ուղղաթիռ | |
| Հայաստան | 110 | 220 | 140 | 220 | 239 | 285 | 16 | 100 | 15 | 50 |
| Ադրբեջան | 381 | 220 | 181 | 220 | 469 | 285 | 79 | 100 | 26 | 50 |
| Վրաստան | 200 | 220 | 878 | 220 | 400 | 285 | 27 | 100 | 6 | 50 |

Ինչպես երևում է աղյուսակից, որոշ երկրներում առանձին սպառազինությունների գծով տեղի ունի քվոտաների գերազանցում, իսկ որոշ դեպքերում՝ նվազում:

Մինչդեռ, պաշտոնատար անձանց կողմից հրապարակային գնահատականները վկայում են բոլորովին այլ պատկերի մասին:

Մասնավորապես, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը «Ազատություն» ռադիոկայանի հայաստանյան թղթակցին հայտնել է. «2011 թ-ին մեր մարտական կարողությունների ընդլայնումը լինելու է շարունակական, ոչ քիչ, քան 2010 թվականին: Թվերի մասին՝ եկեք չմանրամասնենք»⁵⁸:

Նույն տեղեկատվության համաձայն՝ 2010 թ-ի դեկտեմբերի 20-ին ՀՀ պաշտպանության նախարարը պաշտոնապես հաստատել է, որ «Հայաստանի զինված ուժերն ունեն «S-300» գերճշգրիտ զենիթահրթիռային համակարգեր»:

Ի դեպ, 2011 թ-ի հունվարի 27-ին ՀՀ կառավարության ծառայությունից news.am-ին հայտնել են, որ. «Հայաստանի կառավարությունը Ազգային անվտանգության ծառայությանը հասկացրել է 4 մլն 22 հազար 66 դրամ՝ ռազմական բեռների տեղափոխման ծախսերը փոխհատուցելու նպատակով»⁵⁹:

Jamestown հիմնադրամի Eurasia daily monitor-ում հրապարակված հոդվածում հայտնվում է, որ 2010 թ. դեկտեմբերին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը և Հայաստանի Ազգային անվտանգության խորհուրդը հաստատեցին «Սպառազինությունների և ռազմական տեխնիկայի զարգացման Հայաստանի 2011-2015 թթ. պետական ծրագիրը»: Ինչպես նաև նշվում է, որ հայկական բանակը շարունակելու է ձեռք բերել նորագույն սպառազինություններ⁶⁰: Նույն աղբյուրի համաձայն՝ 2010 թ. օգոստոսին պաշտպանության նախարարը հայտարարել է, որ Հայաստանը մեծացնելու է իր հարվածային հզորությունը:

Հաշվի առնելով սառեցված հակամարտության կողմերի ձգտումները՝ ավելացնելու սպառազինությունները ռազմական հավասարակշռությունը պահպանելու կամ ուժի դիրքերից հանդես գալու նպատակով՝ բնական է, որ կողմերը շատ ուշադիր հետևում են սպառազինությունների ձեռքբերման ընթացքին: Եվ որոշ տեղեկություններ ԶԼՄ-ներում տարածվում են այսպես կոչված «գաղտնի տեղեկությունների» բացահայտման արդյունքում:

Մասնավորապես, ըստ «Վերսիա» լրագրի 2009 թ-ին հրապարակված տեղեկատվության⁶¹՝ Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանին փոխանցել է 800 մլն դոլար արժողությամբ զենք-զինամթերք, որի վերաբերյալ բավականին մեծ աղմուկ են բարձրացրել ադրբեջանական պաշտոնատար անձինք:

Սպառազինությունների ձեռքբերման վերջին դեպքի մասին տեղեկությունները տարած-

⁵⁸ <http://www.azatutyun.am/content/article/2317608.html>
⁵⁹ <http://www.news.am/arm/news/46022.html>
⁶⁰ <http://www.news.am/arm/news/45282.html>
⁶¹ <http://www.apsny.ge/analytics/1232993721.php>

վեցին 2011 թ-ի սեպտեմբերին, որոնց համաձայն՝ Հայաստանը Մոլդովայից գնել է մոտ 60 տոննա գեղձ⁶²:

Ընդ որում, «Հայաստանին վաճառված զինատեսակներից են «Կորբա» հրթիռների համար նախատեսված 9B862, 9B863, ինչպես նաև «Կոնկուրս-Մ» հակատանկային հրթիռային համալիրների համար նախատեսված 9B871-3 վերահսկիչ-ստուգիչ համալիրները: Դրանցից յուրաքանչյուրի գինը գերազանցում է 60 հազար ԱՄՆ դոլարը⁶³»:

Հետաքրքիր է, որ ըստ «Նովիյ ռեգիոն» ինտերնետային լրատվամիջոցի հրապարակած ուսումնասիրության, նույնիսկ համաշխարհային տնտեսական ճգնաժամը չի սահմանափակել հետխորհրդային տարածքում ռազմական ծախսերը⁶⁴: Ըստ այս աղբյուրի, Հայաստանի ռազմական ծախսերը, փորձագետների գնահատականներով, կազմում է ոչ քիչ, քան 600 միլիոն ԱՄՆ դոլար: Համեմատության համար նշենք, որ Ադրբեյջանի ռազմական ծախսերը գնահատվում են 3-4 միլիարդ ԱՄՆ դոլար, որի վերաբերյալ մտահոգություններ են արտահայտվել ԵԱՀԿ շրջանակներում: Ի դեպ, այս տվյալներում հաշվի չեն առնվում արտասահմանյան երկրներից ռազմական օգնությունները, ինչպես նաև դաշնակիցների աջակցության ուղղությամբ ծախսերը:

Դեռևս 2006 թ-ին հրապարակված մի ուսումնասիրության մեջ նշված է, որ ըստ ադրբեյջանական ռազմական փորձագետների, Հայաստանը սպառազինված է «Սկադ» տիպի, «Երկիր-Երկիր» տիպի 32 բալիստիկ-հրթիռային համակարգերով, որը լուրջ զսպող գործոն է պատերազմական գործողությունների կանխման տեսանկյունից⁶⁵:

Ըստ Jane's Intelligence Review-ի ուսումնասիրության. «Հայաստանն ունի 300 հատ T-72 տանկ՝ Երևանի կողմից հայտարարված 110-ի փոխարեն, իսկ Ադրբեյջանն ունի 350-400 հատ նույն տանկերից՝ չնայած հայտարարում է 217-ի մասին⁶⁶»:

Նշված և շատ այլ հրապարակումներում ներկայացված տեղեկությունները հիմք են տալիս պնդելու, որ չկարգավորված հակամարտության պայմաններում անվտանգության ապահովման նպատակով բավական մեծ ֆինանսական միջոցներ են հատկացվում նոր սպառազինությունների և դրանց ծավալի մեծացման ուղղությամբ:

Իհարկե, անվտանգության ապահովման տեսակետից սա լիովին տրամաբանական մոտեցում է, քանի դեռ կողմերը չեն գիտակցել ավելի քիչ ծախսատար անվտանգության համակարգերին անցնելու գաղափարին: Սակայն սպառազինությունների ձեռքբերման քանակի վերաբերյալ գաղտնիությունը սեփական քաղաքացիներից՝ նկատի ունենալով կոռուպցիայի տարածվածության բարձր մակարդակը ըստ միջազգային և տեղական գնահատականների⁶⁷, ավելի շատ հարցեր են առաջացնում պաշտպանական բյուջեի միջոցների օգտագործման արդյունավետության և նպատակայնության վերաբերյալ, որոնց գաղտնիության հիմնավորմամբ պատասխաններ չեն տրվում:

⁶² <http://www.tert.am/am/news/2011/09/20/moldova/>
http://www.1in.am/arm/armenia_politics_35229.html
<http://kp.md/daily/25758.4/2743110/>

⁶³ http://www.tert.am/am/news/2011/11/09/latvia-armenia/#.Trz_KEZllmA.facebook

⁶⁴ <http://www.nr2.ru/inworld/274842.html>

⁶⁵ http://dumaem.ru/index.php?iq=st_show&pr_id=4&rm_id=13&tm_id=5&st_id=867&lid=0&page=1

⁶⁶ http://www.1in.am/arm/regional_expert_12291.html

⁶⁷ http://transparency.org/publications/publications/other/corruption_perceptions_index_2011

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության կարևոր խնդիրներից է ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների ապահովումը և հզորացումը, մարդու իրավունքների խախտումների կանխարգելման և վերականգնման արդյունավետ մեխանիզմների ձևավորումը:

Կարելի է առանձնացնել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության երեք բնագավառ.

1. զորակոչ և զինծառայության անցնելու գործընթաց
2. զինծառայություն
3. զորացրում:

Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները զորակոչի ու զինծառայության անցնելու ընթացքում

Զորակոչի և զինվորական ծառայության անցնելու գործընթացները կարգավորվում են հետևյալ իրավական ակտերով:

1. «Զինապարտության մասին» ՀՀ օրենքը⁶⁸
2. ՀՀ պաշտպանության նախարարի 2010 թվականի N 175 հրամանով հաստատված «Զինապարտների բժշկական եվ զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը»⁶⁹
3. «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքը⁷⁰
4. «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքը⁷¹

«**Զինապարտության մասին**» ՀՀ օրենքի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան (բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի, այն է. «Կրթությունը շարունակելու համար պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած անձինք պարտադիր զինվորական ծառայության են կանչվում մինչև 27 տարեկան դառնալը, բացառությամբ պետական պատվերով պետական գիտակրթական համակարգի, միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով օտարերկրյա պետությունների կամ սույն օրենքի 16 հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքում ասպիրանտուրայում սովորողների, ինչպես նաև դատական դպրոցի ունկնդիրների, որոնց տարկետում տրվում է մինչև ուսման ավարտը: Եթե նշված անձինք ուսումն ավարտում են 27 տարեկանից բարձր տարիքում, ապա պարտադիր զինվորական ծառայության են կանչվում ասպիրանտուրան ավարտելուն հաջորդող զորակոչի ընթացքում») արական սեռի զորակոչիկները և մինչև 35 տարեկան առաջին խմբի պահեստագործի սպաները, ովքեր ըստ իրենց առողջական վիճակի ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում (հոդված 11): «**Զինապարտության մասին**» ՀՀ օրենքով ամրագրված են մի շարք նորմեր, որոնցով կարգավորվում են զորակոչիկների՝ ծառայությունից ազատվելու, տարկետում ստանալու, ծառայության վայրի որոշման հետ կապ-

⁶⁸ <http://www.arlis.am/>

⁶⁹ տե՛ս նույն արդյուրը

⁷⁰ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1317&lang=arm>

⁷¹ <http://www.arlis.am/>

ված հարցերը:

Յետաքրքիր է, որ **«Ջինապարտության մասին»** ՀՀ օրենքով սահմանվում են պարտադիր զինծառայությունից տարկետման տրամադրելու կամ զինվորական ծառայությունից ազատելու վերաբերյալ տարբեր մեխանիզմներ:

ա) ՀՀ կառավարությունը, ըստ **«Ջինապարտության մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ի 2-րդ կետի**⁷²՝ որոշում է քաղաքացիների կատեգորիաները և պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում է տրամադրում առանձին քաղաքացիների:

Ըստ **Նույն օրենքի հոդված 12-ի, 1-ին կետի գ/ ենթակետի**⁷³՝ կառավարությունը իր որոշմամբ առանձին քաղաքացիների ազատում է զինվորական ծառայությունից:

բ) հանրապետական գորակոչային հանձնաժողովի որոշմամբ քաղաքացին պարտադիր զինվորական ծառայությունից կարող է ազատվել (**հոդված 12, 1-ին կետի ա/ ենթակետը և հոդված 15, 3-րդ կետ**) առողջական վիճակի պատճառով: Նման դեպքերում հանրապետական գորակոչային հանձնաժողովի որոշման հիմք է հանդիսանում կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությունը:

գ) ՀՀ պաշտպանության նախարարը հանրապետական գորակոչային հանձնաժողովի եզրակացության հիման վրա որոշում է ընդունում պարտադիր զինվորական ծառայությունից ընտանեկան դրության բերումով տարկետում տրամադրելու վերաբերյալ (**«Ջինապարտության մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ի կետ 3 և հոդված 18-ի 2-րդ կետ**):

Այսպիսով, պարտադիր զինվորական ծառայության անցնելու նպատակով գորակոչի կազմակերպման գործընթացում քաղաքացիներին տարբեր հիմքերով տարկետում տրամադրում են երեք տարբեր մարմիններ՝ ՀՀ կառավարությունը, ՀՀ պաշտպանության նախարարը և հանրապետական գորակոչային հանձնաժողովը:

Ինչով է պայմանավորված տարկետման տրամադրման երեք տարբեր մեխանիզմների առկայությունը՝ հասկանալի չէ: Այսինքն, չի պահպանվում իրավական որոշակիության սկզբունքը, որի հետևանքով քաղաքացիներին հասկանալի չէ այն նորմերը, որոնցով կարգավորվում է գորակոչի գործընթացը: Սա իր հերթին բարդացնում է հասարակական վերահսկողության իրականացումը:

Տարբեր հիմնավորումներով տարկետման տրամադրման և պարտադիր զինծառայությունից ազատելու վերաբերյալ որոշում ընդունող մարմինների նման «բազմազանությունը» կարելի է դիտարկել որպես խտրական վերաբերմունք քաղաքացիների նկատմամբ: Եթե ուսումնասիրենք ՀՀ կառավարության կողմից տարկետման տրամադրման և պարտադիր զինծառայությունից ազատելու վերաբերյալ որոշումները, ապա դրանք հիմնականում վերաբերում են Հայ առաքելական եկեղեցու սպասավորներին և այլ երկրներում սովորող ուսանողներին⁷²: Թե ինչու երկրի ներսում ուսանողներին չպետք է տրամադրվի տարկետում նույնպես կառավարության որոշմամբ՝ հասկանալի չէ:

Առանձին ուշադրության է արժանի առողջական հիմքով զինվորական ծառայությանը պիտանի և ոչ պիտանի ճանաչելու գործընթացը:

Հիվանդությունների ցանկը սահմանվում է ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով հաստատված **«Ջինապարտների բժշկական եվ զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգում»**: Մեր տրամադրության տակ գտնվում է նշված ցանկը հաստատելու

⁷² http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=7423&DocID_AM=7423&DocID_RU=0&DocID_EN=0
http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=7911&DocID_AM=7911&DocID_RU=0&DocID_EN=0
http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=34838&DocID_AM=34838&DocID_RU=0&DocID_EN=0

մասին **ՀՀ պաշտպանության նախարարի 2006 թվականի մարտի 30-ին ընդունված թիվ 378 և 2010 թվականի փետրվարի 26-ին ընդունված թիվ 175 հրամանները**: Այդ հրամաններով սահմանված «Հիվանդությունների և ֆիզիկական թերությունների ցանկ»-երի համեմատությունը ցույց է տալիս, որ կատարվել են փոփոխություններ, ինչպես հիվանդությունների ցանկում, այնպես էլ ըստ առանձին հիվանդությունների պիտանիության և ոչ պիտանիության վերաբերյալ սահմանումներում:

Նշենք, որ դեռևս 2008 թ-ին նշված հրամանը ստանալու տեղեկատվության հարցումը⁷³ մերժվել էր ՊՆ-ի կողմից այն հիմնավորմամբ, որ այն հանդիսանում է ծառայողական գաղտնիք: Չնայած ի պատասխան նմանատիպ հարցմանը՝ «Ասպարեզ» լրագրողական կազմակերպությանը ՊՆ-ն տրամադրել էր, սակայն 2006 թ-ի թիվ 378 հրամանը չէր հրապարակված պաշտոնական տեղեկագրում և տեղադրված չէր www.arils.am կայքում և հետևաբար մատչելի չէր քաղաքացիներին: Այսինքն, առնվազ 2006-2009 թթ-ին առողջական խնդիրների պատճառով զորակոչիկների վերաբերյալ որոշումները ոչ միայն հասկանալի չէին զորակոչիկների և նրանց հարազատների համար, այլև հնարավոր չէր ստուգել դրանց համապատասխանությունը կարգով սահմանված դրանց ցանկին: 2010 թ-ի թիվ 175 հրամանն արդեն տեղադրված է www.arils.am կայքում և մատչելի է քաղաքացիներին:

Առանձին ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ զորակոչիկներին կամ նրանց ծնողներին չի տրամադրվում զորակոչի նպատակով բժշկական զննության եզրակացությունները, որի հետևանքով նրանք զրկվում են հետագա բողոքարկման հնարավորությունից, ինչպես վկայում են ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմած զորակոչիկների ծնողները:

2009 թ-ի հունիսի 16-ի կազմակերպության հարցմանը ոչ շարային ծառայության կարգը ստանալու մասին՝ ՀՀ ՊՆ-ն հայտնել էր, որ «զինծառայողների պիտանելիությունը զինվորական ծառայությանը որոշվում է ՀՀ ՊՆ 30.06.06 #378 հրամանի համաձայն: Ֆիզիկապես պրակտիկորեն առողջ քաղաքացիների նկատմամբ ընդունվում է «Պիտանի է շարային ծառայության» որոշումը: Այդ կատեգորիայի զինծառայողների համար ծառայողական պարտականությունների և զորատեսակների մեջ ընդգրկելու համար որևէ սահմանափակում չկա: Շարային ծառայությանը պիտանի ճանաչված զինծառայողների պարտականությունները սահմանվում են ՀՀ ԶՈՒ կանոնադրություններով և կանոնադրքերով: Տարբեր տիպի հիվանդություններ, ֆիզիկական աննշան արատներ ունեցող քաղաքացիների նկատմամբ վերը նշված ակտերով սահմանված հիմքերի առկայության դեպքում ընդունվում է «Պիտանի է ոչ շարային ծառայության» որոշումը: Ոչ շարային ծառայությունը իր մեջ ներառում է ֆիզիկական և շարային պատրաստության պարապմունքների, մարտական հերթապահություններում ընդգրկման սահմանափակումներ»:

2011 թ-ի նույն հարցի վերաբերյալ մեր հարցմանը ՊՆ-ն հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում ներկայումս գործում է ոչ շարային ծառայության կարգը: Սակայն որևէ պաշտոնական տեղեկագրում այդ կարգը մեզ չի հաջողվել գտնել: Այսինքն, իրավական փաստաթուղթը, որով կարգավորվում է ոչ շարային ծառայությունը՝ մատչելի չէ քաղաքացիների համար:

Այսպիսով, պաշտպանական գերատեսչության կողմից ընդունվում են իրավական ակտեր կամ իրավական ակտերում կատարվում են փոփոխություններ, որոնց մասին, ըստ ՀՀ ՊՆ հանրային իրազեկման հայեցակարգի 2-րդ բաժնի 5-րդ կետի, պետք է իրազեկեն

⁷³ [http://www.hcav.am/attachments_/5f854_zekuyc_zorakoch_2008\[1\].pdf](http://www.hcav.am/attachments_/5f854_zekuyc_zorakoch_2008[1].pdf)

հասարակությանը (պաշտպանական բարեփոխումների իրականացմանը զուգընթաց շարունակել հանրությանն իրազեկել օրենսդրական դաշտում կատարվող փոփոխություններին՝ ըստ անհրաժեշտության կազմակերպելով նաև հանրային քննարկումներ), որը, սակայն, չի կատարվում:

Ջորակոչի ընթացքում քաղաքացիների դիմում-բողոքներում բարձրացված հարցերի վերլուծությունները ցույց են տալիս, որ պատշաճ կերպով չեն պահպանվում զորակոչի վերաբերյալ իրավական նորմերը: Մասնավորապես, բողոքները վերաբերում են ոչ միայն ռազմաբժշկական փորձաքննության անցկացման ընթացակարգի ոչ պատշաճ պահպանմանը, այլև առողջական խնդիրների ոչ պատշաճ ախտորոշմանը՝ չնայած պաշտպանական գերատեսչության ղեկավարները պնդում են, որ իրենց հիվանդ զինվորներ պետք չեն⁷⁴:

2011 թ-ի հունիսի 1-ին թիվ 2/1443 գրությամբ ՀՀ զինվորական կոմիսար, գեներալ-մայոր Ս. Չալյանը դիմել է ՀՀ բժշկական սոցիալական փորձաքննության գործակալության պետ Մ. Վանյանին, որում նշվում է. «Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով խնդրում եմ ստուգել և հայտնել տարածքներում ընդգրկված քաղաքացիների հաշմանդամության կարգի վերաբերյալ տեղեկատվությունը՝ զինվորական կոմիսարիատներում տարկետում տրամադրելու օրինականությունը ստուգելու համար»: Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության պետը 2011 թ-ի հունիսի 2-ին հանձնարարել է գործակալության իրավախորհրդատուին նախապատրաստել հանձնարարական՝ զինվորական կոմիսարի ներկայացրած ցուցակում ներգրաված անձանց գործերը ուսումնասիրել և կազմակերպել հսկողական քննություն: 2011 թ-ի հունիսի 7-ի թիվ 23 հանձնարարականով գործակալության պետին հանձնարարվում է ուսումնասիրել ՀՀ զինկոմիսարի ներկայացրած ցուցակներում ընդգրկված անձանց բժշկասոցիալական փորձաքննության գործերը, փորձաքննական որոշումները և սեղմ ժամկետում ներկայացնել զեկուցագիր այդ որոշումները վերահսկողության կարգով վերանայելու համար: Հետաքրքիր է, որ վերափորձաքննության արդյունքում որոշ քաղաքացիների հաշմանդամության խումբը փոխվել է, որի արդյունքում նրանց զավակները արդեն ենթակա են զորակոչման:

Այսինքն՝ տվյալ դեպքում տեղի ունի ՀՀ զինվորական կոմիսարի կողմից ուղղակի միջամտություն բժշկասոցիալական փորձաքննության գործակալության գործառույթներին:

Քանի որ, յուրաքանչյուր զորակոչից հետո զորակոչային արդյունքների քննարկման և ամփոփման ժամանակ հայտարարվում է, թե որ զինկոմիսարիատն է կատարել այսպես կոչված պլանները⁷⁵, պետք է ենթադրել, որ զինկոմիսարի կողմից նշված գրությունը նպատակ է հետապնդել բացահայտել այսպես կոչված զորակոչային «թաքնված» ռեսուրսները, որը «պատշաճ կերպով» իրականացրել է ԲՄՓ գործակալությունը:

Ջորակոչի գործընթացը կարգավորող կարևոր իրավական ակտ է հանդիսանում «**Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին**» ՀՀ օրենքը⁷⁶, որն ընդունվել է 2003 թ-ին և ուժի մեջ մտել է 2004 թ-ից: Այս օրենքը ընդունվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ շատ քաղաքացիների գտնվում են արտերկրում, ենթակա են զորակոչման, սակայն խուսափում են զինծառայությունից, որը քրեորեն պատժելի արարք է համարվում (ՀՀ Քր. օրենսգրքի 363 հոդվածը): Օրենքը թույլ է տալիս դադարեցնել զորակոչի ենթակա քաղաքացիների նկատմամբ քրեական հետապնդումը՝ որոշակի գումարի փոխհատուցման դեպքում: Սակայն, օրենքի կիրառումը պայմանավորված է

74 http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2009-01-08/article_2953/page.html

http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2011-09-08/article_4215/A_soldier_who_Served_for_two_months_was_recognized_Unfit_for_Military_Service.html

75 <http://www.mil.am/old-1299194931>

76 www.arlis.am

մի շարք դժվարություններով, մասնավորապես, եթե քաղաքացու գտնվելու երկրում բացակայում է ՀՀ դեսպանությունը կամ հյուպատոսարանը, ապա նա ցանկության դեպքում չի կարող օգտվել օրենքով սահմանված մեխանիզմներից, մյուս կողմից՝ որոշակի խնդիրներ են ունենում այն քաղաքացիները, որոնք ցանկանում են վերադառնալ երկիր և տեղում օգտվել օրենքի ընձեռած հնարավորությունից: Բազմաթիվ են դեպքերը, երբ քաղաքացին անմիջապես ձերբակալվում է երկիր վերադառնալիս՝ պետական սահմանը հատելիս, ենթարկվում է կալանավորման, իսկ կալանքից և քրեական հետապնդումից ազատվում է միայն համապատասխան վճարները կատարելուց հետո: Այսինքն, գտնվում է փաստացի պատանդի կարավիճակում, որի «փրկագինը» հանդիսանում է օրենքով սահմանված դրամական գումարի վճարումը:

Ինչ վերաբերում է զինծառայության անցնելուն՝ դրա հետ կապված որևէ ահազանգ կամ բողոքներ չի ստացվել: Որևէ անդրադարձ չի արձանագրվել նաև ՋԼՄ-ներում:

Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները զինծառայության ընթացքում

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2010-2011 թթ. իրականացրել է ՀՀ զինված ուժերում մահացության դեպքերի ուսումնասիրություն, որոնց վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 6-ում:



2010-2011 թ թ. 33 գիևկված ուժերում գրանցված մահվան դեպքերի վիճակագրությունը

Աղյուսակ 6

| Մահացությունների պատճառը/հետևանքը | | | | | | | | | | | | |
|-----------------------------------|----------------|--------------------------|------------------------|------------------|--------------------------------|----------------|--------------------|------------------------|------------------|--|-----------|---|
| Ամիս | Դեպքերի քանակը | Հրատաղարի ռեժիմի խախտում | Անվտանգության կանոններ | Ինքնասպանություն | Կանոնադրային հարաբերություններ | Դժբախտ պատահար | Առողջական խնդիրներ | Դիտավորյալ սպանություն | Անհայտ պայմաններ | Անփույթ վերաբերմունք ծառայության սկստամամբ | Ընդամենը | Դեպքերի վերաբերյալ պաշտոնական հարողագրության առկայություն |
| 2010 թ. | | | | | | | | | | | | |
| Հունվար | 1 | | | | | | 1 | | | | 1 | 1 |
| Փետրվար | 1 | | | | 1 | | | | | | 1 | 1 |
| Մարտ | 2 | 1 | | | 1 | | | | | | 2 | 1 |
| Ապրիլ | 1 | | | | 1 | | | | | | 1 | |
| Մայիս | 0 | | | | | | | | | | | |
| Հունիս | 7 | 5 | | | 3 | | 1 | | | | 9 | 1 |
| Հուլիս | 2 | | | | 7 | | | | | | 7 | 2 |
| Օգոստոս | 2 | | | | 1 | | 1 | | | | 2 | |
| Սեպտեմբեր | 3 | 1 | | 1 | 2 | | | | | | 4 | 2 |
| Հոկտեմբեր | 8 | 2 | 3 | | 3 | 1 | | | | | 9 | 3 |
| Նոյեմբեր | 3 | | | | 5 | 1 | | | | | 6 | |
| Դեկտեմբեր | 1 | | | | | | 2 | | | | 2 | |
| Ընդամենը | 31 | 9 | 3 | 1 | 24 | 2 | 5 | 0 | 0 | 0 | 44 | 10 |
| 2011 թ. | | | | | | | | | | | | |
| Հունվար | 1 | 1 | | | | | | | | | 1 | 1 |
| Փետրվար | 2 | | | 1 | 1 | | | | | | 2 | 2 |
| Մարտ | 3 | 3 | | | | | | | | | 3 | 3 |
| Ապրիլ | 4 | 3 | 1 | | | 1 | | | | | 5 | 6 |
| Մայիս | 1 | 1 | | | | | | | | | 1 | 1 |
| Հունիս | 2 | | 2 | | | | | | | | 2 | 1 |
| Հուլիս | 5 | | 1 | | 1 | 2 | | 1 | 1 | | 6 | 4 |
| Օգոստոս | 3 | | | 2 | 1 | | | | | | 3 | 2 |
| Սեպտեմբեր | 3 | | | | 1 | 2 | | | | | 3 | 4 |
| Հոկտեմբեր | 8 | 1 | 2 | 2 | 1 | 1 | 1 | | | | 8 | 5 |
| Նոյեմբեր | 2 | 2 | | | | | | | | | 2 | 2 |
| Դեկտեմբեր | 2 | | | | | | 1 | | | 1 | 3 | 1 |
| Ընդամենը | 36 | 11 | 3 | 9 | 5 | 6 | 2 | 1 | 1 | 1 | 39 | 32 |

2005-2011 թթ. ՀՀ զինված ուժերում մահացության ելքով դեպքերի, մահացության թվերի վերաբերյալ պաշտոնական տվյալները ներկայացված են աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. 2005-2011 թթ. զինված ուժերում մահացության դեպքերի վիճակագրություն

| Պատճառ/հետևանք | | | | | | | | | | |
|-----------------|--------------------------|------------------|----------------|--------------------------------|--------------------|---------------------------------|------------------|------------------------|---|------------|
| Տարեթիվ | Հրադադարի ռեժիմի խախտում | Ինքնասպանություն | Դժբախտ պատահար | Կանոնադրային հարաբերություններ | Առողջական խնդիրներ | Անվտանգության կանոնների խախտում | Անհայտ պայմաններ | Դիտավորյալ սպանություն | Անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ | Ընդամենը |
| 2005 | | | | | | | | | | 47 |
| 2006 | | | | | | | | | | 33 |
| 2007 | 7 | 6 | | 15 | | | | | | 41 |
| 2008 | 3 | 8 | 39 | 17 | | 2 | | | | 69 |
| 2009 | 6 | 4 | 18 | 11 | | 3 | | | | 42 |
| 2010 | 11 | 3 | 5 | 24 | 5 | | | | | 54 |
| 2011 | 11 | 9 | 6 | 5 | 2 | 3 | 1 | 1 | 1 | 39 |
| Ընդամենը | 38 | 29 | 68 | 72 | 6 | 8 | 1 | 1 | 1 | 325 |

Ի դեպ 2006 թ-ին ՀՀ զինված ուժերում մահացության դեպքերի վերաբերյալ ՀՀ զինդատախազության տվյալները (36 դեպք) տարբերվում է այդ ժամանակվա ՀՀ ՊՆ նախարար Սերժ Սարգսյանի հայտարարած թվից (33)⁷⁷:

Մահվան դեպքերի և մահացությունների թվի տվյալները ցույց են տալիս, որ հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացությունների թիվը կազմում է ընդհանուր մահացությունների թվի մոտ 12 տոկոսը:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ 2010 թ-ին ՀԶԱ Վանաձորի գրասենյակի կողմից արձանագրված մահացությունների թվի (44 հոգի) և ՀՀ ՊՆ կողմից ներկայացված թվի (54 հոգի) միջև կա էական տարբերություն՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ ԶՈւ մահացությունների, նրանց առաջացման պատճառների վերաբերյալ տվյալները չի կարելի հավաստի համարել:

Հարկ է նշել, որ 2010 թ-ին 54 մահացության դեպքերի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն տրվել է միայն 10 դեպքի առնչությամբ: 2011 թ-ին 39 դեպքերից պաշտոնական հաղորդագրություն տրվել է 32-ի վերաբերյալ, որը հետևանք է 2011 թ-ին զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ հասարակական և լրագրողական համայնքի կողմից բարձր ուշադրության: Մահացության որոշ դեպքեր, ըստ պաշտոնական վարկածի, գնահատվում են որպես հանկարծակի մահ կամ ինքնասպանություն, սակայն դրանց նկատմամբ հասարակությունն ունի վերպահում, քանի որ լրագրողական և իրավապաշտպանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իրական պատճառները բոլորովին այլ են:

Այսինքն, ՀՀ զինված ուժերում չի պահպանվում զինծառայողների կյանքի իրավունքը և փորձ է արվում ներկայացնել դրանք որպես դժբախտ պատահարներ կամ դրանք պայմանավորել ծառայության հետ կապ չունեցող գործոններով:

Սրանով է պայմանավորված մահացած զինծառայողների հարազատների դժգոհություն-

⁷⁷ 2005 թ. - <http://www.armtown.com/news/am/ira/20070119/23961/>
 2006 թ. - <http://www.armtown.com/news/am/ira/20070119/23961/>
 2007 թ. - <http://95.140.203.42/am/law/2008/02/08/zindat/>
 2008 թ. - <http://www.state.gov/g/drl/rls/hrrpt/2006/78799.htm>

Ները մահացության դեպքերով իրականացվող քննչական գործունեությունից: Խիստ կասկածելի է թե՛ նախաքննության մարմնի վարկածները մահացության պատճառների, թե՛ ապացույցների հիմնավորվածության և թե՛ մեղադրանքների հիմնավորվածության և պատասխանատու անձանց բացահայտման տեսակետից (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ 5 և 6):

2010 և 2011 թթ. մահացության դեպքերի վերաբերյալ քրեական գործերի քննության ընթացքի մասին տվյալները ներկայացված է աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. 2010 և 2011 թթ. ՀՀ ԶՈՒ-ում տեղի ունեցած մահացության դեպքերի թիվը և հարուցված քրեական գործերի վիճակագրությունը

| Տարեթիվ | Դեպքերի թիվը | Հարուցված քրեական գործերի քանակը | Նախաքննության փուլ | Գործն ուղարկվել է դատարան | Դատաքննության փուլ | Դատաքննությունը ավարտվել է | Գործը ավարտվել է | Գործը փակվել է |
|---------|--------------|----------------------------------|--------------------|---------------------------|--------------------|----------------------------|------------------|----------------|
| 2010 | 54 | 16 | 9 | - | 3 | - | 4 | - |
| 2011 | 38 | 15 | 6 | 1 | - | 1 | - | - |

Որոշ դեպքերում մահացության դեպքերի նախաքննության ժամկետը բավականին երկար է, որոշ դեպքերում՝ խիստ կարճ, իսկ առանձին դեպքերում երկար տարիներ կարող են տևել դատական գործերը⁷⁸:

Եթե մահացության դեպքերի մասին տեղեկատվությունը հնարավոր է լինում ձեռք բերել մահացածների հարազատներից, ապա շատ ավելի քիչ տեղեկություններ են ստացվում կանոնադրային հարաբերությունների այնպիսի խախտումների մասին, որոնք չեն ավարտվում մահացությամբ:

2010 թվականին լրատվական միջոցներով զինծառայողների նկատմամբ ֆիզիկական բռնությունների մասին տեղեկություն է տարածվել 10 դեպքի վերաբերյալ, իսկ 2011 թ-ին՝ 15 դեպքի վերաբերյալ: Դեպքերի նկարագրությունները ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ 7-ում:

Նշենք, որ 2011 թ-ի սեպտեմբերի 24-ին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից զինակիցներին ուղղված ուղերձում նշվում է 2011 թ-ի ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում հատկապես միջանձնային հարաբերությունների ոլորտում դեպքերի և պատահարների քանակական աճի մասին, մինչդեռ դրանց վերաբերյալ հանրությունը իրազեկված չէ: Հանրությունը, զինծառայողների հարազատները պատշաճ չեն իրազեկվում նաև կանոնադրային հարաբերությունների խախտման դեպքերի ուղղությամբ իրականացված ծառայողական քննության արդյունքների, կարգապահական տույժերի կիրառման հիմքերի մասին: Նշենք, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը իր ընթացիկ կամ տարեկան զեկույցներում խիստ անբավարար կերպով է անդրադառնում ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակին⁷⁹:

Այսպիսով, ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի, մարդու իրավունքների խախտման դեպքերի քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները խիստ սահմանափակ են, հավաստի չեն, իսկ գոյություն ունեցող ժողովրդավարական, քաղաքացիական և հասարակական մեխանիզմները դեռևս արդյունավետ չեն:

⁷⁸ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2011-03-31/article_3995/Mataghis_Case_is_Getting_Complicated.html
⁷⁹ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2011-04-01/article_4000/If_one_of_the_Soldiers_turns_out_to_have_been_alive_on_December_31_the_Accusing_Party_willcommence_new_action.html
⁷⁹ <http://www.ombuds.am/library/library/page/101/type/3>

Վերջին տարիներին բավականին լայն քննարկումներ կազմակերպվեցին ՋԼՄ-ներում տարբեր ՅԿ-ների կողմից ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների խնդիրների վերաբերյալ, որոնց արդյունքում նախկինում բազմաթիվ «արգելված թեմաներ» դարձան քննարկման առարկա: Սակայն, համակարգային փոփոխություններ դեռևս իրականացված չեն:

Առանձին ուշադրության են արժանի ՀՀ ՋՈՒ կոռուպցիոն երևույթների թեման, որոնց վերաբերյալ ՋԼՄ-ներով ներկայացված ուսումնասիրությունները, ահազանգերը և նրանց վերաբերյալ իրավապահ մարմինների վերաբերմունքը (տես ՀԱՎԵԼՎԱԾ 8) ցույց են տալիս, որ պատշաճ քննության չեն արժանանում կոռուպցիոն դրսևորումները ՀՀ զինված ուժերում:

Ավելին, գոյություն ունեցող իրավական մեխանիզմները հնարավորություն չեն տալիս պատշաճ ժողովրդավարական, քաղաքացիական և հասարակական վերահսկողություն իրականացնել ՀՀ զինված ուժերում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու, կոռուպցիոն դեպքերը կանխարգելելու նպատակով:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, վերլուծելով ՀՀ պաշտպանության բնագավառին վերաբերող օրենսդրությունը, մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ փաստերը՝ կարելի է եզրակացնել, որ

1. բացակայում է Հայաստանի Հանրապետությունում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական, քաղաքացիական և հասարակական վերահսկողության մեխանիզմների իրականացման համար անհրաժեշտ իրավական նորմերը
2. Հայաստանի Հանրապետության պաշտպանական գերատեսչության գործունեության վերաբերյալ տեղեկությունները ամբողջովին հանդիսանում են գաղտնի, որն ամրագրված է օրենսդրորեն
3. Հայաստանի Հանրապետության պաշտպանական բյուջեն ամբողջովին գաղտնի է՝ թե՛ կառուցվածքի, թե՛ ընդունման և թե՛ իրականացման տեսակետից: Գաղտնիք են հանդիսանում նույնիսկ ոչ ռազմական նշանակության ծախսերը
4. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում բացակայում են ներքին բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ
5. պատշաճ քննություն չի իրականացվում ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների խախտման դեպքերի ուղղությամբ
6. զինված ուժերի վերաբերյալ օրենսդրական բազան, հատկապես գերատեսչական նորմատիվ փաստաթղթերը, մատչելի չեն քաղաքացիների համար:

ԱՌՎՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մշակել և ընդունել «ՀՀ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական, քաղաքացիական և հասարակական վերահսկողության մեխանիզմների մասին» ՀՀ օրենք
2. Անհապաղ ընդունել «Ներքին կարգապահական կանոնագրքի մասին» ՀՀ օրենքը, որը կապահովի զինված ուժերում ներքին բողոքարկման արդյունավետ մեխանիզմների ձևավորումը և իրագործումը
3. Պետական և ծառայողական գաղտնիք համարվող տեղեկությունների ցանկը սահմանել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով
4. Ապահովել «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի իրականացումը
5. Զինվորական կարգապահության, կոռուպցիոն դրսևորումների և ռիսկերի, մահացության յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ ապահովել ծառայողական և քրեական գործերի քննության օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ իրականացումը: Արդյունքները հրապարակել տարեկան զեկույցի ձևով
6. Մշակել և որպես պարտադիր տեղեկատվություն հրապարակել ՊՆ կողմից ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների մասին վիճակագրությունը
7. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով սահմանել ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի մասին տարեկան թեմատիկ զեկույցի հրապարակում մինչև ՀՀ ռազմական օմբուդսմենի հիմնադրումը ըստ ԵԽԽՎ 1742 (2006) հանձնարարականի
8. Գաղտնազերծել ՀՀ պաշտպանական բյուջեի ոչ ռազմական հատվածը՝ նախագծման, պլանավորման, ընդունման, իրացման և մյուս բոլոր փուլերում
9. Հստակեցնել ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի և ՀՀ ՊՆ միջև գործառույթները և պաշտպանության նախարարության առջև գլխավոր շտաբի պատասխանատվությունը
10. Առանձնացնել ՀՀ զինվորական կոմիսարիատը ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի ենթակայությունից և ներգրավել ՀՀ ՊՆ կազմում կամ զորակոչի ապահովման նպատակով ստեղծել այն որպես առանձին գործակալություն:

Հեղինակ՝

*Ժողովրդավարական վերահսկողության ժնկյան կենտրոնի ներկայացուցիչ,
Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի անվտանգության և պաշտպանության
կառավարման կենտրոնի ներկայացուցիչ
Վենելին Գեորգիև*

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԵՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՐԲ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Նախաբան

21-րդ դարի սկզբում փաստվեց, որ աշխարհի պետությունների երկու երրորդը ժողովրդավարական են՝ 193 պետություններից 118-ը: Ժողովրդավարական պետություններում ապրում է աշխարհի բնակչության մեծամասնությունը՝ 54.8%-ը:

Նման պայմաններում քաղաքացիական իշխանությունների և զինված ուժերի միջև հարաբերությունը խիստ կարևոր է ժողովրդավարական քաղաքական կայունության, պաշտպանության քաղաքականության մշակման և միջազգային անվտանգության համագործակցության տեսանկյունից: Շատ պետություններ, հատկապես նրանք, որոնք վերջերս են դուրս եկել ավտորիտար իշխանությունից, կարիք են ունեն հրատապ փոխելու քաղաքացիական-ռազմական հարաբերությունները՝ ելնելով ժողովրդավարական սկզբունքներից: Նույնիսկ երկար տարիների ժողովրդավարական պետությունները կարող են բախվել այնպիսի քաղաքացիական-ռազմական խնդիրների շուրջ տարաձայնությունների հետ, ինչպիսիք են պաշտպանության բնագավառի բյուջետավորումը, զինված ուժերի դերն ու առաքելությունները, սպաների և քաղաքացիական աշխատողների փոխադարձ պատասխանատվությունը արդյունավետ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության համար:

Քաղաքացիական-ռազմական հարաբերությունների առարկան

Ժողովրդավարական միջավայրի ձևավորման գործընթացը ձևակերպում է մի շարք հարցեր.

- քաղաքացիական-ռազմական հարաբերությունների ինչպիսի օրինակը կայուն կլինի պետության համար
- անվտանգության բնագավառի և զինված ուժերի նկատմամբ վերահսկողության որ տարբերակը կլինի առավել համարժեք
- ինչպես պետք է քաղաքացիական-ռազմական հարաբերությունները և անվտանգության բնագավառի ինստիտուտների, ինչպես նաև նրանց գործողությունների նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը պահպանվի զարգացող քաղաքացիական հասարակությանը զուգընթաց:

Քաղաքացիական-ռազմական հարաբերությունների հիմնական առարկան հստակ է. հասարակության կառույցներից մեկին՝ զինված ուժերին, տրված է մահաբեր ուժերի մեծաթիվ գործիքներ օգտագործելու մենաշնորհ, որպեսզի պաշտպանի այդ հասարակության շահերը: Այս մենաշնորհը վերապահում է զինված ուժերին ներուժով, որն ունի գերիշխող դեր այլ հաստատությունների նկատմամբ և կառավարման գործընթացում: Գերիշխել՝ չի նշանակում միանշանակ իրականացնել ռազմական բռնապետություն: Սակայն գերիշխանությունը կա-

րող է նշանակել նաև՝ ունենալ ահռելի ազդեցություն տեղական, տնտեսական, պետական, միջազգային և հասարակական բնագավառներում:

Ինչ է զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը


Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը անդրադառնում է զինված ուժերի և հասարակության միջև հարաբերությունները կառավարող նորմերին և չափանիշներին: Զինված ուժերը ենթարկվում են ժողովրդավարությամբ ընտրված իշխանություններին և վերահսկվում են խորհրդարանի, դատական իշխանության, ինչպես նաև լրատվական միջոցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից:

Ժողովրդավարական վերահսկողության արդյունավետ համակարգը բնութագրվում է հետևյալ բաղադրիչներով.

քաղաքացիական վերահսկողություն. քաղաքացիական իշխանությունները վերահսկում են ռազմական պաշտոնյաների առաքելությունները, կազմը, բյուջեն և գնումների քաղաքականությունը: Ռազմական քաղաքականությունը սահմանվում կամ հաստատվում է քաղաքացիական իշխանությունների կողմից, սակայն ռազմական պաշտոնյաներն ունեն էական ինքնուրույնություն ընդունելու որոշումներ այնպիսի հարցերում, թե ինչ գործողություններ են անհրաժեշտ լուծելու քաղաքականության խնդիրները, որոնք սահմանվել են քաղաքացիական իշխանությունների կողմից:

Ժողովրդավարական կառավարում. Ժողովրդավարական, խորհրդարանական և դատական մարմինները, ուժեղ քաղաքացիական հասարակությունը և անկախ լրատվատվամիջոցները վերահսկում են ռազմական գործիչների գործողությունները: Սա ապահովում է վերջիններիս հաշվետվողականությունը և՛ բնակչության, և՛ կառավարության առջև, ինչպես նաև խթանում է ռազմական գործիչների կողմից ընդունվող որոշումների և գործողությունների թափանցիկությանը:

քաղաքացիական փորձ. քաղաքացիներն ունեն պաշտպանության բնագավառի կառավարման և վերահսկման պարտականությունների իրականացման անհրաժեշտ փորձառություն: Այս խնդիրը պայմանավորված է զինված ուժերում մասնագիտական հմտություններին համեմատ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների տվյալ բնագավառում սահմանափակ փորձով:



Նկար 3. Անվտանգության բնագավառի ժողովրդավարական վերահսկողության համակարգի բաղադրիչները

չմիջամտել տեղական քաղաքականությանը. ո՛չ ռազմական գերատեսչությունը, և ո՛չ էլ ռազմական ղեկավարությունը չեն փորձում ազդել տեղական քաղաքականության վրա:

գաղափարական չեզոքություն. զինված ուժերը, բացի պետությանը հավատարիմ լինելուց որևէ այլ գաղափարախոսության կամ բարոյական նորմերին հավանություն չեն տալիս:

Նվազագույն դեր ազգային տնտեսության մեջ. զինված ուժերը կարող են հանդիսանալ ազգային ամենախոշոր գործատուն և ունենալ կապեր պաշտպանության հետ առնչվող տնտեսական համակարգերի հետ: Սա, համենայն դեպս, չի թուլացնում զինված ուժերի հավատարմությունը ժողովրդավարական քաղաքացիական ղեկավարությանը, չի թուլացնում նրա առաջնային առաքելության արդյունավետությունը կամ չի տանում անհավասար մրցակցության կամ չի հանգեցնում միջամտության քաղաքացիական արդյունաբերական բնագավառում:


Վերահսկողության արդյունավետ շղթա. զինված ուժերում գոյություն ունի վերահսկողության արդյունավետ շղթա, որն ապահովում է հաշվետվողականություն հասարակության և իրեն վերահսկող հաստատությունների առջև, ապահովում է հարգանք համապատասխան բոլոր օրենքների և ընթացակարգերի նկատմամբ և ձգտում է ունենալ մասնագիտացված զինված ուժեր:

հարգանք զինված ուժերի անձնակազմի իրավունքների նկատմամբ. զինված ուժերի անդամները ազատ են օգտվելու իրենց իրավունքներից:

Ինչո՞ւ է ժողովրդավարական հսկողությունը կարևոր: *Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը* անհրաժեշտ երաշխիք է, որպեսզի

- հարգվի ժողովրդավարությամբ ընտրված քաղաքացիական իշխանությունների քաղաքական գերակայությունը
- պաշտպանվեն օրենքի գերակայությունը և մարդու իրավունքները
- ունենան համընդհանուր աջակցություն և օրինականություն, և զինված ուժերը ծառայեն բնակչության շահերին
- զինված ուժերի քաղաքականություններն ու կարողությունները համապատասխանեն պետության քաղաքական խնդիրներին ըստ առկա ռեսուրսների
- զինված ուժերը չօգտագործվեն քաղաքական նպատակների համար:

Նկար 4-ը ներկայացնում է ռազմական-հասարակական հարաբերությունների զարգացումը:



Նկար 4. Ռազմական-հասարակական հարաբերությունների զարգացումը

Սառը պատերազմի ավարտից հետո մի շարք զարգացումներ առաջ բերեցին ժողովրդավարական վերահսկողության հետ կապված խնդիրներ.

- ժողովրդավարական վերահսկողության անբավարար մակարդակն ու դրա անհրաժե-

շուրջումը ժողովրդավարացման աննախադեպ ալիքի և անցումային ու ձախողված երկրների աճին զուգընթաց

- ժողովրդավարական վերահսկողության նորմերի օգտագործումը որպես միջպետական վստահության կառուցման միջոց. օրինակ, ԵԱՀԿ-ի Անվտանգության ռազմաքաղաքական խնդիրներին առնչվող վարքագծի կանոնները
- Եվրոմիության, ՆԱՏՕ-ի, Եվրոխորհրդի ընդլայնումը
- զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության վերաբերյալ բարձրացված շեշտադրումը խաղաղության համաձայնագրերի, խաղաղասիրության, կոնֆլիկտների կանխարգելման և կայուն զարգացման ենթատեքստում
- շատ պետություններում զինված ուժերի վերափոխումը նոր ռազմավարական իրավիճակին արձագանքելու նպատակով:

Ժողովրդավարական վերահսկողության օրինակներ

Գոյություն ունի ժողովրդավարական վերահսկողության երկու հիմնական օրինակ: Առաջինը հիմնված է վերահսկողության իրականացման ձևի վրա:

Ուղղահայաց հսկողությունը «վերևից-ներքև» ազդեցությունն է զինված ուժերի նկատմամբ: **Հորիզոնական հսկողությունը** նշանակում է մեկնաբանություններ կատարել կամ ոչ պաշտոնական ազդեցություն ունենալ պաշտպանության քաղաքականության խնդիրների վրա՝ լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջոցով: **Ինքնահսկողությունը** վերաբերում է այն գործողություններին, որոնք զինված ուժերը իրենք են իրականացնում որպեսզի ապահովեն և չխախտվեն կանոնները:

Մյուս մոտեցումը հիմնված է ժամանակային հսկողության վրա: **Ակտիվ ներգործող հսկողությունը** բաղկացած է քայլերից, որոնք ուղղված են լուծելու հետագա խնդիրները: **Արձագանքող հսկողության** էությունն է, երբ որոշումներն արդեն ընդունվել են, և այն ներառում է պաշտպանության քաղաքականության վերանայում կամ ծախսերի աուդիտ: **Գործառնական կամ ընթացիկ հսկողությունը** իրականացվում է ռազմական գործողությունների ժամանակ և ներառում է քաղաքական միջամտությունը զինված ուժերի վերահսկողական շղթայի կողմից կայացված որոշումներում:

Ինչ է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը հանդիսանում է հասկացություն ռազմական և քաղաքական գիտությունների մեջ, համաձայն որի երկրի ռազմավարական որոշում կայացնելու հիմնական պարտականությունը վերապահվում է քաղաքացիական քաղաքական գործիչներին և ոչ թե մասնագիտացված ռազմական գործիչներին: Զեդինակներից մեկը, վերաձևակերպելով Սամուել Զանթինգթոնի «Զինվորը և պետությունը» գրքում արտահայտված միտքը, քաղաքացիական վերահսկողության իդեալական տարբերակը ներկայացրել է հետևյալ կերպ՝ «Գիտակ, պրոֆեսիոնալ զինված ուժերը պատշաճ կերպով ենթարկվում են քաղաքացիական իշխանությունների կողմից որոշված քաղաքականությանը»: Գործնականում քաղաքացիական ղեկավարության կողմից վերահսկողության իրական մակարդակը մեծապես կարող է տարբերվել քաղաքականության ընդհանուր նպատակներից՝ մինչև իսկ իշխող քաղաքական գործիչների ընտրություն: Ռազմական հարցերում սահմանափակ փորձ ունեցող ղեկավարները հաճախ քիչ ընտրություն ունեն, սակայն պատերազմի գիտության ու արվեստի միջով անցած պրոֆեսիոնալ իրամանատարների՝ քաղաքականությամբ

յան սահմանների վերաբերյալ տեղեկացնելու մասին խորհուրդների վրա հույս դնելու դեպքերում ռազմական հաստատությունը կարող է մտնել բյուրոկրատական ասպարեզ գործողության կոնկրետ ընթացքը պաշտպանելու կամ դեմ լինելու դեպքում, քաղաքականության մշակման գործընթացը ձևավորելու և քաղաքացիական վերահսկողության հստակ կետերը անհատակեցնելու համար:

Քաղաքացիական վերահսկողության ջատագույնները, որպես կանոն, ընդունում են պատերազմի քառուզեվիցիան տեսակետը՝ շեշտելով դրա քաղաքական բնույթը: Ջորջ Կլեմենտյոյի բառերը «Պատերազմը չափազանց լուրջ է, որպեսզի վստահվի զինվորականներին» (ևսև հաճախ վերարտադրվում է. «Պատերազմը չափազանց կարևոր է, որպեսզի թողնվի գներալներին»), նույնպես արտահայտում է այս տեսակետը: Ընդհանուր ռազմավարական որոշումների ընդունումը, ինչպիսիք են՝ պատերազմ հայտարարելու որոշումը, ներխուժում սկսելու որոշումը, կոնֆլիկտը դադարեցնելու որոշումը, մեծ ազդեցություն են ունենում երկրի քաղաքացիների վրա: Քաղաքացիական վերահսկողության պաշտպանները այդ որոշումները դիտարկում են որպես համապատասխան ժողովրդի կամքին, և ոչ թե նրանց հանձնված լինելը ռազմական փորձագետների էլիտար խմբի հայեցողությանը:

Զինված ուժերը կառավարական հատուկ մարմին է, որն ըստ ենթադրության պետք է ավելի շատ իրականացնի, քան մշակի քաղաքականություններ, որոնք ենթադրում են որոշակի տեսակի ֆիզիկական ուժի կիրառում:

Քոենը հակիրճ ներկայացնում է նույն տեսակետը, ներկայացնելով, որ քաղաքացիական վերահսկողության իմաստը կայանում է նրանում, որ անվտանգությունը ենթակա է ազգի առավել լայն նպատակներին, քան հակառակը: Զինվորականության նպատակն է պաշտպանել հասարակությանը և ոչ թե սահմանումներ տալ:

Պետության՝ ուժ ունեցող մենաշնորհը մեծ մտահոգության առարկա է բոլոր ազգային առաջնորդների համար, ովքեր պետք է հույսները դնեն զինվորականության վրա: Զինվորական առաջնորդներին լրիվ ինքնիշխանություն կամ ինքնավարություն տալու վտանգը կայանում է նրանում, որ նրանք կարող են անտեսել կամ փոխել ժողովրդավարական որոշումների կայացման գործընթացը և օգտագործել ֆիզիկական ուժ կամ սպառնալ ֆիզիկական ուժով, որպեսզի հասնեն իրենց ցանկալի արդյունքներին: Վատագույն դեպքում դա կարող է հանգեցնել հեղաշրջման կամ ռազմական դիկտատուրայի: Վտանգավոր է ներքին քաղաքական ընդդիմությանը ճնշելու նպատակով ռազմական ուժի կիրառումը՝ ահաբեկման կամ ֆիզիկական ուժի միջոցով: Նման միջամտությունը կարող է դրսևորվել ժողովրդավարական գործընթացի կարևոր մասը հանդիսացող ազատ և արդար ընտրությունների իրականացման ժամանակ: Սա հանդիսանում է այն պարադոքսը, որ ստեղծում ենք մեզ բռնությունից պաշտպանելու կառույց՝ վախեցնելով ուրիշներին, միևնույն ժամանակ մենք վախենում ենք հենց այդ կառույցից, որ ստեղծել ենք մեզ պաշտպանելու համար:

Քաղաքացիական նախագահի կամ կառավարության այլ անձի նշանակումը որպես զինվորական գլխավոր հրամանատար՝ քաղաքացիական վերահսկողության իրավական ձև կամ մեթոդ է: ԱՄՆ-ում, սահմանադրության 1-ին հոդվածը լիազորություն է տալիս Կոնգրեսին պատերազմ հայտարարել, մինչդեռ սահմանադրության 2-րդ հոդվածը սահմանում է, որ նախագահը հանդիսանում է գլխավոր հրամանատարը: ԱՄՆ նախագահները օգտագործել են իրենց լիազորությունը ազատելու բարձրաստիճան սպաներին, որպես քաղաքականության և ռազմավարական վերահսկողության հաստատման միջոց: Այդպիսի օրինակ է կորեական պատերազմի ժամանակ Յարի Թրումանի և ամերիկյան քաղաքացիական պատերազմում Աբրահամ Լինքոլնի դերակատարումները:

Գոյություն ունեն տարբեր կարծիքներ հասարակությունից որպես առանձին մարմին

ռազմական մարմինը առանձնացնելու վերաբերյալ: «Զինվորը և պետությունը» գրքում Հանթինգթոնը վիճում է իր գրած «օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողություն», «կենտրոնացում քաղաքականապես չէզոք, ինքնավար և պրոֆեսիոնալ սպայական զորքեր» տերմինների շուրջ: Քանի որ ինքնավար պրոֆեսիոնալիզմը նպաստում է զինված ուժերի ռազմական համախմբվածությանը և նրանց բարոյական նկարագրի ձևավորմանը, այս մոտեցումը քննարկվում է այն իմաստով, որ զինվորական տղամարդկանց ու կանանց հետ պահի քաղաքական միջամտությունից: Ի տարբերություն նախորդ մոտեցման, զինվորը որպես քաղաքացի ընկալման ավանդույթը ելնում է այն տեսակետից, որ ռազմական բնագավառի «քաղաքացիականացումը» քաղաքացիական իշխանության նկատմամբ զինված ուժերի հավատարմությունը պահպանելու լավագույն ձևն է, որը կանխում է որպես հասարակությունից առանձին խավ զինվորականության անկախ «կաստայի» ձևավորումը:

Քաղաքացիական հասարակության և նրա կարողությունների սահմանումը

Քաղաքացիական հասարակությունը սովորաբար ներկայացնում է քաղաքացիների կամավոր, միասնական գործողությունների բնագավառը, որը զարգանում է միասնական շահերի, նպատակների և արժեքների շուրջ: Նման սահմանումը ներառում է այն ձևերը, որոնց միջոցով քաղաքացիները կառավարում են իրենց կյանքը, արտահայտում են իրենց կարծիքները, ֆինանսական շահերը, փոխանակում են տեղեկատվություն: Վերջիններիս արդյունքում ձևավորվում են հարաբերություններ, և ստեղծվում են այնքան բազմազան սոցիալական հաստատություններ տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում, որքան բազմազան են մարդիկ: Արհմիությունները, բնապահպանական խմբերը, կրոնական խմբերը, հետազոտական կենտրոնները (think tanks) և տեղաբնակների շարժումները քաղաքացիական հասարակության կազմակերպությունների օրինակներ են: Քաղաքացիական հասարակության գործողությունները վերջիվերջո փոխակերպվում են ոչ շահութաբեր գործողությունների՝ հասարակության կոլեկտիվ շահի համար, որպես հակակշիռ այլ քաղաքացիական կոալիցիաների, որոնք քայքայում են հանրային բարեկեցությունը (օրինակ՝ կազմակերպված հանցագործությունների խմբերը):

Երբեմն քաղաքացիական հասարակության խմբերը կարող են ունենալ հատուկ շահեր կամ խնդիրներ, բայց նրանք չեն առաջնորդվում զուտ մասնավոր կամ տնտեսական շահերով, ինչպես կորպորատիվ կազմակերպությունները: Քաղաքացիական կազմակերպությունները իրապես կարող են ունենալ փոխհարաբերություն կառավարության և քաղաքական բնագավառի հետ, երբ անկախ են և գոյություն ունեն հանրային տիրույթում: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները տարբեր սոցիալական խմբերի շրջանում ձևավորելով և ձեռք բերելով վստահություն՝ տարբեր պետական հաստատությունների, կառավարական մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ճանաչվում են որպես քաղաքականության և հասարակության կառավարման որակը բարելավողներ:

Անվտանգության բնագավառի նկատմամբ քաղաքացիական և ժողովրդավարական վերահսկողության սկզբունքները

Անվտանգության համակարգի ժողովրդավարական վերահսկողությունը սովորաբար ընկալվում է որպես զինված ուժերի և անվտանգությունն ապահովող այլ կազմակերպությունների ենթարկվելը ժողովրդավարական ճանապարհով ընտրված քաղաքական մարմիններին: Սա նշանակում է, որ ազգային անվտանգության և պաշտպանության բնագավառի վերաբերյալ

բոլոր որոշումների կայացումը պետք է փոխանցվի նրանց, ովքեր պատասխանատու են պետության անվտանգության և պաշտպանության քաղաքականության համար:

Այս գաղափարը առնչվում է հետևյալ հարցերին.

- ինչպես պետք է հասնել անվտանգության համակարգի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությանը
- ինչ կառույցներ և ընթացակարգեր են անհրաժեշտ դրա համար
- ինչ դեր պետք է խաղան ներկա պետական հաստատությունները՝ պետության ղեկավարը, խորհրդարանը, կառավարությունը կամ գործադիր իշխանության քաղաքացիական պետական ծառայողները:

Ըստ պրոֆեսոր Արմին Սթեյնքամի՝ քաղաքական և իրավական սկզբունքները և ժողովրդավարական վերահսկողության հաստատման հաջողված փորձն ու չափանիշները կարող են ամփոփվել երեք խմբերում:

Նախ, սահմանադրությունը պետք է երաշխավորի, որպեսզի քաղաքացիական մարմինները ունենան վերջնական լիազորություն հետևյալ բնագավառներում.

- պատերազմի և խաղաղության վերաբերյալ որոշումների կայացում (ժողովրդավարությունը իրապես գոյություն ունի, երբ մարդկանց կողմից ընտրված իշխանության կրողները միանշանակորեն կայացնում են որոշումներ հասարակության գոյության վերաբերյալ)
- զինված ուժերի, ոստիկանության, հետախուզության և անվտանգության ոլորտի այլ կառույցների կառավարում և վերահսկողություն
- անվտանգության ոլորտի կառույցների տեսակի, կառուցվածքի և չափի սահմանման լիազորությունը պետք է տրվի քաղաքացիական ուժային մարմիններին, այլ ոչ թե մասնագետներին:

Երկրորդը, ժողովրդավարական վերահսկողությունը պետք է նաև ունենա իր սահմանափակումները: Բոլոր երեք նշված ոլորտներում քաղաքացիական ուժային մարմինները արդարացիորեն կքննադատվեն, եթե նրանք որոշումներ կայացնեն առանց խորհրդակցելու փորձառու պաշտոնյաների կամ մասնագետների հետ: Այն նախ և առաջ կիրառվում է, երբ քաղաքացիական կողմն ունի քիչ պրոֆեսիոնալ գիտելիքներ ռազմական ոլորտում: Փորձառու պաշտոնյաների խորհուրդը այդ պատճառով կարևոր է անվտանգության և պաշտպանության քաղաքականության արդյունավետության տեսակետից: Դա չի նշանակում, որ նման խորհուրդների առաջարկները մշտապես ճիշտ են կամ դրանց պետք է հետևել: Զինված ուժերի առաքելությունը ժողովրդավարության և հասարակության պաշտպանությունն է, այլ ոչ թե դրանց կանխորոշումը:

Զինվորականությունը չպետք է մասնակցի կառավարման որոշումների գործընթացին: Ժողովրդավարության պայմաններում քաղաքացիները համոզված են, որ զինվորականներն անհրաժեշտ են որպես ազատությունը պահպանելու հիմնական գործիք՝ կարիքի դեպքում, բայց ռազմական ոլորտի առաքելությունը չի կարող դրվել հասարակության հիմքում:

Երրորդը, ժողովրդավարական վերահսկողության արդյունավետությունը պետք է ապահովվի պետական քաղաքական կառուցվածքներով՝ սահմանադրական-իրավական հիմքի վրա.

- պետական իշխանության կառուցվածքը պետք է ապահովի, որպեսզի զինված ուժերի

Նկատմամբ վերահսկողությունը բաժանված լինի գործադիր և օրենսդիր իշխանությունների միջև: Նրանցից ոչ ոք չի կարող լիարժեք վերահսկողություն իրականացնել, քանի որ ո՛չ օրենսդիրը, և ո՛չ էլ գործադիրը չպետք է կարողանան օգտագործել զինված ուժերը միմյանց դեմ: Զինվորականները պետք է ենթարկվեն նրանց երկուսին, և նրանք երկուսն էլ պետք է համագործակցեն անվտանգության և պաշտպանության բնագավառին վերաբերող հարցերում: Այս ամենը պետք է ապահովվի համապատասխան օրենսդրությամբ/օրենքով:

- զինված ուժերը գործադիր իշխանության մի մասն են: Կառավարությունը առաջարկում է պաշտպանության քաղաքականությունը և բյուջեն: Սա արվում է քաղաքացիական նախարարի կողմից, որին աջակցում են քաղաքացիական աշխատակազմը, որն ունի ռազմական ոլորտի վերաբերյալ գիտելիքներ, որը անհրաժեշտ է զինվորական ղեկավարության մոտ վստահություն ձեռք բերելու համար:
- անհրաժեշտ է կրթված և լավ իրազեկված քաղաքացիական անձնակազմ: Կառավարությունը պետք է ստեղծի կառույցներ, որտեղ սպաներն ու քաղաքացիական ծառայողները սովորում են միասին:
- ոչ միայն գործադիր, այլև օրենսդիր իշխանությունը պետք է ունենա հմուտ փորձագետներից բաղկացած աշխատակազմ ռազմական խնդիրներին առնչվող որոշումների կայացման կամ այդ որոշումները գնահատելու համար: Խորհրդարանին անհրաժեշտ է փորձագետ ոչ միայն խորհրդարանական վերահսկողության համար, այլև բյուջեն գնահատելու համար, որի համար պատասխանատու է օրենսդիր իշխանությունը:

Սառը պատերազմի ավարտից ի վեր անվտանգության բնագավառի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը դարձել է հաստատված միջազգային նորմ: Անցումային ժողովրդավարությունները բարեփոխումներ են կատարել իրենց անվտանգության բնագավառներում, որպեսզի վերացնեն բյուրոկրատիան և ուռճացված անվտանգության բնագավառները, որոնք նախկինում պատասխանատու են եղել պահպանելու ավտորիտար և տոտալիտար ռեժիմները: Հետկոնֆլիկտային հասարակությունները ստեղծել են անվտանգության հաստատություններ՝ կայուն ժողովրդավարական քաղաքականության համար հիմք ապահովելու նպատակով: Անվտանգության բնագավառի բարեփոխումը դարձել է նման ժողովրդավարական նպատակների միջոց և կազմակերպական սկզբունք՝ ազգային, տարածաշրջանային ու միջազգային կազմակերպությունների համար:

Ընդհանուր առմամբ, քաղաքացիական վերահսկողությունը ենթադրում է ժողովրդավարական հաստատությունների, խորհրդարանի և նրա համապատասխան հանձնաժողովների, քաղաքացիական հասարակությունների, լրատվամիջոցների և հենց անվտանգության բնագավառի ակտիվ ներգրավում անվտանգության բնագավառի քաղաքականության ձևակերպման, իրականացման, մոնիթորինգի և բարեփոխման մեջ: Դրանցից խորհրդարանի անդամները, քաղաքացիական կազմակերպություններն ու լրատվամիջոցներն ունեն ամենաշատ ճկունությունը՝ վերացնելու վերահսկողության և քաղաքականության բնագավառների թերությունները:

Ժողովրդավարական հասարակության բարեկեցության համար անվտանգության ապահովման գաղափարը դարձել է ընդունված սկզբունք: Հանրային անվտանգության ծրագրերը, որոնք ավելի շատ ուղղված են մարդու իրավունքների և ժողովրդավարական ազատությունների պաշտպանությանը, քան թե «ազգային» անվտանգությանը (ուղղված հաճախ վիճելի արտաքին սպառնալիքներին)՝ մնում են ակնհայտ առաջնահերթություն: Մարդկային անվ-

տանգության և անհատների անվտանգության ու վախից ազատ լինելու վրա կենտրոնանալով՝ պետությունները կարողացել են վերակողմնորոշել անվտանգության բնագավառին առնչվող ծառայությունները արտաքին պաշտպանության անհրաժեշտությունից դեպի քաղաքացիների անվտանգություն և նրանց մարդու իրավունքների ապահովում:

Այսօր անվտանգության բնագավառի ժողովրդավարական կառավարումը հաստատված միջազգային նորմ է և նախապայման է շատ միջազգային և տարածաշրջանային կառույցների համար, ինչպես նաև միջազգային բարեփոխումների և համագործակցության փաթեթների ձևավորման համար: Քանի որ անվտանգության բարեփոխումների իրականացման փորձը մեծացել է, համապատասխան կոնցեպցիաները դարձել են առավել բազմազան և ձևավորվել է ժողովրդավարական վերահսկողության իրականացման և կայունության միջոցների ավելի հստակ ըմբռնում: Մինևույն ժամանակ, այնուամենայնիվ, համապատասխան բարեփոխումների իրականացումը մնում է որպես մարտահրավեր:

Անվտանգության բնագավառի քաղաքացիական վերահսկողության նպատակահարմարությունը

Անվտանգությունն աշխարհում ռազմական առումով սահմանվել է պետությունների ի հայտ գալուց ի վեր, բայց կառավարության ժողովրդավարական սկզբունքների տարածումը և մարդկային անվտանգության ավելի լայն, ապառազմականացված կոնցեպցիայի ընդունումը հանգեցրել է ռազմական կոնցեպցիայի շրջանակում անվտանգության հասկացությունը որպես բացառիկ բնագավառի:

Համաձայն մարդկային անվտանգության սկզբունքի, անվտանգության ապահովումը պետք է ուղղակիորեն արձագանքի մարդկանց կարիքներին: Անվտանգության բնագավառը հաճախ փորձում է սահմանափակել իրենց գործողությունների վերաբերյալ հանրային իրազեկումը, քանի որ ազգային անվտանգության պահանջները իրապես պարունակում են գաղտնիության բաղադրիչներ: Սակայն անհիմն գաղտնիությունը կարող է հակառակ արդյունքն ունենալ, որը և հանգեցնում է հակաօրինական գործողությունները թաքցնելուն (և՛ գործողություններում, և՛ առավել լայն ռազմավարություններում): Օրինակ, երբ օգտագործվում է ֆինանսական ոչ ճիշտ կառավարումը կամ արգելված գործողությունները թաքցնելու նպատակով:

Պետության ամենահիմնական գործառույթներից մեկը քաղաքացիների անվտանգության ապահովումն է: Ժողովրդավարական պետությունն ունի պարտավորություն ապահովելու անվտանգություն, որն արդյունավետ է, թափանցիկ և հաշվետվու իր քաղաքացիներին: Ինչ վերաբերվում է ժողովրդավարական հասարակությունում ցանկացած այլ հանրային ծառայություններին, ապա հանրային անվտանգության ապահովման համար առավել իրավական պլատֆորմը հանդիսանում է պետությունը: Քիչ թվով առաջադրանքներ կարող են տրվել արտոնագրված մասնավոր ընկերություններին, սակայն նրանց լիազորությունները և գործողությունները պետք է պետական իշխանությունների և քաղաքացիական կազմակերպությունների կողմից ենթարկվեն մոնիթորինգի և վերահսկողության:

Անվտանգության բնագավառի նկատմամբ քաղաքացիական հասարակության վերահսկողության կարողությունները

Քաղաքացիական հասարակության կողմից պաշտպանությանը և հանրային անվտանգության նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունավետությունը պայմանավորված է նրանց փորձի արդյունքով և կառավարության որոշումները անկախ ձևով գնահատելու

կամ հաստատելու կարողությամբ: Քաղաքացիական կազմակերպությունները հաճախ առավել տեղյակ են տեղական կարիքներին և պահանջներին, քան կառավարությունն ու նրա տեղական կառույցները: Նրանք կարող են մանրամասն տեղեկատվություն տրամադրել հանրային իշխանություններին կոնկրետ համայնքների կարիքների ու շահերի վերաբերյալ: Նրանք կարող են նաև արժեքավոր փորձագիտություն ապահովել կոնկրետ թեմաների և սոցիալական խմբերի վերաբերյալ: Օրինակ, որոշ քաղաքացիական կազմակերպություններ կարող են առնչվել մարզինալ կամ խոցելի խմբերի հետ, ինչպիսիք են միգրանտները, ովքեր շատ երկրներում ձայն չունեն կամ շատ քիչ ձայն ունեն հանրային քաղաքականության մշակման գործընթացներում, և որոնք կարող են հանդիպել կոնկրետ մարտահրավերների՝ անվտանգության ու արդարադատության տեսակետից: Ավելին, քաղաքացիական հասարակության որոշ գործիչների հատուկ գիտելիքը և փորձը կարող են կառավարության կամ անվտանգության կառույցների համար հանդիսանալ տեղեկատվության լրացուցիչ աղբյուր:

Քաղաքացիական վերահսկողության ռազմավարությունները

Անվտանգության բնագավառի հանրային վերահսկողության գործընթացում քաղաքացիական հասարակության գործիչների արդյունավետ մասնակցության կարողությունը պայմանավորված է նրանց ընդհանուր իրավասություններով: Բոլոր քաղաքացիական կազմակերպությունները, անկախ իրենց կոնկրետ ուղղվածությունից, պետք է փորձեն աստիճանաբար զարգացնեն իրենց հմտությունները, որպեսզի պահպանեն իրենց շահառուներին տրվող ծառայության կայուն մակարդակը և հնարավորություն տան փոխհարաբերվելու և փոխազդելու շահագրգիռ կողմերի հետ՝ ներառյալ միջազգային մակարդակում:

Յետազոտություն և տեղեկատվություն

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, ինչպիսիք են հետազոտական հաստատությունները, ակադեմիական գերատեսչությունները և հետազոտական կենտրոնները (think tank-երը), կարող են իրականացնել քաղաքականությանն առնչվող հետազոտություններ և առկա քաղաքականությունների համապատասխան հետազոտություն և վերլուծություն և բացահայտել կոնկրետ բնագավառներում դրանց բարելավման ուղիները: Ի լրումն, կարող են իրականացվել դրանց առնչվող այլ խնդիրների հետազոտություններ, ներառյալ.

- տեղական համայնքների կամ մարզերի անվտանգության և արդարադատության պահանջները
- որոշակի խմբերի, օրինակ փոքրամասնությունների և կանանց անվտանգության շահերը
- անվտանգության մոտեցումների ազդեցությունը հիմնական խնդիրների ոլորտներում, ինչպիսին է բնապահպանությունը
- անվտանգության զարգացող տեխնոլոգիաների կիրառումը գաղտնիությունն ապահովելու նպատակով
- անվտանգության բնագավառի բարեփոխման մոտեցումների արդյունավետությունը
- անվտանգության ոլորտում բյուջետավորման գործընթացի և ծախսերի թափանցիկությունը:



Ինչ կարող է անել քաղաքացիական կազմակերպության անդամը հետազոտության բնագավառում

- *մշակել հետազոտության ռազմավարություն*. հավաքել համապատասխան տեղեկություն, խորացնել անվտանգության բնագավառի վերաբերյալ սեփական ըմբռնումները, ստեղծել գործողությունների հիմք, մշակել հետազոտության ռազմավարություն հետազոտության որևէ մեկ կամ մի քանի մեթոդով (տեղեկության հավաքում, մոնիթորինգ, քաղաքականության վերլուծություն, «կառուցվածքային» վերլուծություն կամ մոնիթորինգ և գնահատում)
- *իրականացնել հետազոտություն*. իրականացնել հարցազրույցներ կարևոր մարդկանց հետ, ովքեր տեղեկություն են տրամադրում, պատվիրել հանրային կարծիքի ուսումնասիրություն (սոցիոլոգիական հետազոտական ընկերություններին), կազմակերպել ֆոկլոր խմբերի քննարկումներ
- *ապահովել օբյեկտիվություն*. ներգրավել արտաքին հետազոտողներին, օգտագործել հայտնի մեթոդոլոգիաներ, լինել մեթոդոլոգիայի առումով հստակ, հնարավորություններ ստեղծել արտաքին վերանայման համար
- *ներկայացնել հետազոտության արդյունքները շահագրգիռ կողմերին և հասարակությանը*. հետազոտության նախագծման ժամանակ պլանավորել տարածման ռազմավարությունը, ապահովել համապատասխան ռեսուրսներ (դրամ, անձնակազմ, ժամանակ, կոնտակտային տվյալներ և այլն), հետազոտության ժամանակ հանդիպած մարդկանց տեղեկացնել վերջնական հաշվետվության մասին, կանխատեսել հնարավոր ազդեցությունը, որը կարող է ունենալ սեփական հետազոտությունը:

Շահերի պաշտպանություն

Քաղաքացիական հասարակության խմբերը կարող են հանդես գալ որպես կապող օղակ պաշտոնական գործընթացների և տեղական համայնքների միջև: Տեղական մտահոգությունների և խնդիրների հետ նրանց ծանոթ լինելը նրանց ուժեղ կողմերից մեկն է: Սակայն միայն տեղական խնդիրներով սահմանափակվելը առանց ազգային և միջազգային գործընթացների հետ լայն առնչության կարող է սահմանափակել նրանց ազդեցությունը:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պետք է հաշվի առնեն, թե իրենց գործը ինչքանով կշահի, եթե նրանք մատչելիություն և ազդեցություն ունենան քաղաքականության մշակման և իրականացման մեջ՝ տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում:

Շահերի պաշտպանությունը ծառայում է որպես ազդեցություն գործադրելու միջոց և սերտորեն կապված է իրազեկման բարձրացման և լոբբինգի հետ:

Ինչ կարող է անել քաղաքացիական կազմակերպության անդամը շահերի պաշտպանության բնագավառում

- *ստեղծել շահերի պաշտպանության քարոզարշավ և մշակել դրա ռազմավարությունը*. բացահայտել կարևոր խնդիրները, շահառուներին, նպատակներն ու խնդիրները, հիմնական ուղերձները, հաղորդակցման պլատֆորմները, առաջընթացը հետևելու ցուցանիշները, հիմնական խոչընդոտները, հետազոտության կարիքները, աշխատանքային պլանը, բյուջեն, մարդկային ռեսուրսները և հմտությունները, ինչպես նաև ռիսկերը

- *Նպատակաուղղել քարոզարշավները համապատասխան մակարդակներում*. օժանդակություն ստանալու նպատակով լրբբինգ անել տեղական ժողովրդավարական հաստատություններում և անվտանգության տեղական ապահովողների հետ, լրբբինգ անել ժողովրդավարական հաստատություններում ազգային մակարդակում և անվտանգության համար պատասխանատու նախարարություններում, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային դերակատարների շրջանում
- *հասկանալ քաղաքականության մշակումը*. բացահայտել, թե որ գործակալություններն ու հաստատություններն են պատասխանատու անվտանգության քաղաքականության համար, բացահայտել հիմնական որոշում կայացնողներին, հիմնական ժողովրդավարական ներկայացուցիչներին, ովքեր պատասխանատու են անվտանգության քաղաքականությունների համար, և նրանց, ովքեր հետաքրքրված են անվտանգության քաղաքականություններով
- *կառուցել քաղաքացիական կազմակերպությունների համախոհ խմբերի ցանց և դաշինքներ*. իրականացնել աշխատանք լրատվամիջոցների հետ, խթանել կարևոր ուղերձները, միաձայն հանդես գալ որպես ցանց, ուղղակիորեն դիմել մամուլին, անցկացնել մամլո ասուլիսներ, տարածել մամլո հաղորդագրություններ, պահպանել հավատարմություն:

Դասընթաց

Քաղաքացիական կազմակերպությունների համար հիմնական կարողությունը իրենց անձնակազմի, քաղաքացիների, անվտանգության ոլորտի անձնակազմի ուսուցումն է անվտանգության ոլորտի նկատմամբ վերահսկողության խնդիրների վերաբերյալ:

Լինի դա դասընթաց դասընթացավարների համար կամ որևէ դասընթաց սկզբունքների հիմնական փաթեթի մշակման համար, քաղաքացիական կազմակերպությունները կարող են կարևոր դեր կատարել թիրախային լսարանին վերահսկողության հասկացության, մոնիթորինգի ու շահերի պաշտպանության հմտությունների տրամադրման գործում: Նմանապես կարևոր է դասընթացները տարբեր խմբերի հմտություններին և կարողություններին համապատասխանեցնելը: Աջակցելով անվտանգության ոլորտի վերահսկման լայնածավալ ընկալմանը՝ քաղաքացիական կազմակերպությունները որպես այդ հսկողության կենտրոնական դերակատարներ նաև հզորացնում են իրենց իսկ իրավունակությունը և վստահությունը:

Ինչ կարող է անել քաղաքացիական կազմակերպության անդամը այս բնագավառում.

- *բացահայտել անվտանգության ոլորտում դասընթացների կարիքները*. բացահայտել անվտանգության ոլորտում «հաղորդակցման կետերը», դասընթացի կարիքները բացահայտելու նպատակով իրականացնել դասընթացի գնահատումներ և վերլուծություններ, հետազոտել գոյություն ունեցող դասընթացների ծրագրերը՝ կրկնօրինակելուց խուսափելու համար և առաջադրել դասընթացի առաջնահերթություններ
- *մշակել դասընթացների ծրագրեր անվտանգության ոլորտի անձնակազմի համար*. օգտագործել մատչելի միջազգային և տեղական ռեսուրսները դասընթացի ծրագրեր մշակելու համար, մասնագիտանալ և կենտրոնանալ թեմատիկ բնագավառների վրա (կանանց, երեխաների կամ փոքրամասնությունների իրավունքներ, համայնքային անվտանգություն, թրաֆիկինգ և այլն), որոնցում կազմակերպությունն ունի համեմատաբար առավելություններ, բացահայտել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկա-

րաժամկետ չափելի չափանիշներ և նպատակներ՝ արդյունքների հասնելու համար

- *իրականացնել դասընթացային ծրագրեր*. ընտրել մեթոդներ, գործողություններ և դասընթացի տիրույթ, որտեղ մասնակիցները իրենց զգում են ապահով և հարգված, օգտագործել խնդիրներին ուղղված ավելի շատ ախտորոշիչ մոտեցում, քան թե այնպիսի մոտեցում, որը մատնանշում ու մեղադրում է, դասընթացի ծրագրերում ներառել տեղական և ավանդական մեթոդները, տեղական պատմությունն ու մշակույթը, անցկացնել դասընթացավարների դասընթացներ:

Մոնիթորինգ

Քաղաքացիական հասարակության խմբերը կարող են նպաստել անվտանգության ոլորտի հաշվետվողականությանը և ճիշտ կառավարման գործընթացին՝ դիտարկելով և մոնիթորինգի ենթարկելով կենտրոնական իշխանությունների և անվտանգություն ապահովող հանրային հաստատությունների գործողությունները և պահանջելով նրանցից հաշվետվողականություն: Պետությանը հնարավոր է մոնիթորինգի ենթարկել՝ ուսումնասիրելով իր կողմից ստանձնած միջազգային և երկկողմանի համաձայնագրերով նախատեսված պարտականությունների կամ քաղաքականության իրականացման ընթացքը: Պետության կառավարությանը կարելի է մոնիթորինգի ենթարկել նաև ծախսերի, կոռուպցիայի, քաղաքականության գործընթացների և արդյունավետության առումներով:

Ինչ կարող է անել քաղաքացիական կազմակերպության անդամը այս բնագավառում.

- *զարգացնել կարողությունը մոնիթորինգում ընդգրկվելու համար*. հետազոտել մոնիթորինգի մեթոդները և ինֆորմացիայի հավաքման հմտությունները, կարդալ և սովորել անվտանգության բնագավառի վերաբերյալ հրատարակված մոնիթորինգի հաշվետվություններից, ընտրել թեմատիկ բնագավառներ, որտեղ կազմակերպությունը համամատաբար առավելություն ունի
- *անվտանգության բնագավառի նախարարություններում ստեղծել կոնտակտների ցանց*. կապվել անվտանգության բնագավառի պաշտոնաթող անձնակազմի հետ, միավորվել կամ հիմնել անվտանգության բնագավառի հետ առնչվող քաղաքացիական կազմակերպությունների ցանց
- *հիմնել չափանիշներ անվտանգության ոլորտը ուսումնասիրելու համար*. հետազոտել համապատասխան ազգային օրենքներ և կանոնակարգեր տվյալ երկրում, ուսումնասիրել համապատասխան միջազգային համաձայնագրերը, ուսումնասիրել համապատասխան միջազգային ուղղորդող սկզբունքներ և հաջողված փորձը, վերափոխել այդ կարգավորումներն ու համաձայնագրի պարտավորություններով սահմանված չափանիշները՝ անվտանգության բնագավառը մոնիթորինգի ենթարկելու համար
- *մոնիթորինգի ենթարկել անվտանգության բնագավառը*. մոնիթորինգի ենթարկել անվտանգության բնագավառում ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմները, անվտանգության բնագավառի գործակալությունների կողմից քաղաքացիների անվտանգությունը ապահովելիս, անվտանգության բնագավառի անձնակազմի մարդու իրավունքների խախտումները, մոնիթորինգի ենթարկել լայն հասարակության, բնակչության մարդու իրավունքների խախտումները, պարբերական մոնիթորինգի հաշվետվություններում հրապարակել և տարածել բացահայտումները:

Բյուջեի վերլուծություն

Անվտանգության վերահսկողության մեջ ընդգրկված քաղաքացիական կազմակերպությունները պետք է կարողանան վերլուծել անվտանգության բյուջեներին առնչվող ֆինանսական տվյալները: Սա իրականացնելու համար քաղաքացիական կազմակերպությունները պետք է տեղեկացվեն և պահանջեն տեղեկություն պաշտոնական աղբյուրներից և վերլուծեն տվյալները՝ համեմատելով լավագույն փորձի չափանիշների հետ: Այս ձևով քաղաքացիական կազմակերպությունները կարող են լրբեինգ անել պետական ռեսուրսների արդյունավետ հատկացման համար, ինչպես նաև պետական կառույցներում կոռուպցիայի նկատմամբ վերահսկողության համար: Անհրաժեշտ է, որպեսզի քաղաքացիական կազմակերպությունները, որոնք զբաղվում են բյուջեի վերլուծությամբ, կարողանան վերլուծել անվտանգության բյուջեների վերաբերյալ տվյալները, նրանք պետք է հատուկ ուշադրություն դարձնեն պաշտպանության ոլորտի քողարկված ծախսերին և բյուջեից դուրս գործողություններին ու աղբյուրներին: Քաղաքացիական հասարակությունը չպետք է միայն հաշվի առնի այդ ծախսերը, երբ վերլուծության է ենթարկում պաշտպանության բյուջեն, այլև պետք է ստիպի կառավարություններին հաշտվողական լինել դրանց համար:

Ինչ կարող է անել քաղաքացիական կազմակերպության անդամը այս բնագավառում.

- *հայտնաբերել անվտանգության համապատասխան բնագավառի բյուջեն.* որոշել անվտանգության բնագավառի այն մասը, որը առնչվում է ձեր կազմակերպության մանդատին ու գործողություններին, որոշել անվտանգության յուրաքանչյուր կառույցի բյուջեն
- *իրականացնել լրբեինգ օրենսդրական բարեփոխումների նպատակով.* ապահովել, անվտանգության կառույցների ու բյուջետավորման գործընթացը կարգավորող օրենքների շրջանակի հստակությունն ու հասանելիությունը, բացահայտել օրենքի բացերը և հնացած օրենսդրությունը և խորհրդարանին ներկայացնել օրենսդրական փոփոխությունների համար առաջարկություններ
- *վստահեցնել կառավարությանը,* որ թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բխում են իրենց շահերից, որոնցով կարող է բարձրանալ նրանց լեգիտիմությունն ու կայունությունը, կառավարության քաղաքականության նկատմամբ հանրային աջակցությունը և հարկերի հավաքման անհրաժեշտ բարձրացումների ընդունելիությունը
- *հավաքել անկախ տվյալներ և ապահովել անկախ գնահատում.* հավաքել անկախ տվյալներ անվտանգության բնագավառի չափի և կառուցվածքի, քաղաքականությունների ու պրակտիկայի վերաբերյալ, ճշտել հակաօրինական գործողությունների վերաբերյալ տվյալները, ուսումնասիրել, թե արդյոք քաղաքականությունը, պրակտիկան և կառուցվածքը համապատասխանում են հատկացված բյուջեին, գնահատել, թե արդյոք արդյունքները բավարարում են հանրային անվտանգության բացահայտված կարիքները, ուսումնասիրել, թե արդյոք բյուջեից դուրս ֆինանսներն օգտագործվում են անօրինական բիզնեսի կամ կոռուպցիոն նպատակներով, կապել գնահատումը մոնիթորինգի գործողություններին, իրականացնել կոնկրետ ծրագրերի իրականացման մանրամասն աուդիտ և արդյունքները ներկայացնել խորհրդարանին և լրատվամիջոցներին, համեմատել անվտանգության բյուջեների վերաբերյալ կառավարության կողմից տրամադրված տեղեկատվությունը միջազգային կառավարական կամ ոչ կառավարական աղբյուրների տեղեկատվության հետ, ստուգել և համեմատել կառավար-

րության կողմից գնված ապրանքների կամ ծառայությունների գները միջազգային շուկայի հետ, մատչելի և հասկանալի ձևով հանրության շրջանում տարածել բյուջեի վերաբերյալ տեղեկատվությունը, պարզեցնել բյուջեն՝ խորացնելով քննարկումները

- *ազդել բյուջեի քաղաքականության վրա* բյուջեի ցիկլի տարբեր փուլերում. քննարկել տեսակետները պատգամավորների հետ, պատգամավորներին ներկայացնել ռեսուրսների հատկացման համար այլընտրանքային բյուջեների առաջարկներ, քաղաքացիներից ու շահագրգիռ խմբերից ստացված թարմ տեղեկությունները վերահասցեագրել որոշում կայացնողներին, բյուջեի և այլընտրանքային բյուջեների առաջարկների վերաբերյալ տեսակետները ներկայացնել լրատվամիջոցներին, մասնակցել հանձնաժողովի հանդիպումներին, երբ անց է կացվում բյուջեի վերլուծություն, բյուջեի վերահատկացումների համար խորհրդարանին ու նախարարություններին ներկայացնել առաջարկություններ, ստիպել կառավարությանը հաշվի առնել աուդիտի եզրահանգումները հետագա բյուջեի առաջարկների ձևակերպումներում, բացահայտել տեղական և միջազգային մակարդակում լավագույն փորձը և աջակցել խորհրդարանին և գործադիրին ուժեղացնելու հաշվետվողականության ձևերը
- *պահանջել արդյունավետ անկախ աուդիտ*. համոզված լինել, որ սահմանադրությունը և օրենսդրությունը ապահովում են ազգային աուդիտորական հաստատության հիմնումը, որն ունի անհրաժեշտ աստիճանի անկախություն, փորձ և ռեսուրսներ, համոզված լինել, որ ազգային աուդիտորական հաստատությունը ներառում է անվտանգության կառույցների իրավական, ֆինանսական և իրականացման աուդիտ, քաղաքացիներին և լրատվամիջոցներին ապահովել ազգային աուդիտորական հաստատության բացահայտումների մասին տեղեկատվությամբ, հրապարակել ազգային աուդիտորական հաստատության հաշվետվությունները
- *ռազմավարական դաշինք հաստատել խորհրդարանի և լրատվամիջոցների հետ*. աշխատել խորհրդարանի հետ, ձգտել ավելի հզոր, ռեսուրսներով հագեցած և արդյունավետ խորհրդարանի, ճնշում գործադել խորհրդարանի վրա պատասխանատու դեր ստանձնելու անվտանգության բյուջետավորման չորս հիմնական փուլերում, զարգացնել երկարաժամկետ հարաբերություններ խորհրդարանի այն հանձնաժողովների հետ, որոնք պատասխանատու են անվտանգության բնագավառի վերահսկողության համար, օգնել հանձնաժողովներին կամ ընդդիմադիր խմբերին մշակել այլընտրանքային առաջարկներ՝ ուղղված կառավարության բյուջեի առաջարկներին, խորհրդարանական հանձնաժողովների համար հանդիսանալ բյուջետային հարցերի վերաբերյալ անկախ տեղեկատվության և այլընտրանքային վերլուծության վստահելի աղբյուր, խնդրել խորհրդարանականներին վերահսկել գաղտնի բյուջեները, ընտրել խորհրդարանի անդամներ, որոնց պետք է հասանելի լինի դասակարգված տեղեկատվությունը և ապահովել անվտանգության գաղտնի ծրագրերի նկատմամբ վերահսկողության նվազագույն մակարդակ, լրատվամիջոցների ուշադրությունը հրավիրել անվտանգության բյուջետավորման հարցերի վրա, զարգացնել/հավաքել բյուջեի վերաբերյալ վերապատրաստման փորձ և կազմակերպել/ապահովել դասընթացներ քաղաքացիական այլ կազմակերպությունների համար, պատգամավորների, խորհրդարանի աշխատակազմի, լրատվամիջոցների համար՝ բյուջեի վերլուծության նրանց կարողությունը բարձրացնելու նպատակով:

Որպես եզրահանգում, կարելի է պատրաստել գործողությունների ամփոփ ցանկ, որը քաղաքացիական կազմակերպությունների անդամները կարող են կատարել՝ իրականաց-

Նելով անվտանգության բնագավառի, ներառյալ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրենց դերը:

Ինչ կարող է անել քաղաքացիական կազմակերպության անդամը. ընդհանրացում

Ներգրվել գործադիրին.

- իրականացնել հետազոտություն անվտանգության բնագավառի քաղաքականության և պրակտիկայի վերաբերյալ
- հավաքել համեմատական տվյալներ այլ երկրներից կամ տեսական մոդելներից
- կազմել հաշվետվություններ որոշումներ կայացնողների վրա ազդելու նպատակով և խթանել հանրային քննարկումներ
- անցկացնել մասնագիտական դասընթաց զինված ուժերում և այլ քաղաքացիական կազմակերպությունների համար:

Ներգրվել խորհրդարանին.

- իրականացնել փաստահավաք ուսումնասիրություններ
- կազմակերպել լոբբինգի արշավներ
- խորհրդարանական լսումների ժամանակ հանձնաժողովներին տալ գրավոր կամ բանավոր ապացույցներ
- խորհրդարանական հանձնաժողովներին ապահովել փորձագետ-խորհրդատուով
- խորհրդարանի անդամների համար կազմել օրենսդրական նախագծեր կամ օրենսդրական փոփոխություններ
- կառուցողական ձևով քննադատել օրենսդրությունը կամ օրենսդրական փոփոխությունները
- նախագծել այլընտրանքային փաստաթղթեր կամ անվտանգության այլընտրանքային քաղաքականություններ:

Ներգրվել դատական իշխանությանը.

- օգտագործել դատավարությունը՝ խախտումները բացահայտելու համար և մարդու իրավունքները պաշտպանելու համար
- պահպանել գրառումները, որոնք բավարարում են որպես ապացույց ընդունելու չափանիշները
- մշակել իրավական փորձագիտություն՝ հետաքննությունների համար ապացույցներ ապահովելու նպատակով:

Եզրակացություն

Օրենքի գերակայությանը նպաստող միջավայր ստեղծելիս կարևոր է ռազմական մշակույթը փոխարինել իրավապահ համակարգի, վերահսկողության, իրավական ներկայացուցչության և անկախ դատական համակարգի քաղաքացիական մեխանիզմներով: Փոխվստահության և տեղական նախաձեռնությունների համակցությունը այնքան անհրաժեշտ է, որքան հաստատությունների առավել լայն կառուցումը: Միայն «վերևից-ներքև» մոտեցումը բավարար չէ: Առաջնահերթությունները պետք է փոխկապակցվեն՝ ուժեղացնելով միմյանց և իրականացվեն զուգահեռաբար: Ընդունելով, որ արդարադատությունը, անվտանգությունը և օրենքի գերակայությունը չեն սահմանափակվում գրված օրենքներով, այլև ներառում են նաև սո-

ցիալական վարվելակերպի կանոններ, որոնցով կարգավորվում են խաղաղ գոյակցությունը՝ նման մոտեցումը պետք է լինի բազմաչափ և ներառի վստահության կառուցում և կարողությունների զարգացում, համայնքի հզորացում և ինստիտուցիոնալիզացում:

Նույնպիսի մոտեցմամբ անվտանգության և արդարադատության ամենահրատապ կարիքներին պետք է տրվի առաջնահերթություն: Ինստիտուցիոնալ բարեփոխումը երկարաժամկետ ներդրում է, և խաղաղության կառուցման գործընթացի սկզբում համայնքները չեն կարող սպասել առավել լայն բարեփոխումների: Այնուամենայնիվ, մեխանիզմների առկայությամբ կսկսվի ինստիտուցիոնալ բարեփոխման գործընթացը՝ բավարարելու անվտանգության ամենահրատապ կարիքները:

Ինչպես ներկայացվել է վերևում, քաղաքացիական հասարակությունը ունի կարևոր դեր երկու մակարդակներում էլ և ունի տարբեր ներգրավման տարբերակներ բոլոր փուլերում՝ կոնֆլիկտից առաջ, ընթացքում և դրանից հետո: Այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակությունը իրականացնում է իր առաքելությունը իր կյանքի հաշվին: Կոնֆլիկտի պայմաններում քաղաքացիական հասարակության գործունեությունը հաճախ խստորեն սահմանափակվում է բռնության և անվտանգության պատճառով, ինչպես նաև վերահսկողության կարիք պահանջող տարբեր հաստատությունների անօրինական գործողությունների պատճառով: Իրավապաշտպան կազմակերպությունների անդամները հետապնդվում և անմիջապես ձերբակալվում են: Գրաքննությունը, ոտնձգությունը և նույնիսկ ֆիզիկական ճնշումներն ու սպանությունները չափազանց տարածված են: Տեղական ցանցերի, կազմակերպությունների, միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների հետ գործընկերության հիմնումը կարող է աջակցել մարդկային անվտանգության բարելավմանը: Սակայն քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը կոնֆլիկտի ընթացքում անվտանգության բնագավառի վերահսկողության մեջ խիզախություն է, որի համար որևէ ձեռնարկ չի կարող սահմանել կանոններ ու չափանիշներ:

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողությունը չափազանց բարդ գործողություն է, որը պահանջում է գիտելիքների և փորձի մեծ ծավալ: Այն ընդգրկում է պաշտպանության և զինված ուժերի կառավարման բոլոր հիմնական բնագավառները, և այս բնագավառները կարող են ամփոփվել որպես՝

- պաշտպանության քաղաքականության մշակման և պլանավորման գործընթաց
- պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման գործընթաց
- պաշտպանության բյուջետավորման գործընթաց
- պաշտպանության բնագավառում գնումների գործընթաց:


Քաղաքացիական հասարակության անդամները պետք է գիտելիքներ ունենան նշված չորս համապատասխան բնագավառների վերաբերյալ, որպեսզի իրականացնեն ժողովրդավարական և քաղաքացիական արդյունավետ և արդյունարար (effective and efficient) վերահսկողություն զինված ուժերի նկատմամբ:

Զինված ուժերի և անվտանգության բնագավառի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության առաջին բնագավառը պաշտպանության քաղաքականության մշակումն ու պլանավորման գործընթացներն են:

Ինչ է պաշտպանության քաղաքականությունը

Ո՛չ ՆԱՏՕ-ի տերմինաբանական բառարանը և սահմանումները, ո՛չ էլ ԱՄՆ պաշտպանության գերատեսչության ռազմական բառարանը և համապատասխան տերմինները, չունեն «պաշտպանության քաղաքականություն» կամ «քաղաքականություն» սահմանումները: «Քաղաքականության» հայտնի սահմանումներից Վեբստերի բառարանից հետևյալ երկուսն են առնչվում քննարկվող թեմային.

- գործողության որոշակի կուրս/դասընթաց կամ մեթոդ, որոնք ընտրված են այլընտրանքներից և տվյալ պայմաններից, որպեսզի ուղղորդեն և սահմանեն ներկա և ապագա որոշումները
- բարձր մակարդակի համընդհանուր պլան, որը ներառում է հատկապես կառավարական մարմինն բնորոշ ընդհանուր նպատակներ և ընդունելի ընթացակարգեր:



Նկար 5. Պաշտպանության նպատակների և միջոցների միջև հարաբերությունների մոդել

Armchair Generalist օն-լայն պորտալում ներկայացված է Վեբստերի վերոնշյալ առաջին սահմանումներին համապատասխան սահմանումներ: ԱՄՆ-ին բնորոշ առանձնահատկություններից խուսափելու համար պաշտպանական քաղաքականությունը վերաձևակերպման

արդյունքում ստանում է հետևյալ բովանդակությունը.

- բարձրագույն գործադիր ղեկավարության կողմից սահմանված գործողությունների շարք, որը նպատակ ունի ազդելու կամ սահմանելու որոշումներ, գործողություններ կամ ռազմական գործերի կանոնակարգին առնչվող և անվտանգության ռազմավարությանը համապատասխան այլ խնդիրներ:

Համապատասխան Վեբստերի երկրորդ սահմանմանը, մի շարք օն-լայն բառարաններ սահմանում են պաշտպանության քաղաքականությունը որպես.


- երկիրը իր թշնամիներից պաշտպանելու ծրագիր, որտեղ ծրագիրը սահմանվում է որպես հանրության կարիքները բավարարող նպատակային ծրագրերի կամ ծառայությունների համակարգ:

Դրույթ

«Պաշտպանության քաղաքականություն» սահմանումը ներառում է որոշումներ հետևյալի վերաբերյալ՝

- նպատակ՝ ինչին պետք է հասնել
- ուղիներ/ձևեր՝ ինչպես է նախատեսվում հասնել այդ նպատակին
- միջոցներ՝ ինչ ուժեր և այլ գործիքներ են նախատեսվում օգտագործել նպատակներին հասնելու համար:

Մեր հիմնական դրույթն այն է, որ պաշտպանության քաղաքականությունը ներառում է և՛ նպատակը, և՛ միջոցները, և՛ ցանկալի նպատակները (խնդիրները), որոնք հանգեցնում են համապատասխան միջոցների (ուժերի) ստեղծմանը:



Նկար 6. Պաշտպանության քաղաքականության մշակման և պլանավորման գործընթացը

Պաշտպանության և ռազմական խնդիրների վերաբերյալ կան երկու հստակ առաջադրանքներ՝

- ինչպես օգտագործել առկա միջոցները նպատակին հասնելու համար, օրինակ՝ պետության դեմ ռազմական ագրեսիայի դեպքում
- սահմանել միջոցները, որոնք թույլ կտան արդյունավետ լուծել ապագա հավանական սպառնալիքները և մարտահրավերները:

Առաջին առաջադրանքը ներառում է ռազմավարական և գործառնական պլանավորում, ինչպես նաև մարտերի ժամանակ զորքերի ուղղորդում/դեկավարում: Այն հաճախ հիշատակվում է որպես ուժի կիրառում: Երկրորդ առաջադրանքը առաջնային պաշտպանության քաղաքականության առաջադրանք է, և մոտեցումը կարող է լինել տարբեր ձևերով:

Նպատակներին ուղղված (կամ վերահիշ-ներքև) մոտեցումներում ցանկալի նպատակները ուղղված են դեպի ապագա ուժերի ձևավորմանը, որը ներկայացված է նկար 5-ում: Մեր հիմնական դրույթն այն է, որ պաշտպանության քաղաքականությունը ներառում է և՛ նպատակները, և՛ միջոցները, և՛ ցանկալի նպատակները/խնդիրները տանում են համապատասխան միջոցների/ուժերի ստեղծմանը: Նկար 5-ում ներկայացված մոդելը ավելի մանրամասն մոդելի փոխելիս կունենա հետևյալ տեսքը (տե՛ս նկար 6):

Անվտանգության միջավայրի վերլուծություն

Անվտանգության նպատակները, ռազմավարությունը, և պաշտպանության նպատակները հիմնվում են արժեքների, շահերի և անվտանգության դժվարությունների, ռիսկերի և սպառնալիքների վրա և ճանաչվում են որպես անվտանգության ոլորտի վերլուծության արդյունք:

- Ներկայացվող վերլուծությունը ընդգծում է այն սպառնալիքները, որոնք առաջացել են՝
- միջազգային ահաբեկչության պատճառով
 - զանգվածային ոչնչացման զենքի արտադրության և դրա տարածման միջոցների պատճառով
 - ձախողված կամ ձախողվող պետությունների պատճառով
 - կազմակերպված հանցագործությունների, ինչպես նաև դրանց բազմազանություն պատճառով:

Անվտանգության խնդիրները

Պետության անվտանգության քաղաքականության խնդիրները լուծում են անվտանգության առկա և կանխատեսելի դժվարությունները, ռիսկերը և սպառնալիքները և արտացոլում են հասարակության արժեքներն ու շահերը, ինչպես նաև նրա հավակնությունները անվտանգության միջազգային ասպարեզում:

Օրինակ, 2002 թ-ի Միացյալ Նահանգների Ազգային անվտանգության ռազմավարության նպատակն է «օգնել աշխարհը դարձնել ոչ միայն անվտանգ, այլև ավելի լավը»: Այդ արդյունքին հասնելու համար, այն սահմանել է հետևյալ նպատակները կամ «անվտանգության խնդիրները»՝

- քաղաքական և տնտեսական ազատություն
- խաղաղ հարաբերություններ այլ պետությունների հետ
- մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանք:



Անվտանգության ռազմավարություն

Որակյալ անվտանգության ռազմավարությունն ապահովում է անվտանգության նպատակներին հասնելու դիվանագիտական, տնտեսական, ռազմական և այլ ուժային գործիքների կիրառման հստակ, իրատեսական և արդյունավետ հայեցակարգ: Կախված անվտանգության ռիսկերի և վտանգների, ավանդական ուժեղ կողմերի, սեփական և հակառակորդ կողմի խոցելի կողմերի գնահատումից և հնարավորությունների բացահայտումից, անվտանգության ռազմավարությունը կարող է ուժային գործիքների մեջ զինված ուժերի համար տարբեր դերեր նախատեսել: Այս դերերը հաճախ կոչվում են զինված ուժերի «առաքելություններ»:

Պլանավորման սցենարներ

Պաշտպանության քաղաքականության մշակման և պլանավորման մեջ, սցենարները օգտագործվում են որպես պլանավորման իրավիճակներ՝ դասակարգված ըստ միջավայրի և գործունեության պարամետրերի:

Պլանավորման սցենարները նախատեսված չեն կանխագուշակելու ապագա իրավիճակներն ու արդյունքները, նրանք օգտագործվում են մի գործընթացում, որը հատկանշում է ուժի կառուցվածքը և պաշտպանության պլանները: Դրանք ծառայում են մի քանի նպատակի: Առաջինը, սցենարները լայնորեն նկարագրում են հնարավոր առաքելությունները՝ հիմնված դժվարությունների կամ սպառնալիքների վրա, որոնք հանդիպել են վերջին 10-20 տարիների ընթացքում: Երկրորդ, սցենարները առաջ են բերում ենթադրություններ կապված նպատակների և հավակնությունների հետ՝ հաշվի առնելով առկա դժվարություններն ու սպառնալիքները: Երրորդ, նրանք օգտագործվում են պլանավորողների կողմից որպես գործիք գործողությունների իրականացման կարողությունները սահմանելու համար և ծառայում են որպես փորձադաշտ՝ գնահատելու առաջարկված գործունեության գաղափարները, ձևակերպված առաքելության խնդիրների նկատմամբ կարողությունը կամ համակարգային պահանջները:

Պաշտպանության առաքելություններն ու նպատակները

Բուլղարիայի 2002 թ-ի պաշտպանության վերաբերյալ փաստաթուղթը (White Paper-Սպիտակ գիրք) սահմանում է զինված ուժերի հետևյալ առաքելությունները՝

- օժանդակություն ազգային անվտանգությանը խաղաղ ժամանակ
- օժանդակություն խաղաղությանն ու անվտանգությանը աշխարհում
- մասնակցություն երկրի պաշտպանությանը:

Պաշտպանության հավակնությունները

Ռազմական առումով «Պաշտպանության հավակնությունների մակարդակը» հաստատում է գործողությունների քանակը, ծավալը և բնույթը, որոնք պետությունը կամ դաշինքը պետք է կարողանան իրականացնել:

Համապատասխան տերմինը «գործողության տեմպ»-ն է: Այն վերաբերում է զինված ուժերի կողմից իրականացված առաքելությունների քանակին և չափին:

Առաքելություններ, առաջադրանքներ և կարողություններ

Կարողությունը լայն առումով սահմանվում է որպես որոշակի հանձնարարություն կատարելու ունակություն: Հետևաբար, պլանավորման սցենարները օգտագործվում են, որպեսզի սկզբնավորվի գործողություններում իրականացվելիք առաջադրանքները: Միանշանակ հասկանալու համար, սցենարի յուրաքանչյուր առաջադրանք սահմանվում է ըստ ընդհանուր առաջադրանքների ցանկի համապատասխան տերմինով:

Առաքելության հիմնական առաջադրանքների ցանկերը սահմանում են անհրաժեշտ կարողությունները, որոնք անհրաժեշտ են առաջադրանքներն ավարտելու համար (կամ հասնելու ցանկալի արդյունքի): Այնուհետև պլանավորողները սահմանում են կարողությունների մակարդակները, որոնք անհրաժեշտ են առաջադրանքները (կամ կարողության նպատակները) կատարելու համար:

Այսպիսով, յուրաքանչյուր սցենարի համար պլանավորողները պատրաստում են փաթեթ, որը ապահովում է գործողությունների կոնցեպցիայի կիրառման և առաքելության նպատակներին հասնելու կարողություններ:

Գործընթացի արդյունքը փաթեթների հավաքածու է յուրաքանչյուր սցենարի համար: Սրանք հետագայում միավորվում են մեկ ընդհանուր կառույցում, որը թույլ կտա հասնելու պաշտպանության հավակնություններին որոշակի մակարդակում՝ իրականացնելով որոշակի տևողությամբ զուգահեռ գործողություններ:

Կարողությունների վրա հիմնված պլանավորման նպատակը մի շարք կարողությունների օպտիմալացումը չէ (կարողության մակարդակները կամ համապատասխան ուժային փաթեթը) որոշակի սցենարի համար, այլ այն, որ կարողությունը պետք է դիմանա հավանական սցենարներին:

Նպատակների, կարողությունների, բյուջեի և ռիսկի հաշվեկշիռ

Քաղաքականության մշակման կանոնն է. պահանջները միշտ գերազանցում են առկա ռեսուրսները: Քաղաքականության մշակողները և պլանավորողները մեծ ջանքեր են գործադրում հավասարակշռության մեջ պահելու նպատակները, ռազմավարությունը և միջոցները՝ հաշվի առնելով բյուջեն և ռիսկը որպես հավասարակշռող գործոններ: Պաշտպանության իրատես քաղաքականությունը հիմնված է այն կարևոր սկզբունքի վրա, որ հնարավոր չէ երաշխավորել անվտանգությունը բոլոր հնարավոր սպառնալիքների դեմ: Փոխարենը՝ այն իրականացվում է սպառնալիքների և ռիսկերի կառավարման մոտեցման հիման վրա:

Գործնականում, կարիքների անհամապատասխանությունը, այսինքն՝ պաշտպանության պահանջվող կարողությունները և ռեսուրսների սահմանափակումները անխուսափելի են: Այն ստեղծում է կարողությունների պակաս: Ի՞նչ կարող է արվել այդ պակասի առնչությամբ:

Դոկտոր Ջեք Թրեդենիքը թվարկում է մի շարք հնարավորություններ.

- ձևացնել, որ այդ բացը գոյություն չունի
- վերանայել ազգային անվտանգության ռազմավարությունը
- վերանայել ազգային ռազմական ռազմավարությունը
- վերանայել պահանջվող ուժային կառույցը
- վերանայել պաշտպանությանը հատկացվող ռեսուրսները
- փնտրել բարելավումներ արդյունավետության մեջ
- գտնել հավելյալ միջոցներ զինված ուժերի համար
- փոխակերպել զինված ուժերը:

Պաշտպանության քաղաքականության փաստաթղթերի համակարգ

Պաշտպանության քաղաքականության փաստաթղթերի համընդհանուր ճանաչված համակարգ գոյություն չունի: Պաշտպանության քաղաքականության բնագավառները սահմանելու համար տարբեր երկրներ օգտագործում են տարբեր փաստաթղթեր:

Պետությունները կամ այլ դերակատարներ փաստաթղթում նշում են իրենց՝

- անվտանգության միջավայրի վերլուծության եզրակացությունները
- անվտանգության խնդիրները
- անվտանգության ռազմավարության գլխավոր կետերը՝ ենթադրությունները, անվտանգության բնագավառի և այլ կազմակերպությունների դերերը
- պաշտպանության խնդիրները, զինված ուժերի առաքելությունները
- պաշտպանության հավակնությունների մակարդակները
- ուժային կառույցի հիմնական չափորոշիչները
- իրականացման ժամանակացույցը, ներառյալ հետևյալի վերաբերյալ պլանները
 - աշխատակազմ
 - գնումներ
 - գիտության և տեխնիկայի, հետազոտության և զարգացման
 - պաշտպանության արդյունաբերության քաղաքականությունը
 - պահեստային բաղադրիչների զարգացում և այլն
- պաշտպանական բյուջեների (անցյալ և ապագա) վերաբերյալ տեղեկատվություն
- իրականացման աուդիտների հիմնական արդյունքները:

Ավելի առաջադեմ պաշտպանության քաղաքականությամբ և պլանավորման համակարգով երկրները նույնպես հրապարակավ հայտարարում են.

- սցենարներ
- առաջադրանքների ցանկ
- կարողությունների հիմնական նպատակներ և այլն:

Փաստաթղթերի նվազագույն ցանկը, որը սահմանում է պաշտպանության քաղաքականությունը.

- **պաշտպանության փաստաթուղթը** (White Paper), որը հստակ նշում է անվտանգության նպատակներն ու ռազմավարությունը և պարունակում է բավարար տեղեկատվություն պաշտպանության զարգացման ծրագրի վերաբերյալ, այսինքն ուժային կառույցների հիմնական չափորոշիչները և իրականացման ուղեկիշները:
- **պաշտպանական բյուջե**, որով ապահովվում է պաշտպանության ծրագրի իրականացումը և պաշտպանության նպատակներին հասնելը:

Փաստաթղթերի այլընտրանքային փաթեթը, որը լիովին սահմանում է պաշտպանության քաղաքականությունը, պետք է ներառի.

- **պաշտպանության ռազմավարության** տիպի մի փաստաթուղթ, որը սահմանում է պաշտպանության նպատակները և այն ուղիները, որոնցով պետք է հասնել այդ նպատակներին (բայց չի տալիս տեղեկություն ուժային կառույցի և դրա զարգացման պլանների/ ծրագրերի վերաբերյալ)

- **պաշտպանության ծրագիր**, որպես գործադիր փաստաթուղթ, որը մշակվում է ամեն տարի կամ երկու տարին մեկ անգամ և ամբողջապես նկարագրում է՝ ինչպես պետք է հասնել պաշտպանության նպատակներին (ինչ կարողությունների մակարդակին կարելի է հասնել, ինչպես պետք է հավասարակշռության մեջ պահվեն երկարաժամկետ ներդրումները, միջանկյալ պահանջարկները, ընթացիկ գործողությունների պահանջները և օրինականության դժվարությունները), եթե հատկացվեն որոշակի ռեսուրսներ:
- **պաշտպանական բյուջե**, որը հնարավորություն է տալիս իրականացնել պաշտպանության ծրագիրը:

Հատկապես կարևոր է նկատել, որ բյուջեի պահանջը ուղեկցվում է Պաշտպանության ծրագրով և բարձրաստիճան որոշում կայացնողները օգտագործում են ծրագրերը, որպեսզի ներկայացնեն պաշտպանության խնդիրները և որոշեն Պաշտպանության ծրագրին և դրա ենթածրագրերին ու ծրագրային բաղադրիչներին հատկացվող ռեսուրսները:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների տեղն ու դեր պաշտպանության քաղաքականության փաստաթղթերի վերաբերյալ հետևյալն է.

- վերլուծել տեղեկությունը
- հարցեր առաջադրել և առաջարկություններ ներկայացնել գործադիրին
- համեմատել ազգային քաղաքականության մշակման և պլանավորման գործընթացների արդյունավետությունը և արդյունքները նույն տարածքի լավագույն փորձի հետ
- կիսվել իրենց գիտելիքով ու փորձով այլ կազմակերպությունների հետ երկրի ներսում և արտասահմանում:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական և ժողովրդավարական վերահսկողության երկրորդ բնագավառը պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման գործընթացն է: Պաշտպանության երկարաժամկետ պլանավորման գործընթացը սահմանում է կարողությունների մակարդակը, որը իրատեսորեն կարող է հասանելի լինել և համապատասխանել ուժային կառույցների համապատասխան չափարոշիչներին: Տարբեր պատճառներով երկարաժամկետ պլանավորման գործընթացի արդյունքում կայացված որոշումները չեն կարող ուղղակիորեն վերափոխվել ռեսուրսների հատկացման կարճաժամկետ որոշումների, ինչպիսիք են՝ պաշտպանության բյուջեների, տարեկան հավաքագրման, տարեկան կամ երկամյա գնումների պլանների, դասընթացների և պատրաստվածության աստիճանի վերաբերյալ որոշումները և այլն:

Երկարաժամկետ պլանավորման ժամանակահատվածը սովորաբար 10-15 տարի է և համապատասխան որոշումները չեն սահմանափակվում ռեսուրսներով, իսկ կարճաժամկետ պլանները պետք է գնահատվեն և սահմանափակվեն պաշտպանության ակնկալվող բյուջեներով:

Ուժային զարգացման միջավայրի փոփոխությունները կարող են տեղի ունենալ պաշտպանության երկարաժամկետ պլանավորման և համապատասխան կարճաժամկետ պլանների վրա տարվող աշխատանքների միջև: Նման փոփոխությունների օրինակները պետք է լինեն գործառնական աշխատանքները, զինատեսակների գնումը, ինֆլիացիայի մակարդակը, վառելիքի արժեքը և այլն:

Զինված ուժերի զարգացման որոշումները կայացվում են մի շարք տարբեր ինստիտուցիոնալ գործընթացների արդյունքում և որոշումներ կայացնող տարբեր կառույցների կողմից: Երկարաժամկետ ռազմավարական պլանների ու քաղաքականության հետ կարճաժամկետ


պլանների համաձայնեցմանը հասնելու երկու տարբեր մոտեցումներ կան: Առաջին մոտեցման դեպքում պաշտպանության ռեսուրսների կառավարիչները, հորիզոնական ձևով համապատասխանեցնում են իրենց պլանները պաշտպանության գերատեսչության վարչակազմի անհատների և կարողությունների զարգացման պատասխանատուների (կարողությունների կառավարիչների) հետ: Հաճախ այս կառավարիչները պատասխանատու են պաշտպանության բյուջեի համապատասխան մասի կառավարման համար:

Պաշտպանության ծրագրերը և ծրագրային գործընթացը կազմում են երկրորդ մոտեցման հիմքը: Պաշտպանության ծրագրերը օգտագործվում են, որպեսզի կապեն կարճաժամկետ պլանները պաշտպանության քաղաքականության նպատակներին և միևնույն ժամանակ ապահովեն կարողությունների բոլոր բաղադրիչների համակարգված զարգացումը:

Ինչ է պաշտպանության ծրագիրը

Ներկայումս, գերիշխող հասկացությունը այն է, որ պաշտպանության կառույցի հիմնական արտադրանքը կամ «արդյունքը» իր կարողություններն են, որոնք կարող են օգտագործվել ըստ անհրաժեշտության:

Կարողության կառուցումը պահանջում է պաշտպանության դոկտրինայի, կազմակերպական կառուցվածքի, անձնակազմի, զինատեսակների, ենթակառուցվածքների, դասընթացների/գորավարժանքների և այլնի մանրամասն համակարգված զարգացում: Միևնույն ժամանակ, սա բավականին ժամանակատար և թանկ գործընթաց է:



Նկար 7. Ռեսուրս - ծրագիր - արտադրանք հարաբերությունը

Այս պատճառներով պաշտպանության ռեսուրսների արդյունավետ կառավարումը հիմնված է ծրագրերի վրա: Պաշտպանության ծրագիրը արդյունքների հասնելու, այսինքն՝ կարողություններ կառուցելու ու պահպանելու նպատակով մատչելի և ակնկալվող ռեսուրսների (անձնակազմ, նյութեր, տեղեկատվություն, փող և այլն) նպատակային օգտագործման մի ամբողջական պլան է:

Պաշտպանության ծրագրի առաջնային գործառնությունը ռեսուրսների վերաբերյալ որոշումների կայացմանն աջակցելն է՝ ռեսուրսները արտադրանքին կապելով (տես նկար 7) և ապահովելով արդյունքին ուղղված քաղաքականություն և պլաններ: Սա սովորաբար միջնաժամկետ պլան է, որն ուղղված է հետագա 8 տարիներին: Քանի որ ՆԱՏՕ-ն կիրառում է իր պաշտպանության պլանավորման և վերանայման գործընթացում 6 տարվա տևողությունը, ՆԱՏՕ-ի անդամ շատ երկրներ նույնպես հետևում են այդ տևողությունը: Բացի ռեսուրսներն ու պլանավորված արդյունքների կապակցումը, ծրագրերը կապակցում են երկարաժամկետ պլանները պաշտպանական բյուջեի և այլ կարճաժամկետ պլաններին հետ:

Պաշտպանության ծրագիրը ունի հիերարխիկ կառուցվածք, որը ներառում է հիմնական ծրագրերը, ծրագրերը, ենթածրագրերը և ծրագրային բաղադրիչները: Երկրները, որոնք մտադիր են ունենալ պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարում, իրենց ծրագրային կառուցվածքի նախագծման ժամանակ պետք է իմանան մի քանի կարևոր սկզբունք:

- ծրագրերը պետք է թույլ տան, որքան հնարավոր է հստակորեն, կապել ծախսերը զարգացած կարողությունների հետ
- այն պետք է ըմբռնելի լինի
 - ոչինչ հնարավոր չէ անել և ոչ մի գումար հնարավոր չէ ծախսել ծրագրերից դուրս
 - այն պետք է պատասխանատվություն կրի ծախսելու բոլոր գումարները պաշտպանության վրա՝ պաշտպանության նախարարության բյուջե, երկկողմանի ծրագրեր, ՆԱՏՕ-ի ֆոնդեր, վստահված ֆոնդեր և այլն
 - վերջնական որոշումներ պետք է ընդունվեն բոլոր ծրագրերի համար, միևնույն ժամանակ փոխզիջումների օբյեկտիվ վերլուծությամբ
- այն պետք ապահովի ծրագրի ղեկավարների միջև պատասխանատվությունների իրատեսական բաշխում
- այն պետք է կառավարելի լինի՝ պետք է հնարավորություն ընձեռնի օբյեկտիվորեն գնահատել և փոխզիջումներ գտնել ռեսուրսների հատկացման ժամանակ:

Աղյուսակ 9-ը ցույց է տալիս ծրագրերի կառուցվածքների տարբեր օրինակներ, որոնք կիրառվում են տարբեր երկրներում:

Աղյուսակ 9. Ծրագրերի կառուցվածքների օրինակներ

| Կանադա | ԱՄՆ հինգ տարվա պաշտպանության ծրագիր |
|---|---|
| 1. Ղեկավարել եվ հսկել | 1. Ռազմավարական ուժեր |
| 2. Իրականացնել գործողություններ | 2. Հիմնական ուժեր |
| 3. Ամրապնդել ռազմական ուժեր | 3. Հաղորդակցում, հետախուզություն և տիեզերք |
| 4. Ստեղծել ուժեր | 4. Օդային և ծովային ուժեր՝ շարժողականություն |
| 5. Ունենալ համատեղ քաղաքականություն և ռազմավարություն | 5. Պահակային և պահուստային ուժեր |
| | 6. Հետազոտություն և զարգացում |
| | 7. Ընդհանուր մատակարարում և պահպանում |
| | 8. Մարզում, առողջություն և այլ գործողություններ |
| | 9. Աջակցություն այլ երկրներին |
| | 10. Հատուկ նշանակության ուժեր |

Ծրագրային կառուցվածքի Բուլղարիայի մոդելը ներառում է 13 հիմնական ծրագրեր՝ ցամաքային ուժեր, օդային ուժեր, նավատորմ, կենտրոնական հրամանատարություն և աջակցություն, բազմազգ կազմավորումներում մասնակցություն, կրթություն, ռազմական ոստիկանություն, համագործակցության և ինտեգրացիայի միջոցով անվտանգություն, կյանքի որակ, հետազոտություն և զարգացում, հաղորդակցության համակարգեր, ռազմական հետախուզություն, ենթակառուցվածքներ:

Կարողություններին ուղղված ծրագրային կառուցվածքը ապահովում է, որպեսզի որոշում կայացնողները որոշումների կայացման քաղաքականության ենթատեքստում ավելի լավ հասկանան իրենց ռեսուրսները: Երբ ծրագրի կառուցվածքի առաջին մակարդակը ունի գերիշխող կազմակերպական կողմնորոշում, անհարժեշտ է լինում լրացուցիչ միջոցառումներ ներգրավել, որպեսզի ապահովվի պաշտպանության ռեսուրսների կառավարման արդյունքի

կողմնորոշումը, օգտագործելով, օրինակ, կարողությունների գծով մենեջերների ինստիտուցիոնալիզացման Միացյալ Թագավորության փորձը:

Առանձին ծրագրերը քննարկումների և հաղորդակցման կարևոր գործիքներ են բարձրագույն գործադիր մակարդակում պաշտպանության նախարարությունում, պաշտպանության և ֆինանսների նախարարությունների միջև, նախարարների խորհրդում, գործադիրի և օրենսդիրի միջև, խորհրդարանում պաշտպանության քաղաքականության ու բյուջեի քննարկման ժամանակ: Կառավարությունում և խորհրդարանում որոշում կայացնողները օգտագործում են առանձին ծրագրեր և ծրագրերի այլընտրանքային ծրագրեր: Ինչպես բոլորը օգտագործում են բառեր նախադասություններ կազմելու համար, այնպես էլ որոշում կայացնողները օգտագործում են մի շարք այլընտրանքային ծագրեր, ներուժ, որպեսզի գտնվի մի այնպիսի կառուցվածք, որը լավագույնս կհամապատասխանի պաշտպանության խնդիրներին: Պաշտպանության առաջավոր պլանավորման համակարգում առաջադրանքը հայտնի է որպես կարողության փաթեթի ստեղծում:

Պաշտպանական բյուջեի վերաբերյալ որոշումը, որը ձևակերպված է բացառապես բյուջեի հասկացությունների լեզվով, չի կարող լինել թափանցիկ պաշտպանության ռեսուրսների հատկացման վերաբերյալ որոշումներում: Սրանում է պաշտպանության ռեսուրսների կառավարման գործընթացում ծրագրերի ինտեգրման պատճառը:

Պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարումը ներառում է առնվազն հետևյալ քայլերը՝

- ծրագրավորման ուղեցույցի մշակում
- ծրագրերի և այլընտրանքային ծրագրերի մշակում
- ծրագրի վերանայում և պաշտպանության ծրագրերի վերաբերյալ որոշումների կայացում
- պաշտպանության բյուջեի պլանավորում և համապատասխանեցում
- պաշտպանության բյուջեի իրականացում
- պաշտպանության բյուջեի հաշվետվություն և աուդիտ:

Բարձրագույն քաղաքացիական ղեկավարության, ներառյալ պաշտպանության նախարարության ուշադրությունը ուղղված է ծրագրավորման ուղեցույցի և ծրագրի վերանայման վրա: Պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարումը հեշտացնում է հաշվետվողականությունը և թափանցիկությունը: Զինվորական և քաղաքացիական փորձագետները նախագծում են ծրագրեր՝ ըստ քաղաքականության ուղեցույցի, և նրանց առաջարկները թափանցիկ են որոշումներ կայացնողների համար: Մյուս կողմից, քաղաքացիական ղեկավարությունը իր որոշմամբ կիրառում է վերահսկողական գործառնոյթ, որը ձևակերպված է ծրագրավորման ուղեցույցի մեջ և ծրագրի որոշման հուշագրում: Բոլոր շահագրգիռ կողմերի համար հասկանալի է որոշումների բովանդակությունը: Վերջապես, համապատասխան ձևաչափով պարբերական հաշվետվությամբ ապահովվում է արդյունավետ վերահսկողություն:

Ամփոփելով՝ կարելի է պնդել, որ **պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարումը խթանում է քաղաքացիական մասնակցությունը պաշտպանության քաղաքականության մշակման մեջ և օժանդակում է պաշտպանության ծախսերի արդյունավետ, թափանցիկ և հաշվետվողական կառավարմանը:**

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական և ժողովրդավարական վերահսկողության հիմնական բնագավառներից մեկը պաշտպանության բյուջետավորման գործընթացն է:

Ժողովրդավարական հասարակություններում գործադիրը հաշվետու է ժողովրդին՝ խորհրդարանում իրենց ներկայացուցիչների միջոցով: Կապված անվտանգության և պաշտ-


պանության հետ՝ կառավարությունը պարտավոր է բացահայտել, բացատրել և հիմնավորել, թե ինչ են իրենք անում, ինչ են պատրաստվում ծախսել և օրենսդրի հաստատումից հետո ինչպես են ծախսում և ինչ արդյունքների են հասել: Խորհրդարանականները և քաղաքացիական կազմակերպություններն «իրավունք ունեն տեղյակ լինելու»՝ ինչ է կառավարությունը անում և ծախսում: Թափանցիկությունն ու հաշվետվողականությունը ժողովրդավարության գործիքներ են, որոնք այս ամենը դարձնում են հնարավոր ու իրատեսական: Թափանցիկության, հաշվետվողականության ու ճիշտ կառավարման համար պայմանների ստեղծումը, բյուջետավորման գործընթացը ամենակարևոր միջոցն է անվտանգության բնագավառի ժողովրդավարական վերահսկողության համար:

Պաշտպանության բյուջեի հատկացումը առավել շատ է քննարկվում ցանկացած երկրում, քան որևէ այլ բյուջեի հատկացումը, քաղաքական գործիչների, հարկատուների, քաղաքացիական կազմակերպությունների, լրատվամիջոցների, տնտեսության և արտադրության ոլորտների, զինված ուժերի և անվտանգության բնագավառի, բարեկամ և ոչ բարեկամ երկրների և միջազգային կազմակերպությունների կողմից:

Կարևոր է նշել և բացատրել քաղաքացիներին, որ թե՛ ներքին, և թե՛ արտաքին անվտանգությունը չափազանց կարևոր է հասարակության գոյության, ազատության համար, ինչպես նաև տնտեսության, մշակույթի դրական զարգացման և երկրի բարգավաճման համար: Այսպիսով, ժողովուրդը պետք է վճարի անվտանգության և պաշտպանության համար՝ պաշտպանական բյուջեի միջոցով:

Պաշտպանության բյուջետավորումը որպես պաշտպանության ռեսուրսների կառավարման մի մաս

Նկար 8-ը ցույց է տալիս պաշտպանության ռեսուրսների կառավարման տիպիկ կառուցվածքն ու փոխկախվածությունը: Պաշտպանությունը սահմանվում է որպես հիմնական գործընթաց և մի շարք օժանդակող գործընթացներ, ինչպիսիք են բյուջետավորումը, գնումները և այլն:




Նկար 8. Պաշտպանության ռեսուրսների կառավարման օրինակ

Կառավարման գործընթացներն, ինչպիսիք են, պլանավորումը, ծրագրավորումը, վերահսկողությունը, աուդիտը և այլն, անհրաժեշտ են կապակցվածություն ապահովելու և մյուս բոլոր գործընթացների աշխատանքը ապահովելու համար: Այս կառուցվածքում կենտրոնական դիրք է գրավում պաշտպանության բյուջետավորման գործընթացը, որով հստակ ապացուցվում է անվտանգության ու պաշտպանության բնագավառի քաղաքականության իրականացման մեջ պաշտպանության բյուջեի կարևոր դերը: Պաշտպանության բյուջետավորումը պաշտպանության պլանավորման շրջանակում լավ ինտեգրված գործընթաց է, որը երաշխավորում է հստակորեն շարադրված քաղաքականության իրականացումը միջին և երկար ժամկետներում (սկար 9):

Շրջանակը ներառում է.

- հստակորեն շարադրված անվտանգության և պաշտպանության նպատակներ
- նպատակներին հասնելու անվտանգության բազմակողմանի ռազմավարություն
- պաշտպանության առաքելություններ և առաջադրանքներ՝ հիմնված մշակված սցենարների վրա
- զինված ուժերի համար պահանջվող գործառնական կարողություններ
- ապագա ուժային կառույցի տեսլական



Սկար 9. Պաշտպանության պլանավորման շրջանակը

Ժողովրդավարական միջավայրում պաշտպանության բյուջետավորումը հնարավոր է, եթե ձևավորված է միջնաժամկետ պլանների և պաշտպանության ծրագրերի մշակման գործընթացը: Պաշտպանության ծրագիրը և դրա բաղադրիչները՝ ենթածրագրերը և ծրագրային բաղադրիչը, պետք է հստակորեն նախագծվեն, որպեսզի հասնեն քաղաքականության նպա-

տակներին: Պաշտպանության ծրագրի մշակումը սահմանափակվում է ակնկալվող ռեսուրսներով և հիմնված է այլընտրանքային տարբերակների և իրականացման ցուցանիշների վրա:

Անհրաժեշտ է ռիսկի մակարդակի հստակ գիտակցում, որն առնչվում է բյուջետավորված ուժային կառույցի և պաշտպանության վիճակին՝ կարճաժամկետ և միջնաժամկետ տիրույթներում: Անվտանգության բնագավառի կառույցները պետք է կիրառեն մի մեթոդաբանություն, որով կգնահատվեն պաշտպանության և ուժային պլանավորման հետ առնչվող ռիսկերը՝ ըստ իրենց կարիքների: Նրանք պետք է հիմնեն ընթացակարգեր, որպեսզի մշակեն ուժի իրականացման սցենարներ, գնահատեն յուրաքանչյուր սցենարի իրականացման հնարավորությունը հստակորեն սահմանված ենթադրությունների համապատասխան, խթանեն զինուժի պլանավորված գործողությունների իրականացումը, վերլուծեն կեղծ արդյունքներն ու եզրահանգումներ անեն ռիսկի վերաբերյալ: Ռիսկի գնահատումները պետք է լիարժեք և արդյունավետորեն ներառվեն պաշտպանության բյուջետավորման գործընթացում, որը հստակորեն պետք է արտացոլի քաղաքականության նպատակներն ու ծրագրային որոշումները:

- Ուժեղացնել բյուջետավորման կարգուկանոնը՝ հնարավոր միջոցները, ծախսերի ճշգրտում, գերաճախսի սահմանափակումներ և այլն
- Ապահովել խիստ խորհրդարանական վերահսկողություն գործադիրի բոլոր որոշումների նկատմամբ՝ երկարաժամկետ բյուջետավորմամբ, որը ներառում է խոշոր գնումները, զարգացման կանոնակարգերը
- Տեղեկատվություն տրամադրել խորհրդարանին և նախօրոք պատշաճ կերպով ներգրավել համապատասխան հանձնաժողովներին
- Բավականաչափ ժամանակ հատկացնել անվտանգության բնագավառի կազմակերպությունների կողմից առաջարկված բյուջեների քննարկման համար՝ 1.5-ից 3 ամիս
- Խորհրդարանում ապահովել քաղաքական կուսակցությունների ներկայացումը՝ համապատասխան բոլոր հանձնաժողովներում ու ենթահանձնաժողովներում
- Ապահովել խորհրդարանականների կողմից բյուջետավորման և անվտանգության բնագավառի վերաբերյալ փորձագիտության մատչելիությունը
- Ապահովել համագործակցություն հասարակության և լրատվամիջոցների հետ բյուջետավորման գործընթացի բոլոր փուլերում

Նկար 10. Ժողովրդավարական վերահսկողության համար կարևոր բյուջետավորման գործընթացի լրացուցիչ կողմերը

Պաշտպանական բյուջեի թափանցիկությունը հնարավորություն է տալիս խորհրդարանականներին արդյունավետորեն իրականացնել իրենց վերահսկողական դերը և հեշտացնում է անվտանգության ոլորտում հասարակության վստահությունը: Այնուամենայնիվ, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների իրականացումը պետք է հավասարակշռության մեջ գտնվի պաշտպանության բնագավառին վերաբերող զգայուն տեղեկատվության հիմնավորելի մտահոգությունների հետ: Այս առումով կարևոր կանոնն այն է, որ խորհրդարանը չպետք է թույլ տա անվտանգության բնագավառին առնչվող ինֆորմացիայի «թաքնված» դասակարգումը: Փոխարենը, գործադիրը պետք է պարտավոր լինի գրավոր կերպով հիմնավորելու և բացատրելու յուրաքանչյուր փաստաթղթի կամ փաստաթղթի մի մասի դասակարգման պատճառները: Նույնիսկ նման դեպքերում խորհրդարանականները պետք է իրականացնեն իրենց վերահսկողական լիազորությունը: Ինչ վերաբերում է բյուջետավորման նկատմամբ վերահսկողությանը՝ հնարավոր ձևերից մեկը բյուջեի առաջարկների մասնատելն

Է ըստ անվտանգության դասակարգման տարբեր մակարդակների: Այս դեպքում անվտանգության բնագավառի կառույցների ընդհանուր բյուջեները ներկայացվում են խորհրդարանին, դասակարգված ներդրումները և գործառնական ծախսերը քննվում են պաշտպանության և անվտանգության կոմիտեի ենթակոմիտեի կողմից: Կոմիտեի յուրաքանչյուր անդամի պետք է հասանելի լինի դասակարգված փաստաթղթերը՝ ըստ ընդունված ընթացակարգի, որոնք սահմանված են համապատասխան իրավական ակտում: Հնարավոր է սահմանել բյուջետավորման ընթացակարգի մի քանի այլ ասպեկտներ, որոնք կարող են կարևոր լինել անվտանգության բնագավառի ժողովրդավարական վերահսկողության համար (տես նկար 10):

Պաշտպանության բյուջետավորման գործընթացի հաշվետվողականությունը պահանջում է, որպեսզի անվտանգության բնագավառի կառույցները ենթարկվեն բոլոր օրենքներին ու էթիկայի չափանիշներին, որոնք կարող են լինել ընդհանուր բնույթի կամ կոնկրետ պլանավորված: Պաշտպանության կառույցները հաշվետու են պաշտպանության գործող քաղաքականությունը կատարելու և պաշտպանության առաքելություններին հետևելու առումով, որով կհիմնավորեն հանրային բոլոր ծախսերը՝ ըստ համապատասխան սկզբունքների: Նրանք պետք է լիովին համապատասխանեն կառավարության և ներքին հաշվապահական քաղաքականություններին, ներառյալ հանրային ծախսերի համար թափանցիկության քաղաքականությանը: Պաշտպանության բյուջետավորման գործընթացի ապահովման նպատակով պաշտպանության կառույցներից պահանջվում է մշակել և իրականացնել ընթացակարգեր ստացված, առկա և ծախսված միջոցները ուսումնասիրելու և գրանցելու համար:

Այս ընթացակարգերը սովորաբար ձևակերպված են ֆինանսական ընթացակարգերի ձեռնարկներում, և նրանք կարգավորում են բյուջեների մշակումը, ֆինանսական ակտիվների, լիազորության, ծախսերի գրանցման ու ուսումնասիրման և այլնի մշակումը:

Մեկ այլ բնագավառ, որը պետք է լինի զինված ուժերի ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության առարկա՝ պաշտպանության բնագավառում գնումների գործընթացն է:

Գնումները մի գործընթաց է, որի միջոցով սարքավորումներ և ծառայություններ են ձեռք բերվում արտաքին գործակալություններից՝ պաշտպանության արդյունավետ կարողությունները կառուցելու նպատակով: «Գնում» տերմինը սովորաբար օգտագործվում է կառավարության կողմից արտաքին մատակարարներից ապրանքների և ծառայությունների գնման պրոցես, սակայն ունի շատ ավելի լայն իմաստ: Գնումները նպատակ ունեն ոչ միայն ապահովել սարքավորումներով կամ ծառայություններով բավարարել սպառողի պահանջարկները, այլև ապահովել պաշտպանության բյուջեների խելամիտ ծախսումը: Այս պարտավորությունը պահանջում է, որպեսզի գնումների մենեջերները գտնեն առավել հավասարակշռված փոխանակում օգտագործողի կողմից պահանջվող աշխատանքների, ծրագրի արժեքի և ծրագրի ժամանակահատվածի միջև և այսպիսով գտնեն հնարավոր լուծումներ, որոնք լուծում են այն լարվածությունը, որը հաճախ գոյություն ունի այդ պահանջների միջև:

Գնումների կառավարումը ներառում է հետևյալ գործառնությունների իրականացումը. կառավարման տեխնիկայի կիրառում և գործընթացներ՝ ծրագրի ռիսկը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտության դեպքում աջակցում թույլատրելի գնով ճիշտ կարողությունների տրամադրման ապահովման նպատակով:

Գնումները կարելի է բաժանել երեք առանձին գործողությունների.

- որոշել ինչ գնել
- որոշել ինչպես գնել
- և գնել

Գնումը սովորաբար չափազանց բարդ է, որպեսզի իրականացվի անհատի կամ անհատների խմբերի կողմից, և ընդհանուր առաջադրանքը պետք է իրականացվի մի շարք գործող անձանց կողմից: Պաշտպանության գնումների գործընթացում ընդգրկված են որոշումներ կայացնող չորս հիմնական անձինք.

- Նրանք, ովքեր որոշում են սարքավորումների կամ ծառայությունների պահանջները, օգտագործողները և գինված ուժերը
- գնման մասնագետը, որը պատասխանատու է ղեկավարելու գնման ծրագրերը
- շահագրգիռ կողմերը, ովքեր կհետևեն և ուշադիր կուսումնասիրեն գնման ծրագրերը. սովորաբար դրանք պաշտպանության հաստատությունների բարձրագույն ղեկավար անդամներն են
- արտաքին գործակալությունները, որոնք ունեն պահանջվող սարքավորումները կամ ծառայությունները մատակարարելու միջոցներ:

Պաշտպանության գնումների բնագավառում ապրանքի գնի լավագույն տարբերակին հասնելու և դա ցույց տալու կարիքը սովորաբար պահանջում է, որ օգտագործողի պահանջների հնարավոր լուծումները պետք է համեմատվեն և շուկայից ընտրվի նախընտրելի սարքավորումները և ծառայությունները: Սպառողի պահանջները բավարարելու ամենաարդյունավետ, արդար և թափանցիկ ձևը հնարավոր տարբերակների համեմատությունն է գնման մրցույթի միջոցով: Մրցույթի գործընթացը ընդգրկում է հետևյալ մի քանի քայլերը՝

- առաջարկների հրավերի ուղարկում հնարավոր մատակարարներին
- տեղեկատվություն առաջարկների մշակում
- ներկայացված տեղեկատվության առաջարկների գնահատում
- ամենահամապատասխան առաջարկի ընտրություն
- ընտրված գործակալության հետ պայմանագրի կնքում:

Որպես գործընթաց, պաշտպանության գնումները ներառում են մի քանի տարբեր փուլեր, որոնք ներկայացնում են գնումների կառավարման ցիկլը: Գնումների ցիկլերը ապահովում են այնպիսի կառուցվածքով, որպեսզի կառավարելի լինեն գնումների գործընթացը՝ սկսած գնման ծրագրի նախաձեռնումից մինչև ծրագրով նախատեսված սարքավորումների դուրս գրման կամ ծառայությունների դադարեցման վերջնական փուլը: Կան գնման ցիկլի տարբեր մոդելներ, բայց ամենահաճախ օգտագործվողները ներառում են հետևյալ փուլերը՝

- որոշել այն սարքավորումը կամ ծառայությունը, որը պետք է գնվի
- սարքավորման կամ ծառայության գնում
- սարքավորման կամ ծառայության շահագործում
- սարքավորման դուրս գրում կամ ծառայությունների ընդհատում:

Գնումների ցիկլի նպատակներից մեկն է՝ հնարավորություն տալ ավագ կառավարիչներին վերանայել ծրագրերը անհրաժեշտ պահին և կայացնել որոշումներ ապագայի վերաբերյալ:

Գնումների ռիսկի կառավարումը ծրագրի ռիսկերի բացահայտման պրոցեսն է, դրանց կարևորության գնահատումը և դրանց լուծման պլանավորումը: Պաշտպանության ծրագրերի ռիսկերը կարող են առաջանալ տարբեր աղբյուրներից՝ և՛ պաշտպանության հաստատություններից, և՛ մատակարարներից, և՛ այլ արտաքին աղբյուրներից: Այս ռիսկերից յուրաքանչյուրի կարևորության գնահատումը սովորաբար արվում է՝ դատելով նրանց առաջանալու հա-

վանականությունից, ինչպես նաև ծախսի, ժամանակի և կատարողականության վրա դրանց ունեցած ազդեցությունից: Ռիսկերի գնահատումը կարելի է անել ինչպես որակական առումով՝ օգտագործելով բարձր, միջին և ցածր տերմինները, այնպես էլ քանակական՝ ըստ համապատասխան գնահատման սանդղակով:

Անհրաժեշտ է նշել երկու վերջնական կետ: Առաջին կետն այն է, որ դրականորեն պետք է վերաբերվել ռիսկերի բացահայտմանն ու կառավարմանը: Ծրագրերում խնդիրների ծագումն անխուսափելի է, և ինչքան շուտ դրանք հայտնաբերվեն և դրանց լուծման պլանները կազմվեն, այնքան մեծ է հավանականությունը, որ տվյալ ծրագիրը կհաջողվի: Կարևոր է, որպեսզի ձևավորվի մշակույթ, որը ողջունում է ռիսկի կառավարումը, այլ ոչ թե այնպիսի մշակույթ, որը հավասարեցնում է ծրագրի ռիսկը ծրագրի թերության հետ:

Երկրորդ կետն այն է, որ ռիսկը ունի հակառակ ազդեցություն: Հնարավոր է, որ դրա արդյունքում տեղի ունենան իրադարձություններ, որոնք դրական ազդեցություն կունենան ծրագրի վրա, քանի որ միշտ պետք է օգտվել հնարավորություններից: Հնարավորությունների ազդեցության գնահատումը թույլ է տալիս գնումներ իրականացնող թիմին որոշել, թե ինչպես կարելի դրանք օգտագործել և նաև թույլ է տալիս թիմին ցանկացած հնարավորության դեպքում կապիտալ ստեղծել:

Որպես եզրահանգում, կարող ենք ասել, որ բոլոր չորս բնագավառները պետք է լիարժեք ամբողջացվեն կառավարման մեկ գործընթացում, և մինևույն ժամանակ նրանք ծայրահեղ կարևոր են պաշտպանության և զինված ուժերի համար և ցանկալի արդյունքների հասնելու համար, որը կարող էր նկարագրվել զինված ուժերի պաշտպանության մշակված կարողությունների կողմից:

Ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողությունը պետք է կիրառվի այս բոլոր բնագավառների նկատմամբ, և քաղաքացիական հասարակության անդամները պետք է ունենան պաշտպանության բնագավառում պլանավորման, ծրագրավորման և պաշտպանության ռեսուրսների բյուջետավորման և պաշտպանության գնումների կառավարման գործընթացի վերաբերյալ շատ գիտելիքներ և փորձ:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԵՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

Պետական բյուջեն հանդիսանում է կառավարության քաղաքականության կարևորագույն էությունը: Այն ցույց է տալիս, թե կառավարությունն ինչպես է պլանավորում զարգացնել և բաշխել պետական միջոցները, կապում է քաղաքականությունը իրականության հետ ըստ այն արժեքների, որն ընկած է պետության անվտանգության, արդարադատության, անկախության և բարեկեցության հիմքում, ինչպես նաև արտահայտում է գործադիր իշխանության գործունեության թափանցիկության մակարդակը: Բյուջեն նաև ցույց է տալիս, թե ինչպես է յուրաքանչյուր կառավարական գործակալություն տեղաբաշխում և տնօրինում հարկատուների գումարը՝ հնարավորություն տալով հանրությանը տեղեկանալու կառավարության գործունեության առաջնահերթություններին և քաղաքական ուղղություններին:

Ժողովրդավարական համակարգում հանրային բյուջետավորումը պետք է լինի մասնակցային և ներառական գործընթաց, քանի որ այն ազդեցություն ունի ամեն մի քաղաքացու կյանքի վրա:

Ինչ է անվտանգության բյուջեն

Անվտանգության բյուջեն պետության ներքին և արտաքին անվտանգության ապահովման նպատակով նախատեսված տարեկան ծախսվելիք գումարն է: Անվտանգության ընդհանուր բյուջեն կազմված է անվտանգություն ապահովող պետական բոլոր գործակալություններին հատկացված տարեկան հատկացումներից:

Այս գործակալություններից ամենախոշորները պաշտպանության և ներքին գործերի գերատեսչություններն են, սակայն պետության անվտանգության բյուջեն ամբողջությամբ հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել բազմաթիվ այլ գործողություններ և կառույցներ:

Պաշտպանության բնագավառը հանդիսանում են զինված ուժերը՝ ներառյալ արտերկիր ուղարկված խաղաղապահ զորքերը, ռազմական բնագավառի քաղաքացիական վարչակազմը, պաշտպանության նախարարությունը և այլ կառավարական գործակալությունները, որոնք ներգրավված են պաշտպանության գործողություններում: Վերջինիս թվում են սպառազինությունների արտադրությունը, արտահանումն ու ներմուծումը, ոչ կանոնավոր զինված ուժերը, որոնք պետք է վարժեցվեն, զինվեն և պատրաստ լինեն ռազմական գործողություններին, ինչպիսիք են ժանդարմները, սահմանապահները. այս ծառայության բյուջեն կարող է ընդգրկվել պաշտպանության կամ ներքին գործերի բնագավառների բյուջեներում:

Իրավապահ մարմիններ են հանդիսանում ոստիկանությունը, հասարակական կարգը պաշտպանող և իրավապահ այլ ուժեր, ոստիկանության քաղաքացիական վարչակազմը և հասարակական կարգը պահպանող այլ ուժեր և ներքին գործերի գերատեսչությունը:

Սահմանապահ/մաքսային մարմիններն են սահմանապահները, մաքսային ծառայությունների վարչակազմը:

Քրեակատարողական մարմիններ են հանդիսանում բանտերի, մեկուսարանների վարչակազմը. այս ծառայության բյուջեն կարող է ընդգրկվել ներքին գործերի կամ արդարադատության բնագավառների բյուջեներում:

Հետախուզության բնագավառի մարմիններ են հանդիսանում հետախուզության ռազմական և քաղաքացիական ծառայությունները: Սովորաբար բազմաթիվ գործակալություններ են իրականացնում հետախուզական աշխատանքներ, և նրանց բյուջեները կարող են ընդգրկ-

ված լինել պաշտպանության, ներքին գործերի, արդարադատության նախարարություններին հատկացվող բյուջեներում կամ ներկայացվի որպես բյուջեի առանձին մաս պետական բյուջեում և ուղղակիորեն ենթարկվի գործադրին:

Քաղաքացիական անվտանգության գործակալությունները պատասխանատու են արտակարգ իրավիճակների, հատուկ հաղորդակցությունների, ռազմավարական նշանակության ենթակառուցվածքների, բարձրաստիճան պաշտոնատար անձանց պաշտպանության և նմանատիպ այլ գործառույթների իրականացման համար:

Անվտանգության ռազմավարական կառավարումը իրականացնում է պաշտպանության գերագույն խորհուրդը կամ ազգային անվտանգության խորհուրդը, որը կարող է լինել անկախ վարչական կառույց կամ գործադիր իշխանության ենթակայության ներքո գործող խորհրդատվական բաժին:

Ազգային անվտանգության յուրաքանչյուր բնագավառ եզակի է և բարդ: Անվտանգության բյուջեի վերլուծության համար կարևոր է նախևառաջ որոշել ազգային անվտանգության ոլորտում դեր ունեցող բոլոր կառույցները, ծառայությունները կամ վարչությունները: Սրանք այն գործակալություններն են, որոնք իրացնում են պետական միջոցները և իրավունք ունեն սահմանափակելու մարդու իրավունքները և ազատությունները՝ ելնելով պետական անվտանգության նպատակներից: Նման վերլուծության դժվարությունը հասկանալու համար բավարար է ուսումնասիրել տարբեր ազգային հետախուզական կառույցները: Օրինակ, ԱՄՆ-ում կա 15 հետախուզական գործակալություն, Ֆրանսիայում՝ 13, Գերմանիայում՝ 6, Ռուսիայում՝ 7 և Իտալիայում՝ միայն երկուսը: Ի դեպ, աշխարհում անվտանգության գործակալությունների թիվը երեք անգամ գերազանցում է պետությունների թվին:

Ի վերջո, բյուջեի վերլուծությունը քաղաքացիական կազմակերպություններին հնարավորություն է տալիս հասկանալ և բացահայտել կոռուպցիոն երևույթները:

Ինչով է առանձնահատուկ անվտանգության բյուջեն

Անվտանգության բնագավառի բյուջեն ենթարկվում է այն նույն կանոններին, որոնք տարածվում են մյուս բնագավառների վրա:

Անվտանգության բյուջետավորումը չպետք է տարբերվի կառավարման այլ բնագավառների բյուջետավորումից և չպետք է պակաս թափանցիկ լինի: Միևնույն ժամանակ, անվտանգության բնագավառի բյուջետավորման բարդությունը և առանձնահատկությունը առավել դժվարացնում նրա վերլուծությունն ու վերահսկումը:

Անվտանգության բյուջետավորման կարևոր առանձնահատկությունը նրանում է, որ այն ունի շեշտադրված քաղաքական բնույթ: Բոլոր հանրային բյուջետավորումները ներառում են մրցակցային պահանջների կարևոր քաղաքական ուղղությունները, մինչդեռ անվտանգության բյուջեի առանձնահատկությունը հանդիսանում է զգայուն քաղաքական ուղղության համար հատկացվող գումար, որը պետությունը ծախսում է անվտանգության նպատակներով և հասարակությանը սպառնացող վտանգները (ներքին՝ հանցագործություններ և արտաքին՝ միջազգային ագրեսիա) արտացոլող քաղաքական որոշումների ուղղությամբ:

Պաշտպանության բնագավառի ծախսերը հաճախ կարևոր ազդեցություն են ունենում ազգային տնտեսության և զբաղվածության վրա, և երբեմն օգտագործվում է ներքին քաղաքական նպատակներով: Անվտանգության բնագավառի բյուջեն նաև արտաքին քաղաքականության գործիք է. այն գումարը, որը ծախսվում է տվյալ պետության պաշտպանության համար բավական ճշգրտորեն արտացոլում է նրա արտաքին քաղաքականության հեռանկարային պլանները և հետևաբար ուսումնասիրվում է մյուս պետությունների կողմից: Անվտան-

գության բնագավառի բյուջետավորման քաղաքական կարևորությամբ է պայմանավորված քաղաքացիական հասարակության ավելի ակտիվ ներգրավվածությունը:

Պետության ներքին և արտաքին անվտանգությունը հանրային ծառայություն է, որի համար քաղաքացիները պետք է վճարեն: Անվտանգության բնագավառը նույնիսկ «առաջինն է հավասարների մեջ», քանի որ առանց դրա մյուսներն անհասանելի են: Այլ կերպ ասած, անձի ազատությունը, սոցիալական արդարությունը, բարգավաճելու և կրթության և այլ պետական բարիքների մատչելիությունը հնարավոր է միայն անվտանգ միջավայրում, որտեղ երաշխավորված է յուրաքանչյուր քաղաքացու անվտանգությունը: Սակայն ի տարբերություն շատ այլ հանրային քաղաքականությունների, հաճախ դժվար է չափել անվտանգության քաղաքականության արդյունավետությունը:

Օրինակ՝ քանի գինվոր, զենքի ինչ տեսակներ և ինչ պատրաստվածություն պետք է տրամադրի պաշտպանական գերատեսչությունը արդյունավետ լինելու համար: Ինչպես պետք է գնահատվի, թե արդյոք ռազմական գործողությունների ժամանակ պաշտպանական կարողությունը կորստերովի այնպես, ինչպես վարժեցվել է խաղաղ ժամանակ: Ներքին անվտանգությունն էլ իր հերթին առաջացնում է յուրահատուկ հարցադրումներ՝ ինչպես կարելի է չափել ոստիկանության և հետախուզության կողմից ծախսված գումարի արդյունավետությունը:

Մարդու իրավունքների խախտման վերաբերյալ ապացույցներ և ճշգրիտ տեղեկություններ դժվար է հավաքել, երբ ոստիկանությունում տիրում է վախի և անվստահության մթնոլորտ: Պետական կառույցների անարդյունավետությունը խոչընդոտում է «գրիերի» նկատմամբ կատարված խախտումների մասին տեղեկությունների ձեռքբերմանը: Ցուցանիշների կատարման անհստակությունը կառավարության մյուս քաղաքականությունների համեմատ (օրինակ կրթության քաղաքականության գնահատման ցուցանիշ կարելի է համարել ամեն տարի ԲՈՒՅ ավարտող ուսանողների քանակը) ավելի դժվարացնում է անվտանգության բյուջեի վերլուծությունը, սակայն այն անլուծելի խնդիր չէ:

Ազգային անվտանգության վերաբերյալ զգայուն տեղեկատվության պաշտպանելու անհրաժեշտությունը կանխում է թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմների իրականացումն այնպես, ինչպես դրանք գործում են հանրային այլ քաղաքականությունների բնագավառներում: Գաղտնի ծրագրերը (բյուջեներ, որոնք կարող են ներառվել ընդհանուր բյուջեի մեջ, բայց ոչ մանրամասն և ոչ էլ հստակորեն ամրագրված են լինում բյուջետային փաստաթղթերում) հաճախ օգտագործվում են պաշտպանության բնագավառում հետազոտությունների, զարգացման, գնումների, հետախուզական գործողությունների կամ ռազմական գործողությունների համար: Գաղտնի գործողությունների շրջանակը, նպատակը և նույնիսկ գները գաղտնի են պահվում ոչ միայն հասարակությունից, այլև շատ պատգամավորներից: Հետևաբար և քաղաքացիական հասարակությունը, և՛ խորհրդարանը պետք է համատեղ ձգտեն ձևավորել նման գործողությունների վերաբերյալ հաշվետվողականության ընդունելի մակարդակ և կանխարգելել, որպեսզի գործադիրի կողմից առանց լուրջ հիմնավորումների տեղեկատվությունը չհամարվի գաղտնի:

Պետությունների մեծ մասը ընդունել են «Տեղեկատվության ազատության մասին» օրենք, որով սահմանվում են, թե ինչպես պետք է քաղաքացիները իրականացնեն իրենց իրավունքները հանրային նշանակություն ունեցող տեղեկատվություն ստանալու համար: Գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի բացառություններից է, որը պետք է նույնպես կարգավորվի օրենքով: Մասնավորապես, պետք է սահմանվի, թե ինչ կարգի տեղեկատվություն կարող է համարվել գաղտնի, ում կողմից, ով կարող է այն ստանալ և ինչպես: «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի ընդունումը խորհրդարանականներին և քաղաքացիական հասարակությանը տալիս է հիմնական

իրավական գործիք, որպեսզի գործադիրին դարձնեն հաշվետվու և ապահովեն նրա գործունեության թափանցիկությունը: Որոշ պատգամավորների համար գաղտնի տեղեկատվության մատչելիության թույլտվության մեխանիզմները պետք է երաշխավորեն գաղտնի ծրագրերի և բյուջեների համար հաշվետվողականության որոշակի աստիճանի հնարավորություն:

Մեկ այլ հանգամանք, որ պետք է հաշվի առնվի անվտանգության տարեկան գեկույցի մանրամասները վերլուծելուց առաջ. անվտանգության և պաշտպանության քաղաքականությունները պետք է մշակվեն երկարաժամկետ պլանավորմամբ ու բարեփոխումներով: Շատ երկրներում անվտանգության բնագավառի կայացումը գտնվում է շարունակական բարեփոխումների գործընթացում: Զինված ուժերի կրճատումը, մասնագիտացումը, ձևափոխումը, տեխնոլոգիական արագ փոփոխությունները, թանկարժեք և բարդ զինամթերքի գնումը և պահպանումը, անվտանգության և ռազմական մասնավոր ընկերությունների զարգացումը արտացոլում են աշխարհում հասարակական անվտանգությանը հանդիպող մարտահրավերները: Իրավապահ համակարգի ծառայությունները հաճախ փորձում են մեծացնել իրենց բյուջետային հատկացումները, որպեսզի ձեռք բերեն ավելի բարձրակարգ հետախուզական գործիքներ, բանկային տվյալներ, իսկ ներկայումս փորձում են ահաբեկչության դեմ պայքարի ներքո ընդլայնել ռազմական կարողությունները: Ընդհանուր առմամբ, բյուջեն նման բարեփոխումները կառավարելու հիմնական գործիքն է: Մյուս կողմից, երկարաժամկետ զարգացման մտադրությունների և տարեկան բյուջեի վերլուծության համադրումը դժվար խնդիր է, այդ պատճառով խորհուրդ է տրվում հաշվի առնել մեկ տարվա փոխարեն մի քանի տարվա բյուջե:

Բյուջետային ցիկլ հասկացությունը

Բյուջեի բնորոշ ցիկլը բաղկացած է չորս փուլերից՝ բյուջեի նախագծի մշակում, հաստատում, ծախսում/իրականացում, աուդիտ և վերանայում:


Բյուջեի ցիկլը հիմնված է այն միջավայրի վրա, որն ընդգրկում է մի քանի գլխավոր հատկանիշներ, դրանք են.

- 1) հաշվի առնել պահանջվող կարողությունները
- 2) ուսումնասիրել ռեսուրսների սահմանափակումները
- 3) կառավարել հնարավոր ռիսկեր
- 4) ուսումնասիրել ազգային և միջազգային օրենքները և նորմերը:

Յուրաքանչյուր փուլում գործողությունները և ներգրավված դերակատարները տարբեր են, տարբեր են նաև քաղաքացիական գործընթացը գնահատելու և նրա վրա ազդելու հասարակության հնարավորությունները:

Բյուջեի նախագծի մշակում

Բյուջեի ձևավորումը գործադիրի հետ բանակցությունների գործընթաց է որոշելու համար, թե ինչպես են հաջորդ ֆինանսական տարվա համար առկա միջոցները բաշխվելու նախարարությունների միջև և յուրաքանչյուր նախարարության ներսում: Գործադիր վարչությունները ներկայացնում են իրենց բյուջեի առաջարկները ֆինանսների նախարարությանը: Նախարարությունները ձևակերպում են իրենց բյուջետային կարիքները՝ ելնելով կառավարության ազգային ծրագրի նպատակներից, նախարարության կոնկրետ նպատակներից՝ հաշվի առնելով տարբեր աղբյուրներից ակնկալվող ներդրումները: Այս գործընթացի վերջում կազմվում է բյուջեի նախագիծը, որը գործադիրի հետ համաձայնեցնելուց հետո վերջնական հաստատման համար ներկայացվում է խորհրդարան:



Նկար 11. Բյուջեի ցիկլի մոդել

Ինչպես կարող են քաղաքացիական կազմակերպությունները ազդեցություն ունենալ բյուջեի կազմման գործընթացի վրա

Բյուջեի ցիկլի այս փուլը տեղի է ունենում փակ դռների հետևում՝ հիմնական գործադիր մարմինների շրջանակում և շատ երկրներում առանց խորհրդարանականների մասնակցության: Ամեն դեպքում, բյուջեի նախագծի կազմման ընթացքում խորհրդարանական և հանրային քննարկումները կարող են ազդեցություն ունենալ քաղաքական կուսակցությունների և գործադիր իշխանությունների վրա: Որքան շատ խորհրդարանը ընգրկված լինի անվտանգության առաջնահերթությունների և պաշտպանության երկարաժամկետ պլանավորման քննարկումներում, այնքան քաղաքացիական հասարակությունը շատ տեղեկատվություն կունենա այն մասին, թե ինչպես է կառավարությունը պատրաստվում կազմել բյուջեն և ավելի շատ հնարավորություններ կունենա արտահայտելու իր նախապատվությունները և այլընտրանքային առաջարկները: Տարեկան բյուջեն, որը հատկացվում է անվտանգության բնագավառին, պետք է ներառվի մի քանի տարվա պլանավորման գործընթացում: Այս գործընթացը սովորաբար ներառված է հանրային փաստաթղթերում, ինչպիսիք են ազգային անվտանգության ռազմավարությունը, պաշտպանության սպիտակ փաստաթղթերը (white paper) և քաղաքականությունները, որոնք մշակվում են գործադիր կողմից և համաձայնեցվում (իսկ շատ երկրներում պաշտոնապես ընդունվում են խորհրդարանի կողմից: Նման փաստաթղթերով սահմանվում են ազգային շահերը, նպատակները և առաջնահերթությունները, ինչպես նաև պետական մարմինների կոնկրետ պարտականությունները և ռեսուրսները՝ այսպիսով ներկայացնելով ազգային անվտանգության քաղաքականության ընդհանուր ուղիվազի՝ Դրանք կարող են վերաբերվել բուն պաշտպանության ծախսերի ծավալին, անձնակազմի քաղաքականությանը, զենքի ձեռքբերմանը և անհրաժեշտության դեպքում խաղաղասիրական աջակցության մեջ հնարավոր մասնակցության ծավալին: Հետևաբար, մինչ անվտանգության բնագավառին հատկացվող տարեկան բյուջեի վերլուծությունը անհրաժեշտ է վերլուծել երկարաժամկետ պլանավորման փաստաթղթերը: Փաստաթղթերի հաստատման նպատակով խորհրդարանի

ներգրավումը և համապատասխան հանրային քննարկումները կարևոր նախապատրաստական քայլ են անվտանգության տարեկան բյուջեի հաշվետվողականության համար: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են համագործակցել խորհրդարանի և լրատվական միջոցների հետ կարևոր թեմաները ընդգծելու և հրապարակայնացնելու համար:

Ըստ բյուջեի հոդվածի տարեկան ծախսերի սահմանման մեթոդները

- Ծախսերի նախատեսված ծավալը կապված է նախկին տարվա ծախսերի հետ
- Ծախսերի ծավալը հաշվարկվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) տոկոսով
- Ծախսերի չափը կարող է համապատասխանել միջազգային համաձայնագրերին, օրինակ՝ ՆԱՏՕ-ն խորհուրդ է տալիս իր անդամ երկրներին պաշտպանությանը տրամադրել ՀՆԱ-ի երկու տոկոսը
- Ծախսերի չափը կապված է այլ երկրների չափանիշների հետ, օրինակ՝ ինչքան են այլ պետությունները ծախսում նույն բնագավառների վրա ընդհանրապես, յուրաքանչյուր քաղաքացու վրա կամ ՀՆԱ-ի որ տոկոսն է հաշվի առնվում
- Ծախսերի ծավալը որոշվում է բացարձակապես նոր հանգամանքների ենթատեքստում՝ համաձայնեցնելով ազգային առաջնահերթությունների հետ, հաշվի առնելով նաև կոնկրետ առաջնահերթությունները, օրինակ՝ կրթության կամ առողջապահության բնագավառների հատկացումները:

Տարեկան բյուջեի կազմումը ունի երկու մակարդակ, որոնք ընդգրկում են տարբեր շահերի և գործակալությունների միջև մրցակցություն՝

ա. ազգային առաջնահերթությունների սահմանում (հատկացում անվտանգության բնագավառին)

բ. անվտանգության առաջնահերթությունների սահմանում (հատկացում անվտանգության բնագավառի ներսում):

Ազգային առաջնահերթությունների սահմանումը վերաբերում է նախարարությունների միջև հնարավոր միջոցների հատկացմանը: Այս համեմատությունը ցույց է տալիս հասարակության մրցակցող բնագավառների հետագա զարգացումների վերաբերյալ (հիմնականում դրանք են անվտանգության, առողջապահության, կրթության, տնտեսական զարգացման բնագավառները) կառավարության քաղաքական ուղղությունները: Ձևը, որով կառավարությունը առաջարկում է լուծելու այն խնդիրը, թե «պետք է ֆինանսավորվեն ատրճանակները, թե կարագը», շատ երկրներում բյուջեի վերլուծության ամենակարևոր խնդիրն է:

Այս փուլում կարող է օգտագործվել երեք չափանիշ.

1. անվտանգության բնագավառին հատկացվող գումարի չափը պետք է համահունչ լինի ազգային շահերին, հիմնված լինի անվտանգության գործակալությունների դերի, առաքելությունների և առաջադրանքների վրա: Երկարաժամկետ ծախսերը նույնպես պիտի հաշվի առնվեն:

2. պլանավորված անվտանգության ծախսերը պետք է համապատասխանեն տնտեսական կարողություններին: Երկարաժամկետ ծախսերը պետք է փոխկապակցվեն միջնաժամկետ տնտեսական կանխատեսումների հետ:

3. անվտանգության բնագավառի ֆինանսական «բեռը» պետք է ընդունելի լինի ամբողջ հասարակության կողմից:


Անվտանգության առաջնահերթությունների սահմանումը մեծապես կախված է ազգային անվտանգության բնագավառի կառուցվածքից և այդ կառուցվածքում յուրաքանչյուր մարմնի ազդեցությունից: Բյուջեի նախապատրաստական փուլը ծայրահեղ կարևոր է, քանի որ այն ձևավորում է անվտանգության բնագավառի ամբողջ բյուջեի ցիկլի հիմքերը: Գործադիրի ներսում և իշխանության ճյուղերի միջև դերերը և պարտականությունները պաշտպանության բյուջետավորման առնչությամբ պետք է լինի շատ հստակ: Պաշտպանության բյուջետավորման գործընթացում դերերը և պարտականությունները սահմանվում են ազգային օրենսդրությամբ, կանոնակարգերով և հրահանգներով, որոնք ներառված են բյուջետային համակարգի օրենսդրության մեջ:

Որոնք են անվտանգության և պաշտպանության հիմնական առանձնահատկությունները և սահմանափակումները, որոնք պետք է հաշվի առնվեն բյուջեի նախապատրաստման փուլում: Առաջինը ծախսերի ծավալն է: Նույնիսկ այն պետությունները, որոնք ունեն նմանատիպ պաշտպանական քաղաքականություններ, օրինակ ՆԱՏՕ-ն կամ Եվրամիության անդամ երկրները, կարող են ունենալ ծախսման տարբեր ծավալներ: (2005 թ-ի տվյալների համար տե՛ս աղյուսակ 10-ը):

Աղյուսակ 10. Ծախսերի մակարդակները 2005 թ-ի համար

| Երկիր | Պաշտպանական բյուջե ՀՆԱ% | Երկիր | Պաշտպանական բյուջե ՀՆԱ% |
|-----------|----------------------------|------------------------|----------------------------|
| Բելգիա | 1.3 | Նորվեգիա | 2 |
| Բուլղարիա | 2.4 | Թուրքիա | 3.1 |
| Գերմանիա | 1.4 | Միացյալ Թագավորություն | 2.3 |
| Իտալիա | 2 | Միացյալ Նահանգներ | 4 |

Պաշտպանության ընդհանուր բյուջեի չափը որոշելու ընդհանուր կանոն գոյություն չունի: Օրինակ, Եվրամիության մեծ պետությունների պաշտպանության բնագավառի փորձագետները բյուջեն կազմում են ՀՆԱ-ի 2 տոկոսի սահմաններում: ՆԱՏՕ-ն սահմանում է նույն չափանիշները: Փաստն այն է, որ յուրաքանչյուր պետություն սահմանում է անվտանգության և պաշտպանության համար ընդհանուր ծախսերի չափը զարգացման, կրթության, առողջապահության և այլ բնագավառների վրա՝ մրցակցող պահանջների միջավայրում, և առնվազն տեսականորեն, մեծ հատկացումներ են արվում անվտանգության և պաշտպանության բնագավառների համար:



Նկար 12. Պաշտպանական բյուջեի բաժանման չափանիշ

Պաշտպանական բյուջեի որակի մեկ այլ կարևոր ցուցանիշը, որը պետք է հաշվի առնվի բյուջեի նախապատրաստման փուլում, դրամի բաշխումն է ըստ ծախսերի հիմնական տեսակների՝ անձնակազմ, գործառնություններ և պահպանում, ներդրումներ: Պաշտպանության տնտեսագետներին հաջողվում է գտնել իդեալական բաշխում և արդյունքում հաճախ 40:30:30 բաշխումը համարվում է որպես չափանիշ (տե՛ս նկար 12):

Այլ վերլուծաբաններ, ներառյալ ՆԱՏՕ-ի պաշտպանության բնագավառի տնտեսագետները առաջարկում են, որպեսզի 40 տոկոսից ոչ ավելին պետք է ծախսվի անձնակազմի վրա և 25 տոկոսից ոչ պակաս՝ ներդրումների վրա: Կա ընդհանուր համաձայնություն. ընդունել այս բաշխումը որպես ընդունված չափ, իսկ զգալի շեղումների դեպքում տալ հստակ բացատրություններ:

Բյուջեի հաստատում

Պաշտպանական բյուջեի ցիկլի խորհրդարանական և հասարակական վերահսկողությունը հաճախ բախվում է անվտանգության ոլորտում երկար տարիների ընթացքում գործադիրի գերակայության ձևավորված մշակույթին: «Քսակի իշխանությունը» կարող է և պետք է կիրառվի անվտանգության և պաշտպանության բնագավառներում հանրային ռեսուրսների օգտագործման հաշվետվողականությունը ապահովելու համար: Խորհրդարանի ամենակարևոր դերը իրավական դաշտի ձևավորումն է, որը երաշխավորում է ժողովրդավարության սկզբունքների իրականացումը: Բյուջեի միջոցով անվտանգության բնագավառի նկատմամբ խորհրդարանական և հասարակական վերահսկողությունը պետք է լրջորեն արմատավորվի երկրի քաղաքական մշակույթի մեջ:

Բոլոր պահանջներից ամենակարևորներն են.

- խորհրդարանի և շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հնարավորությունը գնահատելու անվտանգության բնագավառի արդյունքը՝ բյուջեի որոշակի հատկացումների ապահովմամբ
- բյուջեի կազմման և հաստատման ընթացքում նման գնահատում կատարելու բավարար տեղեկատվության մատչելիությունը՝ բյուջեի իրականացման վերահսկողության և բյուջեի հաշվարկների վերանայման նպատակով:

Տեխնիկապես դժվար է գնահատել՝ ինչպիսի անվտանգության արդյունք են պլանավորում ստանալ անվտանգության բնագավառի կազմակերպությունները իրենց պահանջած բյուջեի սահմաններում, և ինչպես է այդ արդյունքը կապվում անվտանգության և պաշտպանության քաղաքականությունների հետ: Տնտեսական առումով սա նշանակում է խորհրդարանի և հասարակական կազմակերպությունների կարողությունը գնահատելու փողի արժեքը կամ այլ կերպ ասած՝ քննարկելու և հաստատելու կառավարության կողմից ներկայացված բյուջեն: Ընդհանրապես ընդունված է, որ անվտանգության բնագավառի կազմակերպությունների արդյունքը այն կարողություններն են, որոնք անհրաժեշտ են անվտանգության ուղղաձուգված սցենարներով իրականացնելու իրենց դերերն ու առաքելությունները: Այս նպատակով, խորհրդարանը պետք է ստիպի գործադիրին ներկայացնել բյուջեի պահանջարկը անվտանգության բնագավառի ցանկացած կազմակերպությունների համար, ինչպես նաև իր պլանները, թե ինչ կարողություններ է պատրաստվում զարգացնել, պահպանել և ինչպես: Դա նշանակում է, որ պաշտպանության բնագավառի կազմակերպությունները պետք է խորհրդարանականներին բավարար մանրամասներ ներկայացնեն հստակ կառուցվածք ունեցող ամբողջական պաշտպանության ծրագրի վերաբերյալ, ինչպես նաև բացատրեն զարգացվելիք և պահպանման ենթակա կարողությունները բյուջեի հաստատման ժամանակ: Իր հերթին, խորհրդարանը որո-

շում է ոչ թե անմիջապես բյուջեի հաստատման պահանջը կամ պահանջվող գումարի ավելացումը կամ պակասեցումը, այլև որոշում է, թե առաջարկում ներկայացված որ կարողությունները ֆինանսավորել և ինչ չափով: Ժամանակ առ ժամանակ խորհրդարանը կարող է որոշել մեծացնել առաջարկվող կարողությունների ծավալը և ըստ դրա հատկացնել պահանջվածից բարձր գումար: Արդյունավետ բյուջետավորման համակարգի տեսակետից խորհրդարանը պետք է քննարկի և ընտրություն կատարի ծրագրի բաղադրիչների կամ ծրագրի այլընտրանքների միջև՝ որպես գործադիր կողմից նախապատրաստված և ներկայացված բյուջեի պահանջի մի մաս: Իհարկե դա չի կարող իրականացվել առանց խորհրդարանին տեղեկացնելու և քննարկելու: Խորհրդարանականները լավ գիտակցում են պլանավորման ռիսկի նշանակությունը ըստ անվտանգության և պաշտպանության կարիքների սահմանափակ ռեսուրսների համապատասխանեցման ժամանակ, ինչպես նաև տիրապետում են ռիսկն օբյեկտիվորեն գնահատելու փորձագիտական կարողություններին:

Խորհրդարանը կարևոր դեր ունի բյուջեի հաստատման փուլում. վերանայում է բյուջեն, լրամշակում է և վավերացնում է օրենքով: Բոլոր հանրային ծախսերի և հարկերի բնագավառում խորհրդարանի լիազորությունը ներկայացնում է հանրային ֆինանսների բնագավառում «օրենքի գերակայության» սկզբունքի իրականացում և հանդիսանում է խորհրդարանական վերահսկողության հիմնարար սկզբունքներից մեկը:

Պետական բյուջեի իրավական վերակողություն

Շատ պետություններում պետական բյուջեն օրենք է, որը նշանակում է.

1. որպես օրենք, բյուջեն պետք է հաստատվի խորհրդարանի կողմից. սրանով ապահովվում է խորհրդարանի մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում
2. օրենքը հանրային փաստաթուղթ է, որը հասանելի է բոլոր քաղաքացիներին
3. բյուջեի փաստաթղթերը հասանելի են ինտերնետում և առկա են հանրային գրադարաններում:

Բյուջեի օրենքին քաղաքացիական կամ ռազմական մարմինների չենթարկվելը պատժելի է որպես հանցագործություն:

Որոնք են «Պետական բյուջեի մասին» օրենքի և սովորական օրենքների միջև տարբերությունները.

1. միայն կառավարությունը կարող է ձևակերպել և ներկայացնել բյուջեի առաջարկը
2. խորհրդարանական փոփոխությունների համար պահանջվում են նշել միջոցների աղբյուրները՝ բյուջեի յուրաքանչյուր ավելացման համար:
3. սովորաբար խորհրդարանի բոլոր հանձնաժողովները ներգրավված են բյուջեի քննարկման, փոփոխման և հաստատման գործընթացում: Եթե խորհրդարանը կազմված է մեկից ավելի պալատներից, ապա բյուջեի առաջարկի վրա կարող են միաժամանակ աշխատել բոլոր պալատները:

Յուրաքանչյուր տարի խորհրդարանները բավականաչափ աշխատանքային ժամանակահատված են հատկացնում բյուջեի հաստատմանը: Համապատասխան ժամանակային ընթացակարգը կարևոր է արդյունավետ և տեղեկացված խորհրդարանի կողմից բյուջեի հաստատումը ապահովելու համար: Նման ընթացակարգերը պետք է երկարացվեն առնվազն մեկ կամ երկու ամսով և պետք է ներառեն երկու բաղադրիչ.

- բյուջեի առաջարկի ներկայացում
- վերլուծության, քննարկման ու քվեարկության համար բավականաչափ ժամանակ:

Ընդհանրապես բյուջեի հաստատման խորհրդարանական ընթացակարգը ներառում է.

- մի քանի աշխատանքային օրվա կամ շաբաթվա ընթացքում բյուջեի փաստաթղթերի ուսումնասիրում խորհրդարանականների կողմից
- խորհրդարանական հանձնաժողովների կողմից իրենց վերահսկողության տակ գտնվող կառավարության գործակալություններին առաջարկված միջոցների հատկացման մանրամասն վերլուծություն
- ամբողջ բյուջեի առաջարկի ուսումնասիրություն բյուջետային հանձնաժողովի կողմից, այդ թվում փոփոխությունների վերաբերյալ հանձնաժողովների առաջարկների վերանայում, որոնց բյուջետային հանձնաժողովը կարող է նաև չհետևել, ամբողջ պետական բյուջեի վերաբերյալ միասնական զեկույցի կազմում և ներկայացում նստաշրջանին
- ըստ բյուջեի գլուխների քվեարկության կազմակերպում՝ հաշվի առնելով հանձնաժողովի կողմից ներկայացված փոփոխությունները: Համաձայնեցված տեքստը դառնում է «Պետական բյուջեի մասին» օրենք: Այն աստիճանը, որով խորհրդարանն ի վիճակի է կատարել իր դերը այս փուլում, կախված է երկու գործոններից. ստացված տեղեկատվության ամբողջական և որակյալ լինելուց և բյուջեն լրամշակելու իրական լիազորությունից: Բյուջեի առաջարկը կարող է բաղկացած լինել մի քանի էջ փաստաթղթից, որը ներառում է տարբեր գործակալություններին հատկացվող ընդհանուր գումարների մասին ընդհանուր տեղեկատվություն, միևնույն ժամանակ այն կարող է ընդգրկել բարդ ու շատ մանրամասն տեղեկատվություն պարունակող հարյուրավոր էջեր: Բյուջեի առաջարկի մասին փաստաթուղթը բաղկացած է 500-ից 1000 տող հատկացումներից այնպիսի երկրներում, ինչպիսիք են Չեխիայի Հանրապետությունը, Հունգարիան, Ճապոնիան, Նոր Զելանդիան և Պորտուգալիան և մինչև 2000 տող հատկացումներից Ավստրիայում, Դանիայում, Իտալիայում, Նորվեգիայում, Շվեյցարիայում և ԱՄՆ-ում, իսկ 2000-ից ավելի տող հատկացումներից՝ Գերմանիայում, Իսպանիայում և Թուրքիայում:

Մյուս կարևոր ցուցանիշը բյուջետավորման գործընթացում խորհրդարանի ունեցած ազդեցության մակարդակն է, այն է, թե որքանով է խորհրդարանը ազդում բյուջեի բովանդակության վրա՝ լրամշակման գործընթացի միջոցով: Լայն առումով, բյուջեի հաստատման փուլում գոյություն ունի խորհրդարանականների կողմից իրավական լիազորությունը նկարագրելու երեք մոդել՝ *բյուջեում լրացումներ կատարելու անսահմանափակ լիազորություն, բյուջեում լրացումներ կատարելու սահմանափակ լիազորություն և բյուջեում լրացումներ կատարելու լիազորության սահմանափակում*:

Բյուջեում լրացումներ կատարելու անսահմանափակ լիազորությունը նշանակում է, որ խորհրդարանը հնարավորություն ունի լրացումներ կատարելու բյուջեի առաջարկում, այդ թվում առաջարկելու նոր ծախսեր: Տեսականորեն, լրացումներ կատարելու նման լիազորությունները հնարավորություն կտար խորհրդարանին կրկին գրել/կազմել կառավարության կողմից առաջարկված ամբողջ բյուջեն: ԱՄՆ կոնգրեսը համարվում է գործադիր իշխանության կողմից պաշտպանության բյուջեի առաջարկի մշակման գործում որպես ամենահզոր դերն ունեցող խորհրդարանը: Ձևակերպված լինելով նախագահի կողմից՝ այն իրապես ընդունվում է որպես առաջարկ, մանրամասն վերլուծվում և լրամշակվում է Կոնգրեսի կողմից: Գերմանիայի Բունդեստագը /խորհրդարանը/, հոլանդական և դանիական խորհրդարանները ամեն տարի նույնպես նախաձեռնում են բյուջետային հարյուրավոր լրացումներ: Ավստրիայի, Բելգիայի, Ֆինլանդիայի, Հունգարիայի, Իտալիայի, Նորվեգիայի և Պորտուգալիայի խորհրդարանները

նույնպես ունեն բյուջեում լրացումներ կատարելու անսահմանափակ լիազորություններ:

Խորհրդարանները, որոնք ունեն *բյուջեում սահմանափակումներով լրացումներ կատարելու լիազորություն*, կարող են կատարել այնքան լրացումներ, որքան ուզում են, եթե լրացումները չեն փոխում գործադիրի կողմից առաջարկվող ընդհանուր դեֆիցիտը (պակասորդը) կամ ավելցուկը: Լրացումներ կատարելու լիազորության այս մակարդակը թույլ է տալիս խորհրդարանին փոխել կառավարության առաջնահերթությունները և վերաբաշխելով հասկացումները՝ որոշել բյուջետային վերջնական առաջնահերթությունները: Ընդհանուր դեֆիցիտը (պակասորդը) անփոփոխ թողնելու սահմանափակումը հիմնավորվում է ֆինանսական կարգը և մակրոտնտեսական ցուցանիշները հաշվի առնելու անհրաժեշտությամբ: Հետևաբար, խորհրդարանը պետք է նշի բյուջեի ցանկացած ավելացման համար ֆինանսավորման աղբյուրը՝ համապատասխանաբար նվազեցնելով այլ տողի հատկացումը կամ ապահովելով ֆինանսավորման նոր աղբյուր: Այլապես, ավելի շատ ծախսելու և ավելի քիչ հարկ տալու ճնշումները կառաջացնեն քրոնիկ դեֆիցիտ (պակասորդ): Չեխիայի, Ֆրանսիայի, Մեքսիկայի, Լեհաստանի, Իսպանիայի և Ռումինիայի խորհրդարանները գործում են այս մոդելով:

Բյուջեում լրացումներ կատարելու լիազորության սահմանափակումը բնորոշ է միայն մի քանի ժողովրդավարական երկրների խորհրդարաններին: Նրանք կարող են նվազեցնել միայն առկա ծախսը (առանց այլ առաջնահերթությունների վրա վերաբաշխման հնարավորության), կամ նրանք չեն կարող անել որևէ փոփոխություն, այլ կարող են հաստատել կամ մերժել ամբողջ բյուջեն: Ուեստմինստերյան (բրիտանական) տիպի խորհրդարանները այս մոդելի ներկայացուցիչներ են: Որոշ երկրներում խորհրդարանի կողմից բյուջեի վերաբերյալ լրացումները կարող են հանգեցնել կառավարության հրաժարականին (Կանադան, Միացյալ Թագավորությունը, Ավստրալիան, Յնդկաստանը, Նոր Զելանդիան, Հարավային Աֆրիկան և Զամբիան նման օրինակներ են): Բյուջեի հաստատման օրենքով սահմանված այս լիազորության պակասը կարող է փոխհատուցվել խորհրդարանի և քաղաքացիական կազմակերպությունների լուրջ ներգրավմամբ բյուջետային ցիկլի մյուս փուլերում:

Այսպիսով, ըստ բյուջեում լրացումներ կատարելու խորհրդարանի լիազորությունների կարելի է երկրները բաժանել հետևյալ խմբերի.

Անսահմանափակ լիազորություններ ունեցող երկրներ. Ավստրիա, Բելգիա, Դանիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Հունգարիա, Իտալիա, Նիդերլանդներ, Նորվեգիա, Պորտուգալիա, Սլովակիա, Շվեդիա, Շվեյցարիա, ԱՄՆ:

Սահմանափակ լիազորություններ ունեցող երկրներ (լրացումները չպետք է փոխեն ընդհանուր դեֆիցիտը կամ ավելցուկը). Չեխիայի Հանրապետություն, Ֆրանսիա, Լեհաստան, Ռումինիա, Իսպանիա, Շվեդիա, Թուրքիա:

Սահմանափակումներով լիազորություններ ունեցող երկրներ (միայն կամ տողերի հոդվածների նվազեցում կամ ընդհանրապես ոչ մի փոփոխություն). Կանադա, Միացյալ Թագավորություն, Իռլանդիա, Հունաստան:

Գործնականում ըստ բյուջեում լրացումներ կատարելու խորհրդարանի լիազորությունների կարելի է երկրները բաժանել հետևյալ խմբերի.

1. հաստատում է բյուջեն կարևոր փոփոխություններ կատարելով. Դանիա, Գերմանիա, ԱՄՆ
2. հաստատում է բյուջեն աննշան փոփոխություններ կատարելով. Ավստրիա, Բելգիա, Չեխիայի Հանրապետություն, Ֆրանսիա, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Նիդերլանդներ, Նորվեգիա, Պորտուգալիա, Լեհաստան, Ռումինիա, Իսպանիա, Շվեդիա,

Թուրքիա, Շվեյցարիա

3. հաստատում է բյուջեն առանց փոփոխությունների. Կանադա, Միացյալ Թագավորություն, Իռլանդիա, Հունաստան:

Ինչպես կարող են քաղաքացիական կազմակերպությունները ազդեցություն ունենալ բյուջեի հաստատման վրա

Խորհրդարանին ներկայացնելուց հետո բյուջեի փաստաթուղթը հասանելի է դառնում հանրությանը, և կառավարության առաջնահերթությունները դառնում են բաց հասարակական քննարկման համար: Բյուջեի հաստատման վրա ազդեցություն ունենալու համար քաղաքացիական կազմակերպությունները կարող են իրենց կարծիքը և միջոցների հատկացման համար այլընտրանքային առաջարկությունները խորհրդարանին ներկայացնել մի քանի ձևով.

- անմիջապես ներկայացնել պատգամավորներին, որոնց հետ կարող են հանդիպել իրենց գրասենյակում
- հուշագրեր ուղարկել համապատասխան խորհրդարանական հանձնաժողովներին
- մասնակցել հանձնաժողովների քննարկումներին բյուջեի վերլուծության ժամանակ
- ներգրավել և համագործակցել լրատվամիջոցների հետ իրենց ձայնը բարձրացնելու համար:

Սովորաբար, բյուջեի վերաբերյալ տեղեկատվության առումով խորհրդարանը բացառապես կախված է կառավարությունից՝ հատկապես անվտանգության հետ կապված հարցերով: Քիչ խորհրդարաններ կան, որոնք ունեն բյուջեի հետազոտման մասնագիտացված բաժիններ (Նման բաժիններ ունեցող երկրներն են՝ Իտալիա, Հարավային Կորեա, Միացյալ Թագավորություն և ԱՄՆ), և քիչ հանձնաժողովներ կան, որոնք ունեն բյուջեի վերլուծության մասնագիտացված անձնակազմ: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների առաջարկած փորձը կարող է լրացնել այս բացը՝ օգնելով խորհրդարաններին ավելի լավ տեղեկացված լինել բյուջետային հարցերին: Իսկ խորհրդարանները միաժամանակ կարող են քաղաքացիական հասարակությանը ներկայացնել իրենց տեսակետները հանրային միջոցների ծախսման վերաբերյալ: Անկախ փորձագետները, հետազոտողները, հետազոտական կենտրոնները (think tanks) և շահագրգիռ խմբերը (ինչպիսիք են՝ մասնագիտացված ընկերակցությունները կամ սինդիկատները), կարող են հանդիսանալ խորհրդարանների համար արժեքավոր տեղեկատվության այլընտրանքային աղբյուրներ:

Որքան հզոր լինի խորհրդարանի կարողությունը ազդելու հաստատված բյուջեի թվերի վրա, այնքան ավելի բարձր կլինի քաղաքացիական հասարակության ներուժը՝ հարցի վերաբերյալ վճռորոշ խոսք ունենալու համար: Հետևաբար, քաղաքացիական հասարակության լավագույն շահն է ունենալու ազգային խորհրդարան, որը հետաքրքրված և միավորված է և ունակ է լրամշակելու բյուջեի առաջարկություն, երբ այդպես է պահանջում ազգային շահը: Քաղաքացիական հասարակությունը պետք է ստուգի, թե ինչպիսի լիազորություններ ունի խորհրդարանը բյուջեի հաստատման փուլում և ինչպես է խորհրդարանը օգտագործում այդ լիազորությունները: Այնուամենայնիվ, շատ հաճախ, անկախ բյուջետային առաջարկը փոխելու խորհրդարանի օրենսդրական լիազորությունից, գործնականում լրամշակման սահմանները չափազանց սահմանափակ են և բյուջետային թվերը թողնվում են բացառապես գործադիրի վերահսկողությանը: Հետևաբար, բյուջեի նկատմամբ խորհրդարանական նվազ ազդեցության հիմնական պատճառը օրենսդրական լիազորությունների պակասը չէ, այլև քաղաքական կամքը, որը հետևանք է քաղաքական կուսակցությունների ակտիվության և նրանց ներքին իրավասությունների:

Բյուջեի իրականացում

Բյուջեի իրականացումը, ըստ «Բյուջեի մասին» օրենքի, շարունակական գործընթաց է, որը զարգացել է կառավարության գործակալությունների ներսում՝ երրորդ կողմերի շատ քիչ ներգրավմամբ: Բյուջեի վավերացումից հետո, բյուջեի համար պատասխանատու մարմինը (սովորաբար ֆինանսների նախարարությունը) հաշիվներ է բացում յուրաքանչյուր պետական մարմնի համար և իրականացնում է ծախսերի վերահսկողություն՝ հատկացումների հաճախակի վերանայման, խոշոր ծախսերի հաստատման և յուրաքանչյուր գործակալության կողմից կատարվող ծախսերի մոնիթորինգի միջոցով: Այս փուլում կարևոր է յուրաքանչյուր գործակալության ներքին միավորումների կողմից իրականացվող ֆինանսական վերահսկողությունը՝ համոզվելու համար, որ ֆինանսները ծախսվում են ըստ ամենօրյա հաստատված նպատակների: Ծատ երկրներում նախարարություններն ունեն ներքին աուդիտի բաժիններ և, հաճախ, այդ բաժինների կազմակերպումը և լիազորությունները սահմանվում են օրենքով:

Բյուջեի իրականացման փուլի ժամանակ գլխավոր խնդիրը նրանում է, որ բյուջեի թվերը, որոնք սահմանվել են ֆինանսական տարին սկսելուց մեկ կամ ավելի տարի առաջ, կարող են չհաստատվել գործադիրի ու խորհրդարանի կողմից պլանավորման համեմատաբար երկարատև և բարդ պրոցեսի պատճառով: Հնարավոր լուծումը բյուջեի ընթերցման ժամանակահատվածի վերջին պահին կազմված և խորհրդարանի հաստատմանը ներկայացված տարբերակների ցանկի միջոցով բյուջետային տվյալների մշակումն ու թարմացումն է՝ մինչ բյուջեի իրականացման սկիզբը: Մեկ այլ տարբերակ կարող էր լինել ֆինանսական իրական վիճակի գնահատումը և այնպիսի խնդիրների լուծումը, որ հնարավոր լինի բյուջեով իրականացնել ճկուն գործողություններ: Նման ճկուն բյուջեները կարող են կիրառվել բոլոր մակարդակներում: Երբ կազմակերպության բաժանմունքն ունի խնայողություններ, թույլ են տալիս նրան որոշակի սահմանափակումներով օգտագործել այդ գումարը նաև այլ նպատակով: Սա բարձրացնում է իրավասու աշխատակազմի պատասխանատվությունը գումարը ծախսելիս և նրանց մոտ կառաջացնի մոտիվացիա և ըմբռնում, որ փոփոխությունները կարող են բերել անձնական և կազմակերպական օգուտի:

Բյուջեի իրականացման փուլի ժամանակ խնդիր կարող է հանդիսանալ ֆինանսական տվյալների փոխանցումը ամենացածր մակարդակից մինչև պաշտպանության նախարարություն կամ խորհրդարան: Որոշ անցումային երկրներում այդ փոխանցումը կարող է տևել 4-ից 6 ամիս: Նման ուշացումները որոշակի կարևոր տեղեկատվությունը անօգուտ են դարձնում որոշումների կայացման համար: Այս ենթատեքստում օրինակ կարող է հանդիսանալ այսպես կոչված «դեկտեմբերյան տենդը»: Անվտանգության բնագավառի կազմակերպությունները փորձում են ծախսել մնացած գումարները երբեմն անօգտակար բաների վրա՝ հաջորդ տարվա հատկացումների կրճատումից խուսափելու համար: Այսպիսով, մի ֆինանսական տարուց հաջորդ տարի գումարների փոխանցելու ճկունությունը պայմաններ է ստեղծում, որպեսզի չիրականացվեն անօգուտ ծախսեր:

Ինչ դեր կարող են խաղալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները բյուջեի կատարման մեջ

Քանի որ բյուջեի կատարման փուլը գործադիր իշխանության գործառույթ է, քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ունեն դրա զարգացումը մոնիթորինգի ենթարկելու սահմանափակ հնարավորություններ: Սակայն կան մի քանի ձևեր խորհրդարանի ներգրավման, հանրային քննարկման և քաղաքացիական հասարակության ներգրավման

համար: Դա ներառում է լրացուցիչ բյուջեների քննարկումներ, խորհրդարանական հանձնաժողովի լսումներ և պաշտպանության գնումներ:

Լրացուցիչ բյուջեները հանդիսանում են տարեկան հիմնական բյուջեի վերաբերյալ լրացումների առաջարկություններ, որոնք սովորաբար կառավարության կողմից ներկայացվում են խորհրդարանին: Ֆինանսական տարվա ընթացքում գործակալությունները պայքարում են, որպեսզի ծախսեն իրենց ստացված գումարներն այնպիսի միջավայրում, որը անխուսափելիորեն տարբերվում է այն միջավայրից, որի համար բյուջեն մշակվել էր: Հաճախ, անկանխատեսելի գործողությունները, ինչպիսիք են խաղաղապահ գործողություններն ու արտակարգ իրավիճակները, ստիպում են, որպեսզի նախարարները ներկայացնեն լրացուցիչ ֆինանսավորման պահանջ:

Հետևաբար, բոլոր բյուջետային համակարգերը բյուջեի իրականացման փուլում ապահովում են որոշակի հնարավորություններ՝ փոփոխելու վավերացված բյուջեն ֆոնդերի փոփոխությունների, վերածրագրավորման, նոր ֆինանսավորման միջոցով: Լրացուցիչ բյուջեները պետք է հաստատվեն խորհրդարանի կողմից՝ ըստ նույն ընթացակարգի, ինչպես այլ օրենքների վերաբերյալ առաջարկներն են քննարկվում և ընդունվում:

Խորհրդարանական վերահսկողությունը հանձնաժողովների լսումների, կառավարության անդամների հետ հանդիպումների միջոցով նպատակ ունի պարզելու, թե ինչպես է բյուջեն գործնականում ծախսվում: Պաշտպանության բյուջեի իրականացումը հանդիսանում է շատ եվրոպական խորհրդարանների կողմից պաշտպանության հանձնաժողովների կողմից անցկացվող լսումների ամենակարևոր և հաճախակի թեմաները: Հանձնաժողովները հաճախ զեկույցներ են հրապարակում նման վերահսկողական գործողությունների ընթացքում բացահայտված խնդիրների վերաբերյալ:

Պաշտպանության գնումները գործընթաց է, որով ազգային անվտանգության ղեկավարները ձեռք են բերում սարքավորումներ կամ ծառայություններ և հանդիսանում է ամբողջ պաշտպանական բյուջեի կարևոր մասը: Պաշտպանության պայմանագրերը հանրային մեծ ուշադրություն են գրավում, որովհետև դրանք կապված են մեծածավալ հանրային ծախսերի հետ: Գոյություն ունի պաշտպանության գնումների հաշվետվողականության երկու կարևոր գործոն.

- հստակ օրենսդրական շրջանակ, որը ապահովում է գնումների մրցակցային գործընթացը: Մեկ աղբյուրից կամ ոչ մրցակցային գնումները պետք է լինեն ընդհանուր կանոնից բացառություն, սակայն թույլտվության հիմնավորումը պետք է հստակորեն արտացոլվի օրենքում
- գործընթացի խորհրդարանական մոնիթորինգն իրականացվում է վերահսկողության ավանդական գործիքների միջոցով՝ հարցեր, հարցումներ, լսումներ, որպեսզի կանխարգելի կոռուպցիան և «կեղծ մտահոգությունները, որոնք իբր բխում են ազգային շահերից»:

Բյուջեի գնահատում

Բյուջեի գնահատումը իրավական, ֆինանսական և կատարողական չափանիշների հետ բյուջեի իրականացման համապատասխանելիության փորձագիտական ստուգումն է: Գնահատումը տեղի է ունենում կառավարության գործակալությունների ներսում և դրանցից դուրս, և բյուջեի ցիկլի այս փուլը ամենաբացն է հանրության համար: Այս փուլի համապատասխանելիությունը կախված է այն հանգամանքից, թե ինչպես է կառավարությունը հասկացել գնահատման եզրակացությունները և ներառել հաջորդ տարվա բյուջեի առաջարկում: Այստեղ

կառավարության որոշումների կայացման վրա արդյունավետ ազդեցությունը կարող է օգնել ոչ միայն ազգային, այլև միջազգային մակարդակում, հակաօրինական ու անարդյունավետ գործողությունների բացահայտման դեպքում:

Ինչ դեր կարող են խաղալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները բյուջեի գնահատման մեջ

Խորհրդարանը, հասարակական կազմակերպությունները, լրատվամիջոցներն ու ազգային աուդիտորական հաստատությունը (ազգային վերասկիչ պալատ) կարող են այս փուլում դեր խաղալ, եթե բացահայտեն, թե արդյոք հանրային ռեսուրսները ծախսվել են արդյունավետ և, թե արդյոք տեղեկատվությունը տրամադրվել է լայն հանրությանը: Բյուջեի իրականացումից հետո պետք է տպագրվի տարեկան գործողությունների և հաշվետվությունների զեկույցներ, որոնք կառավարության կողմից ծախսված գումարների վերաբերյալ տեղեկատվության առաջին աղբյուրն են: Այս զեկույցները սովորաբար ներկայացվում են խորհրդարանին և հասանելի են դարձվում հանրությանը: Դրանից հետո կարելի է ձեռք բերել տեղեկատվություն հանրային նշանակության հատուկ ծրագրերի կատարման և արդյունավետության վերաբերյալ: Քանի որ բյուջեի գնահատումները, և հատկապես աուդիտի ֆինանսական բաղադրիչները փորձագիտական աշխատանքներ են, այս փուլում կարևոր դեր է խաղում ազգային աուդիտորական հաստատությունը (երբեմն կոչվում են Գլխավոր աուդիտոր, Ազգային աուդիտորական գրասենյակ, Բյուջեի գրասենյակ, ՀՀ-ում Ազգային վերահսկիչ պալատ): Սա պետական մարմին է, որը օրենքով իրականացնում է պետության հանրային աուդիտի գործառույթը: Այն իրականացնում է կառավարության բոլոր բաժինների մանրամասն և մասնագիտական ֆինանսական աուդիտը: Աուդիտորական հաստատության զեկույցները ներկայացվում են խորհրդարանին և սովորաբար հրապարակայնացվում են: Բյուջեի արդյունավետ գնահատման օրինակ է Միացյալ Թագավորության Ազգային աուդիտորական գրասենյակի աշխատանքը, որը մանրամասն ուսումնասիրում է բյուջեի առանձին բաժինների ծախսերը և արդյունքները հրապարակում է տարեկան մինչև 50 զեկույցի միջոցով: Օրինակ, այն թողարկում է Հիմնական ծրագրերի տարեկան զեկույց, որը մանրամասներ է ներկայացնում պաշտպանության նախարարության պաշտպանական գնումների ամենամեծ 25 ծրագրերի մասին:

Անկախ բյուջեի ցիկլի մյուս փուլերում իրենց ունեցած լիազորությունից՝ խորհրդարանները կարող են կարևոր դեր խաղալ պաշտպանության ծախսերի աուդիտ իրականացնելու մեջ լսումների, հարցումների և հանրային զեկույցների միջոցով, որոնք նպատակ ունեն իրազեկել հանրությանը: Սրանք, իրենց հերթին, կարող են մեծ ազդեցություն կրել քաղաքացիական կազմակերպությունների հետազոտությունից և լրբեինգից: Եթե նրանց առաջարկությունները արդյունավետորեն հաշվի առնվեն բյուջեի ձևավորման ընթացքում, ապա բյուջեի հաստատման փուլում կարող է նվազել լրացումների անհրաժեշտությունը: Խորհրդարանի և ազգային աուդիտորական հաստատությունների կողմից թողարկված աուդիտորական զեկույցները պետք է հնարավորություն տան հանրությանը գնահատելու կառավարության կողմից կատարված ծախսերի օրինականությունը և արդյունավետությունը: Օրինակ, RESDAL-ը, Բուենոս Այրեսում գտնվող լատինամերիկյան քաղաքացիական կազմակերպություն է, զբաղվել է ազգային պաշտպանության բյուջեների անկախ վերլուծությամբ:

Փորձը ցույց է տալիս, որ բյուջետային վերլուծությունը հանդիսանում է տարբեր գործող անձանց փորձի ու անձնական, ինստիտուցիոնալ հարաբերությունների համադրություն, որը հնարավորություն է տալիս ստանալ ոչ միայն տվյալներ, այլև ընկալումներ և ինստիտուցիոնալ իրավիճակներ, որոնք դրսևորվում են բյուջետային ցիկլում: RESDAL-ը մշակել է պաշտ-

պանակաճ բյուջեի որոշումների կայացման գործընթացի վերլուծության մեթոդաբանությունը: Այն միավորում է պաշտպանության քաղաքականության շրջանակը, ազգային իրավական կարգը, գործադիրի և օրենսդիրի դերը, ներքին ու արտաքին վերահսկողությունները և քաղաքացիական հասարակության գործիչների գործողությունները: Այս մեթոդաբանության արդեն կիրառվել է Արգենտինայի, Բուլղարիայի, Բրազիլիայի, Չինիի, Կոլումբիայի, Էկվադորի, Գվատեմալայի, Յունաստանի, Մեքսիկայի, Նիկարագուայի, Պարագվայի, Պերուի և Վենեսուելայի ազգային պաշտպանական բյուջեներում: Ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր պահի գոյություն ունի երեք բյուջետային տարի՝ գալիք բյուջեի նախահաշվի ձևավորում, ներկայիս բյուջեի իրականացում և նախորդ տարվա բյուջեի գնահատում:

Եզրակացություն

Ժողովրդավարական, բաց հասարակությունը պահանջում է արդյունավետ, հաշվետվողական ու թափանցիկ կառավարություն, բայց նաև այնպիսի քաղաքացիական հասարակություն, որն ի վիճակի է մասնակցել և ազդել որոշումների վրա: Անվտանգության բյուջեի վերլուծությունը հզորացնում է քաղաքացիական հասարակության այս դերը: Ըստ հասարակության կարիքների բյուջեի վերաբերյալ հարցերը անվտանգության բնագավառի վերահսկողության և բարեփոխման արդյունավետ գործիքներ են:

Բյուջեի ցիկլի 4 հիմնական փուլերը բազմաթիվ հնարավորություններ են տալիս քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ազդելու գործընթացի վրա: Քաղաքացիական հասարակությունը կարող է աջակցել և զարգացնել խորհրդարանական կարողությունները բյուջետային հարցերով զբաղվելու ուղղությամբ, իսկ խորհրդարանները կարող են ունենալ այնպիսի մասնակցություն, որոնք անհասանելի են հասարակությանը:

- բյուջեի ձևակերպման գործում իրենց հետաքրքրությունների և առաջնահերթությունների խթանում
- հաստատման փուլում իրենց լրացումների պնդում
- ազգային աուդիտային հաստատությունից հատուկ աուդիտային հաշվետվությունների պահանջ
- անվտանգության գաղտնի բյուջեների վերահսկում:

Վերջին տասնամյակի ընթացքում ժողովրդավարացումը և ապակենտրոնացումը քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ավելի շատ հնարավորություններ է ընձեռել՝ մասնակցելու բյուջեի քաղաքականությանը: Այս հնարավորությունները ապագայում միայն կավելանան, ուստի բյուջեները վերլուծելու կարողության զարգացումը պետք է լինի հրամայական:

Մեկ անգամ ևս, ինչ կարող է անել քաղաքացիական հասարակության կազմակերպության անդամը.

- *որոշել անվտանգության բնագավառի համապատասխան բյուջեները.* որոշել անվտանգության բնագավառի այն մասերը, որոնք առնչվում են ձեր կազմակերպության մանդատին և գործողություններին, որոշել պետական բյուջեի փաստաթղթերում անվտանգության յուրաքանչյուր գործակալությանը համապատասխան բյուջե
- *օրենսդրական բարեփոխումներին ուղղված լոբբինգ.* ապահովել, որպեսզի օրենսդրական դաշտը, որը կարգավորում է անվտանգության գործակալությունների ու բյուջետավորման գործընթացը, լինել հստակ և մատչելի, բացահայտել բացերը և հնացած

օրենսդրությունը և ներկայացնել առաջարկներ փոփոխությունների համար, համոզվել, որ երկրում գործում է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը, վստահեցնել կառավարությանը, որ թափանցիկությունը և հաշվետվողականությունը բխում են կառավարության շահերից, որն է՝ բարձրացնել օրինականությունը և կայունությունը, ապահովել կառավարության քաղաքականության հանրային աջակցությունը

- *հավաքել անկախ տվյալներ և ապահովել անկախ գնահատումներ*. հավաքել անկախ տվյալներ անվտանգության բնագավառի չափի ու կառուցվածքի, քաղաքականությունների ու դրանց իրականացման վերաբերյալ, ստուգել հակաօրինական գործողությունների վերաբերյալ տվյալները, ուսումնասիրել, թե արդյոք քաղաքականությունը, պրակտիկան և կառուցվածքը համապատասխանում են հատկացված բյուջեին, գնահատել, թե արդյոք արդյունքը բավարարում է հանրային անվտանգության բացահայտված կարիքներին, որոշել, թե արդյոք քաղաքականությունը համապատասխանում է իրականությանը, կապել իր գնահատումը մոնիթորինգի գործողությունների հետ, իրականացնել կոնկրետ ծրագրերի կատարողականի մանրամասն աուդիտ և արդյունքները ներկայացնել խորհրդարանին և լրատվամիջոցներին, համեմատել կառավարության կողմից անվտանգության բյուջեի վերաբերյալ տեղեկատվությունը միջազգային կառավարական կամ ոչ կառավարական կազմակերպությունների կողմից տրամադրված տեղեկատվության հետ, ստուգել և համեմատել միջազգային շուկայում կառավարության կողմից գնված ապրանքների և ծառայությունների գները, մարդկանց մատչելի և հասկանալի ձևով տրամադրել տեղեկատվություն, պարզեցնել և խորացնել քննարկումները
- *ազդել բյուջեի քաղաքականության վրա բյուջեի ցիկլի տարբեր փուլերում*. բյուջեի վերաբերյալ տեսակետների շուրջ հաղորդակցվել պատգամավորների հետ, պատգամավորներին ներկայացնել ռեսուրսների հատկացման վերաբերյալ այլընտրանքային բյուջեի առաջարկներ, մասնակցել հանձնաժողովների քննարկումներին, երբ վերլուծության է ենթարկվում բյուջեն, քաղաքացիներից կամ շահագրգիռ խմբերից տեղեկատվությունը հասցնել որոշում կայացնողներին, բյուջեի վերաբերյալ տեսակետների շուրջ համագործակցել լրատվամիջոցների հետ, բյուջեի վերահատկացումների վերաբերյալ առաջարկությունները ներկայացնել խորհրդարանին և նախարարներին, խթանել կառավարությանը, որպեսզի այն հետագայում բյուջեի առաջարկի ձևակերպման մեջ հաշվի առնի աուդիտի զեկույցի եզրակացությունները, որոշել տեղական և միջազգային մակարդակներում լավագույն փորձը և աջակցել խորհրդարանին ու գործադիրին իրենց հաշվետվողականության ուղիները հզորացնելու համար
- *պահանջել անկախ արդյունավետ աուդիտ*. համոզվել, որ սահմանադրությունն ու օրենսդրությունը ապահովում են ազգային աուդիտորական հաստատության հիմնադրումը, որն ունի անհրաժեշտ մակարդակի անկախություն, փորձ ու ռեսուրսներ, համոզվել, որ ազգային աուդիտորական հաստատությունը ներառում է անվտանգության գործակալությունների իրավական, ֆինանսական և կատարողականի աուդիտը, ապահովել քաղաքացիների և լրատվամիջոցների համար մատչելի տեղեկատվություն, հրապարակայնացնել ազգային աուդիտորական հաստատության հաշվետվությունները
- *խորհրդարանի և լրատվամիջոցների հետ ստեղծել ռազմավարական դաշինքներ*. հարաբերվել խորհրդարանի հետ, միջնորդել ավելի հզոր, ռեսուրսներով հարուստ և արդյունավետ խորհրդարան ունենալու համար, ստիպել, որպեսզի խորհրդարանը պատասխանատու դեր ստանձնի անվտանգության բյուջեի չորս հիմնական փուլերում, անվտանգության բնագավառի նկատմամբ վերահսկողության համար պատաս-

խանատու խորհրդարանական հանձնաժողովների հետ զարգացնել երկարաժամկետ հարաբերություններ, աջակցել հանձնաժողովներին կամ ընդդիմադիր խմբերին մշակելու կառավարության բյուջեի առաջարկներին այլընտրանքային առաջարկներ, խորհրդարանական հանձնաժողովների համար դառնալ բյուջետային հարցերի վերաբերյալ անկախ տեղեկատվության և այլընտրանքային վերլուծության վստահելի աղբյուր, խնդրել խորհրդարանականներին վերահսկել գաղտնի բյուջեները, ընտրել պատգամավորներ, ում մատչելի պետք է լինի գաղտնի տեղեկատվությունը և ապահովել նվազագույն վերահսկողություն անվտանգության գաղտնի ծրագրերի նկատմամբ, լրատվամիջոցների ուշադրությունը հրավիրել անվտանգության բյուջետավորման հարցերի վրա, մշակել/հավաքել բյուջեի ուսուցման փորձ և կազմակերպել դասընթացներ քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների, պատգամավորների, խորհրդարանի աշխատակազմի և լրատվամիջոցների ներկայացուցիչների համար, որպեսզի զարգանան բյուջեի վերլուծություն իրականացնելու նրանց կարողությունները:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁԸ

Գնումը կարելի է սահմանել որպես գործընթաց, որի միջոցով արտաքին կառույցներից ստացվող սարքավորումները/սպառազինությունները կամ ծառայությունները օգտագործվում են պաշտպանական արդյունավետ կարողություններ ձևավորելու համար: Չնայած որ ձեռքբերումը ներառում է գնման գործողությունը, այդ հասկացությունը վերաբերում է արտաքին մատակարարներից կառավարության կողմից ապրանքների և ծառայությունների գնմանը: Ժամանակակից զենքերի համակարգերը բարդ են, թանկ և հաճախ երկար կարող են ծառայել: Որոշումները, ըստ որոնց, սահմանվում է, թե ինչ է ձեռք բերվում, կարող են ունենալ կարևոր ենթադրություններ, որոնք, եթե չեն նախատեսվել պլանավորման մեջ, կբերի ծրագրի ամբողջական ձախողմանը:

Գնումը ոչ միայն նպատակ ունի ապահովել սարքավորումներ/սպառազինություններ կամ ծառայություններ, այլև ապահովելու, որպեսզի պաշտպանության բյուջեները ծախսվեն ողջամիտ և որպեսզի ձեռք բերված ապրանքները արժեք ներկայացնեն հարկատուների համար: Գնումների պատասխանատուները պարտավոր են որոշել օգտագործողների կողմից պահանջվող անելիքներից ամենահավասարակշռված գործարքը, ծրագրի արժեքը և ծրագրի ժամանակահատվածը: Հիմնվելով դրանց վրա՝ գնումների ղեկավարը պետք է ընդունելի լուծումներ գտնի, որոնցով նաև կլուծվեն այս պահանջների միջև հաճախակի ծագող լարվածությունները: Այնպես է, որ ռիսկը գնման գործընթացում անխուսափելի է, և նույնիսկ գնումը խաղաղ ժամանակահատվածի ամենառիսկային առաջադրանքն է, որը պաշտպանության գերատեսչությունը պետք է իրականացնի:

Ժողովրդավարության ոսկե կանոնի համաձայն՝ գնումների գործողությունները և որոշումները պետք է լինեն թափանցիկ և հաշվետվողական խորհրդարանի, այլ ազգային և միջազգային կազմակերպությունների ու հասարակության առջև:




Նկար 13. Ո՞րն է ճիշտ հարցը

Գնումը պաշտպանության բնագավառի տեսանելի գործողություն է և սովորաբար գրավում է հասարակության ուշադրությունը: Շատ ժամանակ հիմնական խնդիրն է «ինչ գնել» և «որտեղից գնել»: «Ինչի համար պետք է գնումն իրականացվի» հարցը արդյունավետության իրական չափանիշն է:

Պաշտպանության բնագավառում գնումները չեն կարող լինել 100 տոկոսով արդյունավետ, քանի որ արդյունավետության չափանիշները մրցակցում են քաղաքական կամ տնտեսական բնույթի այլ չափանիշների հետ: Ավելին, գնումների գործընթացը ենթակա է տարբեր ազդեցությունների և կարող է զոհ դառնալ հանրային գումարների սխալ բաշխմանը կամ սխալ օգտագործմանը: Այդ պատճառով ժողովրդավարություններում պաշտպանության գնումները ենթակա են գործադիրի, խորհրդարանի ու քաղաքացիական հասարակության կազմակեր-

պությունների վերահսկմանը: Շատ ժողովրդավարական երկրներում խորհրդարանն ունի բարձրարժեք ապրանքների գնման լիազորություն:

Գնման գործընթացի համար կան շատ պահանջներ, բայց հիմնականն այն է, որ ցանկացած գնում պետք է ուղղված լինի պաշտպանության որոշակի առաքելությանը և պաշտպանության նպատակներին (տե՛ս նկար 14): Երբեմն դա ավելի հեշտ կարող է թվալ, քան գործնականում է: Առավել բարդ է բավարարել պահանջը, քան թե ձևակերպել այն: Եթե որպես առաքելություն է հանդիսանում «պաշտպանել ազգին ագրեսորից», ապա տանկեր, ինքնաթիռներ, նավեր, հրթիռներ գնելը անսահմանափակ կարող է լինել: Գնման արդյունավետության հիմնական հասկացությունը «պահանջի ձևակերպումն է» և գործընթացի վերջնական արդյունքը պետք է լինի այն բացատրությունը, թե ինչ նպատակով են ռեսուրսները ձեռք բերվում, որն է գնման գործողության և պահպանման ծախսերը, այլ ծախսերը և գույքի ընդհանուր արժեքը:



Նկար 14. Գնումների միջավայրի մոդել

Այն փաստը, որ որոշ դեպքերում պաշտպանական ռեսուրսները պարունակում են գաղտնի տեղեկատվություն, չպետք է լինի գնման պրոցեսում թափանցիկության պակասի պատճառաբանություն: Հանրությունն իրավունք ունի տեղյակ լինելու, թե արդյոք ազգային պաշտպանության ֆինանսական պլանավորման համակարգը գործում է մարդկանց անունից և արդյոք

ունենում է արդյունավետ ակնկալված արդյունքներ: Բացի հանրային վստահություն ձևավորելուց, թափանցիկությունը կարող է գերծ պահել պաշտպանության կայացումը և գնման գործընթացը վնասակար ազդեցությունից: Գնման թափանցիկությունը, զենքի առևտուրը և փոխադրումը օգտակար է մի քանի ձևով.

- այն հիմքեր է ապահովում խորհրդարանին և քաղաքացիական հասարակությանը գործադիրի հաշվետվողականության համար
- որպես գործիք է ծառայում հաղթահարելու ոչ ճիշտ կառավարման դեպքերը և կոռուպցիոն ռիսկերը
- պարզեցնում է տարբեր կառավարական գործակալությունների պաշտոնյաների միջև համակարգումը՝ զենքի արտահանման որոշումներում
- խթանում է վստահության կառուցմանը և ազգային և միջազգային կանոնակարգային ռեժիմների հետ համապատասխանեցումը:

Պայմանագրով ձեռք բերված զենքի տեղափոխման թափանցիկությանն աջակցելու հստակ ձև է ներդրվել 1990-ականներից ի վեր: Պետությունները պարտավոր են ռազմական ծախսերի վերաբերյալ միջազգային ստանդարտ հաշվետվության ՄԱԿ-ի գործիքի միջոցով փոխանակվել կարևորագույն տեղեկատվությամբ: Մի շարք այլ միջազգային փաստաթղթեր պարտավորություններ են ստեղծում պետությունների միջև տեղեկատվության փոխանակման համար: Նման փաստաթղթերի օրինակները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Բացի այդ, ներքին թափանցիկությունը կարող է աճել զենքերի ներկրման և արտահանման վերաբերյալ ամբողջական, մանրամասն և հստակ կառուցված տարեկան զեկույցների հրատարակմամբ և ազգային արտահանման հանրային և խորհրդարանական վերահսկողության ընթացակարգերի ստեղծման միջոցով: Օրինակ, Միացյալ Թագավորության կառավարությունը հրատարակել է յոթ այդպիսի զեկույցներ⁸⁰: Հանրային և միջազգային վստահության առումով նման հրատարակումների ազդեցությունը կարող է աճել պաշտպանության կառույցների և պաշտպանության արդյունաբերական ընկերակցությունների ամփոփիչ զեկույցների հրատարակմամբ, ինչպես նաև այդ զեկույցների անկախ աուդիտով: Բարձր մակարդակի թափանցիկություն ու հաշվետվողականություն ապահովելու համար և՛ տարեկան, և՛ աուդիտի հաշվետվություններն իրենց առաջարկություններով պետք է մատչելի լինեն հասարակությանը: Վերջապես, այն երկրներում, որոնք չեն ներկայացնում տարեկան հաշվետվություններ, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը կարող է մեծանալ ազգային արտահանման և զենքի տեղափոխման քաղաքականության ձևակերպման, կարգավորման ու իրականացման վերաբերյալ մասնագիտացված հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող աուդիտների միջոցով:

Աղյուսակ 11

| Տեղեկատվության փոխանակման նախաձեռնություններ | Կազմակերպություն | Հիմնադրման տարեթիվ |
|---|--|--------------------|
| Սովորական սպառազինությունների մասին ՄԱԿ-ի ռեեստր. զենքի տեղափոխման, ռազմական հողինգների, ազգային աղբյուրներից գնման և համապատասխան քաղաքականությունների վերաբերյալ տվյալներ | ՄԱԿ | 1991 |
| Վստահության և անվտանգության կառուցման միջոցներ (Վիեննա, 1994 թ-ի փաստաթուղթ, Վիեննա 1999 թ-ի փաստաթուղթ) | ԵԱՀԿ 1994 | 1999 |
| Զենքի արտահանման ԵՄ կանոնակարգ | Եվրոմիություն | 1998 |
| Clearinghouse for the Control of Small Arms and Light Weapons (SEESAC) | Հարավ-արևելյան Եվրոպական կայունության դաշնագիր | 2002 |

⁸⁰ <http://www.fco.gov.uk/resources/en/pdf/publications/annual-reports/strategic-export-controls-annual-report-10>
<http://www.publications.parliament.uk/pa/cm201011/cmselect/cmquad/686/68602.htm>

Ոչ ոք չի կարող ժխտել, որ ժողովրդավարության պայմաններում գնման գործընթացի հիմնական հատկանիշը հաշվետվողականությունն է: Հաշվետվողականությունը հստակեցնում է, թե արդյոք հարկատուների գումարը ծախսվում է նպատակային, որպեսզի ապահովվի անվտանգությունը: Այստեղ ևս պետք է օգտագործվեն այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են փողի արժեքը, արդյունավետությունը և արդյունարարությունը:

Գնումները կարող են բաժանվել գործունեության երեք բնագավառների՝

1. որոշել՝ ինչ գնել
2. որոշել՝ ինչպես գնել
3. և գնել:

Ինչ ձեռք բերելու որոշումը կարևոր է գնումների ծրագրի ընդհանուր հաջողության համար: Պաշտպանական բյուջեն բավարար չէ բոլոր պահանջները բավարարելու համար, և գնումների ծրագրերը պետք է դասակարգվեն ըստ առաջնահերթությունների, որպեսզի կազմվի պաշտպանության ընդհանուր ծրագիր, որը լինի որքան հնարավոր է ամբողջական և հավասարակշռված: Ջենքի համակարգերը բավականին թանկ են և հաճախ տեխնոլոգիապես բարդ: Դրանք ձեռք բերելու համար մեծ ժամանակ և ջանքեր են պահանջվում և հնարավոր է, որ բավականին երկար ծառայեն. երբեմն կարող են ծառայել մեկ այլ նպատակով/դերում, որը տարբերվում է սկզբնական նպատակից/դերից:

Որտեղից է առաջանում նոր գնումների ծրագրի պահանջը: Ռազմական առաջադրանքները և պաշտպանության պլանավորման ենթադրություններն առաջանում են պաշտպանության քաղաքականությունից, և սահմանում են, թե զինված ուժերը ինչի պետք է հասնեն: Սրանց վերլուծությունը առաջացնում է կարողությունների պահանջ, և այս պահանջների համեմատությունը առկա կարողությունների հետ բացահայտում է կարողությունների պակասը:

Կարողությունների պակասի պատճառը կարող է լինել տարբեր բնույթի, օրինակ.

- **փոխվել է պաշտպանության քաղաքականությունը.** կարող է ավելանալ պաշտպանության նոր առաջադրանք, որը կպահանջի նոր կարողություններ:
- **փոխվել է սպառնալիքը** կարող են առաջանալ նոր սպառնալիքներ կամ կարող է փոխվել սպառնալիքի բնույթը: Եթե այս սպառնալիքները բավականին լուրջ քննվեն՝ կառաջանա նոր կարողությունների պահանջ:
- **տեխնոլոգիան առաջընթաց է ապրել.** տեխնոլոգիական զարգացումները կարող են ստեղծել ռազմական առաջադրանքների իրականացման նոր և ավելի լավ ձևեր
- **փոխվել է Դոկտրինան.** Եթե Դոկտրինան սահմանվում է պետական մակարդակում, ապա զինված ուժերը սովորում են միմյանց մոտեցումներից և հակվում են զարգանալու նման ուղղություններով: Դոկտրինայի փոփոխությունները նույնպես կարող են ստեղծել ռազմական առաջադրանքների իրականացման նոր և ավելի լավ ձևեր:

Ինչպես ձեռք բերելու որոշումը սովորաբար իրականացվում է գնումների ռազմավարության ստեղծմամբ, որը նկարագրում է, թե ինչպես են ձեռք բերվում պահանջվող կարողությունները:

Այն ունի առնվազն երեք նպատակ.

1. այն պարտադրում է գնումների պատասխանատուներին հաշվի առնել առկա տարբերակները և հիմնավորել իրենց ընտրությունը
2. այն ներկայացնում է մի փաստաթուղթ, որտեղ ամրագրված է ծրագրի տեղողությունը, որը կարող է լինել երկար և կարող է հանգեցնել աշխատակազմի փոփոխության
3. այն ներկայացնում է ապացույց, որ գնումների ծրագիրը կիրականացվի պատշաճ կերպով:

Գնման ռազմավարությունները պետք է դիտարկվեն որպես կենդանի փաստաթղթեր և

պետք է պարբերաբար վերանայվեն, թարմացվեն և համաձայնեցվեն: Դրանք կարող են ներառել սարքավորումներ ձեռք բերելու տարբեր ուղիներ, որոնք կլուծեն բացերը, իսկ գնման նախընտրելի տարբերակները պետք է սահմանվեն հետևյալ հարցերի պատասխանները տալուց հետո.

Կա արդյո՞ք նոր սարքավորումներ գնելու կարիք. սարքավորումների որոշակի տեսակ գնելու փոխարեն կարելի է սարքավորումները վերցնել լիզինգով, և գների հաշվարկը կարող է պահանջները բավարարելու առավել երկարաժամկետ լուծում առաջարկել:


Կա արդյո՞ք սարքավորումների զարգացման կարիք. սարքավորումների զարգացման միջոցով կարողությունների պակասի լուծումը ունի մի քանի առավելություն. ամենակարևորը նա է, որ օգտագործողը ստանում է հենց այն, ինչ ուզում է: Սակայն ռազմական սարքավորումների զարգացումը ընդհանրապես թանկ է և ռիսկային, և նման բնույթի ծրագրերը մատչելի են միայն մի քանի պետությունների՝ սովորաբար նրանց, որոնք ունեն սեփական պաշտպանական արտադրությունը: Մյուս պետությունները պետք է ընտրություն կատարեն շուկայում առկա տարբեր համակարգերից:

ո՞րն է գնումների շրջանակը. բարդ սպառազինությունների գնման դեպքում կարելի է ձեռք բերել պահեստամասեր, տեխնիկական մասեր և պահպանման միջոցներ և զորավարժությունների ծրագիր՝ որպես ամբողջական փաթեթի մաս:

արդյո՞ք պահանջվող սարքավորումը մատչելի է մեկից ավելի մատակարարի կողմից. այնտեղ, որտեղ մեկից ավելի մատակարար կարող է ապահովել սարքավորումներով, անհրաժեշտ է անցկացնել մրցույթ:

արդյո՞ք այլ պետությունները հետաքրքրված են նմանատիպ գնումների ծրագրերով. երբ այլ պետությունները ունեն նմանատիպ պահանջներ, կարելի է իրականացնել գնումների միջազգային ծրագիր:

արդյո՞ք կարողությունը պետք է ձեռք բերվի համընթաց. գնումների տարածումը մի քանի ենթածրագրերի վրա ունի ռիսկի նվազեցման տեսակետից առավելություն, հատկապես զարգացման աշխատանք ներառող ծրագրերի և ծրագրի բյուջեի ուրվագծման համար:



Նկար 15. Գնումների գործունեության բնագավառները

Պաշտպանության գնումների ռազմավարության այլ կարևոր բաղադրիչներ կարող են լինել **ծրագրի կառուցվածքը.** ինչպես պետք է ծրագիրը բաժանվի ժամանակային առումով, ինչ պետք է ձեռք բերվի յուրաքանչյուր փուլում և որտեղ են որոշումների կարևոր կետերը

կառավարման կառուցվածքը. ինչպես պետք է կազմակերպվի ծրագրային թիմը, որպեսզի իրականացնի գնումը, ինչպիսի փորձագիտություն է պահանջվում:

գնահատում/գնի նշանակում. ինչպես պետք է մատակարարին վճարվի՝ վճարել համաձայնեցված գներով և համաձայնեցված սարքավորումների տրամադրման համար, թե վճարել

մատակարարի կողմից պահանջվող գումարը և համաձայնեցված չափով շահույթը **վճարման պայմանավորվածություններ**. Երբ պետք է վճարել մատակարարին. գնումների շատ ծրագրերի երկարատևությունը նշանակում է, որ հաճախ մատակարարները կպահանջեն կատարել վճարումներ ըստ փուլերի՝ մինչ ծրագրի ավարտը


աջակցության ռազմավարություն. Ինչպիսի աջակցություն է տրամադրվելու սարքավորումների անխափան շահագործման նպատակով: Այդ քաղաքականությունը ներառում է ինչպես կազմակերպական աջակցություն օգտագործման կամ ակտիվ գործունեության ժամանակ, այնպես էլ ամենօրյա, ընթացիկ աջակցություն խաղաղ ժամանակ (օրինակ վերանորոգում կամ պահպանում)

ռիսկերի կառավարում. որոնք են ծրագրի հիմնական ռիսկերը, և ինչպես են դրանք կառավարվելու: Ռիսկերի կառավարման պլանը պետք է բացահայտի արդյունքներին սպառնացող ռիսկերը՝ գնահատելով դրանց առաջացման հնարավորությունը և ազդեցությունը, ինչպես նաև դրանց նվազեցման միջոցները:

Իրական գնումների գործընթացը սովորաբար բաժանվում է մի քանի փուլերի, որպեսզի գնման ամբողջ առաջադրանքը լինի ավելի կառավարելի և ընդգրկի ծրագրի հնարավոր վերանայման կետերը դրանց իրականացման նպատակով որոշումների կայացման համար: Սա համարվում է *գնման ցիկլ*:

Բարձր մակարդակում պաշտպանական քաղաքականությունը որոշում է զինված ուժերի, առաքելությունների, գործողությունների ու առաջադրանքների իրականացումը, իսկ կարողությունների վերլուծությունը քննում է այդ առաքելությունների, գործողությունների ու առաջադրանքների բավարարելու տարբեր հիմքերը, որպեսզի ընտրի ամենաօպտիմալ տարբերակը: Այդ ամենի հիման վրա օգտագործողը կարող է նկարագրել սարքավորման որոշակի տիպի պահանջները:

Ֆինանսական պլանի նպատակն է ցույց տալ, թե անհատական որ ծրագրերն են թույլատրելի կամ հնարավոր ծրագրի իրականացման յուրաքանչյուր փուլում:



Նկար 16. Գնման ցիկլի փուլերը

Գնման ցիկլը ներկայացնում է մի կառուցվածք, որը կառավարում է գնման գործընթացը ծրագրի նախաձեռնման փուլից սկսած մինչև սարքավորման շահագործումից դուրս գրելը: Դա կառավարման շրջանակ է, որը փորձում է ուղղորդել գնումներ իրականացնողների թիմը գնման բարդ գործընթացի միջով: Գնման ընդհանուր գործընթացը կարող է բաժանվել բազմաթիվ փուլերի:

Առանձին երկրներ ընդունել են որոշումներ՝ կախված իրենց կողմից իրականացվելիք գնման ծրագրի բնույթից:

Ընդհանուր գնման ցիկլը կարող է ներառել չորս փուլ.

1. ձեռք բերվելիք սարքավորման տեսակի որոշում
2. սարքավորման ձեռքբերում
3. սարքավորման շահագործում
4. սարքավորման՝ շահագործումից դուրս գրում (տե՛ս նկար 16).

- *Ձեռք բերվելիք սարքավորման տեսակի որոշում.* այս փուլի գործողությունները սկսվում են համաձայնագրով, որը կազմվում է ձեռք բերվելիք սարքավորման նկատմամբ օգտագործողի պահանջների հավաքագրմամբ: Այնուհետև կարող են սահմանվել մի շարք ձևակերպումներ, թե ինչպես կարելի է ապահովել պահանջվող կարողությունը այդ սպասելիքերը բավարարելու համար: Ձևակերպումները կարող են գնահատվել և անհրաժեշտության դեպքում կարող են նվազեցվել և առավել կառավարելի թիվ ունենալ: Այս սկզբնական փուլում աշխատանքներն ավելի շատ իրականացվում են փաստաթղթերի ուսումնասիրման ձևով: Վստահ լինելու համար կարևոր է, որ վերջնական ընտրությունը համապատասխանի նախանշված նպատակին և որոշվեն դրան հասնելու հնարավորինս շատ ուղիներ: Նաև անհրաժեշտ է զուգահեռաբար հաշվի առնել հնարավոր գնման ռազմավարությունները, քանի որ դրանք կարևոր գործոններ են նախընտրելի տարբերակը որոշելու ժամանակ: Օգտագործողի պահանջները պետք է այնպես ձևակերպվեն, որ չսահմանափակեն պոտենցիալ մատակարարների առաջարկները, որոնք անհրաժեշտ են բավարարելու պահանջվող լուծումները: Օգտագործողի պահանջների տեխնիկական բնութագրերը ձևակերպվեն այնպես, որ ներկայացվի, թե ինչ է արվելու և հիմքը՝ ըստ որի այն պետք է ընդունվի, և ոչ թե ինչպես է այն արվելու:
- *Սարքավորման ձեռքբերում.* այս փուլի բովանդակությունը կախված է գնման ծրագրի բնույթից և գնման ընտրված ռազմավարությունից: Այն կարող է ներառել.
 - զարգացման գործողություններ (պահանջները բավարարելու նպատակով նոր սարքավորումների ստեղծում)
 - սարքավորումների արտադրում կամ դիզայն և ծառայությունների ձևավորում
 - ապրանքների գնում
 - առաքում/տրամադրում և փորձարկում:

Այս փուլը կարող է բաժանվել երկու կամ ավելի ենթափուլերի՝ կախված ծրագրի բարդությունից և ռիսկի նվազեցման պահանջից: Նման մոտեցումը օգտակար է և կարող է նպաստել կառավարման վերաբերյալ որոշումների լրացուցիչ կետերի սահմանմանը: Այս փուլի հիմնական գործողությունը պետք է լինի մատակարարի ընտրությունը: Փուլն ավարտվում է սարքավորումը ռազմական ծառայություն ընդունելով՝ ըստ պայմանագրով հաստատված չափանիշների:

- *Սարքավորման շահագործում.* այս փուլը հաճախ սպառում է ամբողջ ծրագրի ռեսուրսների ամենամեծ տոկոսը: Այն ներառում է գործողություններ, ինչպիսիք են պահեստամասերի գնում, սարքավորումների պահպանում, վերանորոգում և այլն: Մյուս կարևոր գործողությունը կարող է լինել սարքավորումների թարմացման հետ կապված՝ ըստ պահանջների փոփոխման: Թարմացման փաթեթները կարող են դիտվել որպես փոքր ծրագրեր և որոնք պետք է կառավարվեն նույն սկզբունքով:
- *Սարքավորման՝ շահագործումից դուրս գրում.* շահագործումից դուրս գրումը կարող է պահանջել ծախս կամ նույնիսկ եկամուտ բերել (օրինակ՝ սարքավորման վաճառքից): Այս հնարավորությունները պետք է հաշվի առնվեն նախօրոք և ներառվեն գնումների ընդհանուր ռազմավարության մեջ:


ՈՎ Է ՆԵՐՁՐԱՎՎԱԾ ԿԱՇՏԱԿԱՆԱԿԱՆ ՁՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԵՐՔԱՅԻՆ

Գնումը չափազանց բարդ խնդիր է, և այն չի կարող իրականացվել առանձին անհատների կողմից և նույնիսկ անհատների խմբի կողմից: Այն իրականացնելու միակ ճիշտ ձև չկա, սակայն կա մարդկանց չորս խմբեր, որոնք ներգրավված են գնման գործողություններում (տե՛ս սկար 17):

Առաջին խումբը որոշում է ձեռք բերվող սարքավորման պահանջները: Սրանք օգտագործողներ են, զինված ուժերը, որոնք գլխավոր դերում են պահանջների գնահատման սկզբնական փուլերում:

Երկրորդ խումբը ներառում է գնումների մասնագետներին, ովքեր պատասխանատու են գնման ծրագրերը կառավարելու համար, որի նպատակով հստակեցնելով մանրամասն պահանջները՝ կնքում են պայմանագրեր մատակարարների հետ՝ պահանջվող սարքավորումների առաքումը ապահովելու նպատակով և այլն:

Շատ երկրներ գտնում են, որ նպատակահարմար է ստեղծել նման բաժիններ կամ գործակալություններ նման գործառույթներ իրականացնելու համար:



Սկար 17. Խմբեր, որոնք ներգրավված են գնման գործողություններում

Երրորդ խումբը ներառում է արտաքին գործակալությունները, որոնք ունեն ձեռք բերվող սարքավորման մատակարարման միջոցները: Դրանք սովորաբար լինում են մասնավոր բիզնեսից, սակայն այս խումբը կարող է ներառել նաև կառավարության այլ բաժիններ կամ այլ երկրների կառավարություններ:


Չորրորդ խումբը բաղկացած է գնման ծրագրերը վերահսկող անձանցից և ներառում է Պաշտպանության գերատեսչության ավագ ղեկավարությունը, գործադիր մարմինը, խորհրդարանը, աուդիտորական գրասենյակը:

Զենքի առևտրի և փոխադրման քաղաքականություն

Զենքի առևտուրը հաճախ բերում է բախումների, վտանգում է զարգացումը, իսկ զենքի,

ռազմական և կրկնակի օգտագործման տեխնոլոգիաների փոխադրման այլ ձևերը մտահոգություն են առաջացնում միջազգային կազմակերպությունների, խորհրդարանների, կառավարությունների և հասարակական կազմակերպությունների շրջանում: Ջենքի փոխադրումը ներառում է պետական և ոչ պետական գործիչների ներգրավմամբ բոլոր այն գործողությունները, որոնց նպատակն է ձեռք բերել կամ վաճառել զինամթերք: Այն ներառում է զենքի առք կամ վաճառք, գնում կամ նվիրատվություն:

Ջենքի առևտրի և փոխադրման արդյունավետ վերահսկողությունը հիմնված է զենքի համապարփակ քաղաքականության, իրականացման արդյունավետ մեխանիզմների և թափանցիկության բարձր մակարդակի վրա:




Նկար 18. Ջենքի առևտրի քաղաքականության առաքելությունը և սահմանափակումները

Օրենսդրի կողմից հաստատված այս քաղաքականությունը պետք է սահմանի ղեկավար սկզբունքները և պետք է համապատասխանի ազգային անվտանգության և պաշտպանության քաղաքականությանը, գնումները կարգավորող օրենսդրությանը, «Բյուջեի մասին» օրենքին, ֆինանսներին առնչվող և պայմանագրային օրենքներին: Բացի այդ, զենքի առևտրի կարգավորումները պետք է համահունչ լինեն ՄԱԿ-ի Խարտիայի, միջազգային իրավունքի կամ ՄԱԿ-ի զինամթերքի արգելքի սկզբունքներին՝ պարտականություններ, որոնք ապահովում են այդ միջազգային կազմակերպություններին երկրի անդամությունը: Ջենքի առևտրի քաղաքականությունը պետք է նաև հաշվի առնի զենք գնող երկրների տնտեսական, քաղաքական, էթիկայի և անվտանգության հետ առնչվող մտահոգությունները (տե՛ս նկար 18):

Օրինակ, «Ջենքի տեղափոխման եվրոպական վարքագծի կանոնակարգը⁸¹» սահմանում է ութ չափանիշ, որոնք ներկայացված են նկար 19-ում և պետք է ուղղորդեն ԵՄ անդամ երկրներում զենքի արտահանման քաղաքականությունները: Դրանք են.

⁸¹ <http://www.consilium.europa.eu/uedocs/cmsUpload/08675r2en8.pdf>

1. հարգանք միջազգային պարտավորությունների և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից համաձայնեցված սանկցիաների նկատմամբ
2. վերջնական նպատակակետի երկրում մարդու իրավունքների նկատմամբ հարգանք
3. վերջնական նպատակակետի երկրում ներքին իրավիճակը որպես լարվածությունների և զինված հակամարտությունների առկայության գործառույթ
4. ռիսկեր, որ ստացողը զենքը կօգտագործի ագրեսիվ կերպով մյուս երկրի դեմ կամ ուժի միջոցով կպնդի այլ երկրի տարածքի նկատմամբ իր պահանջը
5. գնող երկրի պահվածքը միջազգային հանրության նկատմամբ և նրա վերաբերմունքը ահաբեկչության նկատմամբ
6. իր դաշնակիցների բնույթը և հարգանքը միջազգային իրավունքի նկատմամբ
7. ռիսկը, որ սարքավորումը գնող երկրի ներսում կշեղվի կամ կրկին կվերաարտահանվի անցակալի պայմաններով
8. արտահանվող ապրանքի համատեղելիությունը ստացող երկրի տեխնիկական և տնտեսական կարողությունների հետ:



Նկար 19. Վարքագծի եվրոպական կանոնակարգի չափանիշները

Աղյուսակ 12-ը ցույց է տալիս միջազգային զենքի վերահսկողության լրացուցիչ ռեժիմների մի շարք օրինակներ: Արդյունքները վերցված են Բերնարդո Մարիանի և Քրիստի Յըրսթի կողմից կազմված «Չենք արտադրություն, արտահանումներ և որոշումների կայացում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում» զեկույցի նկարագրություններից: Յուրաքանչյուր երկիր պետք է ունենա վերահսկողական մեխանիզմներ զենքի առևտրի և զենքի տեղափոխ-

ման նկատմամբ ամբողջական վերահսկողության համար և ներառի.

- արտահանումների հարաբերությունը անվտանգության և պաշտպանության հոչակված քաղաքականությանը և միջազգային պարտավորություններին
- պաշտպանության բնագավառում արտահանումների վերահսկողության և երկակի օգտագործման պարագաների և տեխնոլոգիաների, զինատեսակների ավելցուկի, վերաարտահանման և սեփական երկրով զենքի կամ համապատասխան նյութերի ցանկացած այլ տեղաշարժման ընթացակարգեր
- զենքի բրոկերային գործողություններ
- ջանքեր՝ փակելու զենքի առևտրի սև կամ մոխրագույն (ստվերային) շուկան
- Նպատակային օգտագործողների նկատմամբ վերահսկողություն և հետագա ստուգումներ՝ ապահովելու համար, որպեսզի արտահանված ապրանքները սխալ չօգտագործվեն կամ վերաարտահանվեն:

Աղյուսակ 12. Միջազգային զենքի վերահսկողության ռեժիմների օրինակներ

| Վերահսկողության ռեժիմ | Կազմակերպական ձևաչափ | Հիմնադրվել է |
|---|----------------------------------|-------------------------------|
| Միջուկային զենքը չտարածելու մասին պայմանագիրը | Բազմակողմ համաձայնագիր | 1970, մշտական է 1995-ից ի վեր |
| Միջուկային զենքը չտարածելու մասին պայմանագրի արտահանման վերահսկման դրույթների իրականացման ուղեցույց | Զանգերյան կոմիտե | 1971 |
| Միջուկային նյութերի արտահանում | Միջուկային մատակարարողների խումբ | 1975 |
| Մանրէաբանական (կենսաբանական) և թունավոր նյութեր պարունակող զենքի մշակման, արտադրության և կուտակման արգելման և դրա ոչնչացման մասին Կոնվենցիա | ՄԱԿ | 1975 |
| Զինիական և կենսաբանական զենքի տարածման կանխարգելումը | Ավստրալիական խումբ | 1984 |
| Կենսաբանական և թունավոր զենքերի կատարելագործումը, արտադրությունը, պահեստավորումը, արգելելու և դրանց ոչնչացնելու մասին կոնվենցիա | ՄԱԿ | 1994 |
| Հրազենի, սպառազինությունների և այլ նյութերի ապօրինի արտադրության և վաճառքի դեմ արձանագրություն | ՄԱԿ | 2001 |
| Զենքի արտահանման ԵՄ վարքագծի կանոնագիրքը | ԵՄ | 1998 |
| Փոքր սպառազինությունների և թեթև զենքերի ապօրինի առևտրի կանխարգելման, պայթարի և վերացման Գործողությունների ծրագիր | ՄԱԿ | 2001 |
| Սպառազինությունների միջազգային փոխանցման միջազգային շրջանակային կոնվենցիա ստեղծելու նախաձեռնություն | «Նախաձեռնություն 16» ՀԿ | 2004 |

Երկրներն իրենք են մշակել գնումների կառավարման ձևերը: Գնումների վերաբերյալ տարբեր երկրների ազգային մոտեցումներում պարունակվում են դրական կամ առաջավոր փորձ, որոնք կարելի է ընտրել և կիրառել այլ երկրներում: Դա հնարավորություն կտա ապահովել գնումների գործընթացում հետևողականությունը, ինչպես նաև գնումների վերաբերյալ առանձին ծրագրերից լավագույն օրինակները վերցնելու ու սեփական փորձը մշակելու ուղղությամբ:

Առաջարկվող գրականությունը

Հարի Բուկուր-Մարկու, Ֆիլիպ Ֆլուրի, Թոդոր Տոգարև. Պաշտպանության կառավարում՝ ներածություն, Ժնև 2009

Հարի Բուկուր-Մարկու. Պաշտպանության հաստատության կառուցման էությունը, Վիեննա 2009

Պլամեն Պանտև, Վալերի Ռատչև, Թոդոր Տոգարև, Վիարա Ջապրիանովա. Քաղաքացիական-ռազմական հարաբերությունները և անվտանգության բնագավառի ժողովրդավարական վերահսկողությունը, Սոֆիա 2008

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ծրագրային ռեսուրսների կառավարման տեսության և պրակտիկայի զարգացում

Պաշտպանության ծախսերի պլանավորման և բյուջետավորման ներկայումս կիրառվող ավանդական մեթոդն ունի մի շարք թերություններ, բայց ամենազխապիտի այն ահռելի բացն է, որը գոյություն ունի ռազմական պլանավորման (պաշտպանության անհրաժեշտ կարողությունների պլանավորում) և պաշտպանության ծախսերի բյուջետավորման միջև:

Սա տեսանելի է հետևյալ փաստերից.

- Երկու գործողություններն իրականացվում են տարբեր խմբերի կողմից. ռազմական պլանավորումը կատարվում է ռազմական մասնագետների կողմից, իսկ բյուջետավորումը՝ քաղաքացիական փորձագետների կողմից
- Բյուջեի իրականացման հսկողությունը պաշտպանության նախարարության լիազորությունն է, մինչդեռ ռազմական պլանների իրականացման հսկողությունը մնում է զինված ուժերի տարբեր ծառայությունների լիազորությունների շրջանակում
- պլանավորումը աստիճանաբար երկարաձգվում է մինչև հինգ տարի, մինչդեռ բյուջետավորումը կատարվում է մեկ տարվա համար
- կարողությունների պլանավորումը հիմնված է առաքելությունների, զինված ուժերի կառույցների, սպառազինության համակարգերի վրա, մինչդեռ բյուջետավորումը հիմնված է անձնակազմի, զինավարժությունների և գործառնական ծախսերի, ներդրումների և պաշտպանության այլ տարատեսակ ծախսերի վրա: Ինչևէ, այս ցուցանիշները այլ ցուցանիշներով փոխակերպելու մեխանիզմներ գոյություն չունեն
- բյուջետավորումը սահմանափակվում է ֆինանսական փաստերով, մինչդեռ պլանավորումը առանձին է արվում և դա ապարդյուն է դառնում որոշում կայացնողների համար
- ռազմական պահանջների պլանավորման ժամանակ հաշվի են առնում միայն ձեռքբերված արդյունքները՝ առանց բյուջեի կարողությունները հաշվի առնելու: Փորձ չի արվում հավասարակշռություն գտնել պաշտպանության ծախսերի և հարկատուների համար ձեռք բերված արդյունքների միջև:

Աղյուսակ 13

| ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ | ՈԱԶՄԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ | ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ, ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ | ԲՅՈՒՋԵԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ |
|----------------------|----------------------|--|--------------------------|
| Հիմնական գործառնայթը | Պլանավորում | Ծրագրավորում | Բյուջետավորում |
| Կենտրոնացում | Ռազմական սպառնալիք | Ռեսուրսների պակաս | Բյուջեի սահմանափակումներ |
| Ստուեցում | Երկարաժամկետ պլան | Միջնաժամկետ պլան | Տարեկան բյուջե |
| Տեսակետ | Ռազմական | Վերլուծական | Քաղաքացիական |

Պաշտպանության ֆինանսների կառավարման ավանդական համակարգի վերոնշյալ թույլ կողմերը պահանջում են նոր համակարգի ներդրում, որը թույլ կտա պլաններն ու բյուջեն մշակել համապատասխան ձևերով, որպեսզի նմանատիպ ծախսերը ներկայացվեն միևնույն ձևով:

Աղյուսակ 13-ը ներկայացնում է ռազմական և բյուջետային պլանավորման ավանդական համակարգի և պլանավորման, ծրագրավորման ու բյուջետավորման նոր համակարգի միջև տարբերությունները:


Պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման բնույթն ու առանձնահատկությունները

Ռեսուրսների ծրագրային կառավարման իրականացման համար անհրաժեշտ է համապատասխան և արդյունավետ համակարգի ստեղծում և իրականացում: Այն պետք է համապատասխանի և՛ ընդհանուր, և՛ կոնկրետ սպառողի պահանջներին: Ռեսուրսների ծրագրային կառավարման համակարգի բնույթը բացահայտելու համար կարող ենք վկայակոչել այս հարցում ներդրում ունեցած կարևոր հետազոտողների կարծիքները: Ըստ Չարլզ Յիթսի, պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման համակարգը ներառում է բազմաթիվ կանոններ, ընթացակարգեր և հմտություններ պլանավորումը լայնորեն բարելավելու համար: Սրա արդյունքը բազմամյա բյուջեի փաստաթուղթն է, որը ծրագրային և/կամ կազմակերպության հիմնական գործողությունների ցանկ է՝ դրանց ընդհանուր ծախսի հաշվարկմամբ: Համակարգը որոշումներ կայացնողներին թույլ է տալիս կանխատեսել ներկա ընտրության ապագա արդյունքները և գնահատել նպատակներին հասնելու կազմակերպության առաջընթացը:

Պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման համակարգի առանձնահատկություններն են.

- այն պլանավորման և բյուջետավորման խելամիտ համակարգ է
- այն հնարավորություն է նպատակաուղղված, ճկուն և իրատեսական պաշտպանության քաղաքականության համար
- այն հնարավորություն է տալիս լուծել անվտանգության բնագավառի անորոշություններն ու ռիսկերը
- այն հիմնված է անհրաժեշտ գործառնական ծախսերի վրա և ռազմավարական պաշտպանության նպատակներով իրականացված գործողությունների ծախսերի վրա
- այն առանձնացնում է ծրագրային միավորների համար ընդհանուր ընթացիկ ծախսերը, որոնք պաշտպանության առաջադրանքները կատարելու համար կազմակերպական և գործառնական ամենափոքր միավորներն են
- պաշտպանության ծախսերի պլանավորումը հաշվի է առնում օգտագործվող աջակից համակարգերի ու սպառազինության գործածության ժամկետը
- այն տալիս է հնարավորություն համեմատել և վերլուծել պաշտպանության այլընտրանքային համակարգերը և ավելի լավ հիմքեր ունենալ պաշտպանության ապագա կառուցվածքի վերաբերյալ որոշում կայացնելու ժամանակ
- այն գնահատում է առկա ազգային ռեսուրսները և ծախսերն ուղղում առավել արդյունավետ առաջադրանքներին:

Ինչպես երևում է նկար 20-ից, պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման համակարգը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ օբյեկտ, սուբյեկտ, միջոցներ և համակարգի ծրագիր:




Նկար 20. Պաշտպանական ռեսուրսների կառավարման ինտեգրված համակարգի կառուցվածքը

Օբյեկտները պաշտպանության նպատակով հատկացված ռեսուրսներն են, որոնք դասակարգվում են ըստ հետևյալ տիպերի՝

- *մարդկային ռեսուրսներ*. պաշտպանության բնագավառի աշխատակազմը: Անձնակազմը զորակոչվածներն ու սպաներն են (սպաներ, սերժանտներ և զինվորականներ), պահուստային ծառայողները և աշխատանքի կամ ծառայության ընդունված քաղաքացիները
- *կյուրակալ ռեսուրսներ*. սպառազինության համակարգերը, սարքավորումները, ենթակառուցվածքները, ռազմական սարքավորումները, պահեստամասերը և այլն
- *ֆինանսական ռեսուրսներ*. հիմնական աղբյուրը պաշտպանական բյուջեն է և որպես լրացուցիչ աղբյուրները միջազգային և ազգային աջակցության ծրագրերը
- *տեղեկատվական միջոցներ*. չափվում է մատչելի տեղեկատվությամբ և դրանց հավաքագրման, մշակման, պահպանման և տարածման միջոցներով:

Արտադրական ռեսուրսների համար ընդհանուր տնտեսական իրավունքների իրականացումը սահմանափակող գործոնները տարածվում են նաև պաշտպանության ռեսուրսների բնագավառում: Այդ պատճառով էլ պաշտպանության ռեսուրսները պետք է պլանավորվեն և ծախսվեն խնայողաբար, արդյունավետ և արդյունարար ձևով:

Դա նշանակում է՝ պաշտպանության ծախսերը գնահատելու համար օգտագործել չորս փոփոխական մեծությունները, որոնք են՝ խնայողությունը, արդյունավետությունը (effectiveness), արդյունարարությունը (efficiency), ու դրամի լավագույն արժեքը:



Նկար 21. Պաշտպանության ծախսերի գնահատման փոփոխականները

$Տնտեսություն = Ե/Դ$
 $Արդյունարարություն = Ա/Ե$
 $Արդյունավետություն = Արժ/Արդ$
 $Դրամի արժեք = Տնտեսություն \cdot Արդյունարարություն \cdot Արդյունավետություն =$
 $= Ե/Դ \cdot Ա/Ե \cdot Արժ/Արդ = Արժ/Դ$

Պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման համակարգի **սուբյեկտները** հան-

դիսանում են գործող համակարգի տարբեր մասնակիցները՝ իրենց հստակ սահմանված լիազորություններով, որոնք մասնակցում են պաշտպանության ռեսուրսների կառավարման նախապատրաստման և որոշումների կայացման գործընթացին:

Այս սուբյեկտները կարող են դասակարգվել ըստ տարբեր բնույթի՝

- ըստ ավարտված գործողության բնույթի՝ գործառնական, փորձագիտական, խորհրդատվական կամ կառավարման
- ըստ որոշումների կայացման պատասխանատուների՝ կառավարիչներ և իրականացնողներ
- ըստ կազմի՝ կոլեկտիվ և անհատական:

Չամակարգի **միջոցները** հանդիսասանում են այն բոլոր գործիքներից, որոնք օգտագործվում են համակարգի սուբյեկտների կողմից համակարգի խնդիրների վերաբերյալ կառավարման գործառնությունների իրականացման նպատակով: Այս ռեսուրսները կարող են բաժանվել հետևյալ խմբերի՝ նյութական, փաստաթղթային, համակարգչային ծրագրերի և այլն:

Չամակարգի **ծրագիրը** ներառում է հաստատված սկզբունքները, գործընթացները, ընթացակարգերը, որոշում կայացնելու փորձը, կանոնակարգերը, մեթոդները և համակարգի գործարկման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման մեջ պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման համակարգի կիրառումը ապահովում է առավելություններ, որոնք կարող են նկարագրվել հետևյալ կերպ.

- պաշտպանության ռեսուրսների կառավարման քաղաքացիական վերահսկողության արդյունավետության բարելավում՝ պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման կանոնադրությունների մշակման միջոցով, ծրագրի և բյուջեի վերանայման գործընթացների ներկայացում, ծրագրերի իրականացման վերահսկման մեխանիզմի ձեւավորում
- պաշտպանության ռեսուրսների ճիշտ բաշխման և կառավարման վերահսկում ի նպաստ առաքելությունների, քաղաքականությունների և պաշտպանության քաղաքականության նպատակների
- ընդհանուր ծախսերի սահմանմանն աջակցություն պաշտպանության և անվտանգության առաքելությունների, նպատակների և առաջադրանքների իրականացման և անհրաժեշտ պաշտպանական ներուժին հասնելու նպատակով
- ծրագրի նյութական, մարդկային, ֆինանսական և տեղեկատվական ռեսուրսների կապակցում ձեռք բերված արդյունքների հետ՝ ռազմական միավորների կարողությունների, անձնակազմի պատրաստվածության աստիճանի, սպառազինության և սարքավորումների և այլնի միջոցով
- առկա ռեսուրսների շրջանակներում հաշվի առնելով առկա սպառնալիքները, զինված ուժերի զարգացման վերաբերյալ վիճելի խնդիրների լուծման աջակցություն
- առանձին ծրագրային բաղադրիչների գնի սահմանում, այլընտրանքային լուծումների մշակում և առաջնահերթության սահմանում
- համապատասխան կառավարման համակարգի կիրառման միջոցով աջակցություն պաշտպանության ռեսուրսների պլանավորման համակարգի ներդաշնակեցմանը՝ դաշնակիցների և եվրոպական պետությունների շրջանում:

Պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման համակարգը հիմնված է մի քանի հիմնական սկզբունքների վրա.

Նպատակաուղղվածություն. արտացոլված է պաշտպանության ռեսուրսների համակարգի կառավարման դերում: Այն ուղղված է այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք համապատասխանում են սահմանված ընդհանուր նպատակներին և ելնում են պաշտպանության ռեսուրսների պլանավորումից՝ նպատակ ունենալով հասնել պաշտպանության պլանավորման առաջնահերթություններին:

Ավբողջականություն. արտահայտված է մի քանի ուղղություններով: Համակարգն ընդգրկում է ի նպաստ գինված ուժերի առաքելությունների, քաղաքականությունների, նպատակների և առաջադրանքների իրականացվող բոլոր գործողություններն ու ծրագրերը, այսինքն՝ գործողությունների ամբողջականությունը: Համակարգի շրջանակում ընդգրված են կառավարման երեք՝ ռազմավարական, մարտավարական և գործառնական մակարդակները, այսինքն ներկայացնում է կառավարման մակարդակների ամբողջությունը: Համակարգը կառավարում է պաշտպանության բոլոր առկա ռեսուրսները՝ ներառյալ նյութական, ֆինանսական, մարդկային և տեղեկատվական միջոցները, որոնք ձեռք են բերվել տարբեր ճանապարհներով, այսինքն՝ ներկայացնում է ռեսուրսների ամբողջությունը:

Առաջնահերթություն. արտացոլված է առանձին ծրագրերի, նախագծերի և գործողությունների առաջնահերթությունների վերաբերյալ որոշումներում, որոնք կայացվում են ծրագրային կարևոր նպատակներին հասնելու համար: Ըստ այս սկզբունքի, մի կողմից, մոտեցումների, մեթոդների և խնդրի լուծման միջոցների վերաբերյալ առաջնահերթությունները սահմանվում են պաշտպանության ծրագրերի տարբերակների մշակման միջոցով, մյուս կողմից սահմանվում են գործողությունների և ծրագրերի առաջնահերթությունները՝ համապատասխան ֆինանսական աղբյուրները (պաշտպանական բյուջե, օտարերկրյա ռազմական աջակցություն և այլն) ապահովելու նպատակով:

Ներդաշնակություն. ակնհայտ է առանձին ծրագրային նպատակների միմյանց չհակասելու, պաշտպանության ռեսուրսների կառավարման, ինչպես նաև պաշտպանության պլանավորման բնագավառում ընդհանուր նպատակների ծրագրային լուծման պահանջի ապահովումը:

Նույնականություն. այն երաշխավորում է այնպիսի պայմաններ, որոպեսզի պլանավորված ծրագրերը և գործողությունները չկրկնվեն:

Ճկունություն. այն հնարավորություն է տալիս փոփոխություններ մտցնել կայացված և կայացվելիք որոշումներում, երբ կարևոր փոփոխություններ են տեղի ունենում պաշտպանության բնագավառի ներքին և արտաքին միջավայրերում, քաղաքականություններում և առաջնահերթություններում:

Շարունակական հսկողություն. նշանակում է առաջադրված նպատակներին հասնելու համար պաշտպանության ռեսուրսների արդյունավետ և խնայողական պլանավորման և կիրառման երաշխավորում:

Տնտեսական և պաշտպանական արդյունավետություն, որն ապահովվում է գործողությունների և ծրագրերի նախնական տնտեսական, տեխնիկական և ռազմական վերլուծությամբ, ինչպես նաև պաշտպանության արդյունքների և համակարգերի ամբողջ ցիկլի համար օգտագործված ռեսուրսների և ձեռք բերված արդյունքների համեմատությամբ:

Թափանցիկություն. այն ապահովվում է տարբեր կառույցների կողմից ընդունված կանոնների և ընթացակարգերի համաձայն, պաշտպանության ռեսուրսների կառավարման վերաբերյալ որոշումների քննարկման, ընդունման և վերահսկման հնարավորությամբ:


Ծրագրային կառուցվածքի բնույթն ու նպատակը

Ռեսուրսների ծրագրային կառավարման կիրառումը կապված է այն ծրագրերի կառուցվածքի ձևավորման, պահպանման և բարելավման հետ, որոնք ներառում են կազմակերպության բոլոր գործողությունները, ծրագրերը և դրանց վերաբերող ռեսուրսները՝ քաղաքականությունների, առաքելությունների և նպատակների իրագործումը երաշխավորելու համար:

Իր բնույթով պաշտպանության ծրագրային կառուցվածքն ունի հիերարխիկ բնույթ: Այն ընդգրկում է ոչ միայն զինված ուժերի առաքելություններին, նպատակներին և առաջադրանքներին հասնելու ամբողջ գործունեությունը, այլև այդ նպատակով օգտագործվող նյութական, մարդկային, ֆինանսական և տեղեկատվական միջոցները: Այն ապահովում է պաշտպանության բյուջեի մշակումը, իրագործումը և հաշվապահությունը՝ համաձայն ծրագրի սկզբունքների: Պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման օգտագործվող համակարգի հիմնական մակարդակները հինգն են:

Դրանք են. *հիմնական ծրագիր, ծրագիր, ենթածրագիր, ծրագրի բաղադրիչ և առանձին ծրագրի բաղադրիչ*, ինչպես ցույց է տրված նկար 22-ում:

Ծրագրային կառուցվածքի վերաբերյալ կոնցեպցիան ներառում է նաև այն դրույթը, որ համակարգը անփոփոխ չէ, այն ենթարկվում է փոփոխությունների: Այն մշտապես թարմացվում է փոփոխվող ներքին և արտաքին միջավայրին և նաև պաշտպանության քաղաքականության նպատակներին և առաջնահերթություններին համապատասխան: Ծրագրային համակարգը քառսային ձևով չի փոփոխվում: Փոփոխությունները հիմնավորվում են ըստ ընդհանուր չափանիշների, սկզբունքների և համաձայն առանձնահատուկ ընթացակարգի:



Նկար 22. Ծրագրային կառուցվածքի մոդել

Ծրագրային կառուցվածքի բաղադրիչները

Յուրաքանչյուր ծրագրային կառուցվածքի հիմնական բաղադրիչները նրա տարբեր մակարդակների ծրագրերն են: Ըստ պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման հաստատված դասակարգման՝ ծրագրերը բաժանվում են մարտական և աջակցող ծրագրերի: Մարտական ծրագրերը ապահովում են կոնկրետ մարտական պատրաստվածությունը, մինչ-

դեռ աջակցող ծրագրերը՝ մարտական ծրագրերի իրականացման պայմանները:

Յուրաքանչյուր ծրագիր ներառում է պաշտպանության տարատեսակ ռեսուրսներ՝ անձնակազմ, սպառազինություն, սարքավորումներ, ենթակառուցվածքներ, տեղեկատվություն և այլն, որոնք բաժանված են ըստ կառուցվածքային կամ գործառնական առանձնահատկությունների և անհրաժեշտ են ստեղծելու և պահպանելու պաշտպանության հատուկ կարողությունները:

ԱՄՆ ծրագրային կառուցվածքը բաղկացած է հետևյալ 11 հիմնական ծրագրերից. ռազմավարական (strategic) ուժեր, ընդհանուր նպատակի ուժեր, հետախուզություն և հաղորդակցություն, օդային և ծովային տրանսպորտային ուժեր, պահակային և պահեստային ուժեր, ուսուցում և զարգացում, կենտրոնացած մատակարարում և պահպանում, ուսուցողական, բժշկական և այլ անձնակազմի ծառայություններ, վարչարարություն և համապատասխան գործողություններ, աջակցություն այլ երկրներին, հատուկ նշանակության ուժեր:

Պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման համակարգի արդյունքները

Ռեսուրսների ծրագրային կառավարման մոտեցման կիրառումը տալիս է արդյունքներ, որոնք բավարարում են որոշակի պահանջներ և ունեն կոնկրետ գործառնային կազմակերպական կառավարման ամբողջ գործընթացի համար: Համապատասխան գործառնային ունեցող մասնակիցների կողմից մշակվում են ծրագրային կառավարման արդյունքները և ենթարկվում են համաձայնեցման, ընդունման և հաստատման ընթացակարգերին:

Պաշտպանության նախարարից ծրագրավորման վեցամյա ուղեցույցներ. դրանք էական փաստաթղթեր են պաշտպանական ռեսուրսների ծրագրային կառավարման գործընթացի համար: Այս փաստաթղթում ներկայացված են ըստ ժամանակացույցի պլանավորման փուլի որոշումները և դրանց իրականացման ռեսուրսները:

Ծրագրային հուշագրերը կազմվում են ծրագրի կառուցվածքի յուրաքանչյուր բաղադրիչի համար կոնկրետ մեթոդոլոգիայով և հստակ ձևաչափով, որը ներառում է ծրագրի անվանումը, ծրագրի թիմի կազմը, ծրագրի իրականացման ընդհանուր ռազմավարությունը, ծրագրի նպատակներն ու առաջնահերթությունները, պլանավորված վերջնական արդյունքները և անհրաժեշտ փոխազդեցությունը, ծրագրի աջակցության համար նախատեսված ռեսուրսների պլանը, առաջադրված ծրագրային նպատակների քանակը և գնահատումը, ինչպես նաև ֆինանսական հատկացումից ռեսուրսների մասնաբաժինը:

Բուլղարիայի պաշտպանության նախարարության և զինված ուժերի նպատակների հասնելու խնդիրների ամփոփման և հաստատման փաստաթուղթը պետք է ամփոփի հիմնական ծրագրերի ծրագրային հուշագրերի մշակման ընթացքում ծագած խնդիրները և դրանք ներկայացնի պաշտպանության ռեսուրսների կառավարման բնագավառում որոշում կայացնող մարմիններին: Խնդիրների նկարագրությունը ներառում է կարճ ներկայացում, բացահայտված հակասությունների աղբյուրները, դրանց լուծման այլընտրանքային հնարավորությունների վերաբերյալ առաջարկները և պահանջվող ռեսուրսների գնահատումը:

Ռիսկի կառավարման պլանը ներառում է ռիսկի բնագավառները և պաշտպանության ծրագրերի իրականացման համար ռիսկային գործողությունները, ընտրված հակազդող ռազմավարությունը, հատկացված ռեսուրսները, հակազդող ռազմավարությունների կիրառման հերթականությունը, ռիսկի կառավարման արդյունքների մոնիթորինգը և հաշվետվությունը և պատասխանատու կազմակերպական կառույցը:

Ծրագրային որոշումների հուշագիրը պաշտպանական ռեսուրսների ծրագրային կառա-


վարման ամփոփիչ փաստաթուղթն է: Այն համակարգում ու միավորում է առանձին պաշտպանական ծրագրերին վերաբերող որոշումները: Այն պաշտպանական ռեսուրսների ծրագրավորման պլանավորման փուլի վերջնական փաստաթուղթն է և օգտագործվում է որպես հիմք պաշտպանության բյուջեի մշակման համար:

Պաշտպանության ծրագրերի իրագործման հաշվետվությունները նպատակ ունեն հաշվետվություն ներկայացնել պաշտպանության ծրագրերի իրականացման վերաբերյալ՝ ըստ հաստատված չափանիշների, առաջադրված նպատակների ու առաջնահերթությունների, ինչպես նաև ըստ առկա սահմանված հարցերի, որոնք պետք է ներկայացվեն ծրագրի կառավարման հաջորդ ցիկլում:

Ծրագրային ռեսուրսների կառավարման համակարգի գործիքները

Պաշտպանական ռեսուրսների ծրագրային կառավարման գործառույթի հաջողությունը կապված է որոշակի գործիքների մշակման, պահպանման և բարելավման հետ, որոնք հետագևում են կառավարման ֆունկցիաների իրականացումը:

Ընդհանրապես, այս գործիքները կարող են դասակարգվել հետյալ կերպ (տե՛ս նկար 23):



Նկար 23: Պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման գործիքներ

Փաստաթղթային կոնցեպտուալ և կարգավորող գործիքներ.

առնչվում են.

- պաշտպանության նախարարությունում և զինված ուժերում պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման կոնցեպցիային, որտեղ սահմանված են ֆունկցիաները, ծրագրային կառավարման հիմնական գործողությունների կազմակերպումը և ժամանակահատվածը
- պաշտպանության նախարարին կից ծրագրային խորհրդի գործունեության կանոնակարգերին, որոնք սահմանում են պարտականությունները, կառուցվածքը և խորհրդի անդամների լիազորությունները, հանդիպումների անցկացման և որոշումների կայացման կարգը, ինչպես նաև այլ կոնկրետ խնդիրներ:

1. Ծրագրի կառավարման մեթոդոլոգիական գործիքների խմբին պատկանում են.

- *Պաշտպանության նախարարությունում և զինված ուժերում ծրագրերի մշակման մեթոդոլոգիան*, որով սահմանվում է պաշտպանության ռեսուրսների ծրագրավորման փուլի տեղն ու դերը և հանդիսանում է ծրագրային կառավարման ընդհանուր գործընթացի բաղկացուցիչ մասը: Մեթոդոլոգիայի նպատակն է պաշտպանական ծրագրերի մշակման սկզբունքների ու մեթոդների հիմքերի ստեղծումը և միավորումը:
- *Պաշտպանական ծախսերի նորմերի և սահմանափակումների մշակման մեթոդոլոգիան*, որի հիմնական նպատակն է այն գործոնների սահմանումը, որոնք վերաբերում են անձնակազմի, մարտական պատրաստվածության, սպառազինության և սարքավորումների օգտագործման ու պահեստավորման, ստորաբաժանումների և առաքելությունների վրա արվող ծախսերին:
- *Ռիսկի կառավարման ծրագրի մեթոդոլոգիան*, որով հստակեցվում են փուլերը, տեխնոլոգիան, կարգը, մասնակիցները և նրանց լիազորությունները ռիսկի կառավարման ծրագրի իրականացման գործընթացում, ինչպես նաև գործընթացի բովանդակությունը, կիրառված մոտեցումները, մեթոդները և տեխնիկան, ռիսկի կառավարմանն առնչվող անհրաժեշտ ռեսուրսների սահմանման ձևերը:
- *Կանխատեսման մեթոդոլոգիան* հիմնված է այն հասկացության վրա, որ պաշտպանական ռեսուրսների ծրագրավորումը մրցակցող այլընտրանքների միջև մասնաբաժինների որոշման հետ կապված տնտեսական գործունեություն է և նպատակ ունի ռիսկային և անհստակ պայմաններում հասնել առաջադրված նպատակներին: Այս գործողության հաջող իրականացումը վերաբերվում է տնտեսական տարբեր ցուցանիշների համար կանխատեսումների մշակմանը (օրինակ, պաշտպանական բյուջեի չափը, անձնակազմի, զինված ուժերի նորացման միջև հարաբերակցությունը, և այլն):

2. Համակարգի փաստաթղթային տեղեկատվական գործիքները ներառում են՝

- Անձնակազմի, սպառազինության և սարքավորումների համար հատկացված պաշտպանության ռեսուրսների ծախսային սահմանափակումների և նորմերի մի հավաքածու, որն ուղղված է պաշտպանության ռեսուրսների հիմնական տեսակների վրա կատարվող ծախսերի սահմանափակումների և նորմերի իրական արժեքների ապահովմանը:

3. Պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման համակարգչային ծրագրային գործիքները ընդգրկում են՝

- պաշտպանության ռեսուրսների կառավարման մոդելը (ՊՌԿՄ)
- պաշտպանության ռեսուրսների պլանավորման ծրագրային տեղեկատվական համակարգը:

Պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման համար կիրառված բոլոր գործիքները ոչ միայն ունեն իրենց անհատական կատարելությունը, այլև կառավարման գործընթացներում ներառական կիրառման համար անհրաժեշտ առանձնահատկությունները: Նրանք ենթարկվում են շարունակական վերանայման, թարմացումների և բարելավման:

Պաշտպանական ռեսուրսների ծրագրային կառավարման փուլերն ու նթացակարգերը


Պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարումը իրականացվում է պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման միասնական ցիկլի միջոցով: Դրա կարգավորվածությունը պայմանավորված է կազմակերպական գործողությունների ու ծրագրերի ծավալից ու բարդությունից: ԱՄՆ պաշտպանական գերատեսչության համար սա երկամյա ցիկլ է: ԱՄՆ մյուս գերատեսչությունների համար և եվրոպական երկրների համար, ներառյալ Բուլղարիան, դա մեկ տարվա ցիկլ է:

Պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման պլանավորման փուլի նպատակը, բովանդակությունը, ընթացակարգերը և արդյունքները

Պլանավորման՝ որպես պաշտպանության ռեսուրսների կառավարման բաղադրիչի, նպատակն է ընդհանուր քաղաքական ուղղվածությունը փոխակերպել անհրաժեշտ ուսուցողական պլանի և պահանջների՝ զինված ուժերի պաշտպանական կարողությունների զարգացման համար: Այն սկսվում է ազգային անվտանգությանը ուղղված սպառնալիքների գնահատմամբ, որը ներկայացվում է անհրաժեշտ անվտանգությունը ապահովող ազգային քաղաքականության միջոցով: Որպես կանոն, պլանավորումը ներառում է ազգային անվտանգությանն ուղղված սպառնալիքների վերլուծության և գնահատման ընթացակարգերը, զինված ուժերի ռազմավարությունների մշակումը և որպես պլանավորման փուլի վերջնական փաստաթուղթ պաշտպանության քաղաքականության ուղեցույցի պատրաստումը:

Պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման փուլում իրականացված գործողությունների սխեման. սա ցիկլի փուլ է պաշտպանության ռեսուրսների կառավարման միասնական համակարգի գործարկման համար: Պլանավորման փուլի վերջնականատակը պաշտպանության նախարարի կողմից վեցամյա ժամանակահատվածի համար ծրագրավորման ուղեցույցի մշակումն է: Պաշտպանության նախարարության և զինված ուժերում պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման կոնցեպցիայի համաձայն՝ պլանավորման փուլում բարդ վերլուծություն է իրականացվում: Այն առնչվում է տարածաշրջանում, Եվրոպայում և աշխարհում քաղաքական, ռազմական և ռազմավարական անվտանգության միջավայրին, վերաբերում է այդ միջավայրի արդյունքում ձևավորված ազգային անվտանգության մարտահրավերներին, ռիսկերին և սպառնալիքներին, ազգային և դաշնակցային անվտանգությունը երաշխավորող ռազմավարություններին, պաշտպանության և անվտանգության բնագավառներին հատկացված ռեսուրսներին:

Պլանավորման փուլի վերջնական փաստաթուղթը վեցամյա ժամանակահատվածի համար պաշտպանության նախարարի ծրագրավորման ուղեցույցներն են: Դրանք սահմանում են պաշտպանության ռեսուրսների կառավարման բնագավառի նպատակներն ու առաջնահերթությունները: Ինչպես ցույց է տրված նկար 24-ում, նպատակների և առաջնահերթությունների սահմանման գործընթացը կարող է բաժանվել երեք փուլերի. որակական սահմանում, քանակական սահմանում և գնահատում: Մյուս կողմից, պաշտպանության ռեսուրսների կառավարման բնագավառի նպատակների և առաջնահերթությունների սահմանման որակական փուլը իր հերթին կարող է բաժանվել չորս մակարդակների:



Սկար 24. Պաշտպանության ռեսուրսների կառավարման ինտեգրված համակարգի պլանավորման փուլի սխեման

Առաջին մակարդակում առաջադրվում են պաշտպանության քաղաքականության և պլանավորման հետ կապված պաշտպանության նախարարության և զինված ուժերի նպատակները

ըը և առաջնահերթությունները: Փաստորեն, այս մակարդակը պաշտպանության ռեսուրսների կառավարման միասնական համակարգի (ՊՌԿՀՄ) շրջանակից դուրս է: Ըստ դրա՝ համարվում է, որ պաշտպանության նախարարության և զինված ուժերի ընդհանուր նպատակները և առաջնահերթությունները սահմանվում են պաշտպանության նախարարի ուղեցույցների մեջ: Նկար 24-ում դա ներկայացված է բլոկ 1-ում, որտեղ c_1, c_2, \dots, c_n պաշտպանության քաղաքականության և պլանավորման ընդհանուր նպատակներն են, իսկ p_1, p_2, \dots, p_m ընդհանուր առաջնահերթությունները:

Ընդհանուր նպատակների և առաջնահերթությունների որակական սահմանման *երկրորդ* մակարդակում կատարվում է նրանց գործառույթային վերլուծությունը, այսինքն՝ ձևակերպվում են պաշտպանության ռեսուրսների կառավարման բնագավառում ընդհանուր նպատակներն ու առաջնահերթությունները:

Բացի պաշտպանության քաղաքականության ուղեցույցներից, օգտագործվում են նաև որոշ տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներ, ինչպիսիք են՝ ռազմավարական պլանը, անցումային շրջանի ծրագրերի որոշման հուշագիրը, ինչպես նաև *պահանջվող կարողությունների ֆունկցիոնալ համակարգը*:

Նկար 24-ի բլոկ 2-ում c'_1, c'_2, \dots, c'_p -ն պաշտպանության ռեսուրսների կառավարմանն առնչվող ընդհանուր նպատակներն են և p'_1, p'_2, \dots, p'_q -ն նույն ֆունկցիոնալ ուղղության ընդհանուր առաջնահերթությունները:

Պաշտպանության ռեսուրսների կառավարման բնագավառում ընդհանուր նպատակներն ու առաջնահերթությունները վերլուծվում են *երրորդ* մակարդակում: Այն իրականացվում է պաշտպանության նախարարության և զինված ուժերի հիմնական ծրագրերի առանձնահատկություններին համաձայն: Տեղեկատվության լրացուցիչ աղբյուրները նախորդ եռամսյակի հիմնական ծրագրերի մշակման և ծրագրային հուշագրերի երկարաժամկետ տեսլականն են:

Նկար 24-ի բլոկ 3-ում $c_{1,1}', c_{1,2}', \dots, c_{1,p}'$ -ը 1-ին հիմնական ծրագրի (MP_1) պաշտպանության ռեսուրսների կառավարմանն առնչվող նպատակներն ու առաջնահերթություններն են, իսկ $p_{1,1}', p_{1,2}', \dots, p_{1,q}'$ -ը նույն հիմնական ծրագրի համապատասխան առաջնահերթությունները: Ըստ անալոգիայի, մնացած ծրագրերի նպատակներն ու առաջնահերթությունները ներկայացվում են նույն կերպ:

Վերջին՝ *չորրորդ* մակարդակում (նկար 24, բլոկ 4) վերլուծված են Բուլղարիայի պաշտպանության նախարարության և զինված ուժերի պաշտպանության ռեսուրսների կառավարման բնագավառում ծրագրերի և ենթածրագրերի նպատակներն ու առաջնահերթությունները: Սա իրականացվում է հիմնական ծրագրերի ղեկավարների կողմից ծրագրային կոնկրետ հրահանգներով, որոնք նրանք արձակում են առավել վաղ փուլում:

Նպատակների ու առաջնահերթությունների որակական սահմանման փուլը ավարտվում է վերոնշյալ գործողություններով:

Առաջադրված նպատակներին և առաջնահերթություններին հասնելու համար պահանջվող նյութական և ֆինանսական ռեսուրսների գնահատումը կապված է նրանց քանակական սահմանման հետ:

Կիրառվում են հետևյալ քանակական չափումները.

- *քանակը*. անձնակազմի գնահատումը ըստ տարբեր կատեգորիաների, տարբեր կատեգորիաներում ենթաբաժինների քանակը, ըստ տեսակների սպառազինության և սարքավորումների քանակը, ենթակառուցվածքները և հաստատությունները և այլն
- *տոկոսները*. զինվորական կազմը, սպառազինության և ենթաբաժինների սարքավորումների գնահատումը, տարբեր տեսակի զենքերի և սարքավորումների աշխատելու կարգը, անհրաժեշտ պահուստային ֆոնդերի ապահովվածությունը և այլն

- *հատուկ չափումներ*. օրինակ՝ թռիչքի ժամերը, ծովում անցկացրած օրերը, հեռավորությունը և այլն:

Նշված որակական չափումներն օգտագործվում են հիմնական ծրագրերի նպատակների որակական գնահատումն իրականացնելու համար, ինչպես նշված է նկար 24-ի բլոկ 7-ում: Նույն որակական չափումները կարող են կիրառվել պաշտպանական ծրագրերի մշակման և իրականացման «հաջողության չափանիշների» սահմանման մեջ: Այս չափանիշները հետագայում օգտագործվում են ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություններ մշակելիս: Ձեռք բերված արդյունքները և պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման արդյունավետության գնահատումը ներկայացվում են դրանց միջոցով: Պլանավորված նպատակների ու առաջնահերթությունների գնահատումը կարևոր է նոր նպատակներ առաջադրելու համար: Սա այդ նպատակներին հասնելու գործողությունների անվանական արժեքի հստակ գնահատումն է: Նպատակներին և առաջնահերթություններին հասնելու անհրաժեշտ ֆինանսները հաշվարկվում են գնահատման փուլում (նկար 24):

Այս նպատակով օգտագործվող կարևոր գործիքներն են.

- պաշտպանության ծախսերի նորմերի և սահմանափակումների սահմանման մեթոդոլոգիան (M): Այն ապահովում է բոլոր ծրագրերի համար պաշտպանության ծախսերի տարբեր ձևերի գնահատման ընդհանուր մեթոդոլոգիան
- անձնակազմի, սպառազինության և սարքավորումների վրա պաշտպանության ռեսուրսների ծախսերի վերաբերյալ նորմերի ու սահմանափակումների հավաքագրումը: Այն ներառում է տարբեր տեսակի պաշտպանության ծախսերի վերաբերյալ թարմ տեղեկատվական տվյալներ
- աաշտպանության ռեսուրսների կառավարման մոդել: Սա պաշտպանության ծախսերի մոդելավորման և հաշվապահության օբյեկտիվ միջոց է:

Պաշտպանության նպատակների և առաջնահերթությունների գնահատումը կատարվում է բանաձևերի միջոցով, ինչպես ցույց է տրված նկար 24-ում՝ բլոկ 7:

$$Y_j = f_i (x, y, z, \dots, a, b, c, \dots), \quad (1-1)$$

որտեղ՝ x, y, z, \dots փոփոխականներն են, որը ծրագրի նպատակների ու առաջնահերթությունների քանակական գնահատման արտահայտությունն է, a, b, c, \dots հավաքագրված նորմերի ու սահմանափակումների մեջ տեղ գտնող որակական չափումների ֆինանսական արժեքի չափորոշիչներն են;

f_i - ֆունկցիաներ են, որոնք նկարագրում են որակական չափումների և նպատակների ու առաջնահերթությունների և նրանց ֆինանսական արժեքի միջև հարաբերությունները, և կոնկրետացված է գնահատման մեթոդոլոգիայում:

Գնահատումից հետո վերջնական արդյունքը հիմնական ծրագրերի համար նախատեսված ֆինանսական մասնաբաժիններն են, որոնք ներկայացնում են ծրագրի նպատակներին ու առաջնահերթություններին հասնելու համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները (տե՛ս բլոկ 8): Պաշտպանության ռեսուրսների կառավարման բնագավառում Բուլղարիայի պաշտպանության նախարարության և զինված ուժերի ընդհանուր նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների չափը հաշվարկելու նպատակով (մակարդակ 2) գումարվում են առանձին հիմնական ծրագրերի համար գնահատված նախատեսվող ֆինանսական չափաբաժինները (տե՛ս նկար 24, բլոկ 9) ($PrFQ_i^{MP}$).

$$NFR = \sum_{i=1}^{13} PrFQ_i^{MP}, \quad (1-2)$$

Անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների տեսանկյունից առաջադրված նպատակներին և առաջնահերթություններին հասնելու հնարավորության գնահատումը ձևակերպելու համար

անհրաժեշտ է համեմատել (1-2) բանաձևի հաշվարկը նախատեսվող մատչելի ֆինանսական ռեսուրսների հետ:

Ֆինանսական ռեսուրսների հիմնական աղբյուրը պաշտպանական բյուջեն է: Լրացուցիչ աղբյուրներ կարող են հանդիսանալ ֆինանսավորման, համագործակցության և աջակցության ազգային և միջազգային տարբեր ծրագրեր: Տարբեր մոտեցումներ կարող են կիրառվել նախատեսվող պաշտպանական բյուջեի չափի գնահատման ժամանակ (տե՛ս նկար 23, բլոկ 10), օրինակ, ռազմավարական պլանի ֆինանսական կանխատեսումը, ֆինանսների նախարարության եռամյա բյուջեի կանխատեսումը կամ վերջին մի քանի տարիների պաշտպանական բյուջեի վերաբերյալ փաստացի տվյալների հիման վրա կանխատեսման մշակումը:

Վերջին մի քանի տարիների պաշտպանական բյուջեի վերաբերյալ փաստացի տվյալների վրա հիմնված կանխատեսման մշակումը ունի հետևյալ առավելությունները. այն հիմնված է շատ վստահելի տեղեկատվության վրա, կա հնարավորություն կիրառելու կանխատեսման գիտական մեթոդներ, ապահովում է ներքին և արտաքին միջավայրի նոր գործոնների ազդեցության վերաբերյալ արձագանքման հնարավորությամբ, կարող են ստուգվել կանխատեսման արդյունքները:

Պաշտպանական բյուջեի չափի վերաբերյալ կանխատեսման մշակման և կիրառման, ինչպես նաև ծրագրային կառավարման բնագավառի այլ կանխատեսումների կարիքների համար մշակվել է կանխատեսման մեթոդոլոգիա (տե՛ս նկար 23, բլոկ 11):

Ծրագրային նպատակներին և առաջնահերթություններին հասնելու համար անհրաժեշտ և կանխատեսված առկա ֆինանսական ռեսուրսների միջև համեմատությունը կարող է ամփոփվել երկու խմբում.

1. Եթե $NFR \leq PFR$, ապա առաջադրված նպատակներն ու առաջնահերթությունները իրատեսական են և հասանելի նախատեսված առկա ֆինանսական ռեսուրսների շրջանակում,
2. Եթե $NFR > PFR$, ապա առաջադրված նպատակներն ու առաջնահերթությունները անիրատեսական են և նրանց հասնելու ճանապարհին առկա է զգալի ռիսկ: Այս դեպքում անհրաժեշտ է իրականացնել ռիսկի վերլուծություն (բլոկ 12) կամ ծրագրային նպատակների և առաջնահերթությունների վերասահմանում (բլոկ 2 և 3):

Պաշտպանության ռեսուրսների կառավարման ինտեգրված համակարգի (IDRMS) ցիկլի պլանավորման փուլում իրականացված վերոնշյալ գործողությունների արդյունքների ամփոփումը տալիս է պաշտպանության նախարարի ծագրային ուղեցույցների բովանդակությունը, որը ներառում է.

- պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման բնագավառի ընդհանուր և ծրագրային նպատակները ու առաջնահերթությունները
- ծրագրավորման փուլի ենթադրություններ, սահմանափակումներ և որակական չափորոշիչներ
- պաշտպանության ծրագրերի մշակման, իրականացման և հաշվետվության «հաջողության չափանիշները»
- պաշտպանության նախարարության և Բուլղարիայի զինված ուժերի հիմնական ծրագրերի համար նախատեսվող ֆինանսական մասնաբաժինները
- ծախսերի հիմնական բնագավառներում ռեսուրսների մասնաբաժնի կոնկրետ ուղեցույցներ, ծրագրերի վարչարարություն, ծրագրային ռիսկի կառավարում, կարևոր տնտեսական չափորոշիչների կանխատեսում և այլն:

Պաշտպանության նախարարի ծրագրային ուղեցույցների մշակմամբ, հաստատմամբ ու կիրառմամբ ավարտվում է պլանավորման փուլը և հիմք է դրվում պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման հետագա ընդհանուր իրականացմանը:

Պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման ծախսերի առաջնահերթությունների սահմանում

Ծրագրային կառավարման նպատակներին հասնելու հիմնական և կարևոր գործոններից է քաղաքականություններին, առաքելություններին հատկացված ռեսուրսների խնայողաբար և արդյունավետ օգտագործումը: Սա պետք է արվի այնպես, որպեսզի ապահովվի ծրագրի իրականացման առավելագույն արդյունքները: Քանի որ պաշտպանական բյուջեից տրված ռեսուրսները սահմանափակ են, ծրագրային նպատակներին հասնելու համար ծախսերը պետք է բաշխվեն ըստ առաջնահերթությունների: Ծրագրային կառավարման համար պաշտպանության ծախսերի բաշխումը ըստ առաջնահերթությունների իրականացվում է պլանավորման փուլում: Նախկինում ազգային պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարումը պաշտպանության ռեսուրսների ծախսերի պլանավորման մեջ ներառել է առաջնահերթությունների երկու խումբ:

Դրանցից առաջինը համապատասխանում էր նախարարությունների տարեկան բյուջեների մշակման ֆինանսների նախարարության պահանջներին: Միաժամանակ ապահովում էր անձնակազմի, պահպանման, զորավարությունների և թարմացման ծրագրերի համար հատկացումների վերաբերյալ պաշտպանության ռեսուրսների բաշխման չափաբաժինների նախապայմանները:

Երկրորդ խումբը աջակցել է պաշտպանության բնագավառում կոնկրետ գործողությունների համար պաշտպանության ռեսուրսների պլանավորման գործընթացին: Այդ թվում, ըստ որոշումների՝ արտերկրյա առաքելություններին և տարբեր ներգրավվածություններին Բուլղարիայի զինված ուժերի մասնակցությունը ապահովելու համար: Ըստ պաշտպանության ռեսուրսների պլանավորման գործընթացում առաջադրված նպատակների իրականացման ստացված արդյունքների՝ հիմնավորվում է առաջնահորթությունների խմբերի օգտագործման արդյունավետությունը: Մյուս կողմից, դրանք չեն ապահովում պաշտպանության նախարարության և զինված ուժերի հիմնական ծրագրերի ընդհանուր, խորը և պարբերական վերլուծության համար անհրաժեշտ պայմաններ: Այս եզրակացությունների հիման վրա ձևակերպվել է պաշտպանության ռեսուրսների կառավարման առաջնահերթությունների ամբողջական ցանկի մշակման, հաստատման և կիրառման հարցը:

Պաշտպանության ռեսուրսների պլանավորման կառավարման մեջ նախկինում իրականացված առաջնահերթությունների երկու խմբերը բաղկացած են հետևյալ մասերից (տե՛ս աղյուսակ14):

Աղյուսակ 14

| Ծախսերի բնագավառի առաջնահերթություններ | Գործառնական առաջնահերթություններ |
|--|---|
| 1. Անձնակազմի ծախսեր | 4. Բուլղարիայի ԶՈւ արտերկրյա առաքելությունների ծախսեր |
| 2. Առկա անձնակազմի և դասընթացի ծախսեր | 5. Հաստատված ծախսեր |
| 3. Ներդրումներ | 6. ՆԱՏՕ-ին սարքավորումներով աջակցելու ծախսեր |

Պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման առաջնահերթությունների ամբողջական ցանկը բաղկացած է հետևյալ երկու մասերից՝

- առկա առաջնահերթությունների բաշխում մինչև այն մակարդակը, որը թույլ կտա դրանց ներառումը ընդհանուր ցանկում
- յուրաքանչյուր առանձնացված առաջնահերթության կարևորության գնահատում

ցանկում նրա տեղը որոշելու համար

- առանձնացած առաջնահերթությունների քանակական գնահատումների սահմանում, որը պետք է օգտագործվի պաշտպանության ծրագրի պարբերական քանակական վերլուծություններում:

Գնահատման արդյունքների հիման վրա մշակվել է պաշտպանության ռեսուրսների ծրագրային կառավարման առաջնահերթությունների ընդհանուր ցանկը:

Առաջնահերթությունները այս ցանկում ներկայացված են ըստ կարևորության.

- անձնակազմի ծախսերի հետ կապված գործողությունների ապահովում
- մշտական ծախսերի հետ կապված գործողությունների ապահովում
- ընթացիկ ծախսերի հետ կապված գործողությունների ապահովում՝ ըստ զինված ուժերի նպատակների
- արտերկրյա առաքելություններին մասնակցելու ընթացիկ ծախսերի հետ կապված գործողությունների ապահովում
- մարտական պատրաստվածության համար ծախսերի հետ կապված գործողությունների ապահովում՝ ըստ զինված ուժերի նպատակների
- կապիտալ ծախսերի հետ կապված գործողությունների ապահովում՝ ըստ զինված ուժերի նպատակների
- արտերկրյա առաքելությունների վրա կապիտալ ծախսերի հետ կապված գործողությունների ապահովում
- այլ ընթացիկ ծախսերի հետ կապված գործողությունների ապահովում
- զինված ուժերի շրջանակից դուրս մարտական պատրաստվածության համար ծախսերի հետ կապված գործողությունների ապահովում
- կապիտալ այլ ծախսերի հետ կապված ծրագրերի ապահովում:

Ծրագրային կառավարման համար առաջնահերթությունների ընդհանուր ցանկի կիրառումը աջակցում է պաշտպանության ծրագրերի պարբերական վերլուծությանը, ինչպես նաև պաշտպանական ռեսուրսների պլանավորմանը հետևյալ կերպ.

1. Ֆինանսների նախարարության կողմից զինված ուժերի հիմնական ծրագրերի համար նախատեսված ֆինանսական ռեսուրսների չափաբաժինները

| Մոտեցում 1 | ՀԾ 1 | ՀԾ 2 | ՀԾ 3 | ՀԾ 4 | ՀԾ 5 | ՀԾ 6 | ՀԾ 7 | ՀԾ 8 | ՀԾ 9 | ՀԾ 10 | ՀԾ 11 | ՀԾ 12 | ՀԾ 13 |
|--|------|------|------|------|------|------|------|------|------|-------|-------|-------|-------|
| Առաջնահերթ. 1 Անձնակազմ | | | | | | | | | | | | | |
| Առաջնահերթ. 2 ՊԸԾ | | | | | | | | | | | | | |
| Առաջնահերթ. 3 ԸԾ-ԶՈՒՆ | | | | | | | | | | | | | |
| Առաջնահերթ. 4 ԿԾ – առաքելություններ | | | | | | | | | | | | | |
| Առաջնահերթ. 5 ՄՊԶՈՆՆ | | | | | | | | | | | | | |
| Առաջնահերթ. 6 ԿԾ – առաքելություններ | | | | | | | | | | | | | |
| Առաջնահերթ. 7 ԿԾ-ԶՈՆՆ | | | | | | | | | | | | | |
| Առաջնահերթ. 8 այլ ԿԾ | | | | | | | | | | | | | |
| Առաջնահերթ. 9 ՄՊ եւ ոչ թե ԶՈՆՆ | | | | | | | | | | | | | |
| Առաջնահերթ. 10 այլ ԿԾ | | | | | | | | | | | | | |


Նկար 25. Հիմնական ծրագրերի ապահովում ֆինանսական մասնաբաժինների հետ միասին՝ ըստ հավասար կարևորության գործողությունների և ծրագրերի

ՊԸԾ - պարտադիր ընթացիկ ծախսեր; ԸԾ-ԶՈՒՆ - ընթացիկ ծախսեր - զինված ուժերի նպատակներ; ՄՊ - մարտական պատրաստվածություն; ԿԾ - կապիտալ ծախսեր

Պաշտպանության և անվտանգության բնագավառում զինված ուժերի քաղաքականություններին և նպատակներին հասնելու արդյունավետությունը մեծապես կախված է պաշտպանության մրցակցող ծրագրերի միջև ֆինանսական ռեսուրսների ռացիոնալ բաշխումից:

Պաշտպանական ռեսուրսների պլանավորման համար գոյություն ունի առաջնահերթությունների ամբողջական ցանկի կառուցման երկու հնարավոր մոտեցումներ.

Մոտեցում 1. Երբ Բուլղարիայի պաշտպանության նախարարության և զինված ուժերի բոլոր հիմնական ծրագրերն ունեն հավասար իրավունքներ՝ մրցութային եղանակով պաշտպանական բյուջեից ֆինանսական ռեսուրսների հատկացման ժամանակ: Այս դեպքում պաշտպանական ծրագրերը պլանավորման ժամանակ նախապես տարբերակված չեն ըստ ըստ նպատակների կարևորության: Այս մոտեցման դեպքում առաջնահերթությունների ամբողջական ցանկը կունենա նկար 25-ում ներկայացված տեսքը: Այնտեղ երկու տարածք կարող են առանձնանալ: Սպիտակ տարածքը ներառում է համապատասխան առաջնահերթությունների գործողությունները ըստ անհրաժեշտ ֆինանսների: Մոխրագույն տարածքը ներառում է պաշտպանության ռեսուրսների պլանավորման ժամանակահատվածում չֆինանսավորվող գործողություններն ու առաջնահերթությունները: Պաշտպանական բոլոր ծրագրերի հավասար կարևորության դեպքում երկու տարածքներն իրարից անջատող գիծը պետք է լինի գրեթե ուղիղ: Նկար 25-ը հստակորեն ցույց է տալիս հիմնական ծրագրերի միջև փոխկապակցվածությունը:



Նկար 26. Հիմնական ծրագրերի ապահովում ֆինանսական մասնաբաժինների հետ միասին՝ ըստ տարբեր կարևորության գործողությունների և ծրագրերի

Մոտեցում 2. Երբ Բուլղարիայի պաշտպանության նախարարության և զինված ուժերի բոլոր հիմնական ծրագրերը ունեն տարբեր կարևորություն՝ մրցութային եղանակով պաշտպանության բյուջեից ֆինանսական ռեսուրսների հատկացման ժամանակ: Այս դեպքում պաշտպանական ծրագրերի պլանավորման ժամանակ անհրաժեշտ է նախօրոք տարբերակել նպատակները ըստ կարևորության: Երկրորդ մոտեցման դեպքում առաջնահերթությունների ամբողջական ցանկը կունենա նկար 26-ում ներկայացված տեսքը: Տարբեր կարևորություն ունեցող պաշտպանական ծրագրեր դեպքում երկրորդ մոտեցման կիրառման արդյունքում

ապահովված և չապահովված ծրագրերի և գործողությունները միմյանցից անջատող գիծը ուղիղ չէ: Նկար 26-ում ներկայացված օրինակում 1, 2, 3, 4 և 13 հիմնական ծրագրերը սահմանված են որպես ամենաառաջնահերթայինը, հետևաբար ֆինանսական ռեսուրսներով նրանց ապահովման աստիճանը տարբերվում է 6, 7, 8, 9 և 10 ծրագրերից: Սա չափվում է ըստ պաշտպանական ռեսուրսների պլանավորման ընդհանուր առաջնահերթությունների:

2. Հիմնական ծրագրերի ծրագրային հուշագրերում հատկացված ֆինանսական ռեսուրսների հատկացման հիմնավորվածության վերլուծությունը

Նկար 25-ից և 26-ից երևում է, որ հիմնական ծրագրերի ապահովմանն ուղղված գործողությունների և ծրագրերի տարածքում (սպիտակ տարածքը) կարող են լինել մոխրագույն հատվածներ: Դրանք վերաբերում են այն գործողություններին կամ առանձին ծրագրերի բաղադրիչներին, որոնք տարբեր պատճառներով ֆինանսական աջակցություն չեն ստացել պաշտպանական ռեսուրսների պլանավորման ժամանակ: Նման խնդիրների պատճառները բացահայտելու համար անհրաժեշտ է իրականացնել հատուկ վերլուծություն:

Կան երեք հիմնական վարկածներ, որոնց ուղղությամբ պետք է աշխատել:

Վարկած 1. բաղադրիչների կամ ծրագրերի չֆինանսավորվող գործողությունների իրականացումը պարտադիր չէ ըստ պլանավորված ժամանակահատվածի վերաբերյալ պաշտպանության նախարարի ծրագրային ուղեցույցի: Այս դեպքում, ծրագրային վերլուծությունից հետո, այդ բաղադրիչները հանվում են հիմնական ծրագրերի ծրագրային հուշագրերից, այսինքն՝ դուրս են գալիս պլանից:

Վարկած 2. գործողությունների ու ծրագրերի չֆինանսավորվող բաղադրիչները կարող են ֆինանսավորվել հիմնական ծրագրերի ֆինանսական ռեսուրսների վերախմբավորման միջոցով: Նման դեպքերում ֆինանսական ռեսուրսները հատկացվում են պակաս կարևորություն ունեցող գործողությունների ֆինանսավորումներից, և վերլուծությունից հետո կատարվում է ծրագրի ֆինանսական միջոցների ներքին վերաբաշխում:


Վարկած 3. գործողությունների ու ծրագրերի չֆինանսավորվող բաղադրիչները չեն կարող ֆինանսավորվել հիմնական ծրագրից: Հարկավոր է գտնել լրացուցիչ ռեսուրսներ ծրագրի ընդհանուր բյուջեն ավելացնելու համար, և վերլուծությունից հետո կատարվում է ֆինանսների վերաբաշխում:

Յուրաքանչյուր խնդրի վերլուծության ժամանակ հաշվի է առնվում, թե որ վարկածի շրջանակներում է այն իրականացվում և դրա լուծման համար կայացվում է համապատասխան որոշում՝ հետևելով հաստատված ծրագրի կառավարման ընթացակարգերին և կանոնակարգերին:

Պաշտպանական ռեսուրսների ծրագրային կառավարման ծրագրավորման փուլի նպատակը, բովանդակությունը և արդյունքները

Պաշտպանական ռեսուրսների ծրագրային կառավարման ծրագրավորման փուլի հիմնական նպատակն է վերափոխել պաշտպանության քաղաքականության և ծրագրավորման ուղեցույցները ռացիոնալ, արդյունավետ և հասանելի ծրագրերի: Փուլն ավարտվում է ծրագրերի որոշման հուշագրի մշակմամբ ու հաստատմամբ, որը հանդիսանում է ծրագրերի կառավարման բնագավառի ռազմավարական ղեկավարության վերջնական որոշումը և հիմք է հանդիսանում պաշտպանական բյուջեն ըստ քաղաքականությունների ու ծրագրերի մշակելու համար: Այս փուլի հիմնական ընթացակարգերն են՝

- ծրագրի կառուցվածքի վերանայում և ճշգրտումներին ու փոփոխություններին ուղղված առաջարկների մշակում այլընտրանքային ծրագրերի հուշագրերի մշակում այն ծրագրերի համար, որոնք հաստատվել են ծրագրի կառուցվածքում, որի նպատակն է՝ համոզել որոշում կայացնողներին, որ այլընտրանքային ծրագրերը կապահովեն վերջնական արդյունավետություն և արժե դրանց վրա կատարել ծախսեր:



Սկար 27. Ծրագրավորման փուլի կառուցվածքն ու բովանդակությունը

- ծրագրային որոշումների հուշագրի մշակում, որը կօգտագործվի որպես գործընթացի հաջորդ փուլի՝ բյուջետավորման հիմնական փաստաթուղթ:

Ծրագրավորման փուլի լրացուցիչ և կարևոր խնդիրներից է ծրագրի նպատակների տարբերակումը և ըստ առաջնահերթության դրանց դասակարգումը և նրանց իրականացման համար հատկացումների իրականացումը: Ըստ առաջնահերթության ծրագրերի բաշխումը

ծրագրի ավելի բարձրաստիճան ղեկավարի լիազորությունն է:

Անհրաժեշտություն դեպքում ծրագրային թիմը մշակում է այլընտրանքային ծրագրային առաջարկներ, որոնցում նրանք համախմբում են քաղաքականությունը, ռազմավարությունը, պլանավորման մտադրությունները և ռեսուրսների սահմանափակումները:


Ծրագրերը ինտեգրված պլաններ են պաշտպանական ռեսուրսների (անձնակազմ, ֆինանսական, տեղեկատվական) օգտագործելու համար, որպեսզի ձևավորվեն և պահպանվեն պահանջվող պաշտպանական կարողությունները՝ անվտանգության միջավայրին և առկա ռեսուրսներին համապատասխան: Առաջարկները հավաքվում են ծրագրային հուշագրի փաստաթղթում: Այն ներառում է հետևյալ հիմնական բաղադրիչները՝ ծրագրի անվանում, բովանդակություն և ծրագրի թիմ, ծրագրի նպատակներ և առաջնահերթություններ, ծրագրի գրաֆիկ, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գործողություններ, ծրագրի ռեսուրսների իրացման պլան և բացատրական դրույթներ:

Ծրագրավորման փուլի ընթացքում իրականացվում է մշակված առաջարկների վերանայում, որը կոչվում է ծրագրի վերանայում: Ծրագրի վերանայման նպատակն է իրականացնել Ծրագրային ուղեցույցների և այլ կանոնակարգային փաստաթղթերի պահանջներին ծրագրերի համապատասխանելիության վերլուծություն, խուսափել ծրագրի նպատակների անհամապատասխանելիությունից, ուսումնասիրել առանձին ծրագրերի միջև մրցակցության մակարդակը, երաշխավորել պլանավորված գործողությունների և ծրագրերի հետ ռեսուրսների ապահովումը: Ծրագրի վերանայման վերջում ձևակերպվում է պաշտպանական ծրագրի կառավարմանն առնչվող որոշման վերջնական առաջարկ ամբողջ վեցամյա ժամկետի համար: Ծրագրի վերանայումները իրականացվում են ծրագրային հիերարխիկ կառուցվածքի յուրաքանչյուր մակարդակում: Վերջնական վերանայումը իրականացվում է հաշվի առնելով ռիսկերը, որոնք կապված են ծրագրի իրականացման հետ:

Ծրագրի վերանայման ընթացքում կարևոր գործողություն է պաշտպանական ծրագրերի իրականացման համար ռիսկի գնահատումը և դրա կառավարման մշակումը: Ծրագրի ռիսկը գնահատելու և կառավարելու գործընթացը կարգավորվում է ծրագրի ռիսկի կառավարման մեթոդոլոգիայում: Դրանում ծրագրի ռիսկը ներկայացված է որպես միջոց պլանավորված ռեսուրսների ծախսման, ժամանակի կամ սահմանափակումների շրջանակում ծրագրի կառավարման նպատակներին հասնելու պոտենցիալ անհնարիության դեպքերում, կամ պոտենցիալ իրադարձություն կամ իրավիճակ, որի առկայությունը կարող է բերել բացասական ազդեցության: Պաշտպանական ռեսուրսների ծրագրային կառավարման ծրագրային փուլի վերջում՝ հիմնական ծրագրերի ծրագրային հուշագրերի հիման վրա նախապատրաստվում է ծրագրային որոշումների հուշագիր: Դա պաշտպանական ռեսուրսների ծրագրային կառավարման հաջորդ փուլի՝ բյուջետավորման հիմքն է:

Պաշտպանական ռեսուրսների ծրագրային կառավարման բյուջետավորման փուլի նպատակը, բովանդակությունը, ընթացակարգերը և արդյունքները

Այս փուլի ընթացքում մշակվում է վեցամյա պլանի առաջին տարվա բյուջեն: Դրանում բավարարվում են ծրագրի կարիքները և հաշվի են առնվում ֆինանսական սահմանափակումները՝ անցումային փուլերի համար: Պաշտպանական բյուջեն ներառում է հաստատված ֆինանսական ռեսուրսները, որոնք տրված են պաշտպանությանը և բաշխված են քաղաքականությունների, հիմնական ծրագրերի, գործողությունների և բաժինների միջև՝ ըստ ընդհանուր բյուջեի դասակարգման: Այն ունի պաշտպանական ծախսերի վերաբերյալ հանրային իրազեկման դեր և հայտնում է, թե ինչպես պետք է ծախսվի հարկատուների գումարները:



Սկար 28. Բյուջետավորման փուլի կառուցվածքն ու բովանդակությունը

Բյուջետավորումը, որպես ծրագրային կառավարման միասնական գործընթաց, բյուջեի կառավարման միայն մի մասն է: Այն առավել լայն շրջանակ ունի և ենթարկվում է ֆինանսական կառավարման նպատակներին: Այս փուլում առկա են երեք հիմնական ընթացակարգեր.

- քաղաքականություններին ու ծրագրերին ուղղված ֆինանսական հատկացումների ներքին գնահատում
- բյուջեի և ծրագրերի համակարգում կառավարության այլ առաջնահերթությունների հետ՝ համաձայնեցնելով ֆինանսների նախարարության հետ

-բյուջեի ներկայացման ժամանակ բյուջեի պաշտպանություն խորհրդարանում:

Բյուջետավորման փուլը ավարտվում է խորհրդարանի կողմից դրա հաստատումից հետո: Փուլի ավարտը կախված է ֆինանսական տարվա սկզբից և վերջից, որը տարբեր է տարբեր երկրների համար: ԱՄՆ-ի համար այն սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 1-ն է, Մեծ Բրիտանիայում՝ ապրիլի 1-ը, իսկ այլ եվրոպական երկրների համար հունվարի 1-ը:

Սովորաբար, բյուջեն ներկայացվում է խորհրդարանի հաստատմանը ֆինանսական տարվա սկզբից մի քանի ամիս առաջ: Այս նախնական շրջանի տևողությունը կախված է բյուջեի խորհրդարանական վերանայման մակարդակից: Բուլղարիայի Հանրապետության բյուջեի նախագիծը ներկայացվում է խորհրդարանին ֆինանսական տարվա սկզբից երկու ամիս առաջ՝ մինչև հոկտեմբերի վերջը:

Տարբեր երկրներում գույություն ունեն բյուջեի կազմման որոշ կարևոր տարբերություններ, որոնք պետք է հաշվի առնել: Բուլղարիայի համար ֆինանսների նախարարությունը բյուջեում հաստատում է եկամտի և ծախսերի ընդհանուր դասակարգումը: Բյուջեի ռեսուրսների օգտագործման լիազորությունը տրված է այն մարդուն, որը պատասխանատու է բյուջեի համար:

Ամերիկայի Միացյալ Նահանգների համար հատկանշական են պաշտպանության ծախսերի հետևյալ բնագավառները և բյուջեի ռեսուրսների իրականացման ժամկետները.

- գործողություններ և պահպանում՝ մեկ տարի
- անձնակազմի ծախսեր՝ մեկ տարի
- հետազոտություն և զարգացում՝ երկու տարի
- պարագաներ՝ երեք տարի
- ռազմական շինարարություն՝ երեք տարի:

Բյուջետավորման փուլում հնարավոր չէ պաշտպանության ռեսուրսների կառավարման բնագավառում վերանայել որոշումները, որոնք կայացվել են ծրագրավորման փուլում և ներառվել են ծրագրի որոշումների հուշագրում: Նախնական պայմանների փոփոխման դեպքում (փոփոխություն եկամտի քաղաքականության մեջ, ակնկալվող ինֆլացիայի աստիճանի փոփոխություն և այլն) թարմացվում են ծրագրերը, որից հետո մշակվում ու թարմացվում է բյուջեն:

Պաշտպանական ծրագրերի իրականացման հաշվետվություն պաշտպանական ռեսուրսների ծրագրային կառավարման շրջանակներում

Պաշտպանական ծրագրերի իրականացման գործընթացում ձեռք բերված արդյունքների հիման վրա պլանավորված ֆինանսական ռեսուրսները կարող են վերաբաշխվել առանձին ծրագրերի վրա ըստ գործող հաշվետվողականության մեխանիզմի և վերաբաշխման մասին որոշումների կայացման միջոցով: Պաշտպանության նախարարը հաստատում է հիմնական ծրագրերի միջև ռեսուրսների վերաբաշխումը ծրագրի խորհրդի կողմից առաջարկ ստանալուց հետո: Ծրագրի ղեկավարները պատրաստում և ծրագրի խորհրդին են ներկայացնում մանրամասն հաշվետվություն, որը ներառում է ընդհանուր բյուջեի դասակարգման համաձայն բյուջեի փոփոխության առաջարկ, մինչ այդ համաձայնեցնելով համապատասխան մարմինների հետ:

Ծրագրերի (այդ թվում ենթածրագրերի, ծրագրային բաղադրիչների) միջև ֆինանսների վերաբաշխման վերաբերյալ որոշումը հանդիսանում է հիմնական ծրագրի ղեկավարի լիազորությունը:

Ծրագրերի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունը տրվում է յուրաքանչյուր վեց ամիսը մեկ և ծրագրի ավարտին: Օրինակ Բուլղարիայում ծրագրերի հաշվետվությունները մշակվում են՝ Բուլղարիայի պաշտպանության նախարարության և զինված ուժերի ծրագրային հաշվետվության ուղեցույցի համաձայն: Ծրագրային հաշվետվություններում ներկայացված են կատարողականի հաշվետվությանը վերաբերող պլանավորման մարմինների լիազորությունները, ապահովման, իրականացման և ամփոփման մեխանիզմները և ծրագրի ավարտման, ծրագրի հաշվետվությունների ձևի և բովանդակության մասին տեղեկությունները, ինչպես նաև պլանավորված նպատակների ու առաջադրանքների արդյունքում ձեռք բերված արդյունքների գնահատման չափանիշները:

Պաշտպանության ծրագրերի իրականացման տարեկան հաշվետվությունները հիմք են հանդիսանում ազգային պաշտպանության և զինված ուժերի վիճակի վերաբերյալ պատրաստվող տարեկան հաշվետվությունների համար, որոնք ուղարկվում են խորհրդարանի քննարկմանը:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Անկասկած, յուրաքանչյուր երկրում ռեսուրսների հատկացման վերաբերյալ որոշումների ընդունումը գործադիր իշխանության և խորհրդարանի ամենադժվար առաքելություններից մեկն է: Բոլոր պետությունների ռեսուրսներն են սահմանափակ և հետևաբար խնդիրը այդ ռեսուրսների բաշխումն է՝ հիմնականում դրամը, իսկ անուղղակիորեն՝ անձնակազմը, նյութերը և ենթակառուցվածքները, որպեսզի բավարարվեն անհրաժեշտ պահանջները, լուծվել են հակասական առաջնահերթությունները, դեֆիցիտի հետ կապված խնդիրները:

Տվյալ ֆինանսական տարուց մյուս տարին անցնելիս որոշում կայացնողները միշտ ստիպված են երկրում պահպանել ռեսուրսների համապատասխան հավասարակշռությունը: Ելնելով դրանից՝ պաշտպանական բյուջեն պետք է դիտարկվի նույն սահմանափակումների ներքո՝ սահմանափակ ռեսուրսների հավասարակշռված հատկացում անվտանգության ու պաշտպանության առաջադրանքներն իրականացնելու համար:

Թափանցիկությունն ու հավաստիությունը թույլ են տալիս հանրությանը, լրատվամիջոցներին, ազգային ու միջազգային գործընկերներին ներկայացնել պաշտպանությանը բյուջեի դրամական արժեքը այնպես, որ հանրային միջոցները ծախսվում են նպատակային և ծախսերը վերահսկվում են: Այսինքն՝ որ հասկացվի անվտանգությունը և ազատությունը ձեռք չի բերվում անվճար:

Մինևույն ժամանակ, անվտանգության նկատառումներից ելնելով՝ գոյություն ունեն թափանցիկության սահմաններ, և անհրաժեշտ է որոշ դեպքերում պաշտպանությանն առնչվող տեղեկատվությունը պահել գաղտնի. պաշտպանական բյուջեի որոշ հատվածներ, օրինակ, վերաբերում են որոշակի գաղտնի առաքելությունների, որը քիչ մարդկանց է հայտնի: Նման դեպքերում խնդիրը կարող է լուծվել գաղտնի հավելվածով:

Պաշտպանության բնագավառի ֆինանսների կառավարման մեկ այլ խնդիր հանդիսանում է եկամուտների հատկացումը պաշտպանական բյուջեին: Եթե պաշտպանության բնագավառը որոշակի գումար է աշխատել, այն պետք է տրվի պաշտպանության բնագավառի բյուջեին, քանի որ պաշտպանական գերատեսչությունը օգտագործել է իր ռեսուրսները տվյալ գործունեությունը իրականացնելու համար: Ֆինանսական տեսակետից դա նշանակում է, որ բացի ծախսային հաշիվներից, պետք է բացվեն նաև եկամուտային հաշիվներ: Եթե եկամուտների գումարը նախօրոք չի կարող գնահատվել, հաշիվը պետք է լինի գրոյական, իսկ այնուհետև լրացվեն ըստ եկամուտների համապատասխան թվերով: Պետական բյուջեի հիմնական կրողը, տվյալ դեպքում ֆինանսների նախարարը, փորձում է այս գումարը պահել իր հսկողության ներքո:

Պաշտպանության բնագավառում եկամուտների օրինակ կարող է հանդիսանալ

- գորամիավորումը, որն աշխատում կամ աջակցում է քաղաքացիական հաստատությանը, օրինակ, ճանապարհ կամ կամուրջ կառուցելիս
- պաշտպանության միավորումը, որն աջակցում է միջազգային սպորտի կազմակերպիչներին անձնակազմով կամ տրանսպորտային միջոցներով
- պաշտպանական գերատեսչության ենթակայության տակ գտնվող չօգտագործվող տարածքի կամ բնակավայրի վարձակալում քաղաքացիական ընկերության կողմից
- գորամիավորումը, որը ներգրավված է միջազգային հրշեջային առաքելության կամ ՄԱԿ-ի առաքելության մեջ:

Սկզբունքորեն, շահույթի հետապնդումը պաշտպանության գերատեսչության նպատակը չէ: Պաշտպանության գորամիավորումների նման աշխատանքը պետք է լինի սահմանափակ և լինի բացառության կարգով: Պաշտպանական ուժերը պետք է կենտրոնացված լինեն

պաշտպանության առաքելությունների վրա, չնայած, որոշ ռազմական կարողություններ կիրառելի են նաև խաղաղ ժամանակ:

Պաշտպանական բյուջեն ընդդեմ ռազմական ծախսերի

«Պաշտպանական բյուջե» և «ռազմական ծախսեր» արտահայտությունները անվտանգության ոլորտի բյուջետային հարցերի վերաբերյալ հասարակական քննարկումներում ամենահաճախ օգտագործվող արտահայտություններն են: Դրանք հաճախ հանդիսանում են անվտանգության բնագավառի ամենամեծ ծախսերը սարքավորումների բարձր արժեքի պատճառով: Չնայած քննարկման կենտրոնում պետք է լինի պաշտպանական բյուջեն, այնուամենայնիվ նույն մեթոդոլոգիաները կարող են օգտագործվել անվտանգության այլ բնագավառների բյուջեները ընթերցելու համար: «Պաշտպանական բյուջեն» արտացոլում է այն պաշտոնական տվյալները, որոնք կառավարությունը հատկացնում է պաշտպանության նախարարության բյուջեին: «Ռազմական ծախսերը» պաշտպանության գերատեսչության պահպանման տարեկան ծախսերն են: Ռազմական ծախսերը սովորաբար ավելանում են այլ նախարարություններից, օտարերկրյա ռազմական աջակցությունից և պաշտպանական բյուջեից դուրս ռազմական այլ ծախսերից հատկացվող միջոցների հաշվին: Օրինակ, ռազմական շինարարությունը, զինամթերքի գնումը, զինվորականների թոշակները, ստացված ռազմական աջակցությունը կարող են հանդես գալ այլ վերնագրերի ներքո և ոչ թե որպես պաշտպանական բյուջեի հոդվածներ (ինչպիսիք են զարգացում, տնտեսություն, սոցիալական ապահովություն կամ ներքին գործեր): Պաշտպանական բյուջեից դուրս այս ծախսերի սահմանումը կարող է հանդիպել դժվարությունների, քանզի դրանք երբեմն խառնում են ոչ ռազմական ծախսերի հետ և անհնարին է դարձնում դրանց տարբերակումը: Երբեմն դիտմամբ է փորձ արվում թաքցնել նման հոդվածները ոչ պաշտպանական բյուջեի հաշիվներում: Ռազմական ծախսերը զգալիորեն կարող են բարձրանալ լրացուցիչ բյուջեի ծախսերի հաշվին:

Այն երկրներում, որտեղ անվտանգության բնագավառում բարեփոխումները դեռ լիովին չեն իրականացվել, ռազմական բնագավառը նաև հաճախ վերահսկողություն է իրականացնում բնական ռեսուրսների նկատմամբ՝ աշխատեցնում է գործարաններ, կոոպերատիվներ, խանութներ և իրականացնում այլ կոմերցիոն գործունեություն և դրանցից ստանում է եկամուտ: Այս եկամուտը հաճախ օգտագործվում է կամ բարձրաստիճան զինվորական կազմի աշխատավարձը բարձրացնելու կամ զինամթերք գնելու կամ այլ ծախսեր կատարելու նպատակով:

Պաշտպանության բնագավառի ընդհանուր ծախսերի ծավալը որոշելու մեկ այլ դժվարությունը կապված է ռազմական գնումների հետևանքով առաջացած պարտքերի հետ: Օրինակ, օտարերկրյա վարկերով ֆինանսավորված ռազմական սարքավորումների ներկրումը առաջացնում է տնտեսական բեռ, իսկ ամորտիզացիոն ծախսերը շատ դժվար է նկարագրել պետական բյուջեի փաստաթղթերում:

Պաշտպանական բյուջեի կառուցվածքը

Պաշտպանության բնագավառի ֆինանսների կառավարման հիմնական հարցերից մեկը բյուջեի կառուցվածքն է: Երկրի բյուջեի կառուցվածքը սահմանվում է օրենքներով և կանոնակարգերով և այն հեշտությամբ չի կարող փոփոխվել, եթե նույնիսկ լինի պաշտպանության բնագավառի ֆինանսների բարելավման նպատակով լավ առաջարկ:

Պաշտպանական բյուջեի կառուցվածքների ամենահաճախ կիրառելի ձևերն են՝

- **ըստ ծախսային խմբերի.** ռազմական և քաղաքացիական անձնակազմ, գործառնական և պահպանման ծախսեր, գնումներ, ենթակառուցվածքներ, հետազոտություն և զարգացում, վարչակազմ
- **ըստ կազմակերպական ճյուղերի.** բանակ, օդային ուժեր, ռազմածովային նավատորմ, պահուստային ուժեր, սահմանային ոստիկանություն, մաքսային ծառայություն
- **ըստ հատկացումների և կազմակերպական բաժինների.** ֆեդերալ նախարարության զինվորական անձնակազմ, քաղաքացիական վարչակազմ և աշխատակազմ, պայմաններ և հագուստ, հաղորդակցություն և տեղեկատվական տեխնոլոգիաներ, ավիացիա, հրթիռներ, նավեր և ռազմածովային սարքավորումներ
- **ըստ ծրագրերի, նախագծերի, գործընթացների և արդյունքների.** սոցիալական ծրագրեր, ռազմական պահեստագործի զորավարություններ, մերձափնյա պաշտպանություն, որոնողական և փրկարարական ծառայություն, նոր ավիացիոն տրանսպորտ
- **խառը բյուջեի տեսակ.** հաճախ պաշտպանական բյուջեն կառուցվում է վերոնշյալ երկու կամ ավելի տեսակներից:

Յուրաքանչյուր տեսակ ունի իր առավելությունները և թերությունները: Կարևոր չէ, թե բյուջեի որ տեսակը կընտրվի, կարևորը, որ բավարարի պաշտպանության պահանջները:

Պաշտպանական բյուջեի կառուցվածքը ըստ ծախսերի խմբերի - օրինակ

| Կոդ | Ծախսի տեսակը | 2007 | 2008 | 2009 | 2010 |
|---------|--|-------------|----------|---------|-----------|
| | | իրականացված | ծրագրված | առաջարկ | գնահատում |
| 1. | Անձնակազմ | | | | |
| 1.1 | Աշխատավարձ | | | | |
| 1.1.1 | Աշխատավարձ | | | | |
| 1.1.1.1 | Ռազմական անձնակազմ | | | | |
| 1.1.1.2 | Քաղաքացիական անձնակազմ | | | | |
| 1.1.1.3 | Զորակոչվածներ /զինվորներ/ | | | | |
| 1.1.2 | Հավելավճարներ | | | | |
| 1.1.2.1 | Պատերազմի վետերաններ | | | | |
| 1.1.2.2 | Խաղաղապահ վետերաններ | | | | |
| 1.1.2.3 | Պարգևատրում | | | | |
| 1.1.2.4 | Արձակուրդներ | | | | |
| 1.1.2.5 | Այլ հավելավճարներ | | | | |
| 1.2 | Ապրանքի կամ ծառայության միջոցով վճարում և ապահովագրում | | | | |
| 1.2.1 | Համազգեստներ | | | | |
| 1.2.2 | Մթերք | | | | |
| 1.2.3 | Տոմսեր, ճանապարհորդություն անձնակազմի համար | | | | |
| 1.2.4 | Սոցիալական ապահովություն | | | | |
| 1.2.5 | Առողջական ապահովագրություն | | | | |
| 1.2.6 | Բժշկական խնամք և կրթություն | | | | |
| 2. | Գործողություններ և պահպանում | | | | |
| 2.1 | Ընթացիկ օգտագործման նյութեր | | | | |
| 2.2 | Պահպանում և վերանորոգում | | | | |
| 2.3 | Գնված ծառայություններ | | | | |
| 3 | Գնումներ և շինարարություն | | | | |

| | | | | | |
|-------|---|--|--|--|--|
| 3.1 | Չնումներ | | | | |
| 3.1.2 | Ավիացիա և շարժիչներ | | | | |
| 3.1.3 | Հրթիռներ | | | | |
| 3.1.4 | Նավեր ու նավակներ | | | | |
| 3.1.5 | Զրահապատ մեքենաներ | | | | |
| 3.1.6 | Հրետանի և ռազմամթերք | | | | |
| 3.1.7 | Էլեկտրոնիկա և հաղորդակցություն | | | | |
| 3.2 | Շինարարություն | | | | |
| 3.2.1 | Օդային բազա և անրողորմ/ օդանավակայան | | | | |
| 3.2.2 | Ծովային բազա | | | | |
| 3.2.3 | Հրթիռային տեղանքներ | | | | |
| 3.2.4 | Բժշկական հաստատություններ/ հարմարություններ | | | | |
| 3.2.5 | Անձնակազմի հարմարություններ | | | | |
| 3.2.6 | Այլ զնումներ և շինարարական ծախսեր | | | | |
| 4. | Պաշտպանության վերակառուցման ծախսեր | | | | |
| 5. | Հետազոտություններ և զարգացում | | | | |
| 6. | Այլ ծախսեր և փոխանցումներ | | | | |

Ինչ է նշանակում «պաշտպանական բյուջե» եզրույթը

Ռազմական նպատակներին հատկացված հանրային ծախսերի վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հետևյալ բաղադրիչները.

Պաշտպանական բյուջեի մեջ սովորաբար ներառվող ծախսերը.

- անձնակազմ (բոլոր ծախսերը, որը կատարվում է առկա ռազմական և քաղաքացիական անձնակազմի վրա՝ աշխատավարձ, սնունդ, անձնակազմի և նրանց ընտանիքների սոցիալական ապահովություն)
- գործողություններ և պահպանում
- զենքի գնում
- ռազմական հետազոտություն և զարգացում
- ռազմական աջակցություն (արտահայտվում է դոնոր երկրի բյուջեում)

Ռազմական բնագավառին առնչվող բաղադրիչները, որոնք հաճախ ներառված չեն պաշտպանական բյուջեում.

- քաղաքացիական պաշտպանություն. տնտեսական պաշտպանություն, հոգեբանական պաշտպանություն
- նախկին ռազմական գործողություններ, վետերանների նպաստներ, ընթացիկ ծախսեր, զորացրման և վերաինտեգրման, զենքերի ոչնչացման ծախսեր
- ռազմական ծախսեր, որոնք ներառված են նախարարության ներքին բյուջեի տողերում
- զարգացման ծրագրերի աշխատակազմի աշխատավարձեր
- ռազմական շինարարություն
- օտարերկրյա ռազմական աջակցություն
- զինված ուժերի տնտեսական գործունեության եկամուտներ. պաշտպանության բնագավառի սարքավորումների թարմացում/փոփոխություն սեփականաշնորհման, վար-

ձակալման կամ վաճառելու միջոցով, զինվորականների կողմից բնական ռեսուրսների օգտագործում և մատչելիություն, ռազմական կոմերցիոն գործունեություն

- ռազմական գնումների հետևանքով առաջացած պարտքեր
- ապրանքափոխանակություն
- չնախատեսված միջոցներ և արտակարգ դեպքերի համար հատկացված միջոցներ
- «ստվերային բյուջեներ»։ գաղտնի գործողությունների հատկությունները, նպատակը և արժեքը մանրամասնեցված կամ հստակորեն ներկայացված չեն բյուջեի փաստաթղթերում։ Բացի այդ, այսպես կոչված «ստվերային բյուջեները» գործադիր կողմից հաստատված գաղտնի գործողությունների, «դատարկ անդորրագրի» տեսակ է, որը կառավարությունը պահանջում է խորհրդարանից։ Խորհրդարանի քիչ անդամներ են տեղեկատվություն ստանում այս բյուջեների բովանդակության վերաբերյալ, և անկախ փորձագետների համար անհնար է վերլուծել կամ քննադատել այդ ստվերային բյուջեները։

«Ստվերային բյուջեները» ԱՄՆ-ում

Հատուկ մատչելիությամբ ծրագրերը և բյուջեները Պենտագոնի պաշտոնական տերմինաբանությունն է, որն օգտագործվում է նշելու համար «ստվերային ծրագրերը» և «ստվերային բյուջեները»։ Հատուկ ծրագրերի մատչելիության լիազորությունը տրվում է նախագահի կողմից։ Պատգամավորների ոչ ավելին, քան մեկ տոկոսն է ստանում տեղեկություն ստվերային բյուջեների բովանդակության վերաբերյալ։

Ստվերային ծրագրերը ներառում են այսպես կոչված «թաքնված» ծրագրեր, որոնք համարվում են այնքան զգայուն, որ դրանք դուրս են Կոնգրեսին ներկայացվող սովորական հաշվետվության պահանջներից։ Կոնգրեսի միայն ութ անդամ են բանավոր տեղեկացվում դրանց մասին՝ առանց հետագա որևէ տեղեկատվություն ստանալու։ Սա հնարավորություն է տալիս նրանց ազնվորեն ասել, որ տեղյակ չեն նման ծրագրերից՝ այսպիսով պահպանելով գաղտնիությունը։ Այն ծրագիրը, որը ստվերային է, թաքնված, կոչվում է «մուգ սև»։ Կենտրոնական հետախուզական գործակալության գաղտնի հետախուզությունները և գաղտնի գործողությունները «մուգ սև» են։

2008 ֆինանսական տարում ԱՄՆ ռազմական գերատեսչությունը պահանջել է ավելի քան 32 միլիարդ դոլար գաղտնի ծրագրերի համար։ Գաղտնի ռազմական հետազոտության և զարգացման ծախսը պետք է լինի 17.5 միլիարդ դոլար, որը կազմում է բոլոր ծառայությունների և պաշտպանության գործակալությունների կողմից հետազոտության և զարգացման համար Պենտագոնի կողմից պլանավորված 75.1 միլիարդ դոլարի ծախսերի 23 տոկոսը։

- Ռազմական բնագավառը պահանջել է 14.4 միլիարդ դոլար գաղտնի զենքեր և այլ սարքավորումներ գնելու համար, որը կազմում է 2008 թ-ի 101.7 միլիարդ դոլարի ռազմական բյուջեի 14.4 տոկոսը։
- Լրացուցիչ գաղտնի ծախսերը ներառված են առանձին ֆինանսավորման փաստաթղթում, որը նախատեսված է իրաքյան և աֆղանական պատերազմների համար։
- Ստվերային բյուջեի մի մեծ մասը ծախսվում է անօդաչու մեքենաների վրա։
- Անօդաչու օդանավերը ոչ գաղտնի բյուջեում ամենաարագ զարգացող ծրագրերից է, սակայն շատ ավելի մեծ գումարներ կարող են ծախսվել դրանց վրա գաղտնի կերպով, քան թե ոչ գաղտնի ծրագրերում։

Բյուջեների ներկայացումը նաև բարդ է լինում, որը դժվարացնում է հասկանալ գործընթացը։ Գործադիր մարմինը կարող է խորհրդարանին ներկայացնել իր բյուջեի առաջարկը

տարբեր ձևերով և տարբեր մանրամասնություններով:

Շատ հաճախ բյուջեն նկարագրվում է հատկացումների անվանումներով, օրինակ, ծախսերի թվարկում ըստ իրենց օբյեկտների/խնդիրների: Պաշտպանական բյուջեի լայն անվանումների մեջ մտնում են ռազմական անձնակազմը, գործողությունները և պահպանումը, գնումները, պաշտպանության վերազինման ծրագրերը, հետազոտությունը և զարգացումը: Այնուհետև հատկացումների անվանումները բաժանվում են ըստ հատկացումների հաշիվների, որոնք էլ հետո իրենց հերթին բաժանվում են ըստ բյուջեի գործողությունների ու տողերի: Մանրամասնությունների մակարդակը կարող է տարբերվել ըստ անվանումների:

Ըստ հողվածի տողերի բյուջեի համակարգի ամենակարևոր կենտրոնացումը բյուջեի հատկացման ժամանակ դրա առավելագույն չափի նշումն է և ապահովումը, որպեսզի գործալուծությունները հատկացվածից ավելին չծախսեն:

Ըստ տողերի բյուջեի ուժեղ կողմն այն է, որ դրանք համեմատաբար պարզ են, անորոշություն չկա և ծախսերի վերահսկման միջոցով կարելի է հեշտորեն համեմատել նախորդ տարիների հետ: Սակայն այս տեսակը նաև ոչ բավարար տեղեկատվություն է տալիս, թե ինչու է գումարը ծախսվում: Առնվազն, կառավարությունները և նրանց նախարարությունները պետք է մանրամասնեն հողվածները, որպեսզի հանրության հետաքրքրությունը բավարարեն:

Ծրագրային բյուջետավորում

Տարբեր երկրներ ներդրել են պլանավորման, ծրագրավորման ու բյուջետավորման գործընթացի համակարգ, որը որպես սկզբնակետ օգտագործում է պաշտպանության խնդիրները և որը կապում է պաշտպանության պլանավորումը պաշտպանության բյուջետավորման հետ:

Ծրագրի բյուջետավորումը ունի բազմամյա կենտրոնացում և օգտակար է «արդյունքի բյուջետավորման» համար՝ ներառելով հանրային քաղաքականության խնդիրները և քայլերը, որոնք անհրաժեշտ են հասնելու այդ խնդիրներին: Բյուջեները մշակվում են ավելի շուտ արդյունքների (ռազմավարական ուժեր, հատուկ նշանակության գործողություններ, խաղաղապահ գործողություններ, հաղորդակցման համակարգեր և արտակարգ իրավիճակներում օժանդակություն), քան թե նախարարությունների ու անվտանգության ոլորտի կազմակերպությունների շուրջ:

Ծրագրային բյուջետավորումը օգնում է ցույց տալ այն նպատակները, որոնց համար հատկացվում է գումարը, հեշտացնում է պաշտպանության ծախսերի «գին-օգուտ» վերլուծությունը և պլանները կապում է ֆինանսների հետ, իսկ ներդրումները՝ արդյունքների հետ:

Այնուամենայնիվ, կան ծրագրային բյուջետավորման մի շարք սահմանափակումներ.

- դժվար է դուրս թողնել ծրագրերի վրա հիմնված բյուջետավորման կազմակերպական կենտրոնացումը
- դժվար է համեմատել ծրագրերն ըստ արդյունավետության ու այդ հիմքով կատարել ընտրություններ
- երկարաժամկետ պլանավորման համար գոյություն ունի անհրաժեշտ ֆինանսների կանխատեսման պակաս, ինչպես նաև հետևողական քաղաքական կամքի պակաս, որն անհրաժեշտ է բյուջեի բարեփոխումներ իրականացնելու համար:

Ծրագրային բյուջետավորման պարզեցված օրինակ

| Նպատակ | Ծրագիր | Ռեսուրսներ | Անհրաժեշտ ծախսը | |
|--|--------------------------------------|--|--|--|
| Ազգային տարածքի պաշտպանություն | Պաշտպանության զինված ուժեր | 10 000 հետևակային անձնակազմ | 13 մլն - աշխատավարձ 1 մլն - սնունդ | |
| | | 5 000 տրանսպորտի անձնակազմ 5 000 օդային ուժերի անձնակազմ | 10 մլն - աշխատավարձ 0.8 մլն - սնունդ | |
| | | 400 մեքենա 70 ուղղաթիռ | 5 մլն - պահպանում 1 մլն - վառելիք 20 մլն - նոր գնումներ | |
| | Սահմանային հսկողություն | Արբանյակային հսկողություն 50 մասնագետ Ռադարներ 200 մասնագետ | 5 մլն - վարձակալություն 0.5 մլն - աշխատավարձ 0.2 մլն - ուսուցում | |
| Նպատակ | Ծրագիր | Ռեսուրսներ | Անհրաժեշտ ծախսը | |
| | Արտակարգ իրավիճակներում աջակցություն | | Արտակարգ իրավիճակների ֆոնդ 1 մլն | |
| | Ռազմավարական ղեկավարում | 100 աշխատակից | | |
| Տարածաշրջանային անվտանգության աջակցություն | ԵՄ ռազմաճակատային խմբեր | 1000 հատուկ ուժեր | Աշխատավարձ 1.3 մլն Սարքավորում 2 մլն | |
| | | Եվրոպական անվտանգության և պաշտպանության քաղաքականության շրջանակներում առաքելություններ | 500 հետևակ 2500 ոստիկան | Աշխատավարձ 2.6 մլն Սարքավորում 4 մլն ԵՄ բյուջեին ներդրում 1 մլն |
| | | ՆԱՏՕ առաքելություններ | 1000 զորքեր 2 ֆրեգատ 50 ռազմական օդանավ 2 փոխադրող օդանավ | Աշխատավարձ 1.3 մլն Սարքավորում 2 մլն Պահպանում 2 մլն ՆԱՏՕ-ի բյուջեին ներդրում 0.5 մլն |
| | | Ռազմական հետախուզում | 300 մասնագետ | Աշխատավարձ և գործառնական 1 մլն |

Կազմակերպական բյուջետավորում

Բյուջեները կարող են նաև մասնատվել ըստ պաշտպանության ծրագրերի և վարչական բաժինների՝ օդային ուժեր, ցամաքային ուժեր, նավատորմ, պաշտպանության հետախուզություն, աջակցում զինվորների առողջությանը և վարչական բաժիններ: Նման բյուջեներ շեշտում է, թե ով է ծախսում գումարը:

Անօրինական բյուջեների վերլուծություն

Այնտեղ, ուր անվտանգության բնագավառի անձր ներգրավված է անօրինական գործերում, անհրաժեշտ է գնահատել այդ ներգրավված անձանց եկամուտը՝ անկախ դրա ստացման եղանակից՝ լինի դա կոռուպցիայի կամ ակտիվ բիզնես գործողությունների միջոցով: Երբեմն սեփականատերերի և բիզնեսի հայտարարագրված եկամուտը գտնելու համար հնարավոր է օգտագործել պաշտոնական բիզնես փաստաթղթերը: Երբ դա հնարավոր չէ, անհրաժեշտ է համեմատել չհայտարարագրված եկամուտը անհատների և նրանց կազմակերպության ռե-

սուրսների հետ: Այս գործողությունները հնարավոր է արագացնեն հետաքննիչների արձագանքները, բայց միջազգային մակարդակում և լրատվամիջոցներում ուշադրություն գրավելով հակաօրինական գործողությունների վրա՝ հնարավոր է ճնշում գործադրել կառավարության վրա՝ բարեփոխումներ իրականացնելու և նման խախտումները կանխարգելելու նպատակով:

Ազգային պաշտպանական բյուջեների վերաբերյալ հրապարակայնորեն մատչելի տեղեկատվություն

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են օգտվել հրապարակային տեղեկատվությունից, որպեսզի իրականացնեն անվտանգության բնագավառի բյուջետային գործընթացի նկատմամբ արդյունավետ վերահսկողություն:

Նախ, երբ հնարավոր է, քաղաքացիական կազմակերպությունները կարող են օգտվել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքից: Ավելի քան յոթանասուն երկրներում ընդունվելով՝ այս օրենքը իրավունք է ընձեռում ստանալ տեղեկատվություն և դրա միջոցով գործադիրի հետ հարաբերություններում հզորացնել քաղաքացիական հասարակությանը: Գաղտնի տեղեկատվության ու օրենսդրության պաշտպանությունը բացառություն է տեղեկատվության ազատության ընդհանուր սկզբունքներից: Օրենսդրությունը պաշտոնապես ձևակերպում է տեղեկատվության այն տեսակը, որը կարող է ներառել պետական գաղտնիք, թույլ է տալիս, որպեսզի տեղեկատվությանը տան գաղտնիության մակարդակ, ստեղծում է սանկցիաներ անօրինական հայտարարությունների համար: Բոլոր այս դրույթները կանխարգելում են չափազանց գաղտնիությունը և սահմանափակում են գործադիրի կողմից գաղտնիություն դրսևորելու մտադրությունները:

Երկրորդ, միջազգային կազմակերպությունների զեկույցները բավականին տեղեկատվություն են պարունակում պետական բյուջեների վերաբերյալ: Օրինակ, ՄԱԿ-ի ընդհանուր զեկույցները օբյեկտիվ տեղեկատվություն են պարունակում ռազմական թեմաների վերաբերյալ, ներառյալ՝ ռազմական ծախսերի թափանցիկությունը: Նույն ձևով, Արժույթի միջազգային հիմնադրամի (International Monetary Fund) տարեկան զեկույցում ներկայացվում է անդամ երկրների կառավարության ֆինանսների վիճակագրությունը: Արժույթի միջազգային հիմնադրամի կառավարության ֆինանսների վիճակագրության վերաբերյալ տարեկան զեկույցը ներառում է ֆինանսների վերաբերյալ ընթացիկ և միջազգայնորեն համեմատելի տվյալներ, ինչպես նաև Հիմնադրամի տվյալներ անդամ կառավարությունների ֆինանսական քաղաքականության վերաբերյալ: Տարեկան տվյալները տրվում են ըստ եկամուտների մասին (հարկեր, պարտքեր, պարտատոմսեր) և ըստ բնագավառների ծախսերի մասին (պաշտպանություն, կրթություն և առողջապահություն) աղբյուրների՝ կառավարության բոլոր մակարդակներում (տեղական, տարածաշրջանային և ազգային):

Վերջապես, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են օգտվել ոչ պաշտոնական այլ աղբյուրներում հրապարակված փաստաթղթերից: Գոյություն ունեն բազմաթիվ ոչ կառավարական կազմակերպություններ, որոնք ունեն հրատարակումներ անվտանգության և բյուջետային թեմաներով: Դրանցից կարելի է առանձնացնել երկուսը.

- Ստոկհոլմի խաղաղության միջազգային հետազոտական ինստիտուտի (SIPRI) տվյալների բազան
- Military Balance-ը, որը հրատարակվում է Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի կողմից:

SIPRI-ի Ռազմական ծախսերի և զենքի արտադրման ծրագիրը ուսումնասիրում, փաստագրում և վերլուծում է ամբողջ աշխարհում ռազմական ծախսերի և զենքի արտադ-

րության բնագավառի զարգացումները: Ծրագիրն ունի տվյալների երկու բազա և ունի լայն ընդգրկում, մեկը՝ ռազմական ծախսերի, մյուսը՝ զենքի արտադրման ընկերությունների վերաբերյալ: SIPRI-ի տարեկան զեկույցը բացի անգլերեն, ռուսերեն, ուկրաիներեն, չինարեն ու արաբերեն լեզուներից, թարգմանված է նաև այլ լեզուներով:

Military Balance-ը աշխարհի 170 երկրների ռազմական կարողությանը և պաշտպանությանն ուղղված տնտեսության վերաբերյալ Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի տարեկան գնահատումն է: Միջազգայնորեն ճանաչված որպես աշխարհի զինված ուժերի հավաստի գույքագրում, Military Balance-ը ներկայացնում է թարմ թվեր և տեղեկատվություն պաշտպանական բյուջեների, ընդհանուր գնումների, սարքավորումների և ռազմական գործողությունների վերաբերյալ:

Միջազգային աղբյուրներից քաղաքացիական հասարակության կազմակերպություններին մատչելի են հաշվետվողականությանը խթանող բյուջետային թափանցիկության և գործիքների միջազգայնորեն ընդունված չափանիշներ:

Բյուջետային թափանցիկության լավագույն փորձը

«Բյուջետային թափանցիկության լավագույն փորձի» հավաքածու է մշակվել տարբեր երկրների փորձի հիման վրա: Դրանք վերաբերում են հետևյալ թեմաներին.

1. բյուջեի հաշվետվություններ
2. հատուկ հայտարարություններ/բացահայտումներ
3. հավաստիություն, վերահսկողություն և հաշվետվողականություն:

Արժույթի միջազգային հիմնադրամը հրատարակել է «Ֆինանսական թափանցիկություն և ֆինանսական թափանցիկության լավագույն փորձի քաղաքականությունը» ձեռնարկը, որը վերաբերում է.

1. դերերի և պարտականությունների հստակությանը
2. բաց բյուջեի գործընթացներին
3. տեղեկատվության հասարակական մատչելիությանը
4. հավաստիության երաշխիքներին:

Բացի միջազգայնորեն ընդունված չափանիշներից, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են նաև օգտագործել տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների լավագույն փորձը և առաջարկությունները բյուջետային թափանցիկության լրբբինգի համար:

Պաշտպանական բյուջեի թափանցիկությանն առնչվող միջազգային չափանիշները

1. *Միջազգային չափանիշներով ռազմական ծախսերի հաշվետվության ՄԱԿ-ի գործիքը.* 1980 թ-ի դեկտեմբերի 12-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունել է 35/142 B բանաձևը, որը կոչվում է «Ռազմական բյուջեների նվազեցում», որը ներդրեց ռազմական ծախսերի միջազգային չափանիշներով հաշվետվության ՄԱԿ-ի համակարգը: Բանաձևը առաջարկում էր, որ բոլոր անդամ պետությունները օգտվեն այդ գործիքից և հաշվետու լինեն ամեն տարի Գլխավոր քարտուղարին, որն իր հերթին ամեն տարի պետք է հաշվետու լինի գլխավոր ասամբլեային: Հետագա բանաձևերը հաստատում են ուղեցույցներ ու առաջարկություններ՝ ուղղված «Ռազմական հարցերի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվություն, ներառյալ ռազմական ծախսերի թափանցիկությունը» և կոչ է անում անդամ պետություններին վերջին ֆինանսական

տարվա համար մինչև ընթացիկ տարվա ապրիլի 30-ը հաշվետվություն ներկայացնել իրենց ռազմական ծախսերի վերաբերյալ: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան նաև կոչ է անում միջազգային մարմիններին ու տարածաշրջանային կազմակերպություններին խթանելու ռազմական ծախսերի թափանցիկությանը:

2. Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների ԵԱՀԿ վարքականոսները առաջարկում են որպեսզի պաշտպանության բնագավառին հատկացվող միջոցները չօգտագործեն այն ռեսուրսները, որոնք մատչելի են այլ հասարակական բնագավառների և տնտեսության ընդհանուր զարգացման համար: Կանոնակարգը հստակ նշում է, որ մասնակից պետությունները պետք է ապահովեն պաշտպանության ծախսերի օրենսդրական հաստատումը, զինված ուժերի վերաբերյալ թափանցիկությունը և տեղեկատվության մատչելիությունը. «Յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է ապահովի պաշտպանության ծախսերի օրենսդրական հաստատում: Յուրաքանչյուր մասնակից պետություն, համաձայն ազգային անվտանգության պահանջներին, սահմանափակելու է իր ռազմական ծախսերը և ապահովելու է թափանցիկություն և զինված ուժերի վերաբերյալ տեղեկատվության հասարակական մատչելիություն»:

3. ՆԱՍՕ-ի գործընկերության փաստաթղթերը. պաշտպանության ինստիտուտի ներդրման վերաբերյալ Գործընկերության գործողությունների պլանը ներկայացնում է դաշնակիցների և գործընկերների պարտավորությունը մշակելու պաշտպանության բնագավառում արդյունավետ և թափանցիկ ֆինանսական, պլանավորման և ռեսուրսների հատկացման ընթացակարգեր, ինչպես նաև պաշտպանության ծախսերի արդյունավետ, թափանցիկ և տնտեսապես իրագործելի կառավարում՝ հաշվի առնելով մակրո-տնտեսական թույլատրելիությունը և կայունությունը:

4. Արևմտյան Աֆրիկայում զինված և անվտանգության ուժերի կանոնակարգը (2006 թ.) կոչ է անում պաշտպանության պլանավորման, բյուջետավորման և գնումների թափանցիկության և հաշվետվողականության: Փաստաթուղթն առաջարկում է գաղտնի ծրագրերի և գործողությունների վերաբերյալ տեղեկատվության և հասարակության կրթության ապահովում:

5. Եվրոպայի խորհրդի առաջարկություններում ասվում է, որ անդամ պետությունները, ըստ անհրաժեշտության, երաշխավորեն պաշտոնական փաստաթղթերի մատչելիությունը և նկարագրում է, թե ինչպես պետք է վարվել հարցումների հետ, ինչպես նաև սահմանում է մատչելիության հնարավոր սահմանափակումները:

Պաշտպանության ռեսուրսների կառավարման բնագավառում միջազգային նորմերը, չափանիշները և համագործակցությունը

Անվտանգության և պաշտպանության ռեսուրսների կառավարման առումով անվտանգության և պաշտպանության բնագավառում երկրների և կազմակերպությունների միջև մի շարք տարբերություններ գոյություն ունեն, որը խոչընդոտում է ընդհանուր նորմերի ու չափանիշների իրականացմանը: Մի երկրում նախարարները հաճախ օգտագործում են տարբեր ընթացակարգեր և գործիքներ՝ ռեսուրսները կառավարելու համար՝ առանց հաշվի առնելու համատեղելիությունը: Ծատ հաճախ որոշակի երկրի անվտանգության բնագավառին չի թույլատրվում փոփոխել կամ հարմարեցնել իր կառավարման համակարգը, եթե դա բերի ընդհանուր կանոնակարգերից պետական բյուջեի շեղումների: Միջազգային կազմակերպությունները, ինչպիսիք են՝ ՆԱՍՕ-ն, ԵՄ-ն և այլն, կիրառում են անվտանգության և պաշտպանական բյուջեի և պլանավորման գործընթացի տարբեր տեսակներ: Սա առաջացնում է տվյալների տարբերություն՝ բարձրացնելով տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից ոչ համաձայնեցված թվերի կիրառման ռիսկը, որը կարող է բերել քաղաքական սխալների/չհաս-

կազմաճության: Յետևաբար, մեծ կարիք կա ստեղծելու կամ բարելավելու պաշտպանության բյուջետավորման ընդհանուր նորմերը և չափանիշները: Օրինակ, ՆԱՏՕ-ն և այլ միջազգային կազմակերպությունները փորձում են մշակել ընդհանուր հաշվապահական ու ֆինանսական կանոններ և կանոնակարգեր և հորդորում են ազգերին աջակցել և կիրառել դրանք: Այլ միջազգային կարգավորումներ նույնպես կարող են ֆինանսական կառավարման բնագավառում խթանել ընդհանրությունների ձևավորմանը ու ստանդարտացմանը: Եվրոպական և հյուսիսամերիկյան երկրները հովանավորում են միջազգային կազմակերպություններին, ինչպիսիք են International Accounting Standard Board-ը և International Public Sector Accounting Standard Board-ը: Հիմնական խնդիրն է՝ մշակել միջազգային ֆինանսական, հաշվապահական և հանրային սեկտորի կանոնակարգեր, կանոններ և նորմեր, որպեսզի ֆինանսական կարգավորումները լինեն թափանցիկ, հաշվետվողական և համարժեք:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախաբան

Թափանցիկությունն ու հաշվետվողականությունը հանդիսանում են ժողովրդավարության էությունը: Նրանց կիրառումը ունի իր առանձնահատկությունները հատկապես անվտանգության և պաշտպանության բնագավառում: Պաշտպանությունը առանձնանում է կառավարման մյուս ոլորտներից իր ուժի կիրառման մենաշնորհով և մասնագիտացված ռազմական հաստատության առկայությամբ, որն ունի ազգային շահերը լավագույնս պաշտպանելու վերաբերյալ իր սեփական մոտեցումները:

Ինչ է նշանակում թափանցիկություն

«Թափանցիկություն» տերմինը օգտագործում ենք սահմանելու համար, թե որքան է տեսանելի կառավարության աշխատանքը, որով պայմանավորված է վստահությունը գործադիր իշխանության նկատմամբ՝ վերջինիս գործողություններն ու ծախսերը բացահայտելու, բացատրելու ու հիմնավորելու մեջ:

Բազմաթիվ թեմաների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը կարևոր է հասարակական կառույցների արդյունավետ և արդյունարար գործունեության համար: Այնուամենայնիվ, անվտանգության քաղաքականության և պլանավորման և ռեսուրսների ապահովման վերաբերյալ տեղեկությունը, ներառյալ՝ զինվորների քանակը, երկրի զինանոցում գտնվող զինատեսակները, անվտանգության բնագավառին հատկացվող բյուջեն հաճախ գաղտնի է պահվում: Չնայած այն հանգամանքին, որ կան անվտանգության վերաբերյալ որոշ տեղեկությունների գաղտնիության պատճառներ, հիմնական տեղեկատվությունը պետք է մատչելի լինի քաղաքացիական իշխանություններին ու հանրությանը: Գաղտնիության անհրաժեշտությունը չպետք է խոչընդոտի քաղաքացիական վերահսկողությանը:

Անբավարար թափանցիկությունը վտանգում է տնտեսական կայունությանը՝ հանգեցնելով ռեսուրսների ոչ ճիշտ հատկացմանը: Հետևաբար, պլանավորման, նախապատրաստման և օրենսդրական հաստատման տեսակետից, զինված ուժերի, ոստիկանության, հետախուզության և անվտանգության այլ բնագավառների վրա կատարվող ծախսերի նկատմամբ պետք է լինի նույն մոտեցումը, ինչպես հանրային այլ բնագավառներում: Անվտանգությանն առնչվող բոլոր ծախսերը պետք է ներկայացված լինեն բյուջեում և անվտանգության բյուջեն պետք է ենթարկվի աուդիտի: Ֆինանսների նախարարությունը և բյուջեների համար պատասխանատուները պետք է կարողանան վերլուծել անվտանգության վրա կատարվող ծախսերը: Օրենսդիրը պետք է հնարավորություն ունենա անկախ գնահատելու անվտանգության բնագավառի և անվտանգության ուժերից պահանջվող բյուջեի առաջարկը: Օրենսդիրը պետք է համապատասխան տեղեկատվությունը ստանա ժամանակին, որպեսզի կարողանա վերլուծել և մինչ ընդունումը քննարկել առաջարկները: Բյուջեի և աուդիտի փաստաթղթերը պետք է լինեն հրապարակային: Նույնիսկ այն տեղեկատվությունը, որը գաղտնի է, պետք է բաց լինի կառավարության գործադիր և օրենսդիր մարմինների որոշ անդամների համար, և անհրաժեշտ է ստեղծել մեխանիզմներ, որպեսզի հնարավոր լինի բյուջեի վերանայումները:

Նույն կերպ, անվտանգության բնագավառի պլանավորումը պետք է լինի հնարավորինս թափանցիկ: Անվտանգության քաղաքականությունները պետք է քննարկվեն օրենսդրի կող-

մից և մեկնաբանություններ ստանան հասարակության կողմից: Պաշտպանության ծրագրերը պետք է ժամանակ առ ժամանակ վերանայվեն, հատկապես երբ անվտանգության ներքին կամ արտաքին միջավայրում տեղի են ունենում զգալի փոփոխություններ: Քաղաքացիական հասարակության ներդրումը կարող է հզորացնել այդ վերանայումները և նրանց կողմից արված բացահայտումները պետք է լինեն հրապարակային: Անվտանգության քաղաքականությունների և քաղաքացիական-ռազմական ու քաղաքացի-ոստիկանություն հարաբերությունների վերաբերյալ քաղաքականությունների հիմնական տարրերը, ինչպես նաև անվտանգության ուժերի կարգապահական կանոնները պետք է վավերացվեն օրենքով:

Թափանցիկությունը բարդ հասկացություն է թե՛ տեղական, թե՛ միջազգային առումներով ու կիրառելի է և՛ պաշտպանության բյուջեների (ծախսերի վերաբերյալ տվյալներ), և՛ բյուջետավորման գործընթացի (ինչպես են առաջանում բյուջեի թվերը) համար: Թափանցիկությունը երկչափանի է:

Մեզ հետաքրքրում է երկուսն էլ.

- տեսանելի է արդյոք երկրի օրենսդիր մարմնի, ինչպես նաև լրատվամիջոցների, շահագրգիռ խմբերի և քաղաքացիական հասարակության ինստիտուտների համար, թե ինչ է անում կառավարությունը և ինչի վրա է ծախսվում հարկատուների գումարները. սա տեղական/ներքին թափանցիկությունն է
- և թե որքանով է մատչելի տվյալ երկրի հարևան պետությունների համար տեղեկությունների ստացումը պաշտպանության, անվտանգության տեղաբաշխման վերաբերյալ. սա միջազգային թափանցիկությունն է:

Տեղական/ներքին թափանցիկությունը հաշվետվողականության երաշխիքն է, և հրապարակումները հանդիսանում են դրա էությունը:

Նման հրապարակումների ցանկը պետք է ներառի հետևյալ փաստաթղթերը.

- միջնաժամկետ և երկարաժամկետ պաշտպանական պլաններ
- պաշտպանության փաստաթուղթ (white paper) կամ նմանատիպ անվանմամբ այլ փաստաթուղթ, որն անդրադառնում է պաշտպանության քաղաքականությանը, ծրագրերին, առկա ռազմական գործողություններին, կազմակերպական հարցերին, անձնակազմին, գնման խնդիրներին և ռազմական ֆինանսներին
- պաշտպանական բյուջեի ամենամյա ներկայացում և հիմնավորում
- պաշտպանության գերատեսչության քաղաքականության ներկայացում և ծրագրի կառավարման խնդիրներ
- պաշտպանության նախարարության կատարողական հաշվետվությունը գործադիր և օրենսդիր մարմիններին
- հանրային տեղեկատվության հաշվետվություններ՝ հատուկ կարևորության թեմաների շուրջ - օրինակ՝ ՆԱՏՕ-ում ընդգրկվելու առաջընթացի մասին:

Միջազգային թափանցիկությունը հանդիսանում է թափանցիկության և նրա ձևավորման արտաքին չափումը, և պետք է պատասխանի հետևյալ հարցերին.

- արդյոք երկիրը վերջին տարիներին լիարժեք կատարել է ԵԱՀԿ հաշվետվությունների պահանջները և եթե ոչ, ապա ինչու
- արդյոք պետությունը պետք է հաշվետու լինի այլ պետություններին իր ծախսերի և բյուջեների համար:

Գոյություն ունի թափանցիկության գործընթացի կիրառման երեք բնագավառ՝ քաղաքականության մշակում և պլանավորում, ծրագրավորում և բյուջետավորում, պաշտպանության գնումներ:

Քաղաքականության մշակման և պլանավորման բնագավառում թափանցիկության էությունը հետևյալում է. որքանով է այդ աշխատանքները հրապարակային, ինչքան տեղեկություն է տրվում օրենսդիրին, լրատվամիջոցներին, քաղաքացիական հասարակությանը, լայն հասարակությանը քաղաքականության տարբերակների և ուղիների վերաբերյալ:

Այս տեսակետից որոշակի պարզագույն հարցեր են առաջանում.

- այս բնագավառում ըստ սահմանադրության և օրենքների գործադիրը ինչպիսի տեղեկատվություն է պարտավոր տրամադրել օրենսդիրին կամ հրապարակայնացնել
- որտեղ հնարավոր գտնել համապատասխան առաջարկները
- արդյոք իրականում վարչակազմն անում է այն, ինչ պետք է անի և եթե չի անում, ապա ինչու:

Թափանցիկությունը պաշտպանության ծրագրավորման և բյուջետավորման մեջ պետք է պատասխանի հետևյալ հարցերին.

- սահմանադրությամբ և օրենքներով սահմանված ինչ թվեր պետք է կառավարությունը մատչելի դարձնի օրենսդիրի կամ հասարակության համար՝ նախկին ծախսերի, առկա ծախսերի և բյուջեի ծախսերի վերաբերյալ
- որոնք են համապատասխան առաջարկները և իշխանության փաստաթղթային աղբյուրները
- արդյոք գործադիրը գործում է իր լիազորությունների շրջանում և եթե ոչ, ապա ինչու:

Գոյություն ունեն ռազմական սարքավորումների վրա կատարվող ծախսերի վերաբերյալ հրապարակայնություն ապահովող կարգավորումներին և նրանց կիրառմանը լրացուցիչ ուղղորդություն դարձնելու հիմնավոր պատճառներ:

Հնարավոր է գործունեության այս բնագավառը պարզաբանելու համար ձևակերպել հետևյալ հարցերը.

- կառավարությունը ինչպիսի տեղեկատվություն է պարտավոր տրամադրել օրենսդիրին գնումների ընտրության, տարբերակների, տեղերի կազմակերպման, պայմանագրի կողմի ընտրության չափանիշների, վերջնական պայմանագրի արժեքի և այլ հարցերի վերաբերյալ
- ինչպիսի հետագա տեղեկատվություն պետք է տրամադրվի ծրագրի ամբողջ ցիկլի պայմանագրային կատարման վերաբերյալ
- արդյոք օրենսդիրը պետք է հաստատի խոշոր գնումների վերաբերյալ որոշումները
- արդյոք աուդիտորական մարմնի պարտականության մաս է կազմում գնումների մասին որոշումների ստուգումն ու ծրագրերի մոնիթորինգը
- արդյոք ընտրված պալատը (վերահսկիչ պալատը) կամ աուդիտորական մարմինը փաստեր ու թվեր է ստանում բյուջեում չընդգրկված գնումների վերաբերյալ:

Ինչ է հաշվետվողականությունը

Մենք «հաշվետվողականություն» տերմինը օգտագործում ենք նկատի ունենալով.

- բացահայտելու, բացատրելու և հիմնավորելու գործադիր իշխանության պարտականությունը

- օրենսդիրի պատասխանատվությունը պահանջելու, որպեսզի կառավարությունը (վարչակազմը) իրապես կատարի դա:

Ե՛վ պարտականությունը, և՛ պատասխանատվությունը կիրառվում են երկու լայն բնագավառներում.

1. **քաղաքականության հաշվետվողականություն**, որը վերաբերում է կառավարության գործողություններին պաշտպանության և անվտանգության բնագավառներում
2. **ֆինանսական հաշվետվողականություն**, որը վերաբերում է կառավարության կողմից ծախսերին պաշտպանության և անվտանգության բնագավառներում:

Ե՛վ պարտականությունը, և՛ պատասխանատվությունը ելնում են ընտրված ներկայացուցիչների՝ օրենսդիրների, իրազեկ լինելու ժողովրդավարական իրավունքի վրա, թե ինչ է անում կառավարությունը և ինչ է ծախսում, և որը պետք է սահմանափակվի բացառապես տեղյակ լինելու անհրաժեշտությամբ:

Հաշվետվողականությունը գտնվում է ժողովրդավարական որոշումների կայացման հիմքում: Կառավարությունները հաշվետու են հասարակությանը օրենսդիրի միջոցով, որը գործադիրի պարտականությունն է, և օրենսդիրից ակնկալվում է ստիպել կառավարություններին՝ հաշվետու լինելու իրենց գործողությունների և ծախսերի համար:


Գործադիր իշխանությունն իրականացվում է նախարարական թիմի կողմից, որը կարող է ձևավորվել ուղղակիորեն ընտրված ղեկավարի կողմից կամ ձևավորվել այն քաղաքական կուսակցությունից (կուսակցություններից), որը կամ որոնք ներկայացուցչական մարմնում ունեն մեծամասնություն: Այնուամենայնիվ, նախարարություններն ու իրենց վարչությունները (որը երբեմն անվանում են կառավարություն կամ վարչակազմ) պարտավոր են կամ պետք է պարտավոր լինեն հաշվետու լինել հասարակությանը այն մասին, թե ինչ են անում (քաղաքականության հաշվետվողականություն) և, թե ինչպես են ծախսում հարկատուների գումարը (ֆինանսական հաշվետվողականություն):

Քաղաքականության հաշվետվողականության արդյունավետությունը կախված է հետևյալից.

- սահմանադրական հստակ և մատչելի երաշխիքներ օրենսդիր իշխանության համար, որպեսզի պահանջի կառավարությունից բացահայտել, բացատրել և հիմնավորել պաշտպանության քաղաքականությունն ու պլանները
- ինչպիսին են սահմանադրական հոդվածները, օրենքներն ու կարգավորումները
- կան արդյոք հստակ պարտականություններ տեղեկացնելու կամ խորհրդակցելու ընտրված ներկայացուցիչների հետ քաղաքականության մշակման և պլանավորման գործընթացի ժամանակ
- արդյոք քաղաքականության գլխավոր հայեցակարգը, պլաններն ու ծրագրերը պահանջում են խորհրդարանականների կողմից հաստատում
- արդյոք օրենսդիրն ինքնին ունի մեկ կամ ավելի վերահսկողական հանձնաժողովներ, որպեսզի ուսումնասիրեն պաշտպանության և անվտանգության ոլորտում գործադիրի գործողությունները
- արդյոք վերահսկողական գործառույթն իրականացնելու համար հանձնաժողովները հավաքում են մարդիկ կամ փաստաթղթեր և արդյոք հրավիրում կամ հավաքագրում են անհատներին:

Դիտարկելով գործադիրի պարտականությունը և օրենսդրի պատասխանատվությունը կառավարության կողմից ծախսվող գումարների առնչությամբ՝ կան զուգահեռ հարցեր, որոնք վերաբերում են ֆինանսական հաշվետվողականությանը.

- կա արդյոք հստակ լիազոր մարմին, որը պահանջում է կառավարությունից բացահայտել, բացատրել ու հիմնավորել պաշտպանության նպատակով կատարված ծախսերը՝ թե, ինչ է ծախսել և ինչ է մտադիր ծախսել
- ինչ իրավական ակտերով են սահմանված այդ լիազոր մարմնի գործառույթները՝ սահմանադրությամբ, օրենքներով կամ կանոնակարգային նորմերով
- կա արդյոք օրենսդրական որևէ դրույթ, համաձայն որի ընտրված ներկայացուցիչները կարող են տեղեկացվել կամ մասնակցել պաշտոնական ծրագրավորման կամ բյուջետավորման ընթացքում խորհրդակցություններին, կամ արդյոք վարչակազմը պարտավոր է ներկայացնել նշված գործունեության արդյունքները ընտրված ներկայացուցիչներին
- արդյոք պաշտպանական բյուջեն պետք է պաշտոնապես հաստատվի ներկայացուցչական մարմնի կողմից որպես առանձին մաս կամ պետական ընդհանուր բյուջեի առանձին մաս
- արդյոք օրենսդիրն ունի մեկ (կամ ավելի) վերահսկողական հանձնաժողով, որպեսզի ուսումնասիրի պաշտպանության և անվտանգության ոլորտում գործադիրի գործունեությունը
- արդյոք վերահսկողական գործառույթն իրականացնելու համար հանձնաժողովները հավաքում են մարդիկ կամ փաստաթղթեր, և արդյոք նախարարները, պաշտոնյաներն ու սպաները պարտավոր են տալ վկայություններ, հաշվետվություններ և բացատրություններ
- կա արդյոք անկախ ազգային աուդիտորական մարմին, որը ներկայացուցչական մարմնին հաշվետու է հանրային ծախսերի համար, և արդյոք այդ մարմինը ունի ավանդական աուդիտորական գործառույթ կամ արդյոք այն նաև կատարում է գումարի պահանջի գնահատում:



Նկար 29. Թափանցիկության և հաշվետվողականության դասակարգումը

Երբ խոսում ենք անվտանգության և պաշտպանության բնագավառի թափանցիկության

և հաշվետվողականության մասին, օգտակար է դիտարկել ժամանակակից ժողովրդավարության քաղաքացիական-ռազմական հարաբերությունների մի քանի չափումները:

Նախ, գոյություն ունի հարաբերությունն ռազմական բնագավառի և պետության միջև: Ստեղծումը նրանում է, որ զինված ուժերը ամբողջապես և անվերապահորեն ենթակա են օրինականորեն ընտրված գործող կառավարությանը, իսկ զինված ուժերի ղեկավարությունը ձայն չունի հասարակական հարցերում, բացի իր մասնագիտական բնագավառից: Սա ընդհանրապես Եվրամիության դիրքորոշումն է: Բացի այդ, դա նշանակում է, որ ռազմական շրջանակները հատուկ ազդեցություն չունեն հանրային բնագավառին հատկացվող ծախսերի վրա:

Սրանով է ձևավորվում ռազմական ոլորտի և գործադիր մարմնի միջև հարաբերությունները: Զինված ուժերի հիերարխիկ բնույթը պահանջում է, որպեսզի նրանց բարձրագույն հրամանատարությունը (կամ գեներալական կազմը) անընդհատ գտնվեն քաղաքական խիստ ուղղորդման ներքո: Եվրամիության (ԵՄ) պետություններում դա իրականացվում է քաղաքացիական նախարարի կողմից, ինչպես վարչարարության մյուս բնագավառներում: Պաշտպանության բնագավառում, այդ անձը գլխավորում է ընդհանուր բաժինը, որտեղ կողք-կողքի աշխատում են ռազմական մասնագետներն ու քաղաքացիական ծառայողները: Նաև ԵՄ մակարդակով «վերահսկողությունն» ավելին է, քան ենթադրվում է: Պաշտպանության քաղաքականության մշակման, պլանավորման և ծրագրավորման, բյուջետավորման և ծախսերի հարցերում, զինվորականների իշխանությունն ու ինքնավարությունը խիստ սահմանափակ է:

Ներկայումս սա բնորոշ եվրոպական պրակտիկա է, և ոչ միայն անդամ պետություններում, այլև այն հետևյալ միջազգային ժողովրդավարություններում, որոնք վերջերս են ընդգրկվել ԵՄ կազմում:

Ժողովրդավարական կառավարման տեսակետից քաղաքացիական-ռազմական հարաբերությունների երրորդ չափումը՝ օրենսդիր դերը, չափազանց կարևոր է: Այս իմաստով հաշվետվողականությունն ու թափանցիկությունը հանդիս են գալիս որպես կարգախոս: Ընտրված ներկայացուցիչների պարտականությունն է ստիպել կառավարությանը հաշվետու լինել իրենց կատարածի և ծախսածի համար: Սա վերաբերում է ոչ միայն բյուջեի կամ պլանավորված ծախսերի վերահսկողությանը, այլև պաշտպանության հաշիվների կամ իրականացված ծախսերի վերահսկողությանը: «Քսակի իշխանությանը» արդյունավետորեն տիրապետելու և ընդհանրապես վերահսկողություն իրականացնելու համար խորհրդարանականները պետք է պաշտպանեն իրենց իրավունքը՝ տեղյակ լինելու, թե ինչպես է կառավարությունը կատարում իր գործը: Սա նշանակում է պնդել համապարփակ թափանցիկության իրականացում:

Պարտականությունների կատարումը նաև ենթադրում է համապատասխան կառուցվածքներ, ինչպիսիք են իրավասու և համապատասխան աջակցություն ստացող մասնագիտական հանձնաժողովը կամ հանձնաժողովները, իսկ ծախսերի մոնիթորինգի համար՝ ունակ, անկախ և համապատասխան աուդիտի ինստիտուտ:

Այն նաև պահանջում է համապատասխան գործընթացներ, ինչպիսիք են՝ պարբերական և բաց լսումները, հարցումները, որոնք բերում են դատական գործերի հարուցմանը, ինչպես նաև հաշիվների պաշտոնական վավերացման համար խիստ ընթացակարգեր:

Մի կողմից վերլուծաբանների, ակադեմիկոսների, լրագրողների, շահագրգիռ խմբերի և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների, տեղական անվտանգության համայնքի և մյուս կողմից զինվորականների միջև հարաբերությունը քաղաքացիական-ռազմական հարաբերությունների չորրորդ չափումն է: Եթե կառավարությունը բաց չգործի՝ պաշտպանության ռեսուրսների հատկացման և կառավարման բոլոր բնագավառներում չի կարող լինել ռազմական հարցերի նկատմամբ հասարակական լայն վերահսկողություն, որը հանդի-

ասնում է լավ կառավարման ու ժողովրդավարության կարևոր հատկանիշը:

Վերջապես, «քաղաքացիական-ռազմական հարաբերություններ» տերմինը պետք է ներառի ռազմական և լայն հանրության միջև հարաբերությունները: Այնպիսի գործոններ, ինչպիսիք են հավաքագրումը և վերաբաշխումը, ռազմական կրթության կազմակերպումը, քաղաքացիական հասարակությանը տրվող ռազմական աջակցության մակարդակը, ինչպես նաև շատ այլ գործոններ որոշում են, թե արդյոք տվյալ ազգի զինված ուժերը ինտեգրված են հասարակության մեջ, թե դրանք գոյություն ունեն մեկուսի, կամ հնարավոր է արդյոք որպես օտարված «պետություն պետության մեջ»: Անշուշտ Եվրոպայի ժողովրդավարությունները նախընտրում են ինտեգրված բնույթի, քան մեկուսացված ռազմական բնագավառ:

Պաշտպանության թափանցիկություն և հաշվետվողականություն. ազգային օրինակներ

Վերջերս տարբեր երկրների պաշտպանության և անվտանգության հաշվետվողականության և թափանցիկության վերաբերյալ հիմնական հատկանիշների հետազոտության արդյունքները ներկայացված են ստորև.

Գործադիր իշխանության վերաբերյալ

Հաշվետվողականություն

Ֆրանսիայում գործադիրին տրված է առավելագույն ինքնուրույնություն, իսկ վարչապետն ունի մեծ քաղաքական պատասխանատվություն: Նա միակ մարդն է, որը քաղաքական պատասխանատվություն է կրում հնարավոր սխալների կամ սխալ կառավարման համար, նույնիսկ, եթե դրանք առաջացել են վարչակազմի ամենացածր օղակում: Նման կենտրոնացումն ու հաշվետվողականության նման քաղաքական մոտեցումը նվազեցնում է վարչապետի պատասխանատվության արդյունավետ գնահատման հնարավորությունը այն ամենի համար, ինչ անում են նրա նախարարները: Արդյունքում վարչապետը միշտ կարող է դադարեցնել իր նախարարների և կարևոր կառույցների տնօրենների լիազորությունները:

Իտալիայում այս հարցը առավել բարդ է: Այստեղ բոլոր իրավապահ մարմինները, բացի կարաբիններից և ֆինանսական ոստիկանությունից, բոլորը գտնվում են ներքին գործերի նախարարության ենթակայության ներքո: Այդ երկու ինստիտուտները համապատասխանորեն ենթարկվում են պաշտպանության և ֆինանսների նախարարությանը: Բայց, եթե այս երկուսը զբաղված են հասարակական կարգի պահպանմամբ, ապա նրանք գործում են ներքին գործերի նախարարության ենթակայության ներքո: Ներքին և ռազմական հետախուզության կառույցները համապատասխանաբար պատասխանատու են ներքին գործերի և պաշտպանության նախարարներին և երկուսն էլ կարող են հետաքննություն իրականացնել:

Լեհաստանում բոլոր ծառայությունները ենթակա են վարչապետին, որը նշանակում է բաժինների ղեկավարներին: Իրավապահ մարմինները գտնվում են ներքին գործերի նախարարության ենթակայության ներքո և գնահատվում են խորհրդարանի Վարչարարության և ներքին գործերի հանձնաժողովի կողմից: Հետախուզական մարմինները ուղղակիորեն հաշվետու են վարչապետին: Նրանց գործողությունները համակարգվում են նախարարների խորհրդին կից Անվտանգության ծառայության խորհրդի կողմից և վերահսկվում են խորհրդարանի Անվտանգության ծառայության հանձնաժողովի կողմից:

Շվեդիայում ոստիկանությունն ու անվտանգության ծառայությունը հաշվետու են արդարադատության նախարարին: Գոյություն չունի նախարարական պատասխանատվության համա-

կարգ, ուստի ծառայությունները հաշվետու են ամբողջ կառավարությանը: Կառավարությունը նշանակում է բոլոր գլխավոր պաշտոնները ըստ օրենքի, այն նաև կարող է ձևավորել պատգամավորներից ու իրավաբաններից բաղկացած հատուկ հետաքննական հանձնաժողովներ:

Միացյալ Թագավորությունում գործադիրի հաշվետվողականությունը պաշտոնական բնույթ չունի: Անվտանգության ծառայության և հետախուզական մարմինների ղեկավարները մշտապես հանդիպում են իրենց քաղաքական ղեկավարների հետ, և հաճախակի կապ կա կառույցների պաշտոնյաների ու համապատասխան բաժինների քաղծառայողների միջև:

ԱՄՆ-ում հետախուզական մարմինները հաշվետու են նախագահին, ինչպես պահանջում է գործադիր իշխանության կարգը, որը մշակում է նրանց կառուցվածքը, դերերը և պատասխանատվությունները, ինչպես նաև նրանց գործողությունների սահմանափակումները: Նախագահին խորհրդատվություն է տրամադրում նաև հետախուզական վերահսկողական խորհուրդը, որը անկախ է իր գործառույթներում և վերահսկում է բոլոր հետախուզական գործողությունները:

Թափանցիկություն

Ֆրանսիայում թափանցիկությունը օրակարգային «թեմա չէ»: ոչ-ոք դրա մասին հարց չի տալիս: Բաց աշխատելու սահմանադրական պարտականություններ գոյություն չունեն: Այսինքն՝ ինտերնետը ավելի շատ օգտագործվում է տարբեր ծառայությունների կողմից՝ տեղեկատվություն և փաստաթղթեր տարածելու համար հենց իրենց նախաձեռնությամբ:

Իտալիայում ներքին գործերի և պաշտպանության նախարարությունների կայքերում բավականաչափ համապատասխան տեղեկատվությունը մատչելի է հանրությանը և լրատվամիջոցներին: Խորհրդարանականները և հանրությունը կարող են հատուկ գործողությունները կառավարելու ընդհանուր ուղեցույցների վերաբերյալ նյութեր գտնել: Նրանց տրվում է նաև հիմնական վիճակագրական տեղեկատվություն անվտանգության ու պաշտպանության բնագավառի վերաբերյալ:

Լեհաստանում խորհրդարանական հանձնաժողովները տվյալներ են ստանում իրավապահ և հետախուզական մարմինների կազմակերպական կառուցվածքի վերաբերյալ: Հանրությունը նմանատիպ տվյալներ կարող է ստանալ միայն ոստիկանության վերաբերյալ: Առանձին ծառայությունների ու կառույցների բյուջեների մասին տեղեկատվություն կարելի է գտնել «Բյուջեի մասին» օրենքի ընդհանուր բաժիններից, որոնց մանրամասները հասանելի են իրավասու մարմինների անդամներին, օրինակ՝ Բյուջեի և ֆինանսների հանձնաժողովին:

Մի կողմից *Շվեդիան* հայտնի է որպես թափանցիկ համբավ ունեցող երկիր, օրինակ, խորհրդարանական հանձնաժողովի կողմից պաշտոնական նյութերի հասանելիության առումով, մյուս կողմից այն հետախուզական և ոստիկանական բնագավառներում արևմտյան ժողովրդավարական երկրների մեջ հավանաբար ամենափակն է: Պաշտոնական բյուջեն հրապարակային է, սակայն մանրամասնությունները մատչելի չեն, այսինքն՝ մատչելի է միայն ծառայությունների ընդհանուր արժեքը:

Միացյալ Թագավորությունում ոչ մի գործակալություն պարտավոր չէ տրամադրել որևէ տեղեկատվություն և կարող են հրաժարվել տրամադրել, մինչև տվյալ նախարարը հրաման չարձակի:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում Կոնգրեսն ունի նույն իրավունքը, ինչ գործադիրը ազգային անվտանգությանը առնչվող գաղտնի տեղեկատվության նկատմամբ, քանի որ նրան անհրաժեշտ է այդ տեղեկատվությունը իր սահմանադրական պարտականությունները կատարելու համար և այն պատճառով, որ սահմանադրությունը հավասար պարտականություն-

ներ է տալիս Կոնգրեսին և Նախագահին ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության հարցերի շուրջ որոշումների կայացման համար:

Ալբանիայում քաղաքականության հաշվետվողականության վերաբերյալ սահմանադրական, օրենսդրական և կառավարության նորմատիվ ակտերում հստակ դրույթ գոյություն չունի, որով կպարտավորեցներ կառավարությանը տալ բացահայտումներ, բացատրություն կամ հիմնավորում անելիքների կամ ծրագրերի մասին:

Ըստ Պաշտպանության քաղաքականության փաստաթղթի՝ պաշտպանության պլանավորման գործընթացի և զինված ուժերի քաղաքացիական և ժողովրդավարական վերահսկողության նպատակով թափանցիկությունը քաղաքականության հիմնական սկզբունքներից է: Փաստաթղթում չի նշվում, թե գործնականում դա ինչ պետք է ներառի:

Ըստ սահմանադրության՝ վարչապետը և Նախարարների խորհրդի ցանկացած անդամ պարտավոր են երեք շաբաթվա ընթացքում պատասխանել պատգամավորների հարցերին: Նախարարների խորհրդի անդամը իրավունք ունի մասնակցելու օրենսդիր մարմնի կամ նրա հանձնաժողովի նիստին և ելույթ ունենալ, երբ ցանկանա: Պետական կառույցների ղեկավարները խորհրդարանական հանձնաժողովների պահանջով օրենքի սահմաններում պետք է բացատրություններ տան իրենց գործունեությանը վերաբերող հատուկ հարցերի վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվողականության վերաբերյալ սահմանադրության մեջ, օրենքներում և կառավարության նորմատիվ ակտերում հստակ դրույթ գոյություն չունի, որով պարտավորեցվում է կառավարությանը տալ բացահայտումներ, բացատրություն կամ հիմնավորում: Ըստ սահմանադրության՝ վարչապետը խորհրդարանին է ներկայացնում բյուջեի նախագիծը աշխարհային նստաշրջանի ժամանակ, որը չի կարող փակվել առանց դրա հաստատման: Եթե օրինագիծը չի հաստատվում մինչև հաջորդ ֆինանսական տարվա սկիզբը, նախարարների խորհուրդը յուրաքանչյուր ամիս իրականացնում է նախորդ տարվա բյուջեի 1/12-րդը, մինչև նոր բյուջեի հաստատումը: Խորհրդարանը հաստատում է նոր բյուջեն նախորդ ֆինանսական տարվա վերջին օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում: Նախարարների խորհուրդը պարտավոր է խորհրդարանին ներկայացնել բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն:

Քաղաքականության մշակման և պլանավորման թափանցիկության վերաբերյալ երկու տարում մշակվել է երեք փաստաթուղթ՝ Ազգային անվտանգության քաղաքականություն, Պաշտպանության ռազմավարություն, Պաշտպանության քաղաքականություն: Այս փաստաթղթերի ընդունումը, ըստ ազգային չափանիշների, թափանցիկության հաղթանակ է: Մինևույն ժամանակ այդ փաստաթղթերի ընդունման հետ կապված կան որոշ նկատառումներ: Ինչպես հասուն ժողովրդավարություններում, այդ փաստաթղթերը պատրաստվել են գործադիր իշխանության շրջանակներում, որը հիասթափություն է առաջացրել նրանց համար, ովքեր ակնկալում էին առավել թափանցիկություն: Մյուս պահանջը նման փաստաթղթերի պարբերական հրապարակումն է և ոչ թե առանձին և պատահական հրապարակումները:

Ծրագրավորման և բյուջետավորման թափանցիկությունը ապահովվում է օրենքով՝ համաձայն որի պետական բյուջեի նախագիծը պետք է ներառի յուրաքանչյուր բյուջետային հաստատության եկամուտներն ու ծախսերը նախորդ և գալիք տարիների համար՝ ըստ առանձին հոդվածների: Էկոնոմիկայի և բյուջեի հանձնաժողովը իրավիք ունի անկախ արտաքին փորձագետների բյուջեի տարբեր բաղադրիչների վերաբերյալ կարծիքների փոխանակման նպատակով, և պաշտպանության հանձնաժողովը պետք է դրսևորի նման վարքագիծ:

Ըստ «Հանրային գնումների մասին» օրենքի՝ **սարքավորումների ձեռքբերումը** կառավարության կողմից պետք է լինի թափանցիկ, ինչպես ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման մեջ, այնպես էլ ծրագրի մանրամասների հրապարակայնության, ընտրության չափանիշների, տեղեկրային ընթացակարգի և այլն մանրամասնություններում:

Ռումինիայում քաղաքականության հաշվետվողականության բնագավառում կառավարությունն ունի հստակ պարտավորություն տալու բացահայտումներ, բացատրություն կամ հիմնավորում պաշտպանության քաղաքականության և պլանավորման վերաբերյալ: Խորհրդարանի դերը սահմանված է սահմանադրությամբ և մի քանի օրենքներով՝ «Ազգային պաշտպանության մասին», «Զինված ուժերի կազմակերպան մասին», «Ռազմական անձնակազմի կարգավիճակի մասին», «Ազգային պաշտպանության պլանավորման մասին» և այլն: Հիմնական ռազմավարական փաստաթղթերը, որոնք սահմանում են քաղաքականության մշակման տրամաբանական մոտեցումը, Ազգային անվտանգության ռազմավարությունն է, Ազգային անվտանգության և պաշտպանության փաստաթուղթը, Ռազմական ռազմավարությունը, Պաշտպանության պլանավորման ուղեցույցը:

Ֆինանսական հաշվետվողականության բնագավառում գոյություն ունի հատուկ պարտավորություն, համաձայն որի քաղաքականության հիմնական փաստաթղթերում պետք է ընդգրկվի տեղեկություն պաշտպանության ֆինանսական ռեսուրսների նպատակայնության վերաբերյալ: Կառավարությունը պարտավոր է խորհրդարանին ներկայացնել պետական բյուջեի օրինագիծը և իրականացնել այն հաստատումից հետո: Ազգային պաշտպանության նախարարությունը պատասխանատու է պաշտպանական բյուջեի օրինագծի և դրա կատարման համար: Ռումինիան կիրառում է պաշտպանության ռեսուրսների պլանավորման, ծրագրավորման, բյուջետավորման և գնահատման համակարգ:

Ըստ սահմանադրության՝ **քաղաքականության մշակման և պլանավորման թափանցիկության** նպատակով կառավարությունը և այլ հասարակական իշխանությունները պարտավոր են հրապարակել բոլոր օրինագծերը և առաջարկները, որոնք վերաբերում են ազգային անվտանգության քաղաքականությանը:

Այս բնագավառի գլխավոր փաստաթղթերն են Ազգային անվտանգության ռազմավարությունը, Ազգային անվտանգության և պաշտպանության փաստաթուղթը, Ռազմական ռազմավարությունը, Պաշտպանության պլանավորման ուղեցույցը:

Ծրագրավորման և բյուջետավորման թափանցիկությունը ապահովվում է վերջին տասնամյակում շրջանառության մեջ դրված տարբեր օրենքներում և համաձայնագրերում՝ նախկին, ընթացիկ և բյուջեով նախատեսված ծախսերի վերաբերյալ տվյալների ամրագրմամբ: Թափանցիկության բարելավման գործիք է հանդիսանում պլանավորման, ծրագրավորման, բյուջետավորման և իրագործման համակարգը:

Սարքավորումների ձեռքբերման նպատակով գնումների ընթացակարգը կարգավորվում է մի շարք կանոնակարգերով՝ մեկը վերաբերում է ազգային պաշտպանության պլանավորման գործընթացին, մյուսը՝ հանրային գնումներին և պաշտպանության գնումների կառավարման համակարգին, երրորդը՝ «Գաղտնի տեղեկատվության մասին» օրենքին:

Զինված ուժերի վրա կատարվող ծախսերի աուդիտ

Պաշտպանության կառավարման բնագավառում «աուդիտը» վերաբերում է ֆինանսական թվերի մաթեմատիկական հաշվարկների վերահսկողությանը, հաշվապահական սխալներից խուսափելուն, ստվերային փողերին առնչվող գործերին ու կոռուպցիային, ոչ խնայողաբար ծախսերից խուսափելուն, մաքուր ֆինանսական ընթացակարգերին ու պատասխանատվություններին հետևելու գործընթացին:

Վերահսկողությունը նպատակ ունի երաշխավորել, որպեսզի հարկատուների գումարները ծախսվեն արդյունավետ և խնայողաբար, բարձր պատասխանատվությամբ՝ օգտագործելով ընթացիկ վերահսկողական մեխանիզմ:

Ֆինանսական աուդիտ և վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ են հետևյալ նախապայմանները.

- ժամանակահատվածը (ֆինանսական տարին)
- թափանցիկությունը, ճիշտ հաշվապահությունը
- ըստ անվանման/համարի բյուջետավորված գումարի մասնավորեցում և ծրագրերի նպատակի հատուկ նկարագրությունը
- բոլոր ակնկալվող ծախսերի և եկամուտների ամբողջականությունը
- միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման հողվածների և ակնկալվող ծախսերի, ծախսերի ու եկամուտների հատուկ բացահայտումը
- լրջությունը, ճշգրտությունը և ֆինանսական տվյալների հավաստիությունը:

Որոշ երկրներում գործադիր իշխանությունը անվտանգության և պաշտպանության բնագավառի բյուջեի աուդիտի հզոր ներքին կարողություն ունի: Անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր երկրում կառավարությունը խորհրդարանին ներկայացնի ամբողջական հաշվետվություն՝ ըստ ծախսերի, միաժամանակ որպեսզի այդ ծախսերը ենթարկվեն անկախ աուդիտի: Նման անկախ հաստատությանը կարելի է անվանել Գլխավոր աուդիտոր, Ազգային աուդիտորական գրասենյակ, Բյուջետային գրասենյակ կամ ֆինանսական պալատ: Բոլոր դեպքերում այն պետք է հիմնադրվի սահմանադրությամբ և լինի օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունից անկախ մարմին: Խորհրդարանի դերը պետք է երաշխավորի, որպեսզի իր անդամները ունենան հստակ պայմաններ, միջոցներ ու ռեսուրսներ իրենց առաքելությունը արդյունավետ և անաչառ իրականացնելու համար, ինչպես նաև պարբերաբար հաշվետվություն ներկայացնեն խորհրդարանին կամ համապատասխան հանձնաժողովներին: Եթե հայտնաբերվում են կեղծիքներ կամ կոռուպցիա, ապա Աուդիտորական գրասենյակը պետք է ունենա պարտավորություն հաշվետվություն ներկայացնելու դատական համակարգին:

Անվտանգության բնագավառի բյուջեի աուդիտի և վերանայման փուլում Աուդիտորական գրասենյակը ստուգում է համապատասխան կառավարական և հանրային կառույցների ճշգրտությունը և հավաստիությունը: Գրասենյակը ճշտում է, թե արդյոք բոլոր ֆինանսական գործողություններն են իրականացվել ըստ հանրային միջոցների ծախսման կանոնների: Բացի այդ, նաև պետք է ստուգի, թե արդյոք հանրային բոլոր ծախսերն ու եկամուտները իրականացվում են ըստ օրենքի:

Նույնիսկ առավել կարևոր է հանրային միջոցների պատշաճ օգտագործումը ապահովելու նրա առաքելությունը՝ հասնելու համար այն նպատակներին, որոնք օրենսդրորեն ամրագրված են անվտանգության ու պաշտպանության քաղաքականություններում: Այդ նպատակով խորհրդարանը և Աուդիտորական գրասենյակը պետք է ճշտեն, թե որքանով են հանրային ծախսերը համապատասխանում հետևյալ երեք չափանիշներին.

- դրամի արժեքը. օգտագործելով քանակական և որակական վերլուծություններ՝ ճշտել, թե արդյոք անվտանգության բնագավառի ռեսուրսներն օգտագործվել են առավելագույն արդյունքների հասնելու համար
- արդյունավետությունը (Effectiveness). գնահատել, թե որքանով են իրագործվել քաղաքականության նպատակները
- արդյունարարությունը (Effecency). գնահատել, թե արդյոք նախատեսված արդյունքների ձեռքբերման համար ռեսուրսներն օգտագործվել են օպտիմալ ձևով:

Աուդիտորական գրասենյակը կարող է իրականացնել աուդիտ իր իսկ նախաձեռնությամբ կամ խորհրդարանի պահանջով: Անվտանգության ոլորտի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության նշանակությունը կարող է աճել հետևյալ միջոցներով.

- *Ժամանակին կատարված աուդիտ, տարեկան բյուջեի կատարման հաշվետվություններ.* միայն այս մոտեցմամբ կարելի է գնահատել, թե արդյոք անվտանգության բնագավառի բյուջետավորված արդյունքին հասել են, թե ոչ, և որքան արդյունավետ և արդյունաբար
- *գործադիրի հայեցողությամբ տրամադրված միջոցների և չնախատեսված ծախսերի աուդիտ.* օրինակ, հավելյալ բյուջեի տրամադրում առավել առաջնահերթություն ունեցող ծրագրերին:
- *աուդիտի տվյալների հիման վրա առաջարկների ներկայացում խորհրդարանին.* թե ինչպես բարձրացնել դրամի արժեքը և անվտանգության բնագավառի ընդհանուր կատարողականությունը:

Խորհրդարանական վերահսկողության ցիկլը սկսում է բյուջեի նախապատրաստման գործընթացով և ավարտվում է խորհրդարանի վերահսկողության ներքո գտնվող աուդիտի գրասենյակին կամ նմանատիպ հաստատությանը՝ վերջնական աուդիտի արդյունքների վերաբերյալ հաշվետվության ներկայացմամբ:

Աուդիտորական գրասենյակը աջակցում է խորհրդարանին՝ իրականացնելու բյուջետային ծախսերի ու եկամուտների վերահսկողությունը: Կառավարության աուդիտորական գրասենյակը, հիմնվելով սահմանադրության վրա, պատասխանատու է խորհրդարանի բյուջետային հանձնաժողովին և, հետևաբար, նրա ենթակայության, տակ գտնվող բյուջետային աուդիտորական հանձնաժողովին: Այսպիսով, այն գործում է կամ խորհրդարանի, կամ իր անունից: Այս չեզոք հաստատությունը կարող է միայն իրականացնել ծախսերի ու խնայողությունների աուդիտի իր սահմանադրական պարտավորությունները՝ թափանցիկ բյուջեի առկայության դեպքում: Անդամները, ինչպես և դատավորները, պետք է ունենան անկախություն: Նրանք առաջարկում են ռեսուրսների կառավարմանն ուղղված բարելավման գաղափարներ և միջոցներ: Մյուս կողմից, այն մարդիկ, ովքեր պատասխանատու են վատնած ֆինանսների համար, ստիպված կլինեն փոխհատուցել հասցված վնասի համար: Ապացուցվել է, որ կառավարության աուդիտորական գրասենյակը շատ կարևոր գործիք է բյուջետային և ֆինանսական բոլոր հարցերի վերահսկողության համար:

Ներքին աուդիտի և վերահսկողական կազմակերպություններ

Պաշտպանական բյուջեի կառավարման և վերահսկողության բոլոր ընթացակարգերն ու սկզբունքները օգտակար չեն լինի, եթե չլինի խիստ վերահսկողության իրականացում շղթայի վերջին օղակում, որտեղ ծախսվում է գումարը: Այս վերջնական վերահսկողությունը իրականացվում է բյուջեի տնօրինության, պաշտպանության ֆինանսական գրասենյակների և բյուջեի ու վերահսկողական մասնաճյուղերի, ներքին աուդիտորների կողմից:

Ֆինանսների միությունը մշտապես աուդիտի գործընթացի մեջ է՝ աջակցելու համար գործադիրին և օրենսդիրին հետևյալ նպատակներում ու պատասխանատվություններում.

- ըստ անհարժեշտության իրականացնել բյուջեի ամբողջական կամ մասնակի սառեցում, կրճատումներ կամ բարձրացում ֆինանսական տարվա ընթացքում
- հաստատել մեծ ծախսերը, օրինակ՝ մինչև 5 միլիոն Եվրո և տեղեկացնել խորհրդարանին
- հաստատել խոշոր շինարարական ծրագրերի պարտավորությունները

- հաստատել ՄԱԿ-ի, ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի շրջանակներում նոր պարտավորությունները կամ միջազգային կառավարական պարտավորությունները
- համագործակցելով համապատասխան նախարարության հետ՝ որոշել, թե ինչպես են բյուջեները կառուցվում և ինչ եկամուտներ կարող են լինել

Արտաքին աուդիտորներ

Որոշ դեպքերում արտաքին աուդիտորներին և խորհրդատուներին խնդրում են աջակցել պաշտպանական կառույցներին՝ հատկապես տնտեսական լուծումների ու որոշումների համար: Միջազգային կազմակերպությունները, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ԵՄ-ն, ՆԱՏՕ-ն, Համաշխարհային բանկը և այլն, աուդիտի են ենթարկում ազգային և միջազգային բյուջեները այն դեպքերում, երբ նրանք մտադիր են երկրում կամ կառույցում ֆինանսական ներդրում կատարել:

Ներքին և արտաքին անվտանգությունը և պաշտպանությունը երկրի և նրա մարդկանց համար ամենակարևոր հարցերից մեկն են, և նրանք պետք է ծախսեն ռեսուրսներ, որպեսզի ապահովեն անվտանգություն: Մյուս կողմից էլ այդ գործընթացը պետք է ենթարկվի աուդիտի և վերահսկողության: Ռեսուրսների օգտագործումը և անհրաժեշտ աուդիտն ու վերահսկողությունը պետք է աջակցեն հետևյալին.

- հասնել քաղաքական անվտանգության և պաշտպանության հայեցակարգի նպատակներին
- պահպանել հավասարակշռություն երկրի անվտանգության և այլ առաքելությունների միջև, ինչպիսիք են սոցիալական բնագավառը, կրթությունը, տնտեսությունը, առողջապահությունը և այլն
- վերահսկել պետական բյուջեն՝ հետևելով ոչ միայն ներդրմանը, այլև, որն ավելի կարևոր է, արդյունքին
- սառեցնել, ապաստարեցնել, կրճատել կամ բարձրացնել բյուջեի մասերը
- ապահովել հասարակության անվտանգությունը՝ հետևելով տնտեսության և ճիշտ կառավարման սկզբունքներին
- սահմանել հստակ կանոնակարգումներ, ներառյալ աուդիտը, «Բյուջեի մասին օրենքում» և պետական այլ օրենքներում ու կանոնակարգերում
- սահմանել պատասխանատվություններ բյուջետավորման և պաշտպանական ռեսուրսների կառավարման ընդհանուր գործընթացի մեջ
- ապահովել հասարակությանը, խորհրդարանին, ազգային նախարարներին և միջազգային գործընկերներին թափանցիկ, լուրջ, հավաստի բյուջեով
- ստեղծել վստահության մակարդակ և բարելավել գործընկերական համագործակցություն
- կրթել, ուսուցանել և շահագրգռել ֆինանսական կառավարման անձնակազմին՝ սահմանված պարտավորություններն ու առաքելություններն իրականացնելու ուղղությամբ:

Եթե ամփոփենք, կարող ենք ասել, որ անվտանգության բնագավառում առկա է գործողությունների իրականացման անբավարար թափանցիկություն և հաշվետվողականության դեֆիցիտ:

Պահանջվելու է այս իրավիճակի շտկման ջանքեր և միևնույն ժամանակ տեղեկատվության ապահովման բարելավում: Այս առաջադրանքի ամենախելամիտ մոտեցումը ժողովրդավարական կառավարման հիմնարար սկզբունքների հիման վրա համապատասխան կարգավորումներ ձևավորելն է երկիր առ երկիր:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

2010-2011 թթ. ՀՀ պաշտպանության նախարարության հասցեագրված գրությունների, տեղեկատվության հարցումների, նամակների և նրանց պատասխանների վերաբերյալ տեղեկատվությունը

2010 թ. տվյալներ

| # | Մարմինը | Ուղարկման ամսաթիվը | Բովանդակությունը | Ստացման ամսաթիվը | Արդյունքը |
|---|---|--------------------|---|--------------------------|--|
| 1 | ՀՀ պաշտպանության նախարար Մելքան Օհանյանին | 13.01.2010 | Տեղեկատվություն 2009 թ-ի գարնանային և աշնանային զորակոչների վերաբերյալ, մասնավորապես քանի հոգի են ստացել տարկետում, ինչ հիմքով, քանիսն են դիմել այլընտրանքային ծառայության /ԱՕ/, քանիսի գործն է ուղարկվել դատախազություն և այլն | | Չի տրվել պատասխան |
| 2 | ՀՀ պաշտպանության նախարար Մելքան Օհանյանին | 07.04.2010 | Բաց նամակ 2009 թ-ի գարնանային եւ աշնանային զորակոչների վերաբերյալ, մասնավորապես քանի հոգի են ստացել տարկետում, ինչ հիմքով, քանիսն են դիմել ԱՕ, քանիսի գործն է ուղարկվել դատախազություն և այլն | 17.05.2010 | Տրվել է ըստ էության պատասխան |
| 3 | ՀՀ պաշտպանության նախարար Մելքան Օհանյանին | 10.02.2010 | Տեղեկատվություն 2009 թ. ծառայության ընթացքում մահացած զինծառայողների թվի և անձնակազմի տվյալների մասին | 20.02.2010 18.03.2011 | Չի տրամադրվել, համարվելով ծառայողական գաղտնիք: Ստացվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2011 թ. մարտի 16-ի որոշումը |
| 4 | ՀՀ պաշտպանության նախարար Մելքան Օհանյանին | 15.02.2010 | Բաց նամակ զինծառայող Գրիգոր Հակոբյանի ամոքողական խնդիրների վերաբերյալ | 23.02.2010 | Տրվել է ըստ էության պատասխան |
| 5 | ՀՀ պաշտպանության նախարար Մելքան Օհանյանին | 27.02.2010 | Տեղեկատվություն ՀՀ ՊՆ գաղտնի հրամանը և հրամանով գործողության մեջ դրված «ՀՀ ՊՆ գաղտնագրման ենթակա տեղեկատվությունների ընդլայնված գերատեսչական ցանկի մասին | 10.03.2010 | Չի տրամադրվել, համարվելով ծառայողական գաղտնիք |
| 6 | ՀՀ պաշտպանության նախարար Մելքան Օհանյանին | 15.03.2010 | Տեղեկատվություն ՀՀ ՁՈՒ սնունդ, հագուստ, վառելիք, գրենական պիտույքներ մատակարարող կազմակերպությունների մասին | 25.03.2010 | Չի տրամադրվել, համարվելով ծառայողական և առևտրային գաղտնիք |

| | | | | | |
|----|---|------------|---|------------|---|
| 7 | ՀՀ պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանին | 12.04.2010 | Տեղեկատվություն ՆԱՏՕ-Հայաստան գործընկերության շրջանակներում իրականացված գործողությունների մասին | 29.04.2010 | Պատասխան է ստացվել, որում ասվում է, որ ՀՀ գործող օրենսդրության մեջ ընդունվել են իրավական ակտեր և կատարվել են համապատասխան փոփոխություններ |
| 8 | ՀՀ պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանին | 17.07.2010 | Պահանջվել են ՊՆ կողմից նշված ՆԱՏՕ-Հայաստան ծրագրի շրջանակներում ՀՀ գործեր օրենսդրության մեջ կատարված համապատասխան փոփոխությունների ու լրացումների և ընդունված իրավական ակտերի պատճենները | 28.07.2010 | Տրամադրվել է իրավական ակտերի ցանկը |
| 9 | ՀՀ պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանին | 22.04.2010 | Տրամադրել ՀՀ պաշտպանության նախարարի 1996 թ-ի դեկտեմբերի 20-ի 586 հրամանի պատճենը: | 03.05.2010 | Տրամադրվել է տեղեկատվությունը |
| 10 | ՀՀ պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանին | 07.06.2010 | Տեղեկատվություն պայմանագրային և ոչ պայմանագրային զինծառայողների աշխատավարձերի մասին ըստ կոչումների, պաշտոնի և գորատեսակների | 30.06.2010 | Տրվել է ըստ էության պատասխան |
| 11 | ՀՀ պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանին | 15.07.2010 | Տեղեկատվություն ըստ զինվորական կոչումների պայմանագրային և ոչ պայմանագրային ծառայության մեջ ընգրկված անձանց քանակի մասին | 28.07.2010 | Չի տրամադրվել՝ համարվելով պետական գաղտնիք |
| 12 | ՀՀ պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանին | 17.07.2010 | Հանրային իրազեկման հայեցակարգում նշված բաց տեղեկատվական բազայում ընդգրկված տեղեկությունների ցանկը և այդ ցանկի հաստատման վերաբերյալ իրավական ակտի պատճենը ստանալու հարցում | 27.07.2010 | Պատասխան է ստացվել, որում ասվում է, որ նման ցանկ գոյություն չունի |
| 13 | ՀՀ պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանին | 18.09.2010 | Տեղեկատվություն այն մասին, թե զինված ուժերի կազմի աշխատավարձի տարեկան պլանային և փաստացի ֆոնդի մասը ընդհանուր բյուջի որ մասն է կազմում և թե քանի մարդ է ընդգրկված ՀՀ ՁՈւ որպես պայմանագրային զինծառայող | 19.10.2010 | Չի տրամադրվել՝ համարվելով գաղտնի տեղեկատվություն |

| | | | | | |
|----|---|------------|---|------------|---|
| 14 | ՀՀ պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանին | 16.09.2010 | Գրություն՝ գորացրված Նարեկ Ափինյանի անձնագիրը վերադարձնելու հարցով | 10.07.2010 | Պատասխան է տրվել այն մասին, որ Նարեկին տրամադրել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու համար |
| 15 | ՀՀ պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանին | 11.10.2010 | Տեղեկատվություն արտերկիր մեկնած սպաների վերաբերյալ | | Տրվել է ըստ էության պատասխան |
| 16 | ՀՀ պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանին | 25.10.2010 | Տեղեկատվություն «Ժամանակ» օրաթերթում տպագրված թեժ լեռ հատվածի տարածքի սեփականաշնորհման մասին, մասնավորապես, թե ում է պատկանել և ներկայումս ում է պատկանում, ինչ իրավական նորմի հիման վրա և որքան գումարով է օտարվել նշված տարածքը | | Չի տրվել պատասխան |
| 17 | ՀՀ պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանին | 25.10.2010 | Տեղեկատվություն «Ժամանակ» օրաթերթում տպագրված Վանաձորի կորպուսի երկհարկանի շենքի սեփականաշնորհման, օտարման հիմքերի մասին | | Չի տրվել պատասխան |
| 18 | ՀՀ պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանին | 25.10.2010 | Տեղեկատվություն «Ժամանակ» օրաթերթում տպագրված Ջողազի ջրամբարի պոմպերի և խորովակների գործողության վերաբերյալ | 17.11.2010 | Հայտնել են, որ փաստի կապակցությամբ ՀՀ ՊՆ Բջջանի ԲՌ բաժնի կողմից նախապատրաստված նյութերի հիման վրա Լոռու մարզի կայագրի զինատախազության կողմից հարուցվել է քրեական գործ |
| 19 | ՀՀ պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանին | 11.03.2010 | Տեղեկատվություն գորակաչիկների հանրապետական բուժօգնություն անցնելու համար ճանապարհածախսը որոշող իրավական ակտի, ճանապարհածախսի չափի, չափանիշների, սննդի ծախսերի վերաբերյալ | 15.11.2010 | Առաջարկվել է դիմել ՀՀ ԱՆ, քանի որ ՊՆ-ն չի առնչվում նշված հարցերի հետ |

2011 թ. տվյալներ

| # | Մարմինը | Ուղարկման ամսաթիվը | Բովանդակությունը | Ստացման ամսաթիվը | Արդյունքը |
|---|---|--------------------|--|------------------|--|
| 1 | ՀՀ պաշտպանության նախարար Մելյան Օհանյանին | 17.01.2011 | Տեղեկատվություն զինծառայող Անդրանիկ Մարգարյանի համար համապատասխան բժշկական փորձաքննություն նշանակելու համար՝ պարզելու նրա զինծառայությանը պիտանի լինելը: | 02.03.2011 | Պատասխան է ստացվել այն մասին, որ Հավետ Մարգարյանը, ՀՀ ՊՆ 175-10 թ. 60-րդ հոդվածի 1-ին պունկտի որոշման համաձայն, պիտանի է շարային ծառայության: Ցուցվել է ԲԾ հսկողություն, գերծ պահել ցրտի երկարատև ազդեցությունից |
| 2 | ՀՀ պաշտպանության նախարար Մելյան Օհանյանին | 31.01.2011 | Տեղեկատվություն այն մասին, թե 2010 թ. ՀՀ զինված ուժերում ծառայություն իրականացնելիս քանի ժամկետային զինվորական ծառայող է մահացել | 17.02.2011 | Չի տրամադրվել՝ համարվելով ծառայողական գաղտնիք |
| 3 | ՀՀ պաշտպանության նախարար Մելյան Օհանյանին | 19.04.2011 | Տեղեկատվություն 2010 թ. գարնանային և աշնանային զորակոչի վերաբերյալ | 13.05.2011 | Պատասխան է ստացվել այն մասին, որ 2010 թ. ընթացքում գրանցվել է զինվորական ծառայության անցնելու հետ կապված 54 մահ, իսկ այն կետերը, որոնք վերաբերում են տարկետում ստացածների թվին և տարկետման հիմքերին, ինչպես նաև առողջական վիճակի պատճառով տարկետում ստացածների վերաբերյալ հարցերին, չի |

| | | | |
|--|-------------------|---|--|
| <p>Պատասխան է ստացվել այն մասին, որ տարկետում ստացել են ընտանեկան դրությամբ բերումով 336 հոգի, ուսումը շարունակելու համար 4821 հոգի, ճանաչվել են պիտանի և գորակոչվել են 661 հոգի, այլընտրանքային ծառայության անցնելու համար դիմողներ չեն եղել, իսկ այն կետերը, որոնք վերաբերել են տեղեկատվություն տարկետում ստացածների թվին, դատախազություն ուղարկված գորակոչիկների գործերի քանակին, առողջության հետևանքով տարկետում ստացածների թվին, պատասխան չի տրվել գաղտնիք լինելու հիմնավորմամբ</p> | <p>23.07.2011</p> | <p>Տեղեկատվություն 2011 թ-ի ապրիլի 19-ին ուղարկված գրությամբ փնտրվող տեղեկատվությունը ստանալու համար՝ 2010 թ. գարնանային և աշնանային գորակոչի վերաբերյալ</p> | <p>ՀՀ պաշտպանության նախարար Մելքան Օհանյանին</p> |
| <p>Չի տրվել պատասխան</p> | | <p>Դիմում՝ կրկնակի բժշկական փորձաքննություն նշանակելու խնդրանքով պարզելու համար գորակոչիկ Ա. Խառատյանի զինծառայության պիտանի լինելու հանգամանքը</p> | <p>ՀՀ պաշտպանության նախարար Մելքան Օհանյանին</p> |
| <p>Պատասխան է ստացվել այն մասին, որ համաձայն ծնողների 03.06.2011 թ. դիմումի, նա կրկնակի ներկայացվել է Կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստին և ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությունը</p> | <p>19.08.2011</p> | <p>Տեղեկատվություն 2011 թ. հունիսի 3-ին ներկայացված դիմումին պատասխան տրամադրելու մասին /Ա. Խառատյանի գործով/</p> | <p>ՀՀ պաշտպանության նախարար Մելքան Օհանյանին</p> |
| <p>Պատասխան է ստացվել այն մասին, որ Ա. Խառատյանին Կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստին կրկնակի ներկայացնելու վերաբերյալ գրությունը ուղարկվել է զինվորական կոմիսարին, իսկ որոշման պատճենը կարող է միայն տրամադրվել դիմողի համաձայնությամբ</p> | <p>22.09.2011</p> | <p>25.05.2011 թ. 298 գրությամբ ծնողներին տրամադրված /Ա. Խառատյանը չունի ծնողներ, գտնվում է սաստիկ խնամակալության տակ/ գրավոր պատասխանի պատճենը ստանալու համար հարցում</p> | <p>ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Հայրապետյանին</p> |

| | | | | | |
|----|--|------------|---|------------|--|
| 8 | ՀՀ պաշտպանության նախարար Մելքան Օհանյանին | 09.07.2011 | Դիմում՝ ազատամարտիկ Կարապետ Հովհաննիսյանի 2011 թ. հունիսի 4-ին տեղեկատվություն ստանալու հարցմանը պատասխանելու պահանջի մասին | 27.07.2011 | Հանձնաժողովը որոշել է մերժել Կ. Հովհաննիսյանի խնդրանքը և հերթացուցակներից հանել նրան, քանի որ կառավարության 09.06.2005 թ. թիվ 947-Ն որոշման պահանջների համաձայն՝ բնակարանային հաշվառման հերթագրման պահին Կ. Հովհաննիսյանը չի ունեցել տվյալ բնակավայրում վերջին 5 տարվա մշտական գրանցում |
| 9 | ՀՀ պաշտպանության նախարար Մելքան Օհանյանին | 28.07.2011 | Տեղեկատվություն զինճառայող Ռոբերտ Հովհաննիսյանի հիվանդությունների վերաբերյալ | 18.08.2011 | Պատասխան է ստացվել այն մասին, որ զորակոչվել է ներկայացել է կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստին, որտեղ վերջինիս որոշմամբ ճանաչվել է պիտանի շարային ծառայության համար: Կատարված հետազոտությունների արդյունքում նրա մոտ երիկամային հիվանդություններ չեն հայտնաբերվել, նաև զորակոչվելը այդ մասին գանգատներ չի հայտնել |
| 10 | ՀՀ պաշտպանության նախարար Մելքան Օհանյանին | 28.07.2011 | Գրություն՝ տրամադրելու բնակարանային հաշվառման հերթացուցակից հանձնաժողովի կողմից կայացված որոշման և նիստի արձանագրության պատճենները /Կարեն Հովհաննիսյանի գործով/ | 12.08.2011 | Պահանջված փաստաթղթերը տրամադրվել են |
| 11 | ՀՀ զինվորական դատախազ Գ. Կոստանյանին, պատճենը՝ ՀՀ պաշտպանության նախարար Մելքան Օհանյանին | 16.07.2011 | Տեղեկատվություն զինճառայող Ռոբերտ Հովհաննիսյանին զորամասում ծեծի ենթարկելու վերաբերյալ | 20.07.2011 | Ստացվել է գրություն ՀՀ դատախազության ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունից, որտեղ ասվում է, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գրությունը հասցեագրվել է Եղեգնաձորի կայազորի զլխավոր դատախազին |
| 12 | Եղեգնաձորի կայազորի ՌՌ պետ Ա. Բարսեղյանին | 02.09.2011 | Գրություն՝ տրամադրելու բաժնում նախապատրաստված նյութերի պատճենները | 13.09.2011 | Չի տրամադրվել՝ համարվելով ծառայողական գաղտնիք |

| | | | | | |
|----|---|------------|---|------------|--|
| 13 | Եղեգնաձորի կայագործի Ռ.Ո. Բաժնի պետ Ա. Ն. Բարսեղյանին | 02.09.2011 | Գրություն՝ տրամադրելու Եղեգնաձորի կայագործի Ռ.Ո. Բաժնում նախապատրաստված N0911068 նյութերի պատճենները | 15.09.2011 | Չի տրամադրվել այն հիմնավորմամբ, որ դրանք պարունակում են նախնական քննության նյութեր, ինչպես նաև պարունակում են ծառայողական գաղտնիք |
| 14 | ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին | 09.09.2011 | Տեղեկատվություն ծառայության ընթացքում 2010 թ-ին մահացած 54 ժամկետային և պայմանագրային զինծառայողների տվյալների վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ ՊՆ գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայված գերատեսչական ցանկը ստանալու համար | 20.09.2011 | Հայտնել են, որ տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություն, հարցումներ կպատասխանվի օրենքով սահմանված ժամկետում |
| 15 | Արարատի զինկոմ, գնդապետ Պ. Դավիթյանին | 10.10.2011 | Տեղեկատվություն այն մասին, թե ինչ հիմքով է Անդրանիկ Բալայանին տրամադրվել համապատասխան փաստաթղթեր անձնագրային բաժին ներկայացնելու համար | 17.10.2011 | Պատասխան է ստացվել այն մասին, որ հարցում է կատարվել Արարատի մարզի դատախազության նյութերի ընթացքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար և եթե նրա նկատմամբ հարուցված վինի քր. գործ, ապա նրա զինաշվառման հարցը պետք է լուծվի օրենքով |
| 16 | ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին | 11.10.2011 | Տեղեկատվություն զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգի մեջ կատարված փոփոխությունների վերաբերյալ | 21.11.2011 | Կազմակերպության կողմից ուղարկված Ե/2011-279 գրության ի պատասխան ներկայացվել է մի մասի պատասխանները, իսկ որոշակի հարցերի վերաբերյալ առաջարկվել է ներկայացնել ավելի մանրամասն տեղեկատվություն, որին ի պատասխան ուղարկվել է Ե/2011-09.12/330 գրությունը |
| 17 | ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին | 09.10.2011 | Հրագրան քաղաքի բնակչուհի Չվարթ Կիրակոսյանի դիմումը իր որդու՝ Մուրեն Կիրակոսյանի իրավունքների պաշտպանության համար | 30.10.2011 | Պատասխան է ստացվել այն մասին, որ Մուրենը անցել է բոլոր անհրաժեշտ ստուգումները, ճիշտ ակտորություն է ստացել և վարածառ գորարքելու հիմք չկա |

| | | | | | |
|----|---|------------|--|------------|--|
| 18 | ՀՀ պաշտպանության նախարար Մելրան Օհանյանին | 11.11.2011 | Զինձառայող Մանվել Դունամանյանի առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթերը ստանալու համար հարցում | 23.11.2011 | Պատասխան է ստացվել այն մասին, որ կազմակերպվել է Մ. Դունամանյանի մասնագիտացված բուժօգնումը և որ նա գտնվում է հետազոտման մեջ: Հայտնել են նաև, որ վերջնական արդյունքների մասին կազմակերպությունը կտեղեկացնեն լրացուցիչ: |
| 19 | ՀՀ պաշտպանության նախարար Մելրան Օհանյանին | 01.12.2011 | Տեղեկատվություն զինվորական դատախազի 07.11.2011 թ. թիվ 19/1319-11 միջնորդության պատճենը ստանալու և այն մասին, թե ինչ հիմքով է Նորայր Գալոյանը վերստին գորակոչվել ՀՀ զինված ուժեր | 16.12.2011 | Պատասխան է ստացվել այն մասին, նախկինում տրված ակտորոշումը ճիշտ է և որ Գալոյանը ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար: |
| 20 | ՀՀ պաշտպանության նախարար Մելրան Օհանյանին | 09.12.2011 | Տեղեկատվության հարցում զինապարտների բժշկական և զինձառայողների ռազմաբժշկական փորձաքննության մեջ կատարված փոփոխությունների վերաբերյալ, միաժամանակ «Հիվանդությունների, վնասվածքների և մահվան դեպքերի» միջազգային դասակարգման x վերանայման /1992 թ./ տարբերակի և գործառնակում գործող ոչ շարային ծառայության մշակված կարգի պատճենները ստանալու վերաբերյալ | | Չի տրվել պատասխան |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՌԱՋՈՆԹԱՑ
ՍՊՈ

«Քաղաքացիական նախաձեռնություն»
շաբաթաթերթ

CAGHAKATSIAKAN ARAJNTATS
LLC

"Civil Initiative" weekly

**ՀՀ պաշտպանության նախարար
Սերժ Սարգսյանին**

15.07.2006թ.

Հարգելի պարոն Սարգսյան

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին»
ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ո՞ր կազմակերպություններն են սնունդ մատակարարում ՀՀ պաշտպանության
նախարարությանը
2. Այդ կազմակերպությունները ի՞նչ տեսակի սննդով են ապահովում
Պաշտպանության նախարարությանը
3. Ի՞նչ պարբերականությամբ են հայտարարվում Պաշտպանության
նախարարությանը սննդով ապահովելու համար հայտարարված մրցույթները
4. Ովքե՞ր են այդ կազմակերպությունների հիմնադիրները /եթե հնարավոր է, խնդրում
եմ նշել նաև դրանց գրանցման հասցեները/:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել
մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական
մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալություն

Լրագրող

Նաիրա Բուլղադարյան



ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՄԱՍԼՈ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ПРЕСС СЕКРЕТАРЬ МИНИСТРА ОБОРОНЫ РА
PRESS SECRETARY OF MINISTER OF DEFENCE OF THE RA

ԵՐԵՎԱՆ 375088 Գ. ՉԱՈՒՇԻ 60 հեռ. ֆաքս՝ 28-26-30 քզջ. 091-42-67-18
ЕРЕВАН 375088 Г.ЧАУША 60 тел. факс: 28-26-30 моб. 091-42-67-18
YEREVAN 375088 G.CHAUSH 60 tel. fax: 28-26-30 mob. 091-42-67-18
Էլ. փոստ՝ modpress@mail.ru Զե. ուոչրա: modpress@mail.ru E-mail: modpress@mail.ru

«Քաղաքացիական առաջընթաց» ՍՊԸ
լրագրող Ն. Բուլղադարյանին


Ի պատասխան Ձեր 15.07.2006թ-ի գրության «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն Ձեզ է տրամադրվում ՀՀ պաշտպանության նախարարության 2006թ-ին սննդամթերքի ձեռք բերման մրցույթների արդյունքում սնունդ մատակարարող կազմակերպությունների և սննդամթերքի վերաբերյալ տեղեկատվություն.

Մրցույթներն իրականացվում են տարեկան մեկ անգամ:

Մատակարար կազմակերպությունների հիմնադիրների և դրանց գրանցման հասցեների մասին ՀՀ Պաշտպանության նախարարությունը տեղեկություններ չունենալու պատճառով տեղեկատվություն չի կարող տրամադրել: Նման տեղեկատվություն կարող է տրամադրել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը, պետական ռեգիստրի տարածքային բաժինները:

Մրցույթներին մասնակցում են կազմակերպությունների գործադիր տնօրենները կամ նրանց կողմից լիազորված անձիք: Կազմակերպությունների հիմնադիրների և դրանց գրանցման հասցեների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ չենք կարող տրամադրել: Կազմակերպությունների հիմնադիրների և դրանց գրանցման հասցեների վերաբերյալ տեղեկություններ կարող եք ձեռք բերել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից, պետական ռեգիստրի տարածքային բաժիններից:

ՀՀ ՊՆ ՄԱՍՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ,
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՄԱՍԼՈ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԳՆԴԱՊԵՏ



Ս.ՇԱՀՍՈՒՎԱՐՅԱՆ

26.07.2006թ.

| Հ/Հ | Մատակարար | Անվանատեսակներ |
|-----|---------------------------------|--|
| 1 | 2 | 3 |
| 1 | «Ունիվ. Ավան երկու» ՍՊԸ | մակարոն |
| 2 | «Ալրադաց» ՓԲԸ | ալյուր ցորենի 1-ին տեսակի քրինձ 1-ին կարգի |
| 3 | «Ավանգարդ» ՍՊԸ | ցորենաձավար 2-րդ համարի պանիր հալեցրած խտացրած կաթ շաքարով |
| 4 | «Կիկար» ՍՊԸ | հնդկաձավար 1-ին տեսակի ոլոր 1-ին տեսակի հղկված |
| 5 | «Սիսիանի սերմագտիչ» ՍՊԸ | հաճար սպիտակաձավար տաքդեղ տոմատի մածուկ խնձոր մանդարին թթխմոր |
| 6 | «Ունիվերսամ Ավան» ՍՊԸ | ծկան պահածո տոմատ. սոուսում թեյ 1-ին տեսակի կակաո դափնու տերև բնական սուրճ սելդ արագ պատրաստման կիսաֆ. |
| 7 | «Անաջիվ» ՍՊԸ | մսի պահածո մսաբուս. պահածո սալ /ձարայ/ |
| 8 | «ՎԱԲԱ» ՍՊԸ | օշարակ մատուրի |
| 9 | «Արարատ ֆարել» ՍՊԸ | ծուկ սառեցրած |
| 10 | «Կարգել» ՍՊԸ | ծեթ արևածաղկի |
| 11 | «Էդ ընդ Ջաք» ՍՊԸ | կարագ |
| 12 | «Ֆլիտֆուդ» ՍՊԸ | շաքարավազ |
| 13 | «Գենտորգ» ՍՊԸ | երշիկ |
| 14 | «Օլեոնա ինտերնեյշնլ» ՍՊԸ | ջեմ |
| 15 | «Առաջնեկ» ՍՊԸ | թթվասեր |
| 16 | «Հայկազունք» ՍՊԸ | քացախ |
| 18 | «Լուսակերտի ՏԹՖ» ՍՊԸ | Ձու հավի միս թռչնի |
| 19 | «Զոհիրաբյանի Տիգրան Մեծ» ՓԲԸ | կաթնաշոռ թթվասեր |
| 20 | «Մավա իմպուլս» ՍՊԸ | թխվածքաբլիթ կոնֆետ |
| 21 | «Սևանի ծուկկոմբինատ» ԲԲԸ | ծկան պահածո տոմատ. սոուսում |
| 22 | «Դերժավա Ս» ՍՊԸ | «Պեդիգրի» տեսակի շան կեր |
| 23 | «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ | «Էքստրա» տեսակի կերակրի աղ Քարաղ |
| 24 | «Էթկա» կազմակերպություն | «Բուսական յուղ» մարգարին |
| 25 | «Երևանի ալրադաց» ԲԲԸ | Ոսպ 2-րդ տեսակի |
| 26 | «Ուրարտու» ԱՄ մսի կոմբինատ ԲԲԸ | միս տավարի |
| 27 | «Աբրահամ և Նժդեհ» ՍՊԸ | միս տավարի |
| 28 | «Ա. Օհանջանյան» ՍՊԸ | միս տավարի |
| 29 | «Ստեփանակերտի մսի կոմբինատ» ԲԲԸ | միս տավարի |
| 30 | Ա.Զ. Ա.Դումիկյան | միս տավարի |
| 31 | Ֆիզ. անձ. Սիլվա Դալլաթյան | Սխտոր սովորական տեսակի |
| 32 | Ֆիզ. անձ. Կառլեն Ենոթյան | Սխտոր սովորական տեսակի |
| 33 | Ֆիզ. անձ. Ազատ Մխիթարյան | Վաղահաս Կարտոֆիլ |
| 34 | Ֆիզ. անձ. Արարատ Ստեփանյան | |
| 35 | Ֆիզ. անձ. Անդրանիկ Թևանյան | |
| 36 | Ֆիզ. անձ. Նորիկ Միրզախանյան | |
| 37 | Ֆիզ. անձ. Մխիթար Մելքոնյան | |
| | | Վաղահաս Կարտոֆիլ Վաղահաս Կաղամբ |

| | | |
|----|---------------------------------|------------------|
| 38 | Ֆիզ. անձ. Ջիվան Մադոյան | Վաղահաս Կարտոֆիլ |
| | | Գազար |
| 39 | Ֆիզ. անձ. Ասքանազ Հարությունյան | Վաղահաս Կաղամբ |
| | | Բազուկ |
| 40 | Ֆիզ. անձ. Արսեն Մնացական | Սոխ |
| | | Կաղամբ Վաղահաս |
| 41 | Ֆիզ. անձ. Նայիկ Հարությունյան | Վաղահաս Կարտոֆիլ |
| | | Սոխ |
| 42 | Ֆիզ. անձ. Վայենտին Մեխակյան | Վաղահաս Կաղամբ |
| 43 | Ֆիզ. անձ. Գոհար Բաբախանյան | |
| 45 | Ֆիզ. անձ. Մխիթար Մելքոնյան | ՈՒՀահաս Կարտոֆիլ |
| 46 | «Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ | |
| 47 | Ֆիզ. անձ. Նարեկ Հովհաննիսյան | |
| 48 | Ֆիզ. անձ. Կարապետյան Սեյրա | |
| 49 | Ֆիզ. անձ. Քերոբիկ Քերոբյան | |
| 50 | Ֆիզ. անձ. Բաղեյան Շալիկո | |
| 51 | Ֆիզ. անձ. Բայան Մխիթար | |
| 52 | Ֆիզ. անձ. Մխիթար Մելքոնյան | |
| 53 | Ֆիզ. անձ. Կարապետյան Սեյրան | |
| 54 | Ֆիզ. անձ. Նարեկ Հովհաննիսյան | |
| 55 | Ֆիզ. անձ. Մխիթար Մելքոնյան | Գազար |
| 56 | Ֆիզ. անձ. Մխիթար Մելքոնյան | Բազուկ |
| 57 | Ֆիզ. անձ. Բաղեյան Շալիկո | |



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՐԲԼԵԱ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ) (374 322) 4 22 68
E-mail: hcav@hcav.am

ՀՀ պաշտպանության նախարար
Սեյրան Օհանյանին

15 մարտի 2010 թ.

ՇՊ 2010 - 067

Հարգելի պարոն նախարար,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ո՞ր կազմակերպություններն են մատակարարում սնունդ, հագուստ, վառելիք և գրենական պիտույքներ ՀՀ պաշտպանության նախարարությանը
2. Այդ կազմակերպությունները ինչ տեսակի սննդով, հագուստով, վառելիքով ու գրենական պիտույքներով են ապահովում ՀՀ պաշտպանության նախարարությանը:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքներով՝

կազմակերպության նախագահ
Լուռու մարզի ՇՊԱԿ համակարգող

Ա. Սարունց

Ա. Սարունց



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԳԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

МИНИСТЕРСТВО ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՁՐՈՒՄՄԱՍ
Войсковая часть 10564

№ 364/92 (II)

25 03 2010 թ. թ.

ՀԵՆՐԻԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՇՊԱԿ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
Ա.ԱԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարին հասցեագրված Ձեր ս.թ մարտի 15-ի Ե/ 2010-067 գրության, հայտնում եմ, որ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1) ենթակետի պահանջների, տեղեկատվություն տնօրինող մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝ պարունակում է ծառայողական, ինչպես նաև առևտրային գաղտնիք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով սույն օրենքի դրույթների պահանջներով, տեղեկացնում եմ, որ Ձեր խնդրանքը բավարարել չենք կարող:

Հարգանքով՝

ՀՀ ՋՈՒ ԳՇ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՂԵԿԱՎԱՐ
գնդապետ  Ա.ԲՐՈՒՏՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան 0044, Բագրեվանդի փ. 5
Հեռ. (+37410)29-44-01
Ֆաքս. (+37410)29-43-12
«30» 06 2008թ.
570-1-366

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Ա.ՍԱԲՈՒՆՅԻՆ

Հարգելի պարոն Սաքունց

Համաձայն Ձեր 07.06.2010թ. Ե/2010-134 գրության, ստորև ներկայացնում եմ Ձեր հարցադրումների պատասխանները.

1. «Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածի, ՀՀ կառավարության 27.11.2000թ. N 778 որոշման 2-րդ ու 3-րդ կետերի և ՀՀ կառավարության 13.12.2007թ. N 1554-Ն որոշման համաձայն ՀՀ ՊՆ համակարգի զինձառայողներին հաշվարկվում են.

- ա) պաշտոնային դրույքաչափ, հետևյալ չափերով՝
կենտրոնական ապարատի պաշտոններ
- գլխավոր շտաբի պետի 1-ին տեղակալ - 116.451 դրամ
 - գլխավոր շտաբի պետի տեղակալ և նրան հավասարեցված պաշտոններ - 97.043 դրամ
 - վարչության պետ և նրան հավասարեցված պաշտոններ - 88.848 դրամ
 - բաժնի պետ և նրան հավասարեցված պաշտոններ - 73.537 դրամ
 - բաժանմունքի պետ և նրան հավասարեցված պաշտոններ - 62.539 դրամ
 - խմբի պետ, մասի պետ և նրանց հավասարեցված պաշտոններ - 58.872 դրամ
 - ավագ սպա - 56.932 դրամ
 - սպա - 54.991 դրամ
- զինվորական միավորումների և ստորաբաժանումների պաշտոններ
- բանակի հրամանատար - 116.451 դրամ
 - բանակային կորպուսի հրամանատար - 93.638 դրամ
 - դիվիզիայի հրամանատար - 88.848 դրամ
 - բրիգադի հրամանատար - 79.144 դրամ
 - գնդի հրամանատար - 73.537 դրամ
 - գումարտակի հրամանատար - 62.539 դրամ
 - վաշտի հրամանատար - 58.872 դրամ
 - դասակի հրամանատար - 57.579 դրամ
 - ջոկի հրամանատար - 51.109 դրամ

Հ

| | |
|--|---------------|
| - այլ կրտսեր խմբի հրամանատարական պաշտոններ | - 43.346 դրամ |
| պայմանագրային զինվորական ծառայության շարքային կազմ | |
| - ավագ | - 51.700 դրամ |
| - ավագ սերժանտ | - 49.500 դրամ |
| - սերժանտ | - 47.300 դրամ |
| - կրտսեր սերժանտ | - 42.900 դրամ |
| - եֆրեյտոր | - 40.700 դրամ |
| - շարքային | - 38.500 դրամ |
| պարտադիր ծառայության շարքային կազմի պաշտոններ | |
| - ավագ | - 2.810 դրամ |
| - ավագ սերժանտ | - 2.640 դրամ |
| - սերժանտ | - 2.340 դրամ |
| - կրտսեր սերժանտ | - 2.030 դրամ |
| - եֆրեյտոր | - 1.710 դրամ |
| - շարքային | - 1.560 դրամ |

բ) պայմանագրային զինծառայողների զինվորական կոչման դրույքաչափեր

| | |
|---------------------|---------------|
| - զեներալ-գնդապետ | - 11.200 դրամ |
| - զեներալ-լեյտենանտ | - 10.100 դրամ |
| - զեներալ-մայոր | - 9.320 դրամ |
| - գնդապետ | - 7.760 դրամ |
| - փոխգնդապետ | - 7.300 դրամ |
| - մայոր | - 6.670 դրամ |
| - կապիտան | - 6.200 դրամ |
| - ավագ լեյտենանտ | - 5.740 դրամ |
| - լեյտենանտ | - 4.980 դրամ |
| - կրտսեր լեյտենանտ | - 4.370 դրամ |
| - ավագ ենթասպա | - 3.580 դրամ |
| - ենթասպա | - 3.110 դրամ |
| - ավագ | - 2.810 դրամ |
| - ավագ սերժանտ | - 2.640 դրամ |
| - սերժանտ | - 2.340 դրամ |
| - կրտսեր սերժանտ | - 2.030 դրամ |

գ) զինվորական ծառայության ստաժի համար հավելումներ՝ ամսական պաշտոնային դրույքաչափի և զինվորական կոչման դրույքաչափի նկատմամբ հետևյալ տոկոսաչափերով՝

| | |
|-------------------|----------|
| 2 – 5 տարի | 5 տոկոս |
| 5 – 10 տարի | 10 տոկոս |
| 10 – 15 տարի | 15 տոկոս |
| 15 – 20 տարի | 20 տոկոս |
| 20 – 25 տարի | 25 տոկոս |
| 25 տարվանից ավելի | 30 տոկոս |

2. Բացի վերը նշվածներից, ՀՀ կառավարության 13.12.2007թ. N 1554-Ն որոշման 2.1 կետի համաձայն ՀՀ պետական բյուջեով նախատեսված աշխատավարձի ֆոնդի սահմաններում տնտեսված գումարների հաշվին զինծառայողներին վճարվում են նաև պարբերական բնույթ չկրող լրավճարներ և պարգևավճարներ, որի քանակական ցուցանիշների վերաբերյալ պաշտոնական հաշվետվության ձև սահմանված չէ:

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՂԵԿԱՎԱՐ

գնդապետ



Հ. ՍՈՒԽՍԻ-ՀՈՎԵՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2010 Թ. ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Կարևորելով զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրը, հաշվի առնելով, որ մահացության դեպքերի վերաբերյալ իրավապահ մարմինների կողմից հետևողական գործողություններ չեն կատարվում հարուցված քրեական գործերի շրջանակներում պատասխանատու անձանց բացահայտելու և նմանատիպ խախտումները կանխարգելելու ուղղությամբ, սույն տեղեկանքում ի մի են բերված, հատկապես 2010 թվականին զինված ուժերում մարդու իրավունքների խախտման փաստերը, կոռուպցիոն դրսևորումները և պետական մարմինների գործողությունները՝ նպատակ ունենալով ձևավորել հասարակական վերաբերմունք և պահանջ մարդու իրավունքների խախտումների կատարողների բացահայտման, պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Տեղեկանքում ամփոփված են տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներով, ինչպես նաև ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ձեռքբերված տեղեկատվությունը:

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2010 թ-ին բանակում տեղի է ունեցել զինծառայողների մահացության 44 դեպք (պաշտոնական տեղեկատվությամբ 54)⁸²՝ հրադադարի ռեժիմի խախտման, կանոնադրային հարաբերությունների խախտման, անվտանգության կանոնների խախտման, ինչպես նաև առողջական խնդիրների և դժբախտ պատահարների պատճառով:

Ա. Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահվան դեպքեր

2010 թ-ին հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացել է 9 զինծառայող, որոնցից մեկը Հայաստանի և Ադրբեջանի սահմանամերձ Տավուշի հատվածում, 8-ը՝ Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի բաժանարար գծում:

1. Հայ-ադրբեջանական սահմանի վրա՝ Տավուշի մարզի Չինարի գյուղի մերձակայքում գտնվող մարտական հենակետում, 2010 թվականի մարտի 1-ին գրանցված հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացել է 21127 զորամասի գնդացրային ջոկի հրամանատար, պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ **Սարգիս Ոսկանյանը**⁸²:
2. Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով 2010 թվականի հունիսի 16-ին զոհվել է **Անուշավան Կիրակոսյանը**⁸³:
3. Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի բաժանարար գծում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով միայն 2010 թվականի հունիս ամսին տեղի ունեցավ 5 զինծառայողի սպանության դեպք, որոնցից 4-ը հունիսի 18-ին ադրբեջանական հետախուզական

⁸² <http://www.Iragir.am/armsrc/country36098.html>
⁸³ <http://www.aravot.am/am/articles/rights/80219/view>

խմբավորման ներխուժման հետևանքով: Ադրբեջանից ԼՂՀ տարածք ներխուժեց ադրբեջանական զինված հետախուզական խմբավորում⁸⁴: Սպանվեցին կրտսեր սերժանտ **Մնացական Գասպարյանը, շարքայիններ՝ Արայիկ Բարսեղյանը, Էդվարդ Մանուկյանը և Պարույր Մելքոնյանը**⁸⁵:

4. 2010 թվականի սեպտեմբերի 17-ին Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի բաժանարար գծում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով սպանվել է ժամկետային զինծառայող, եֆրեյտոր **Անդրանիկ Սարգսյանը**⁸⁶:
5. 2010 թվականի հոկտեմբերի 14-ին ժամը 19:00-ի սահմաններում Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի բաժանարար գծում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով սպանվել է 1988 թ. ծնված **Վիտայի Իզիթյանը**⁸⁷:
6. 2010 թվականի հոկտեմբերի 26-ին ժամը 16:45-ի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի հատվածում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով զոհվել է շարքային զինծառայող **Յարուժ Գրիգորյանը**⁸⁸:

Բ. Անվտանգության կանոնների խախտման հետևանքով մահացության դեպքեր

1. 2010 թվականի հոկտեմբերի 2-ին Կապան քաղաքի մերձակայքում զինվորներ տեղափոխող բեռնատար մեքենայի շրջվելու հետևանքով մահացել է Յրազդան քաղաքի բնակիչ, ժամկետային զինծառայող **Յարուժյուն Բրտյանը**⁸⁹:
Վիրավորների կամ վնասվածքներ ստացած այլ զինծառայողների մասին տեղեկություն չի տարածվել:
2. 2010 թվականի հոկտեմբերի 12-ին Լեռնային Ղարաբաղում գիշերային զորավարժությունների ժամանակ մարտական տանկի շրջվելու հետևանքով մահացել է 1988թ. ծնված ժամկետային զինծառայող **Գևորգ Մանուկյանը** (դուրս էր ընկել տանկի դիտահորից և մահացել)⁹⁰:
3. 2010 թվականի հոկտեմբերի 23-ին Արզնիի վարժական կենտրոնում բարձրությունից ցատկելու վարժության ժամանակ զոհվել է Նուբարաշենի հատուկ նշանակության զորամասի մի սպա⁹¹:

Նշված դեպքերի պատճառների մասին որևէ լրացուցիչ տեղեկատվություն չի ներկայացվել լրատվական միջոցներին:

Գ. Ինքնասպանության դեպքեր

1. 2010 թվականի սեպտեմբերի 8-ին առավոտյան ժամը 9:30-ի սահմաններում Վայքի զորամասերից մեկում ինքնասպանություն է գործել Վայքի բնակիչ, իրային գույքի պահեստապետ, պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ **Արթուր Յակոբյանը**:

Պաշտոնական տեղեկատվություն

Արթուր Յակոբյանն ինքնասպան է եղել պահակազորի անդամներից մեկի զենքով: Նա

⁸⁴ <http://www.iragir.am/armsrc/country36040.html>

⁸⁵ <http://www.iragir.am/armsrc/country36098.html>

⁸⁶ <http://www.a1plus.am/am/official/2010/09/17/border>

⁸⁷ <http://www.hraparak.am/2010/10/15/hay-zinvore-mahacele-adrbejancu-gndakic/>

⁸⁸ <http://tert.am/am/news/2010/10/26/soldierkilling/>

⁸⁹ <http://www.zhamanak.com/news/12280/>

⁹⁰ <http://www.a1plus.am/am/politics/2010/10/14/senor-hasratyan>

⁹¹ <http://www.aravot.am/am/articles/regions/84804/view>

խնդրել է պահակազորի անդամին, որ օգնի ինչ-որ արկղ տեղափոխել: Վերջինս էլ համաձայնել է, գեները հենել է պատին, որ օգնի Արթուրին: Արթուրն էլ արագ վերցրել է գեներն ու միանգամից կրակ բացել իր վրա, ինչից հետո տեղում մահացել է:

ՀՀ պաշտպանության նախարարության 8-րդ կայազորային քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1 մասի (ինքնասպանության հասցնելը) հատկանիշներով⁹²:

Նշանակվել է համալիր դատաբժշկական, դատաբալիստիկական և դատահետքաբանական փորձաքննությունների անցկացում⁹³:

Ի դեպ, մոտ մեկ տարի առաջ այդ նույն զորամասում ծեծի արդյունքում մահացել էր նաև ժամկետային զինծառայող Արամ Մկրտչյանը: Օգոստոսի 28-ին, առավոտյան ժամը 6-ից 6.45-ն ընկած ժամանակահատվածում Վայքի զորամասի վաշտի հրամանատար Անդոկ Գասպարյանը դաժան ծեծի էր ենթարկել Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն գյուղի բնակիչ երեք ամսվա զինծառայող Արամ Մկրտչյանին, ինչի հետևանքով տղան տեղափոխվել էր պաշտպանության նախարարության կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ, որտեղ վիրահատվել էր, սակայն բժիշկներին չէր հաջողվել փրկել նրա կյանքը: Սեպտեմբերի 1-ին զինծառայողը մահացել էր:

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 8-րդ կայազորային քննչական բաժնում օգոստոսի 28-ին ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 2-րդ մասով (պաշտոնական դիրքի չարաշահում և իշխանազանցություն, որն առաջացրել է ծանր հետևանքներ) քրեական գործ էր հարուցվել Անդոկ Գալստյանի նկատմամբ: Հաջորդ օրը կապիտան Գալստյանը ձերբակալվել էր: Սպան խոստովանել էր մեղքը, բայց և խնդրել, որ ծեծված երիտասարդին ենթարկեն դատաբժշկական փորձաքննության և հաստատեն, որ 18-ամյա երիտասարդը մահացել է հատկապես իր հասցրած հարվածների հետևանքով⁹⁴:

Դ. Կանոնադրային հարաբերությունների խախտման հետևանքով մահացության դեպքեր

2010 թվականին բանակում գրանցվել է կանոնադրային հարաբերությունների խախտման հետևանքով մահացության 24 դեպք:

Չնայած որոշ դեպքերում, ըստ պաշտոնական վարկածի, մահացության դեպքերը վերագրում են հանկարծակի մահվան կամ ինքնասպանության, սակայն բազմաթիվ ոչ պաշտոնական տվյալներ վկայում են, որ այդ մահացության դեպքերը տեղի են ունեցել ներքին կանոնակարգի խախտման պատճառով:

- 1. 2010 թվականի փետրվարի 1-ին Կուբաթլուում մահացել է Մարմարաշեն գյուղի բնակիչ, 1989 թ. ծնված ժամկետային զինծառայող **Անդրանիկ Սարգսյանը**:

Պաշտոնական տեղեկատվություն

Զինվորի մահվան հանգամանքների մասին սկզբում տարբեր ենթադրություններ են ներկայացվել: Առաջին՝ հարազատներին հայտնել են, որ Ա. Սարգսյանը մահացել է թունավորումից, երկրորդ՝ հայտնել են, որ մահվան պատճառ է հանդիսացել ստամոքսի խոցը, երրորդ՝ ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի

⁹² <http://www.hraparak.am/2010/09/09/hertakan-ionqnaspanutyune-banakum>
⁹³ «Առավոտ» օրաթերթ, 10.09.2010
⁹⁴ <http://zhamanak.com/article/15977/>

վարչությունը հայտնել է, որ Ա. Սարգսյանի մահվան պատճառը սրտամկանի հանկարծակի առաջացած հիվանդությունն է, որը հաստատվել է դիախերձման ժամանակ սրտամկանում հայտնաբերված օջախային փոփոխություններով:

Ա. Սարգսյանը 4 ամիս ծառայելուց հետո 2010 թվականի հունվարի 30-ին, ըստ գործի նյութերի, դիմել է զորամասի բուժմաս՝ բողոքելով որովայնի շրջանում անհանգստացնող ցավերից: Զորամասի բժիշկ Ա. Ավայանը նրա մոտ ախտորոշել է «աղեստամոքսային տրակտի ֆունկցիոնալ խանգարում» և նշանակել համապատասխան բուժում: Երկու օր բուժում ստանալուց հետո, Ա. Սարգսյանի առողջական վիճակը վատացել է և փետրվարի 1-ին, Ավայանը՝ տեսնելով, որ Անդրանիկը մահամերձ է, տեղափոխել է նրան Սիսիանի զինվորական հոսպիտալ, սակայն Ա. Սարգսյանը ճանապարհին մահացել է⁹⁵:

Դատաբժշկական եզրակացությամբ՝ Ա. Սարգսյանի մոտ արձանագրվել է. «գլխի աջից վերհոնքային շրջանի և ճակատային շրջանի քերծվածքներ, կրծքավանդակի շրջանի և աջից գոտկային շրջանի քերծվածքներ, աջից և ձախից հետույքային շրջանների քերծվածքներ, որոնք պատճառվել են կենդանության օրոք բուժ առարկաներով, մահվանից կարճ ժամանակ առաջ»:

Գործով զբաղվող քննիչ խալաթյանը չի պարզել, թե որոնք են Ա. Սարգսյանի մոտ նշված վնասվածքների պատճառները: Նա փորձել է «սպացուցել», թե իբր վնասվածքներն առաջացել են Սարգսյանին «ՌԲԱԶ» մակնիշի ավտոմեքենայով հոսպիտալ տեղափոխելու ճանապարհին:

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Հարազատները պնդում են, որ քննիչը հաշվի չի առել, որ Անդրանիկի հագին եղել է «բուշլատ» և ձմեռային զինվորական տաբատ, որոնք անհետացել են և չեն ուղարկվել փորձաքննության: Դրա փոխարեն քննիչը համոզել է դատաբժիշկ Բիշարյանին ցուցմունք տալ, և վերջինս հնարավորինս կոծկել է վնասվածքների դրվագը՝ կտրվածքները քերծվածք ներկայացնելով: Ըստ նույն եզրակացության՝ Ա. Սարգսյանը մահացել է «աթերոսկլերոզ» հիվանդությունից: Այսինքն, հակասություններ կան նաև փորձագիտական եզրակացություններում:

Առողջապահության նախարարության հանրապետական դատաբժշկական գիտագործնական կենտրոնի աշխատակից Բիշարյանը դատաբժշկական եզրակացության մեջ նշել է նաև, որ Անդրանիկի մոտ հայտնաբերվել է որովայնի շրջանի ներքին արյունահոսություն, որի առաջացման պատճառների մասին, սակայն, դատաբժիշկ Բիշարյանը լռում է:

Քննիչ խալաթյանը նշում է նաև, որ նյութերի նախապատրաստման ընթացքում կատարված դատաբժշկական փորձաքննության արդյունքում հաստատված է Ա. Սարգսյանի մահվան պատճառը՝ սրտանոթային հիվանդություն, որն առաջացել է մոտ 5-6 ամիս առաջ:

Սակայն ծնողները նշում են, որ դա այն ժամանակահատվածն է, երբ Անդրանիկը զորակոչվել է բանակ, և, ըստ ծնողների, Ա. Սարգսյանը եղել է առողջ, այլապես նրան չէին զորակոչի:

9-րդ կայազորային քննչական բաժինը՝ հիմնվելով անցկացված դատաբժշկական փորձաքննության արդյունքների վրա, ըստ որի, զինծառայողը փետրվարի 1-ին մահացել է սրտանոթային հիվանդությունից, մահվան փաստի առիթով քրեական գործ չի հարուցել՝ հանցակազմի բացակայության պատճառով:

Ըստ Անդրանիկի հոր տվյալների՝ Ա. Սարգսյանի հետ նույն զորամասում ծառայում էր նաև եղբայրը, որն ասել էր, որ հունվարի 30-ին կրոս վագելուց հետո եղբայրն անհետացել է և մոտ 1 ժամ նա չի կարողացել գտնել նրան: Հետո ծառայող զինվորներից մեկը հայտնել է, որ

⁹⁵ <http://www.armtown.com/news/am/zam/20100923/16080>

Անդրանիկը վատ է իրեն զգում, բայց բժիշկը ոչ մի օգնություն ցույց չի տալիս՝ պահանջելով նախ բերել վաշտի գրքույկը:

Եղբոր հավաստմամբ՝ Անդրանիկը 2 օր պառկել է բուժմասում: 2 օր հետո եղբայրը տեսել է, որ Անդրանիկը գույնը լրիվ գցել է: Բժշկին կանչել են և հրամանատարի մեքենայով Անդրանիկին տեղափոխել Սիսիանի հոսպիտալ, սակայն ճանապարհին Անդրանիկը մահացել է:

Բոլոր վերոնշյալ հանգամանքները՝ հիվանդին ժամանակին բուժօգնություն չցուցաբերելը, մարմնական վնասվածքները թաքցնելը, ծեծողին չհայտնաբերելը, հիմք են տալիս հարագատներին եզրակացնելու, որ տեղի է ունեցել սպանություն:

Հարագատները մեղադրում են զորամասի հրամանատար Կոմիտաս Դավթյանին և բուժօժանայության պետ Ավայանին, որոնք, սակայն, մինչ օրս շարունակում են ծառայել⁹⁶:

2. 2010 թվականի մարտի 14-ին Լեռնային Ղարաբաղի Հայկազուլի զորամասում մարզածոյից կախված վիճակում հայտնաբերվել է 3 ամսվա շարքային զինծառայող, Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղի բնակիչ **Վալերի Մուրադյանի** դին: Մարզածոյը, որից կախված է եղել Վ. Մուրադյանի դին, ուներ 149 սմ բարձրություն, իսկ Վ. Մուրադյանի հասակը եղել է 180 սմ:

Պաշտոնական տեղեկատվություն

Ըստ պաշտոնական վարկածի՝ զինծառայողը ինքնասպան է եղել:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ինքնասպանության հասցնելու մեղադրանքով:

Ըստ նախաքննության առաջ քաշած վարկածի՝ վեճի շարժառիթը «Nokia» հեռախոսի արժեքի վճարման մասին անհամաձայնություններն են եղել: Վ. Մուրադյանին 4 հոգի սպառնացել են նվաստացնել, վարկաբեկել, ընդհուպ սեռական բռնության ենթարկել, եթե մինչև նույն օրվա ժամը 24:00 2.000 դրամ չբերի: Քրեական գործով պարզվել է, որ այդ 4 հոգին մարտի 14-ին, ժամը 24:00-ին գնացել են տեսնելու Մուրադյանին և գտել են նրան կախված վիճակում:

Ըստ ՀՀ զինվորական դատախազ Գ. Կոստանյանի՝ Մուրադյանի գործով կալանավորվել է նույն զորամասի զինծառայողներից մեկը՝ Արմեն Գրիգորյանը (**դեպքից մեկ տարի անց**): Նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին մասով՝ Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով⁹⁷:

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Հարագատները մերժում են պաշտոնական վարկածը և գտնում, որ իրենց որդուն սպանել են, քանի որ որդու մարմնի վրա առկա են եղել բռնության հետքեր, որը չի արձանագրվել դատաբժշկական եզրակացության մեջ:

Ծնողների պնդմամբ՝ Մուրադյանի մարմնի վրա տարբեր մասերում կապտուկներ են եղել, թևերի տակ, թևերի և վզի վրա մատնահետքեր են եղել, քիթն էլ ճգմված է եղել: Ծնողները հակված են մտածելու, որ իրենց որդուն խեղդել են, քանի որ վզի վրա պարանի հետքեր են հայտնաբերել:

Տուժողի իրավահաջորդի շահերը ներկայացնող փաստաբան Սեդա Սաֆարյանը մի քանի ամիս առաջ միջնորդություն է ներկայացրել նախաքննական մարմնին՝ պահանջելով մե-

⁹⁶ <http://www.armtown.com/news/am/zam/20100923/16080/>

⁹⁷ <http://ragir.am/armsrc/right47836.html>

ղաղրանքներ առաջադրել քննությամբ հայտնի այն 4 անձանց նկատմամբ, ովքեր դեպքի օրը «ռազմորկայի» մեջ են եղել Վ. Մուրադյանի հետ, ինչպես նաև օրվա պատասխանատուներին: Այդ միջնորդությունը, սակայն, դեռևս քննության չի առնվել:

Սաֆարյանը մի շարք կարևոր հարցեր է բարձրացրել՝ պահանջելով հնարավորինս իրականացնել պահանջվող քննչական գործողություններ: Միջնորդության մեջ փաստաթուղթը հետևյալ հարցերին է անդրադարձնում. առաջինը՝ դեպքի կատարման ժամին զորանոցում արթուն են եղել հերթապահ սերժանտը և օրապահ զինվորը, որոնք կարող են կարևոր տեղեկություններ հաղորդել: Երկրորդը՝ գործի նյութերը հուշում են, որ հստակ դերաբաշխում է եղել 4 անձանց միջև, նրանք գործել են միասնական դիտավորությամբ: Երրորդը՝ դեպքի վայրում հայտնաբերվել է 49 սմ բարձրության աթոռ: Որպես կանոն, զորանոցում բոլոր աթոռները համարակալված են և դրված համապատասխան մահճակալի դիմաց: Ըստ գույքահարկի հնարավոր է պարզել, թե կոնկրետ որ զինծառայողին հատկացված աթոռն է գտնվել դեպքի վայրում, և հերթապահող օրապահը պարտավոր էր նկատել աթոռը դուրս տանող անձին ու դուրս տանելու կոնկրետ ժամանակը: Այսինքն, եթե պարզվի, որ այդ աթոռը չի պատկանում Վ. Մուրադյանին, ապա առաջ է գալիս այլ անձի կամ անձանց կողմից ծրագրած և իրականացրած սպանության վարկածը:

Դեպքի վայրում հայտնաբերվել է նաև 4 անձանցից մեկին պատկանող գոտին, և պետք է պարզել, թե ինչպես է այդ գոտին հայտնվել այդտեղ⁹⁸:

Այժմ գործը դատաքննության փուլում է:

3. 2010 թվականի ապրիլի 23-ին Երևանում գտնվող զորամասերից մեկում զենքի հետ վարվելու կանոնների խախտման հետևանքով մահացել է վանաձորցի երիտասարդ սպա **Տիգրան Ֆրանկյանը**:

Դեպքի վերաբերյալ հարուցվել է քրեական գործ անզգույշ սպանության հիմքով, և մեղադրանք է առաջադրվել Տ. Ֆրանկյանի հետ ծառայող մեկ այլ սպայի:

Դեպքի վերաբերյալ որևէ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել⁹⁹:

4. 2010 թվականի հունիսի 10-ին իրեն ամրակցված զենքով գլխին կրակելու միջոցով ինքնասպան է եղել Վրաստանի հետ սահմանը հսկող ստորաբաժանման զինվոր, ազգությամբ հույն, Լոռու մարզի Գուգարք գյուղի 19-ամյա բնակիչ **Վալերի Շոնովը**:

Պաշտոնական տեղեկատվություն

Վալերի Շոնովը զորակոչվել է բանակ Վանաձորի զինկոմիսարիատից 2008 թվականի նոյեմբերի 26-ին և ծառայության է նշանակվել ԶՅ Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի թիվ 5060 զորամասում՝ որպես հրաձիգ, շարքային զինվորական կոչումով:

Դեպքի առթիվ ԶՅ ՊՆ քննչական ծառայության 6-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ԶՅ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 3-րդ մասով՝ Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով, որն առաջացրել է ծանր հետևանքներ:

Դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Վալերի Շոնովի մահը վրա է հասել գլխուղեղի կենսականորեն կարևոր ֆունկցիաների սուր խանգարումից, որը հետևանք է ստացած գլխի հրազենային գնդակային միջանցիկ վնասվածքի:

⁹⁸ <http://www.Iragir.am/armsrc/country39353.html>; <http://Iragir.am/armsrc/right41601.html>

⁹⁹ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ստացված տեղեկություն

Ըստ պաշտոնական վարկածի՝ նույն գործարարի ժամկետային զինծառայող, շարքային Յայկ Մաղաքյանը, 2010 թվականի հունիսի 9-ին պարբերաբար՝ ժամը 17:30-ի, 18:00-ի, 19:30-ի և 24:00-ի սահմաններում, ստորացնելով Վալերի Շոնովին, մեղադրել է նրան իրենից 30.000 ՀՀ դրամ գողանալու մեջ: Շոնովը, լինելով հուզականորեն անկայուն, տպավորվող և պատվախնդիր, չի դիմացել Մաղաքյանի հալածանքներին, և 2010 թվականի հունիսի 10-ին ժամը 04:30-ի սահմաններում ծառայության մեջ գտնվելով սահմանապահ վերակարգում, իրեն ամրակցված ԱԿՍ-74ՈՒ տեսակի 439996 համարի ինքնաձիգով ինքնասպանություն է գործել:

Դեպքի օրը Շոնովը հերթապահություն է իրականացրել սերժանտ Գարիկ Ղարիբյանի հետ: Վալերի Շոնովը նախապես խնդրել է Ղարիբյանից բջջային հեռախոսը, որում թողել է 3 ձայնագրություն, որոնցից մեկն ուղղված է եղել ընտանիքին, որտեղ նշել է, որ այլևս չի դիմանում և արդեն հասել է վերջնաժամկետը:

2010 թվականի հունիսի 21-ին Յայկ Մաղաքյանին մեղադրանք է առաջադրվել և նույն օրը նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Յայկ Մաղաքյանը զորակոչվել է բանակ Ստեփանավանի զինկոմիսարիատից 2008 թվականի հունիսի 12-ին, ծառայել է ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի թիվ 5060 զորամասում:

Որպես տուժողի իրավահաջորդ հանդես է Վալերի Շոնովի հայրը՝ Ալեքսանդր Շոնովը¹⁰⁰:

2011 թ-ի հունիսի Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանը Յայկ Մաղաքյանին դատապարտել է 6 տարվա ազատազրկման¹⁰¹:

5. 2010 թվականի հունիսի 16-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի զորամասերից մեկում մահացել է երևանաբնակ 22-ամյա ժամկետային զինծառայող, սերժանտ **Արման Ավագյանը**:

Պաշտոնական տեղեկատվություն

Դեպքի հետ կապված ՀՀ պաշտպանության նախարարությունը որևէ հաղորդագրություն չի տարածել:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ: Իսկ գումարտակի իրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալ, մայոր Բ. Մելքումյանը և շտաբի պետ մայոր Ա. Գալստյանը զորացրվել են¹⁰²:

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Ոչ պաշտոնական տվյալների համաձայն՝ 13-ամյա ժամկետային զինծառայող Արման Ավագյանը դեպքի օրը գտնվել է դիրքերում: Հրամանատար Վահե Հովնիսյանը այցելել է և տեսել, որ Արմանը կանգնած է դիտակետից մի քանի մետր այն կողմ: Վիճաբանություն է սկսվել, և 25-ամյա հրամանատարը զենքի խզակոթով հարվածել է զինվորի գլխին, որի հետևանքով վերջինս վայր է ընկել, գլուխը խփել քարին և մահացել:

Դեպքի ժամանակի վերաբերյալ կան տարածայնություններ: Արման Ավագյանի հայրը՝ Արսեն Ավագյանը, նշում է, որ դեպքը եղել է ժամը 12-ին, այլ աղբյուրներ նշում են՝ ժամը 10-ը¹⁰³:

Մեկ այլ տեղեկատվության համաձայն՝ զորամասի իրամանատարի սպառազինության գծով տեղակալը՝ նկատելով, որ հերթապահը դիրքերում չէ, դիտողություն է անում դասակի հրամանատար Վահե Հովնիսյանին, վերջինս՝ ճշտելով, որ այդ դիրքում պետք է լինի Ա. Ավագյանը, մոտ է կանչում նրան, հարվածում, ինչից վերջինս գլխով հարվածում է երկաթբետոնե սալիկին և տեղում մահանում:

¹⁰⁰ ՀԶԱ Վանաձորի գրասենյակի ստացված տեղեկություն
¹⁰¹ www.hetq.am/arm/search/?q=Վալերի+Շոնով
¹⁰² <http://www.hrparak.am/2010/10/01/hayoc-banak-tuy-oxaknere-patjvelen/>
¹⁰³ <http://www.hrparak.am/2010/08/04/dardzyal-hramanatarn-e-hoshotel-zinvorin/>

6. 2010 թվականի հունիսի 16-ին նորակոչիկ **Երվանդ Սարգսյանի** դին հայտնաբերվել էր ջրատար խողովակի մեջ:
 Լեռնային Ղարաբաղի Պաշտպանական բանակի Այգեստանի (նախկինում Բալուջա) թիվ 37447 զորամասի զինծառայող, 2010 թվականի մայիսի 12-ին Արմավիրի զինկոմիսարիատից զորակոչված Երվանդ Սարգսյանը, ըստ դատաբժշկական փորձաքննության արդյունքների, մահացել է մեխանիկական շնչահեղձությունից՝ շնչառական ուղիների հեղուկով փակվելու, ջրահեղձման հետևանքով:

Պաշտոնական տեղեկատվություն

Ըստ պաշտոնական տվյալների՝ հուլիսի 16-ին ժամը 09:00-ի սահմաններում Երվանդ Սարգսյանը վաշտի մյուս նորակոչիկների հետ գնացել է զորամասի հարակից մարտավարական արգելքների հաղթահարման դաշտ: Պարապմունքներն ավարտելուց հետո, ժամը 10:00-ի սահմաններում մի խումբ նորակոչիկներ (6 հոգի) լողանալու նպատակով մտել են մոտակա գետի կողքին գտնվող ջրավազանը: Երվանդ Սարգսյանը, ջրի մակարդակը բարձրացնելու նպատակով, մեջքով փակել է ջրավազանում գտնվող ջրատար խողովակի բերանը, որի ընթացքում խողովակում առաջացած բարձր ճնշման հետևանքով կլանվել է ջրատար խողովակի մեջ և ջրասույզ եղել:

Փաստի առթիվ 2010 թվականի հունիսի 28-ին ՀՀ Պաշտպանության նախարարության քննչական ծառայության 1-ին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 2-րդ մասով (անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ, եթե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ):

2010 թվականի օգոստոսի 25-ին զորամասի վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Կարեն Առուշանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է ստորագրությունը չհեռանալու մասին:

Փաստի առթիվ նախաքննությունն ավարտվել է, և գործն ուղարկվել է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան¹⁰⁴:

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություն

Երվանդ Սարգսյանի հարազատները չեն հավատում պաշտոնական վարկածին: Երվանդ Սարգսյանի հայրը՝ Մանուկ Սարգսյանը, դեպքից հետո մեկնել է Լեռնային Ղարաբաղ, եղել է դեպքի վայրում, անձամբ է կատարել տարբեր դիտարկումներ և համոզված է, որ պաշտոնական վարկածը սխալ է:

Ըստ գործի նյութերի՝ Երվանդ Սարգսյանը մեջքով փակել է ջրավազանում գտնվող 500 մմ տրամագծով արագահոս ջրատար խողովակի բերանը, սակայն Երվանդի հայրը իր դիտարկումների ժամանակ չափել է այդ խողովակի բերանը, որն ունեցել է 700 մմ տրամագիծ:

Մանուկ Սարգսյանը եղել է նաև զորամասում, զրուցել է դեպքի վայրում ներկա գտնվող զինծառայողների հետ, որոնք, ըստ հոր, եղել են վախեցած, և ոչինչ չեն ասել, միայն նշել են հետևալը. «Սպաները ինչ ասում են, այդպես էլ եղել է»:

Հարազատները նշում են, որ, երբ Երվանդին հանել են խողովակից, նրա ոտքերին փաթաթված են եղել գոտիներ: Հարազատների այն հարցին, թե դրանք ինչպես են հայտնվել, զինվորները պատասխանել են, որ, երբ իրենք նկատել են, որ Երվանդին խողովակի ջուրը քաշում է, իրենք իրենց գոտիները հանել են, որպեսզի դուրս քաշեն Երվանդին, բայց չկարողանալով օգնել, նրանք բաց են թողել գոտիները, որոնք էլ փաթաթվել են նրա ոտքերին:

¹⁰⁴ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2010-11-27/article_3863/page.html

Հարազատները նշում են, որ Երվանդի մեջքի վրա, ականջի հետևի մասում եղել են քերծվածքներ, կապտուկներ, իսկ արմունկը եղել է ջարդված: Այնպիսի տպավորություն է, որ Երվանդին քարշ են տվել:

Հարազատների համար անհասկանալի է նաև այն, թե ինչու պետք է իրենց որդին առավոտյան ժամին մտներ լողավազան, եթե 2 օր առաջ եղել է հիվանդ և բուժում է ստացել գորամասի բուժմասում: Երվանդ Սարգսյանի հայրը նշում է նաև, որ երբ ինքը գտնվելիս է եղել այդ լողավազանում, այնտեղ առավոտյան ժամերին ջուրն այնքան սառն է լինում, որ մարդ չի կարող այդ ջրի մեջ մի քանի րոպեից ավել մնալ:

Տուժողի իրավահաջորդ ճանաչվել է Երվանդ Սարգսյանի հայրը՝ Մանուկ Սարգսյանը:

Քննիչը Մանուկ Սարգսյանին չի տրամադրել գործի նյութերը: Գումար չունենալու պատճառով հարազատները չեն կարողացել պաշտպան ներգրավել, պաշտպան ներգրավվել է Լեռնային Ղարաբաղից քննիչի միջնորդությամբ:

7. 31-ամյա պայմանագրային զինծառայող Լեյտենանտ **Արտակ Նազարյանի** դին հայտաբերվել է իր զինվորական ծառայության վայրում (ադրբեջանական սահմանի վրա) 2010 թ. հուլիսի 27-ին: Գործով ձերբակալվել են Նազարյանի հինգ ծառայակիցներ (2 սպա և 3 շարքաին զինծառայողներ), որոնց մեղադրանք է առաջադրվել ինքնասպանության հասցնելու մեղադրանքով, որը դարձավ լեյտենանտի մահվան պաշտոնական վարկածը: Մինչդեռ Նազարյանի հարազատները և նրանց ներկայացուցիչները վիճարկում են պաշտոնական վարկածը: Նրանք համոզված են, որ կատարվածը սպանություն է և մարդասպանները պատասխանատվության չեն ենթարկվել:

Պաշտպանության նախարարության քննչական ծառայության կողմից անցկացրած նախաքննությունը տևեց 12 ամիս: Այն վերահսկվում էր զինվորական դատախազության կողմից: Վերջինս դատարանում պաշտպանում է նախաքննությամբ առաջադրված մեղադրանքը: Նախաքննության ընթացքում Նազարյաններին հրաժարվում էին տրամադրել գործի նյութերի մեծ մասը, այսպիսով նրանց զրկելով իրենց դիրքորոշումն արտահատելու իրավունքից: Նույնիսկ երբ նախաքննությունն ավարտվել էր, և գործի նյութերը տրվել էին Նազարյաններին, անտեղից բացակայում էին դիախերձման և դեպքի վայրի զննության լուսանկարները: Նազարյանները դիմեցին բոլոր երեք դատական ատյաններին, բայց մերժվեցին: Այժմ նրանք վիճարկում են օրենքի համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը:

Գործի նյութերի համաձայն, Արտակ Նազարյանը սկզբում հայտնաբերվել էր մարտական հենակետի խրամատում, ապա ժայռաբեկորին հենված: Քննությունը չի բացահայտել, թե ինչպես է դա տեղի ունեցել: Արտակ Նազարյանը ստացել է 120 փամփուշտ, և իր մահից հետո բոլոր փամփուշտները տեղում են եղել: Դիակի մոտ հայտնաբերված պարկուճը անհետացել է փորձաքննության ուղարկելու ճանապարհին: Փոխարենը մեկ այլ պարկուճ է ենթարկվել փորձաքննության և հաստատվել է, որ այն արձակվել է Նազարյանի ինքնաձիգից: Քննիչը պատմել էր տուժողի ընտանիքին, որ ինքը զննել էր դեպքի վայրը, ստուգել էր ինքնաձիգը, հաշվել էր փամփուշտները և «փորձնական կրակոց» էր արձակել առանց ձեռնոցների: Նազարյանի ինքնաձիգի վրա չէր հայտնաբերվել ոչ մի մատնահետք՝ ո՛չ քննիչի, ո՛չ էլ Նազարյանի: Մարմինը քայքայվում և այտուցվում էր հուղարկավորությունից առաջ՝ մահից ընդամենը երեք օր հետո: Վկաներից մեկը դատարանում ցուցմունք է տվել, որ Նազարյանը սպանվել է պաշտոնական վարկածում նշված օրվա նախորդ օրը: Դատաբժշկական փորձաքննությունը բռնության ավելի քան 50 հետք է հայտնաբերել Նազարյանի մարմնի վրա:

Ըստ փորձագետի, դրանք հայտնվել էին 1) սպանությունից քիչ առաջ, 2) սպանությունից 6 ժամ առաջ; 3) սպանությունից 3-7 օր առաջ: Նախաքննական մարմինը չի քննել մահից 6 ժամ առաջ եւ անմիջապես առաջ տեղի ունեցած դեպքերը: Չնայած ընտանիքի ահազանգերին, որ Արտակն օրագիր ուներ, նրա տունը չի կապարակնքվել մինչև զննությունը, որը կատարվել է դեպքից 10 օր հետո միայն: Երկու օր անց քննիչն ընտանիքին տեղեկացրել էր, որ Նազարյանի նոթատետրը գտնվել էր. օրագրի գրառումներն ընդհատվել էին երկորդ էջում: Օրագրի մնացած մասը պոկված էր և չկար: Փոխարենը նոթատետրում «ինքնասպանության գրություն» կար, որը Արտակի ձեռագրից տարբերվում էր և պարունակում էր ուղղագրական սխալ, որն Արտակը երբեք չէր արել իր մուս գրառումներում: Չնայած դրան՝ պաշտոնական փորձաքննությունը որոշեց, որ դա Արտակի ձեռագիրն էր:

Գործը Տավուշի դատարան մտավ 2011 թ. սեպտեմբերին: Բազմաթիվ խնդրանքներից հետո նոյեմբերին այն տեղափոխվեց Երևան, քանի որ դատական գործընթացի մասնակիցների մեծ մասը բնակվում է Երևանում կամ հարակից շրջաններում: 2012 թ. հունվարի 18-ին դատավորը հանկարծակի որոշում կայացրեց դատը կրկին տեղափոխել Տավուշ: Բացի մեղադրողից՝ բոլոր կողմերը հայտարարեցին, որ հրաժարվում են գնալ Տավուշ: Հիմնականում մեղադրող կողմի դիրքորոշումը տարբեր հարցերի վերաբերյալ տարբերվում է մյուս կողմերի դիրքորոշումից՝ ներառալ տուժողի, և հիմնականում դատավորը որոշում է կայացնում մեղադրողի կարծիքի հիման վրա¹⁰⁵:

8. 2010 թվականի հուլիսի 28-ին Լեռնային Ղարաբաղի Մարտունի 2-րդ թիվ 56534 մարտական դիրքերում հրազենային կրակոցներից մահացել են միանգամից 6 հոգի:

Պաշտոնական տեղեկատվություն

Ըստ պաշտոնական վարկածի՝ մարտական հերթապահության կանոնների կոպիտ խախտման հետևանքով ծագած միջադեպի պատճառով զոհվել են ավագ լեյտենանտ **Վարդգես Թադևոսյանը** և ժամկետային զինծառայողներ **Գարեգին Հովսեփյանը, Անդրանիկ Սարգսյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Արտյոմ Մանասյանը, Կարո Այվազյանը**¹⁰⁶:

Նույն պաշտոնական վարկածի համաձայն՝ ժամկետային զինծառայող Կարո Այվազյանը հրազենով սպանել է լեյտենանտին ու սերժանտին, այնուհետև՝ դեպքի վայրին մոտեցած ևս 3 զինծառայողների ու վերջում ինքնասպան եղել¹⁰⁷:

Հարուցվել է քրեական գործ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով («երկու և ավելի անձանց սպանություն»): ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության փոխանցմամբ, գործի քննության շրջանակներում կատարվել են անհետաձգելի գործողություններ՝ դեպքի վայրի և դիակների զննություն, նշանակվել են 6 դիակների դատաբժշկական փորձաքննություններ, ինչպես նաև թվով 10 դատաձգաբանական, թվով 3 դատակենսաբանական փորձաքննություն, որպես վկաներ հարցաքննվել են մի խումբ պարտադիր ժամկետային զինծառայողներ, սպաներ:

Նախաքննությունն իրականացնում է ՀՀ պաշտպանության նախարարության քննչական վարչության պետի որոշմամբ ստեղծված քննչական խումբը¹⁰⁸:

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

¹⁰⁵ <http://www.hrparak.am/2011/08/25/artak-nazaryan-2/>

¹⁰⁶ <http://www.azatutyun.am/content/news/2114262.html>

¹⁰⁷ <http://www.azatutyun.am/content/article/2113838.html>

¹⁰⁸ <http://www.azatutyun.am/content/news/2119556.html>

Դեպքի հանգամանքների, դեպքի վայրում գտնվող մարդկանց թվի, դեպքի ժամանակի վերաբերյալ կան պաշտոնական վարկածից էապես տարբերվող տվյալներ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ներկայացուցիչը և «Ժամանակ» օրաթերթի թղթակիցը հանդիպել են զոհվածների հարազատների հետ դեպքի որոշ մանրամասնություններ ուսումնասիրելու նպատակով:

- Զոհված Արտյոմ (Արտեմ) Մանասյանի ծնողները դեպքի պահին գտնվել են Մոսկվայում: Որդու վիրավոր լինելու մասին լուրն իմացել են հուլիսի 27-ին 21:30-ի սահմաններում ծանոթներից մեկի միջոցով: Ա. Մանասերյանի մոր՝ Քնարիկ Մանասերյանի խոսքերով, ինքը որդու հետ վերջին անգամ խոսել է հուլիսի 27-ին, ժամը 15:00-ին: Արտյոմը նշել է, որ ինքը «պոստի» հերթափոխը հանձնել է և իջել ներքև հանգստանալու: Ծնողների տեղեկություններով՝ կրակոցների պահին Արտյոմը «բլինդաժից» դուրս՝ մերձակայքում նստած է եղել, կրակոցը դիպել է նրան, ինչից էլ նա գլխիվայր ընկել է գետնին¹⁰⁹:

Չնայած մեկ օր հետո Ա. Մանասյանի մայրը հեռախոսով հայտնեց, որ շփոթել է օրերը և որդու հետ խոսել է ոչ թե հուլիսի 27-ին, այլ 28-ին և դեպքի մասին իմացել է հուլիսի 28-ի ժամը 21:30-ի սահմաններում:

- Ըստ սպանված Գարեգին Հովսեփյանի հարազատների՝ Գարեգինի մարմնի վրա ակնհայտ բռնության հետքեր են եղել: Ծնողների փոխանցմամբ՝ ձեռքերի մատները կտրված են եղել, գլխի այն հատվածի վրա, որտեղով անցնում է քներակը, առկա էր մեծ այտուց, ծոծրակի վրա սուր գործիքից առաջացած խորը վերք կար: Հովսեփյանի դիակի դիախերձումը տևել է 5 ժամ, և հարազատներից ոչ մեկին թույլ չեն տվել ներկա գտնվել դիախերձմանը: Գ. Հովսեփյանի մայրը՝ Շողիկ Կիրակոսյանը չի հավատում պաշտոնական վարկածին, քանի որ, ըստ նրա, եթե զինծառայողների միջև բռնկվել է վեճ, Կարո Այվազյանը գնդակահարել է բոլորին, ապա ինչու պետք է կտրեր Գարեգինի մատները:

Հարազատների համար մեկ հանգամանք ևս մնում է անհասկանալի. Գարեգինը, խոսելով ծնողների հետ, հայտնել է, որ դիրքերում հերթապահություն են անում 8 հոգի՝ 1 սպա, 7 զինծառայող: Եթե դեպքի հետևանքով մահացել են 6 հոգի, ապա որտեղ էին այն 2 զինծառայողները, որոնք պետք է գտնվեին այդտեղ¹¹⁰:

- Մեկ այլ սպանվածի՝ դասակի հրամանատար Վարդգես Թադևոսյանի հարազատները հայտնում են, որ Վարդգեսը նախատեսվածից 5 օր շուտ՝ հուլիսի 23-ին է դիրքեր գնացել դասակի հետ միասին: Վարդգեսն իր պատասխանատվության տակ գտնվող դիրքերից մեկից իջել է գետնատնակ, որ գնա «պոստ», բայց հենց այդ ժամանակ, մոտավորապես 17:30-ին դեպքը պատահել է: Ծնողները վստահեցնում են, որ Վարդգեսը զինծառայողների, այդ թվում նաև Կարո Այվազյանի հետ ունեցել է լավ փոխհարաբերություններ:

Վարդգեսի դին Երևան են բերել ծածկոցով փաթաթված, հագին՝ շապիկ: Դիախերձմանը մասնակցած Վարդգեսի հորեղբոր որդին նշում է, որ Վարդգեսի մարմնի վրա եղել են հրազենային մոտ 20 կրակոցի հետքեր (հիշեցնենք, որ մահվան մասին տեղեկանքում նշված էր՝ «կրծքավանդակի, որովայնի, աջ վերին վերջույթի գնդակային միջանցիկ կույր բազմաթիվ վիրավորումներ»): Վարդգես Թադևոսյանի հարազատները նշում են, որ իրենք նախաքննական մարմնի ասածին չհավատալու հիմքեր չունեն¹¹¹:

- Սպանված Անդրանիկ Սարգսյանի հոր՝ Սարգիս Սարգսյանի խոսքերով, Մարտունի զորամասում ծառայող գնդապետ Գրիգորյանը և մեկ այլ փոխգնդապետ, որ ներկա են եղել որդու հոգեհանգստի արարողությանը, անընդհատ կրկնել են զումարտակի հրամանատարի տեղակալ Հովհաննես Դանիելյանի անունը՝ որպես միջադեպի հեղինակի:

¹⁰⁹ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2010-08-12/article_3726/page.html; <http://www.zhamanak.com/article/15713/>

¹¹⁰ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2010-08-05/article_3715/page.html; <http://www.armtimes.com/15348>

¹¹¹ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2010-08-28/article_3734/page.html; <http://www.zhamanak.com/article/15855/>

Գնդապետն ու փոխգնդապետն են Յ. Դանիելյանին ասել, որ դիրքերում հերթապահություն իրականացնող զինվորները քնած են, և Դանիելյանը սկսել է քնած զինվորների մասին հայհոյանքներ տեղալ՝ ասելով, որ կգնա դիրքեր և նրանց կարգի կհրավիրի:

Սարգիս Սարգսյանը ենթադրում է, որ հենց Յ. Դանիելյանն է սկսել դաժան ծեծի ենթարկել զինծառայողներին, քանի որ զորամասի զինվորներներից մեկը պատմել է, թե դեպքի օրը լսել է «Ինչ եք անում» բղավոց: Սարգիս Սարգսյանը նշում է, որ որդու գործով կյուբերի մեջ ինքը տեսել է աշխատանքից ազատվածների 4 հոգանոց ցանկ, որի մեջ կային նաև Յուզիանես Դանիելյանի և գնդի հրամանատար Ֆելիքս Բաղդասարյանի անունները¹¹²:

Անդրանիկ Սարգսյանի մոր՝ Սվետլանա Կարապետյանի խոսքերով, ինքը որդու հետ խոսել է դեպքի օրը՝ հուլիսի 28-ին ժամը 18:20-18:50-ի սահմաններում: Որդին ասել է, որ դիրքերում է, և որ ամեն ինչ նորմալ է: Հատկանշական է, որ հեռախոսազանգի ցուցակի մեջ այդ ժամանակահատվածի զանգը ֆիքսված չէ:

Սվետլանա Կարապետյանը նշում է նաև, որ ինքը հանդիպել է նույն զորամասի նախկին ժամկետային զինծառայողին, որն ասել է, որ լուրեր էին պատվում, որ «մտել են դիրքեր ու սպանել»:

Ծնողներն իմացել են նաև, որ դեպքի վայրում եղել է նաև Դավիթ անունով ժամկետային զինծառայողը, որը դեպքի պահին թաքնված է եղել մահճակալի տակ: Վերջինս դեռևս գտնվում է ծառայության մեջ: Անդրանիկի ծնողները սպասում են Դավիթի զորացրվելուն, որպեսզի կարողանան մանրամասներ իմանալ դեպքի մասին¹¹³:

- Կարո Այվազյանի մայրը դժգոհում է, որ քրեական գործից իրենց ոչ մի բան չեն ասում, և չեն ներգրավում իրենց կամ որպես տուժողի իրավահաջորդի կամ որևէ այլ կարգավիճակով:

Մայրը, պարբերաբար գրուցելով բանակում ծառայող որդու հետ, իմացել է, որ այնտեղ կատարվում են տարբեր անօրինական գործողություններ՝ փող են վերցնում զինծառայողներից, ճնշում են:

Մայրը բացառում է որդու կողմից սպանություն կատարելու վարկածը, քանի որ Կարոն ընկերներին պաշտպանելու համար կարող էր միջամտել, բայց ոչ զենքով, այլ բռունցքներով, և ինչու պիտի սպաներ ընկերներին:

Մի հանգամանք ևս. Կարո Այվազյանի մորեղբորը՝ Անուշավան Միքայելյանին, զորամասի պատասխանատուներից մեկը (ոչ պաշտոնական գրույցի ժամանակ) նախ ասել է, որ ակա-նատեսներից մեկը կենդանի է, այնուհետև զանգել է և հայտնել, որ մեկը գժվել է, իսկ երկուսը գտնվում են ահավոր վիճակում:

Հարազատները համոզված են, որ Կարոյի դատվածության հանգամանքը օգտագործելով՝ ուղղակի ուրիշի արածը Կարոյի գլխին են «սարքել», որովհետև սպանվածներից մեկի՝ Անդրանիկ Սարգսյանի կինը Կարոյի մասին միշտ լավն է լսել:

Կարո Այվազյանի մահվան ակտի տեղեկանքի մեջ նշված է. «Գլխուղեղի կենսական կարևոր ֆունկցիաների սուր խանգարում, զանգի հրազենային, գնդակային միջանցիկ վնասվածք, զանգի հիմի, թաղի բազմաբեկոր բաց կոտրվածքներ, գլխի մասնակի արտանկում, ջնջխում»:

Կ. Այվազյանի հարազատները տարակուսում են, որ Կարոյին սկզբից տարել են Հադրութ, հետո նոր բերել Երևան՝ մերկ վիճակում: Կ Այվազյանի դիակերծումը կատարվել է Երևանում, որին ներկա է եղել նրա քեռին: Վերջինս վկայում է, որ Կ. Այվազյանի դիակի վրա մեջքի ներքևի հատվածում մեծ կապտուկ է եղել՝ 10 սմ շառավղով, մուգից դեպի բաց գնացող երանգով, և ենթադրվում է, որ խզակոթի հարված կարող է լինել, սակայն դիակերծելիս ասել են, որ դիակային կապտուկ է, որը կարող էր առաջանալ տեղափոխելու ժամանակ: Մասնագետների

¹¹² <http://www.armtimes.com/15910>

¹¹³ ՀԲԱ Վանաձորի գրասենյակի ստացված տեղեկություն

պնդմամբ չի կարող այդ կարգի կապտուկ առաջանալ: Այսինքն, Կ. Այվազյանին կենդանության օրոք հարվածել են¹¹⁴:

- Ռոբերտ Յովհաննիսյանի մահվան վերաբերյալ քննիչները նշել են, որ նա զոհվել է այն պահին, երբ կրակոցների ձայնը լսելով, մոտեցել է դեպքի վայր:

Ռոբերտ Յովհաննիսյանը հանդիսացել է գումարտակի հրամանատարի տեղակալ Յովհաննիսյանի վարորդը: Յարազատները համոզված են, որ Յ. Դանիելյանը մեղսակից է որդու սպանության մեջ:

Յարազատների հետ հանդիպումների արդյունքում պարզ է դառնում, որ պաշտոնական վարկածը հիմնավոր չէ, քանի որ զոհվածների դիակների վրա, բացի հրազենային վնասվածքներից, առկա են բնությունների հետքեր: Երկրորդը, Գ. Յովսեփյանի ծնողներն իրենց որդու հետ չեն կարողացել խոսել հուլիսի 28-ի առավոտից սկսած, իսկ Անդրանիկ Սարգսյանի մայրը որդու հետ խոսել է հուլիսի 28-ի երեկոյան: Այսինքն, պաշտոնական վարկածը, որ զինծառայողները մի տեղ են գտնվել, կասկածի տակ է առնվում: Երրորդը՝ քննիչները նկարագրում են, որ Կ. Այվազյանը մի ամբողջ «մագազին» փամփուշտ է օգտագործել, հետո վերցրել է մյուսը, ապա ՌՊԿ-ով (ручной пулемет калашникова) ինքն իրեն սպանել է: Մինչդեռ ՌՊԿ-ն երկար փողունի, և նրանով ինքնասպանություն գործելու համար մարդը պետք է ունենա 190 սմ-ից ոչ պակաս հասակ, իսկ Կարոյի հասակը եղել է 165 սմ¹¹⁵:

Գործի քննության ժամանակ կատարված 6 դիակների դատաբժշկական փորձաքննությունների, ինչպես նաև թվով 10 դատաձգաբանական, թվով 3 դատակենսաբանական փորձաքննությունների արդյունքները հարազատներին չեն տրամադրել:

Նույնիսկ դեպքից 6 ամիս անց, մահացածների ծնողների համար պարզ չէ, թե ինչ է իրականում կատարվել այդ օրը: Այդ իսկ պատճառով ծնողները որոշել են հանդիպել դեպքի միակ վկա՝ արդեն զորացրված երիտասարդի հետ: Վերջինս պատմել է հետևյալը. դեպքի օրը՝ հուլիսի 28-ին, 2 սպա բարձրացել են հենակետ և տեսել, որ հերթապահություն իրականացնող 2 զինծառայողները՝ Անդրանիկ Սարգսյանը և Կարո Այվազյանը, քնած են: Արթնացրել են զինվորներին և իջեցրել բլինդաժ՝ հերթապահության մեջ գտնվող սպա՝ Վարդգես Թադևոսյանի մոտ: Վերջինիս հանձնարարել են, որպեսզի համապատասխան պատժամիջոց կիրառի զինվորների նկատմամբ:

Սպա Վարդգես Թադևոսյանը, դառնալով զինվորներին, հարցրել է, թե գիտեն, թե ինչ է սպասվում այն զինվորին, ով քնում է դիրքերում, զինվորները պատասխանել են, որ գիտեն: Վ. Թադևոսյանն էլ ավելացրել է. «Ռե եթե գիտեք, հենց հիմա հանեք շավվարներդ»: Այդ խոսքից վրդովվել են այնտեղ ներկա մյուս զինծառայողները և սկսվել է քաշքշուկ: Զինծառայող Ռոբերտ Յովհաննիսյանը վերցրել է ինքնաձիգը և բռնվել, որ սպան հեռու գնա իր զինակից ընկերներից: Սպան, տեսնելով դա, հարձակվել է Ռոբերտի վրա, իսկ մյուս զինծառայողները առաջ են եկել և փորձել են բաժանել Ռոբերտին և սպային: Այդ պահին Կարո Այվազյանը վերցրել է մեկ այլ ինքնաձիգ և կրակել սպայի ուղղությամբ: Այդ քաշքշուկի մեջ հրազենի գնդակները դիպել են նաև մյուս զինվորներին: Գիտակցելով տեղի ունեցածը՝ Կարո Այվազյանը ինքնասպան է եղել¹¹⁶:

Սակայն մի քանի օր հետո Անդրանիկ Սարգսյանի հայրը՝ Սարգիս Սարգսյանը, հերքել է բոլոր տեղեկությունները՝ նշելով, որ ինքը դրանք ասել է առանց ստուգման¹¹⁷:

9. Ներքին կանոնակարգի խախտման հետևանքով մահացության հաջորդ դեպքը տեղի է ունեցել 2010 թվականի օգոստոսի 17-ին: ՀՀ պաշտպանության նախարարության

¹¹⁴ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2010-08-09/article_3720/page.html; <http://www.zhamanak.com/article/15688/>
¹¹⁵ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2010-09-08/article_3752/page.html; <http://www.hrparak.am/2010/09/08/pn-iruty-an-qarasunqel/>
¹¹⁶ <http://www.armtimes.com/22367>
¹¹⁷ <http://www.armtown.com/news/am/arv/20110211/88524/>

զորամասի մարտական հենակետում պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ, 1984 թ. ծնված Հարություն Վարդանյանը հրազենային կրակոցով սպանել է Նույն զորամասի պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ, 1966թ. ծնված **Արսեն Չոբանյանին**:

Փաստի առթիվ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 6-րդ կայազորային քննչական բաժնում ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով /ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը/ հարուցվել է քրեական գործ և կատարվում է նախաքննություն: Քրեական գործով նշանակվել են համապատասխան փորձաքննություններ: 2010 թ. օգոստոսի 18-ին Հ. Վարդանյանին ձերբակալել են և առաջադրել են մեղադրանք ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով¹¹⁸:

10. ԼՂՀ 5-րդ պաշտպանական շրջանի 2-րդ հրաձգային գումարտակում գրանցվել է սպանության ևս մեկ դեպք: Առաջին դեպքը տեղի էր ունեցել 2010 թվականի հունիսի 16-ին, երբ հրամանատարի հարվածի հետևանքով սպանվել էր 22-ամյա ժամկետային զինծառայող **Արման Ավագյանը**¹¹⁹:

Նույն զորամասում 2010 թվականի սեպտեմբերի 20-ին զինվորական գետնատնակում մահացու վիրավորվել էր շարքային **Խոզբեկյանը**՝ շարքային Տիգրանյանի՝ «գեների հետ անզգույշ վարվելու արդյունքում»¹²⁰:

Վաղինակ Խոզբեկյանը (ազգանունը մի դեպքում նշված է Խոզբեկյան, մյուս դեպքում՝ Խոզբեկյան) սպանվել է 2010 թվականի սեպտեմբերի 20-ին, ժամը 07.50-ի սահմաններում համաձայն Վազգեն Տիգրանյանի կողմից: Նույն օրը ճաշարանում հացի փշրանքները հավաքելու շուրջ վիճաբանություն է առաջացել և Վաղինակ Խոզբեկյանից վրեժխնդիր լինելու նպատակով՝ Վազգեն Տիգրանյանը ճաշարանից վերցրել է Նույն դասակի հրամանատար Արամ Սարգսյանի ինքնաձիգը, կրակել Խոզբեկյանի վրա, և վերջինս կրծքավանդակի շրջանում ստացած ծանր մարմնական վնասվածքից տեղում մահացել է¹²¹:

Դեպքի նախաքննությունից պարզ է դարձել, որ սպանության մեջ մեղադրվող Վազգեն Տիգրանյանը 2010 թվականի հուլիս ամսից մինչև սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում, պարբերաբար ստորացրել է Վաղինակ Խոզբեկյանի պատիվն ու արժանապատվությունը՝ ենթարկելով նրան հալածանքի և հոգեբանական ճնշման: Հաջորդ տեղեկատվությունը այս մահվան դեպքի մասին տարածվել է 2012 թ-ին, համաձայն որի՝ տեղի է ունենում ժամկետային զինծառայող Վաղինակ Խոզբեկյանի սպանության գործով հերթական դատավարությունը Գորիսի ընդհանուր իրավասության դատարանում¹²²:

11. Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ 2010 թվականի սեպտեմբերի 25-ին ՀՀ պաշտպանության նախարարության հյուսիս-արևելյան սահմանագոտում տեղակայված զորամասերից մեկի մարտական հենակետում 19-ամյա ժամկետային զինծառայող Գրիգոր Հովհաննիսյանի կողմից գեների օգտագործման կանոնները խախտելու հետևանքով մահացու վիրավորվել է Նույն զորամասի ժամկետային զինծառայող, շարքային **Արթուր Մխիթարյանը**¹²³:

¹¹⁸ <http://www.tert.am/am/news/2010/08/24/army>

¹¹⁹ <http://www.hraparak.am/2010/10/01/hayoc-banak-tuyil-oxaknere-patjvelen/>

¹²⁰ <http://www.hraparak.am/2010/10/04/spanuty-an-erkrord-depge-nuyn-gumartakum/>

¹²¹ http://www.itekngo.com/2012/01/blog-post_31.html?spref=fb

¹²² http://www.itekngo.com/2012/01/blog-post_31.html?spref=fb

¹²³ <http://www.mil.am/arm/index.php?page=2&p=0&id=1551&y=2010&m=09&d=28>

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական վարչության տեղեկատվության համաձայն՝ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով, իսկ Գրիգոր Յովհաննիսյանը ձերբակալվել է:

Ըստ նույն գորամասի զինծառայողների՝ Ա. Մխիթարյանի և Գ. Յովհաննիսյանի միջև լարված կամ բարդ հարաբերություններ չեն նկատվել¹²⁴:

12. 2010 թվականի հոկտեմբերի 3-ին ժամը 19:00-ի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զորամասի զորանոցի նկուղում հայտնաբերվել է նույն գորամասի շարքային զինծառայող, Արտաշատի զինկոմիսարիատից զորակոչված, 18-ամյա **Սամվել Խաչատրյանի** դին՝ կախված վիճակում: Ս. Խաչատրյանը 2010 թվականի սեպտեմբերի 13-ից ստորաբաժանման կազմում մասնակցում էր ճամբարային հավաքների:

Պաշտոնական տեղեկատվություն

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 359 հոդվածի 3-րդ մասով՝ «զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն առաջացրել է ծանր հետևանքներ»: Գործի քննությունն իրականացվում է ՀՀ ՊՆ Գլխավոր շտաբի պետի տեղակալ Վալերի Գրիգորյանի գլխավորությամբ¹²⁵:

ՀՀ Քրեական օրենսգրքի 375 հոդվածի 2-րդ մասով (իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը, որն անզուգուցությամբ առաջացրել է ծանր հետևանքներ), 259 հոդվածի 1-ին մասով (զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն առաջացրել է ծանր հետևանքներ) և 360 հոդվածի 1-ին մասով (զինծառայողին վիրավորանք հասցնելը) նախատեսված արարքները կատարելու կասկածանքով ձերբակալվել են գորամասի մարտկոցի հրամանատարը, պարտադիր ժամկետային ծառայող երեք սերժանտ և 6 շարքային զինծառայողներ¹²⁶:

Ոստիմասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություն

Սամվել Խաչատրյանի հարազատները գտնում են, որ կատարվել է դաժան սպանություն:

Ս. Խաչատրյանը մահվանից մի քանի օր առաջ զանգահարել է ազգականին և ասել, որ դասերից մեկի ժամանակ հանկարծ քնել է և սպան, տեսնելով, որ Սամվելը քնած է, մոտեցել է, վիրավորել նրան և խփել:

Սամվել Խաչատրյանի մայրը ևս մեկ դեպք է հիշում. սեպտեմբերի 23-ին իրենց զանգահարում է Հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) պետը և ասում, որ Սամվելը չի ենթարկվում զորամասի «ներքին կանոններին»՝ աման չի լվանում, ավել չի անում, և 4-5 հոգով ստիպել են Սամվելին, որ դիմում գրի և ստորագրի, որ ինքը հրաժարվում է ծառայելուց: Այդ զանգից մի քանի ժամ հետո նորից զանգահարում է ՀՕՊ պետը և ասում, որ ամեն ինչ հարթվել է:

Իսկ միջադեպից 7 ժամ առաջ նորից զանգահարում են Սամվելի ազգականին և ասում, որ Սամվելը խնդիրներ ունի, և վերջինս պատմում է, որ լվացարանում մի քանի զինծառայողներ ծեծել են իրեն: Պա է պատճառը, որ Սամվելի դիակի զննության ժամանակ հայտնաբերվել են 15-ից ավելի տարբեր աստիճանների վերքեր, վնասվածքներ՝ մեջքի, ոտքերի, ձեռքերի, գլխի վրա: Գլխին հասցված հարվածներն առաջացրել են արյան գեղում: Պարանոցի վրա եղել են 2 կապտագույն գծեր, խեղդելու հարմարանքների՝ պարանների հետքեր, որոնք էլ հաստա-

¹²⁴ <http://www.armtimes.com/17369>
¹²⁵ <http://www.azatutyun.am/content/article/2175925.html>
¹²⁶ <http://www.Iragir.am/armsrc/country39576.html>; «Ժամանակ» օրաթերթ, 19.02.2011թ

տում են սպանության վարկածը¹²⁷:

13. 2010 թվականի հոկտեմբերի 23-ին Երևանի Էրեբունի ոստիկանության բաժինը ստացել է հաղորդում այն մասին, որ Գյումրի քաղաքում տեղակայված ՌԴ սահմանապահ վարչությունում գրանցվել է սպանության միանգամից երկու դեպք:

Ըստ տարածված հաղորդագրության՝ վարչության հանգստի սենյակներից մեկում հայտնաբերվել է նույն զորամասի պայմանագրային զինծառայողներ, ՌԴ քաղաքացիներ **Արմեն Զախարյանի** և **Արթուր Ենոքյանի** դիակները՝ կտրած-ծակած բազմաթիվ վնասվածքներով:

Քննությունը վարում է ՌԴ դատախազությանը կից քննչական կոմիտեի զինվորական քննչական բաժինը:

Նախնական որոշ տեղեկությունների համաձայն՝ սպանվածներից մեկը հարաբերություններ է ունեցել ամուսնացած կնոջ հետ, և հիմա քննիչները հենց այդ կնոջ ամուսնուն են կասկածում զինծառայողներին սպանելու հարցում¹²⁸:

Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ մահացածները ոչ թե ՌԴ, այլ ՀՀ քաղաքացիներ են, և որ նրանք սպանվել են ոչ թե հայտնաբերված վայրում, այլ վարչության շենքում: Կասկածելի է նաև այն հանգամանքը, որ ահազանգը ստացվել է Երևան քաղաքի Էրեբունի ոստիկանության բաժնում¹²⁹:

Նոյեմբերի 3-ին ՌԴ դատախազությանը կից հետաքննչական կոմիտեի ռազմական հետաքննության վարչության մամուլի ծառայությունը հայտնել է, որ զինծառայողների սպանության համար կասկածվող անձը ձերբակալվել է: Ձերբակալվող անձը ՀՀ քաղաքացի է¹³⁰:

14. 2010 թվականի նոյեմբերի լույս 18-ի գիշերը Գեղարքունիքի մարզի ճամբարակի զորամասում հրազենային վիրավորումից մահացել է Արմավիրի զինկոմիսարիատից զորակոչված, 23-ամյա ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ **Ռոբերտ Ավետիսյանը**: Ռոբերտ Ավետիսյանը Երևանի ագրարային համալսարանի շրջանավարտ էր, բանակ էր զորակոչվել 2009 թվականի աշնանը:

Պաշտոնական տեղեկատվություն

Ռոբերտ Ավետիսյանի մահվան վկայականում նշված է, որ նա ստացել է «կրծքավանդակի, որովայնի, պարանոցի, ձախ վերին ու ստորին վերջույթների համակցված հրազենային գնդակային միջանցիկ վնասվածքներ, ներքին արյունահոսություն, ներքին օրգանների վնասումներ»¹³¹:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը¹³²:

Ռոբերտ Ավետիսյանի մահվան գործով ձերբակալվել են երկու շարքային զինծառայողներ՝ Հմայակ Մարտիրոսյանը և Արտյոմ Պողոսյանը: Վերջիններիս նկատմամբ մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 367 հոդվածի («Պահակային կամ կայազորային ծառայության կանոնադրային կանոնները խախտելը») 2-րդ մասի հատկանիշներով՝ «պահակային կամ կայազորային ծառայության կանոնների նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունք, որն առաջացրել է ծանր հետևանքներ»¹³³:

¹²⁷ «Ժամանակ» օրաթերթ, 14 հոկտեմբերի 2010թ.

¹²⁸ <http://zhamanak.com/news/12525/>

¹²⁹ «Ժամանակ», 29.10.2010

¹³⁰ <http://tert.am/am/news/2010/11/03/armeniarussia/>

¹³¹ <http://www.iragir.am/armsrc/right41022.html>

¹³² <http://www.azatutyun.am/content/article/2224466.html>

¹³³ <http://www.iragir.am/armsrc/right41173.html>

2011 թվականի մայիսի 20-ին ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայությունը «Ազատություն» ռ/դ հայտնել է, որ Ռոբերտ Ավետիսյանի մահվան առիթով հարուցված քրեական գործն ուղարկվել է դատարան:

Գործով երկու մեղադրյալները՝ 19-ամյա շարքային զինծառայողներ Յմայակ Մարտիրոսյանը և Արտյոմ Պողոսյանը, ի սկզբանե ձերբակալվել էին պահակային կամ կայազորային ծառայության կանոնները խախտելու կասկածանքով: Այժմ նրանք մեղադրվում են նաև անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանության մեջ՝ Քրեական օրենսգրքի 108 հոդվածի հատկանիշներով:

2011 թվականի հունիսի 2-ին Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Ասատրյանի նախագահությամբ համաներման կիրառմամբ դատարանի դահլիճից ազատ է արձակել շարքային զինծառայողներ Արտյոմ Պողոսյանին և Սամվել Մարտիրոսյանին, ովքեր ավելի քան տասը կրակոց էին արձակել և տեղում սպանել Ռոբերտին¹³⁴:

Ոստմնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Ըստ նախնական տեղեկությունների՝ Ավետիսյանն արգելված գոտու առաջին գիծը հատելիս չի պատասխանել «պոստի» պահախմբի «ասա նշանաբառը» հրահանգին և շարժվել է դեպի երկրորդ «պոստի» ուղղությամբ: «Կանգնել» հրահանգին նույնպես չենթարկվելուց հետո հետևել են կրակոցները¹³⁵:

Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ Ռոբերտ Ավետիսյանը հիվանդացել է ջրծաղիկով և բուժում է ստացել զորամասի բուժմասում: Հարազատների կարծիքով՝ Ռոբերտը վերջին շրջանում գտնվել է հոգեբանական ծանր վիճակում: Ըստ նախնական տեղեկությունների՝ Ռոբերտին դուրս են կանչել զորամասից և կրակել նրա վրա: Արձակվել է առնվազն 5-6 գնդակ, ինչից նա տեղում մահացել է¹³⁶:

Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ Ռոբերտ Ավետիսյանի և զորամասի զինծառայողներից մեկի միջև մարտական հեռակետում վեճ է սկսվել, ինչի հետևանքով ժամկետային զինծառայողը կրակ է արձակել Ավետիսյանի վրա: Ըստ նախնական տվյալների՝ սպանողը զորակոչվել է 6 ամիս առաջ և շարքային զինծառայող է եղել¹³⁷:

Ոչ պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ դեպքից հետո զորամասը «փակվել է», այսինքն, արգելվել են բոլոր հեռախոսազանգերը, զորամաս ելումուտը: Պատճառը՝ ինֆորմացիայի արտահոսքի բացառումն է: Զորամասում բազմաթիվ քննիչներ են գտնվել, որոնք հարցաքննել են գրեթե բոլոր զինծառայողներին՝ պարզելու դեպքի հանգամանքները:

Սպանված զինծառայողի դին նույնօրվա 18-ին տեղափոխվել է Երևան՝ դիակերծում և նշանակված փորձաքննություններ իրականացնելու նպատակով¹³⁸:

Ռոբերտ Ավետիսյանի հայրը՝ Գուրգեն Ավետիսյանը, անընդունելի է համարում առաջադրված մեղադրանքը: Նրա կարծիքով իր որդուն մտադրված սպանել են:

«Ինչու պիտի Ռոբերտը, որը ջրծաղիկով հիվանդ էր և բուժում էր ստանում բուժմասում, բուժմասի համազգեստով, հողաթափերով բուժմասից գիշերը ժամը 1-ին դուրս գար, ինչ որդապատճառներ պետք է ունենար նա», - տարակուսում է հայրը¹³⁹:

Ռոբերտ Ավետիսյանի հարազատներն ու նրանց շահերի պաշտպան Արա Զաքարյանն օբյեկտիվ չեն համարում գործով անցկացված նախաքննությունը և պնդում են, որ ներկայացված մեղադրանքները իրականությանը չեն համապատասխանում:

«Այստեղ խոսքը գնում է դիտավորյալ սպանության մասին», - «Ազատություն» ռ/կ հետ

¹³⁴ <http://www.Iragir.am/armsrc/right48876.html>
¹³⁵ http://1in.am/arm/armenia_right_2521.html
¹³⁶ <http://www.Iragir.am/armsrc/right40992.html>
¹³⁷ <http://www.armtimes.com/19378>
¹³⁸ <http://www.armtimes.com/19378>
¹³⁹ <http://www.azatutyun.am/content/article/2230097.html>

գրույցում նշել է Արա Զաքարյանը՝ - «Մեր ամբողջ պայքարը գնալու է, որ դատարանում փոփոխվեն մեղադրանքները¹⁴⁰»:

15. 2010 թվականի նոյեմբերի 19-ին Լեռնային Ղարաբաղի Զաքարյանի զորամասի պահպանության տակ գտնվող առաջնային բնագծում տեղի է ունեցել միջադեպ: Միջադեպի հետևանքով հրազենային կրակահերթերից զոհվել են ժամկետային զինծառայողներ **Լևոն Եսայանը** (Տավուշի մարզ, քաղաք Բերդ), **Ներսես Գալոյանը** (Շիրակի մարզ, գյուղ Սպանդարյան), **Նարեկ Սահակյանը** (Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան), **Նվեր Սարգսյանը** (Լեռնային Ղարաբաղ): Հրազենային տարբեր աստիճանի վիրավորումներ են ստացել ժամկետային զինծառայողներ՝ Մանվել Հազրոյանը (Արմավիրի մարզ, Նալբանդյան գյուղ), Սարգիս Մելքումյանը (Արմավիրի մարզ, գյուղ Գետաշեն), Խաչիկ Ալեքսանյանը (Գեղարքունիքի մարզ, գյուղ Աստղածոր), Մասիս Գրիգորյանը (Լեռնային Ղարաբաղ, Մարտունու շրջան):

Պաշտոնական տեղեկատվություն

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայությունը դեպքի կապակցությամբ հարուցել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի հատկանիշներով:

Որպես դեպքի պատճառ նշում են ձայնասկավառակի նվագարկիչը «CD player», որի պատկանելիության շուրջ չեն կարողացել ընդհանուր հայտարարի գալ և վիճաբանությունը շարունակել են դիրքերում¹⁴¹:

Հրազենային տարբեր աստիճանի վիրավորումներ ստացած Խաչիկ Ալեքսանյանը, Մասիս Գրիգորյանը և Մանվել Հազրոյանը տեղափոխվել են Ստեփանակերտի զինվորական հոսպիտալ, իսկ Սարգիս Մելքումյանին տեղափոխել են Երևանի կենտրոնական զինվորական հոսպիտալ, որտեղ կատարել են երկու վիրահատություն: Նա ձախ ձեռքի բազմաբեկորային կոտրվածքից բացի հրազենային վնասվածք է ստացել կրծքավանդակի շրջանում, վնասվել է աջ թոքը: Հոսպիտալում կատարել են երկու վիրահատություն:

Խաչիկ Ալեքսանյանը, Մասիս Գրիգորյանը և Սարգիս Մելքումյանը քրեական գործով ճանաչվել են որպես տուժողներ և նրանց նկատմամբ զինվորական իրավապահների կողմից խիստ հսկողություն է սահմանվել, մասնավորապես, Երևանի Մուրացանի հոսպիտալում գտնվող Սարգիս Մելքոնյանին գիշեր ու ցերեկ հսկում են, և որևէ մեկն ազատորեն չի կարող մտնել նրա մոտ կամ տեսակցել նրան¹⁴²:

Մանվել Հազրոյանը ստացել է 4 հրազենային վնասվածք, որից 3-ը՝ որովայնի շրջանում, մեկը՝ գլխի: Դեպքից անմիջապես հետո նրան տեղափոխել են Ստեփանակերտի զինվորական հոսպիտալ:

Մանվել Հազրոյանին նոյեմբերի 23-ին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի առաջին կետով՝ երկու և ավելի անձանց սպանության համար, 34-104 հոդվածի 2-րդ մասի առաջին կետով՝ երկու և ավելի մարդկանց սպանության փորձի համար և 365 հոդվածի 1-ին մասով՝ մարտական ծառայությունը կրելու կանոնները խախտելու համար: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը¹⁴³:

Ըստ Պաշտպանության նախարարության քննչական ծառայության՝ Մանվել Հազրոյանը ընդունել է իր մեղքը:

Փաստաբանները միջնորդել են Մանվել Հազրոյանի նկատմամբ կիրառել պաշտպանության միջոց և նրան տեղափոխել Հայաստանի Հանրապետություն, ինչպես նաև նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու դեպքում տեղափոխել Հա-

¹⁴⁰ <http://www.azatutyun.am/content/article/24180823.html>

¹⁴¹ <http://www.hraparak.am/2010/11/23/krakele-mankuty-an-enkere/>

¹⁴² <http://www.lragir.am/armsrc/right41609.html>

¹⁴³ <http://www.azatutyun.am/content/article/2228980.html>

յաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ¹⁴⁴:

Պաշտպանների այս միջնորդությունը բավարարվել է և Մանվել Հագրոյանին դեկտեմբերի 11-ին տեղափոխել են Երևանի կայազորի զինվորական հոսպիտալ, որտեղ նա ստացել է բուժում¹⁴⁵:

2011 թվականի հունիսի 16-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում՝ նստավայրը Ստեփանակերտ, մեկնարկել է Մ. Հագրոյանի գործով դատավարությունը, որտեղ վերջինիս շահերը պաշտպանում էր փաստաբան Է Մարուքյանը, ով ստանձնել էր Հագրոյանի պաշտպանությունը դեռևս նախաքննության փուլում, երբ Հագրոյանն արդեն խոստովանական ցուցմունքներ էր տվել:

2011 թվականի օգոստոսի 3-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում դատավոր Յ. Դավթյանի կողմից հրապարակվել է Մ. Հագրոյանի նկատմամբ վճիռը, ըստ որի, 2010 թվականի նոյեմբերի 19-ին տեղի ունեցած չորս զինվորների սպանության և երեք զինվորների վիրավորելու գործով մեղադրվող զինծառայող Մանվել Հագրոյանը դատապարտվել է ցմահ ազատազրկման¹⁴⁶: Այնուհետև ներկայացվել է վերաքննիչ բողոք, սակայն ՀՀ Վերաքննիչ դատարանը ուժի մեջ է թողել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը:

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Մ. Հագրոյանի հայրը՝ Արմեն Հագրոյանը, նշում է, որ առողջական ծանր վիճակում գտնվող տղայի վրա հեշտ էր ճնշում գործադրելը: Նա հազիվ էր գիտակցության եկել, երբ վերակենդանացման բաժնից նրան տարան առանձին սենյակ՝ իրենց բերած փաստաբանի և 7-8 հոգի զինվորականների հետ, որոնք հսկում էին Մանվելին, որտեղ Մանվելը, իբր ընդունել է իր մեղքը:

«Մանվելն ի վիճակի չէր խոսել, նրա վիճակը բավականին ծանր է եղել: Երբ նարկոզից դուրս է եկել, ինձ մի քանի րոպե հետո նոր ճանաչել է», - նշում է հայրը:

Հոր համար անհասկանալի է նաև այն, թե ինչպես է իր որդին 7 հոգու գնդակահարել: Ըստ զինվորականների՝ միջադեպի ժամանակ կրակվել է 2 տարբեր գեներացիոն՝ ավտոմատից և գնդացիից: Այդ նույն զինվորականների վարկածի համաձայն՝ Մանվել Հագրոյանը 7 հոգու վրա կրակել է ավտոմատից, իսկ ինքն իրեն կրակել է գնդացիից: Վերջինս ամրագրված է եղել զինծառայող Մանվել Հագրոյանին:

Մանվել Հագրոյանի հարազատները համոզված են, որ Մանվելը չէր կարող գլխին հասցված վնասվածքներից հետո վնասվածքներ հասցնել նաև ինքն իրեն որովայնի շրջանում¹⁴⁷:

ՀԶԱ Վանաձորի գրասենյակը ներգրավել է փաստաբաններ Կարեն Թումանյանին և Էդմոն Մարուքյանին որպես Մանվել Հագրոյանի պաշտպաններ:

Փաստաբաններ Կարեն Թումանյանը և Էդմոն Մարուքյանը դեկտեմբերի 6-ին միջնորդություն են ներկայացրել Հաղորդի քննչական բաժնի՝ Մանվել Հագրոյանի նկատմամբ պաշտպանության միջոց կիրառելու վերաբերյալ:

Ե. Առողջական խնդիրների պատճառով մահվան դեպքեր

- 1. 2010 թվականի հունվարի 9-ին ԼՂՀ Մարտակերտի զորամասերից մեկում, զորակոչվելուց 14 օր հետո, մահացել է Հրազդան քաղաքի բնակիչ, 18-ամյա ժամկետային զինծառայող **Նարեկ Նիկողոսյանը**:

¹⁴⁴ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2010-12-07/article_3875/page.html
¹⁴⁵ <http://ragir.am/armsrc/right41835.html>
¹⁴⁶ <http://www.azatutyun.am/archive/news/20110803/2031/2031.html?id=24285648>
¹⁴⁷ <http://www.ragir.am/armsrc/right41125.html>

Պաշտոնական տեղեկատվություն

Ղատաբժշկական փորձաքննության համաձայն՝ կենդանության օրոք Ն. Նիկողոսյանը տառապել է սուր միելոբլաստային լեյկոզով՝ արյան քաղցկեղով, որն էլ հանդիսացել է նրա մահվան պատճառը:

Ըստ ղատաբժշկական 1-ին փորձագիտական եզրակացության՝ կենդանության օրոք Նարեկն ունեցել է հիվանդությանը բնորոշ նշաններ:

Իսկ ղատափորձագիտական 2-րդ եզրակացության մեջ նշված է եղել, որ Ն. Նիկողոսյանը չի տվել արյան ընդհանուր անալիզ, այդ պատճառով չեն կարողացել որոշել նրա լեյկոֆոբիան, և նա զորակոչվել է բանակ:

Գործի առնչությամբ որևէ մեկին մեղադրանք առաջադրված չէ, քրեական գործ հարուցված չէ¹⁴⁸:

Ոստամասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Ծնողների պնդմամբ, սակայն, Նարեկի մահվան հանգամանքերն ու պատճառները պարզ չեն:

Հարազատների խոսքերով դեպքի օրը՝ հունվարի 9-ին, Նարեկը խոսել է եղբոր հետ՝ ասելով, որ ամեն ինչ կործանվել է: Այդ զանգից 3 ժամ անց անծանոթը զանգահարել է Նարեկի եղբորը և հայտնել, որ Նարեկին տարել են հոսպիտալ, սակայն ծնողներին Հրազդանում հայտնել են, որ Նարեկը մահացել է:

Ծնողների կարծիքով Նարեկ Նիկողոսյանը ոչ մի հիվանդություն չի ունեցել և բանակ զորակոչվելիս եղել է լիովին առողջ:

Ինչ վերաբերում է արյան ընդհանուր անալիզներին, ապա Նարեկի մոր՝ Նարինե Նիկողոսյանի խոսքերով, Նարեկը Հրազդան քաղաքում հանձնել է արյան ընդհանուր անալիզ, 4 ակտով հետազոտվել է բժշկական հանձնաժողովի կողմից:

Եթե նշվում է, որ Նարեկը կենդանության օրոք ունեցել է հիվանդությանը բնորոշ նշաններ, ապա ինչպես են Նարեկին զորակոչել բանակ:

2. 2010 թվականի հունիսի 3-ին Նոյեմբերյանի հիվանդանոց է տեղափոխվել 1969թ. ծնված, Երևան քաղաքի բնակիչ, Նոյեմբերյանի Հաղթանակ գյուղում ժամանակավորապես բնակվող պայմանագրային զինծառայող **Ղերենիկ Մանուկյանի** դին: Նա մահացել է ինֆարկտից¹⁴⁹:
3. 2010 թվականի օգոստոսի 28-ին ժամկետային զինծառայող **Հակոբ Բաբուջյանին** տեղափոխել էին հոսպիտալ միզուղիների հետ խնդիրներ ունենալու պատճառով: Ըստ մամուլի հրապարակումների՝ Հ. Բաբուջյանը հոսպիտալում մահացել է ինֆարկտից¹⁵⁰:
4. 2010 թվականի դեկտեմբերի 24-ին Երևանի զինվորական հոսպիտալում մահացել է Հրազդանի Մաքրավան գյուղից բանակ զորակոչված **Արթուր Մաքսիմի Ղազարյանը**:

Պաշտոնական տեղեկատվություն

Արթուր Ղազարյանը ծառայության է անցել Լեռնային Ղարաբաղի Ասկերանի զորամասում, որտեղ ծառայել է ընդամենը 24 օր, որից հետո դեկտեմբերի 5-ին նրան տեղափոխել են Ստեփանակերտի, իսկ մեկ օր հետո Երևանի զինվորական հոսպիտալ, որտեղ նա 18 օր հետո մահացել է:

¹⁴⁸ http://tert.hrparak.am/hodvac.php?h_id=5073

¹⁴⁹ <http://www.tesankyun.am/society/216-41-ln-inse-lb-.html>

¹⁵⁰ <http://www.aravot.am/am/articles/politics/82687/view>

Ըստ պաշտոնական վարկածի Ա. Ղազարյանը մահացել է օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայից և երկկողմանի թոքաբորբից:

Մահվան փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ Արթուր Ղազարյանի մահվանից 6 ամիս հետո միայն ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 2-րդ մասով՝ «անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանք»:

2011 թ-ի դեկտեմբերին ՊՆ քննչական ծառայությունը ավարտել է անցած տարի Կոտայքի մարզի Մաքրավան գյուղից բանակ զորակոչված Արթուր Ղազարյանի մահվան գործով քննությունը՝ արձանագրելով, որ բուժումները կատարվել են «ճիշտ և ժամանակին»:

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Արթուր Ղազարյանի մայրը հիշում է, երբ այցելել է հոսպիտալ, տեսել է որդին անճանաչելիորեն փոխված է:

«Անտանելի պայմաններ էին, որդիս մեզի մեջ պառկած էր՝ մատնված բացարձակ անտարբերության: Պամպերսն այն աստիճանի լցված լինի, որ չկարողանամ վերցնել: Էրեխես ինչքան մնա մեզի մեջ, որ վրան զցած սրբիչն էլ թռչվի, վրայի ծածկոցն ու սպիտակեղենը, իսկ ինձ չէին թողնում խնամել որդուս: Որդիս կորցրել էր խոսելու ունակությունը, և իմ բոլոր հարցերին պատասխանում էր հայացքով կամ գլխի շարժումներով: Իսկ երբ հարցրեցի, թե տեղափոխենք քեզ այստեղից, գլխով պատասխանեց՝ այո», - հիշում է մայրը:

Տղայի մահվան նախորդ օրը բժիշկն ասել է, որ թոքերն արդեն մաքուր են, և վիճակը դեպի լավն է գնում: Ծնողները տուն են գնացել թեթևացած, սակայն առավոտյան նրանց զանգահարել են հոսպիտալից ու ասել, որ տղան իրեն վատ է զգում: Ծնողները եկել են հոսպիտալ և տեսել, որ Արթուրն արդեն մահացել է:

Արթուրի մահվանից հետո բժիշկները սկսել են ծնողներին հարցուփորձ անել, թե նախկինում ինչ հիվանդություններ է ունեցել տղան: Ծնողները պատասխանել են, որ Արթուրը երբեք ոչ մի հիվանդությամբ չի տառապել, միայն ունեցել է թևի կոտրվածք: Ի դեպ, ռազմական ուստիկանություն զարմացել են, թե ինչպես են թևի կոտրվածքով բանակ տարել Արթուրին: Իսկ զինվորական գրքույկում գրել են պիտանի ոչ շարային ծառայության համար:

Արթուր Ղազարյանի ծնողների բողոքի հիման վրա Նյուպեր են նախապատրաստվել, նշանակվել է հանձնաժողովային փորձաքննություն¹⁵¹:

- 5. 2011 թվականի հունիսի 16-ին լրատվական կայքէջերից մեկում հրապարակվել է Նյուպ դեռևս 2010 թվականին մահացած զինծառայողի մասին: Զինծառայողը **Արթուր Ղազարյանն** է, որը մահացել է հոսպիտալում 2010 թվականի դեկտեմբերի 17-ին: Դեպքի մասին այլ մանրամասներ չկան¹⁵²:

2. Դժբախտ պատահարների հետևանքով մահացության դեպքեր

- 1. 2010 թվականի հոկտեմբերի 12-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զորամասերից մեկի սպայի վրա հարձակվել է գայլը, երբ նա տուն գնալիս է եղել: Հարձակման արդյունքում սպան մահացել է¹⁵³:
- 2. 2010 թվականի նոյեմբերի 11-ին Մեղրի քաղաքի Ծիրանաձոր թաղամասի հարակից սարից ձորն է ընկել 1990թ. ծնված ժամկետային զինծառայող, Արագածոտնի մարզի Նոր Ամանոս գյուղի բնակիչ **Իշխան Սովսիսյանը**¹⁵⁴:

¹⁵¹ <http://www.iragir.am/armsrc/right49448.html>
¹⁵² <http://www.iragir.am/armsrc/right49448.html>
¹⁵³ <http://www.zhamanak.com/news/12398/>
¹⁵⁴ <http://iragir.am/armsrc/country40643.html>

ՏԵՂԵԿԱՆՔ

2011 Թ. ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՅԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2011 թվականին ՀՀ զինված ուժերում գրանցվել է մահացության 39 դեպք, որից 11-ը հրադարի ռեժիմի խախտման արդյունքում, 5-ը՝ կանոնադրային հարաբերությունների խախտման, 6-ը՝ դժբախտ պատահարի, 9-ը՝ ինքնասպանության, 3-ը՝ անվտանգության կանոնների խախտման արդյունքում, 2-ը՝ առողջական խնդրների պատճառով, մահացության մեկ դեպքի պատճառները հայտնի չեն, մեկ դեպք ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքի հետևանքով, իսկ մեկ դեպք որակվել է որպես դիտավորյալ սպանություն:

Ա. Հրադարի ռեժիմի խախտման հետևանքով մահվան դեպքեր

1. 2011 թվականի հունվարի 20-ին ժամը 18:00-ի սահմաններում Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի բաժանարար գծում հրադարի ռեժիմի խախտման հետևանքով սպանվել է Լեռնային Ղարաբաղի Պաշտպանական բանակի զինծառայող **Հովիկ Սուքիասյանը**¹⁵⁵:
2. 2011 թվականի մարտի 4-ին Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի շփման գծի հյուսիսարևելյան (Վերին Չայլու) ուղղությամբ հակառակորդի կողմից հրադարի ռեժիմի խախտման հետևանքով զոհվել է Լեռնային Ղարաբաղի Պաշտպանական բանակի ժամկետային զինծառայող, 1991թ. ծնված **Գրիգոր Ճախկյանը**¹⁵⁶:
3. 2011 թվականի մարտի 10-ին Լեռնային Ղարաբաղի Կուրոպատկինո գյուղի ուղղությամբ տեղակայված դիրքերից մեկում հակառակորդի կողմից հրադարի ռեժիմի խախտման հետևանքով սպանվել է Պաշտպանական բանակի ժամկետային զինծառայող, 19-ամյա **Արթուր Աղաբաբյանը**¹⁵⁷:
4. 2011 թվականի մարտի 17-ին Լեռնային Ղարաբաղի Ասկերանի ուղղությամբ տեղակայված դիրքերից մեկում հրադարի ռեժիմի խախտման հետևանքով հրազենային մահացու վիրավորում է ստացել Պաշտպանական բանակի ժամկետային զինծառայող, 19-ամյա **Ահարոն Հայրապետյանը**¹⁵⁸:
5. 2011 թվականի ապրիլի 28-ին Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի բաժանարար գծի Մարտունու ուղղությամբ տեղակայված դիրքերից մեկում հակառակորդի կողմից հրադարի ռեժիմի խախտման արդյունքում հրազենային մահացու վիրավորում է ստացել Պաշտպանական բանակի ժամկետային զինծառայող, 1992 թ. ծնված **Վազգեն Կառլենի Բախչյանը**¹⁵⁹:
- 6-7. 2011 թվականի ապրիլի 29-ին Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի բաժանարար

¹⁵⁵ <http://www.lragir.am/armsrc/country43154.html>

¹⁵⁶ <http://www.tert.am/am/news/2011/03/04/soldier/>

¹⁵⁷ http://www.1in.am/arm/armenia_society_12513.html

¹⁵⁸ <http://henaran.am/?p=2507>

¹⁵⁹ <http://www.tert.am/am/news/2011/04/28/soldier/>

- գծում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով սպանվել են Մարտունու շրջանի զինկոմիսարիտից զորակոչված, Լեռնային Ղարաբաղի Պաշտպանական բանակի **2 զինծառայող**: Մահացած զինծառայողների անունները հայտնի չեն¹⁶⁰:
8. 2011 թվականի մայիսի 11-ին Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի բաժանարար գծում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով տրակտորով աշխատելիս, հակառակորդի կողմից ժամը 18:05-ի սահմանում արձակված գնդակից գլխի շրջանում ստանալով հրազենային մահացու վիրավորում՝ Հադրութի քաղաքացիական հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին ժամը 19:20-ին մահացել է Հադրութի շրջանի Քյուրաթաղ գյուղի բնակիչ, 1978թ. ծնված **Արայիկ Բալասանյանը**¹⁶¹:
Ըստ քյուրաթաղցիների՝ նա պայմանագրային զինծառայող էր, իսկ ըստ որոշ լրատվամիջոցների և ՀՀ ԱԳՆ-ի՝ քաղաքացիական անձ էր¹⁶²:
 9. 2011 թվականի հոկտեմբերի 5-ին Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի բաժանարար գծում հակառակորդի կողմից արձակված կրակոցից զոհվել է Լեռնային Ղարաբաղի Պաշտպանական բանակի զինծառայող, 1987 թվականին ծնված **Յուրի Արամի Սարգսյանը**¹⁶³:
 10. Նոյեմբերի 19-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանային զորամասերից մեկում, առավոտյան ժամը 08:40-ին, զոհվել է 19-ամյա **Արեն Արմենի Սիմոնյանը**: ԼՂՀ պաշտպանության բանակի մամուլի ծառայությունից հայտնում են, որ ԼՂՀ Պաշտպանության բանակի հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում հերթապահություն իրականացնելու ժամանակ հակառակորդի դիպուկահարի կողմից արձակված կրակոցից զոհվել է ժամկետային զինծառայողը¹⁶⁴:
 11. Նոյեմբերի 20-ին՝ ժամը 08:50-ի սահմաններում հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում (Կուրոպատկինոյի ուղղություն) ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ հակառակորդի արձակված գնդակից կրծքավանդակի շրջանում ստանալով հրազենային մահացու վիրավորում, զոհվել է ՊԲ ժամկետային զինծառայող, 1992թ. ծնված **Միհրան Արմենի Սարգսյանը**¹⁶⁵:

Բ. Կանոնադրային հարաբերությունների խախտման հետևանքով մահվան դեպքեր

1. 2011 թվականի փետրվարի 6-ին Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Դաշկեստան /կամ Արա լեռ/ բնակավայրում գտնվող 25918 զինմասում արտակարգ միջադեպի հետևանքով մահացել է 1992 թ. ծնված, Վանաձոր քաղաքի զինկոմիսարիատից զորակոչված շարքային զինծառայող **Գևորգ Կոծիկյանը**:

Պաշտոնական տեղեկատվություն

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ «Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով,

¹⁶⁰ <http://www.azatutyun.am/content/article/16798576.html>
¹⁶¹ <http://henaran.am/?p=15394>
¹⁶² <http://www.armtimes.com/24998>
¹⁶³ <http://www.azatutyun.am/content/article/24351063.html>
¹⁶⁴ <http://www.lragir.am/armsrc/country56567.html>
¹⁶⁵ <http://www.mamul.am/am/news/4052/հակառակորդի-կրակոցից-մահացել-է-ժամկետային-զինծառայող-միհրան-մարգարյանը>

նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով...», որը կատարվել է 2) մի խումբ անձանց կողմից», ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 112 հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 14-րդ կետերով՝ «Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը...», որը կատարվել է 6) մի խումբ անձանց կամ, կազմակերպված խմբի կողմից, 14) անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահ»:

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայությունից 2011 թվականի փետրվարի 11-ին «Ազատություն» ռ/կ տեղեկացրել են, որ սույն գործով ձերբակալվել են շարքային զինծառայողներ Տարոն Սուվարյանը և Վահե Աղաջանյանը, որոնք կասկածվում են ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ «Չինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից», ինչպես նաև 112 հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 9-րդ և 14-րդ կետերով՝ «Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից խուլիգանական դրդումներով՝ անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահը»:

Սույն գործով ձերբակալվել է կրտսեր սերժանտ Մարգար Դավթյանը, ով կասկածվում է ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, նաև 38-359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ նշված հանցագործությանը օժանդակելը, 112 հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 9-րդ, 14-րդ կետերով, և 375 հոդվածի առաջին մասով՝ «Իշխանության չարաշահումը և իշխանության անգործությունը»:

Ձերբակալվել է նաև ավագ լեյտենանտ Արմեն Ռաֆայելյանը, ով կասկածվում է 375 հոդվածի առաջին մասով:

Նշանակվել է նաև Գևորգ Կոծինյանի դիակի դատաբժշկական, դատահոգեբուժական, դատաքիմիական, դատահետքաբանական, հողագիտական և դատաբժշկական փորձաքննություններ, հարցաքննվել են որպես վկա անցնող մի շարք անձինք¹⁶⁶:

ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանը, անդրադառնալով այս միջադեպին, նշել է, որ այն միջանձնային հարաբերությունների խախտման, վիճաբանության և այնուհետև ծեծկռտուքի արդյունքում է տեղի ունեցել, որը նաև ապացուցվել է դիախերձման արդյունքում: Նա նաև խոստացել է, որ քրեական գործի արդյունքում մեղավորները կպատժվեն¹⁶⁷:

2011 թվականի հուլիսի 27-ին Ստեփանակերտ քաղաքում տեղի է ունեցել Կոծինյանի գործով առաջին դատական նիստը, որին ներկա է եղել տուժողի իրավահաջորդ Բորիս Աղամյանը: Նիստը տևել է 2 օր, որի ընթացքում հարցաքննվել են ամբաստանյալները և մի քանի վկաներ:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում նոյեմբերի 14-ին կայացվել է վճիռ, որի համաձայն կրտսեր սերժանտ Մարգար Դավթյանը դատապարտվել է 11 տարի 6 ամիս, շարքայիններ Տարոն Սուվարյանը և Վահե Աղաջանյանը՝ 11 տարի, իսկ ավագ լեյտենանտ Արմեն Ռաֆայելյանը՝ 3 տարի ժամկետով ազատազրկման՝ Արմեն Ռաֆայելյանի նկատմամբ կիրառվել է համաներում և նա ազատվել է պատժի կրումից:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դեկտեմբերին վարույթ է ընդունել չորս համաձայնակիցների կողմից ծեծվելու հետևանքով մահացած զինծայայող Գևորգ Կոծինյանի գործը (նախագահող դատավոր՝ Սերգեյ Չիչոյան): Դեկտեմբերի 26-ին նշանակված նախնական դատական նիստը հետաձգվել է, նիստի նոր օր դեռ նշանակված չէ: Վերաքննիչ բողոք են բերել գործի երկու կողմերն էլ:

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ, փաստաբան Էդմոն Մարուքյանը վերաքննիչ բողոքում պահանջում է, որ դատարանը ճանաչի Գևորգ Կոծինյանի կյանքի իրավունքի խախտման փաստը:

¹⁶⁶ <http://www.azatutyun.am/content/article/2305818.html>

¹⁶⁷ <http://www.tert.am/am/news/2011/02/09/seyrano hanyan/>

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ներկայացուցիչը և «Ազատություն ո/կ» թղթակիցը 2011 թվականի փետրվարի 9-ին հանդիպել են Գևորգ Կոծինյանի հարազատների հետ դեպքի որոշ մանրամասնություններ պարզելու նպատակով:

Այսպես, Գևորգ Կոծինյանը ծառայության մեջ է գտնվել արդեն ինն ամիս, զորակոչվել է Վանաձորի զինկոմիսարիատի կողմից:

Գ. Կոծինյանի դին հարազատներին հանձնվել է փետրվարի 8-ի երեկոյան:

Սկզբում երիտասարդի մահվան փաստի մասին հայտնել են զինկոմիսարիատից և որպես պատճառ ներկայացրել, իբր նա ինսուլտ կամ ինֆարկտ է ստացել:

Գ. Կոծինյանի մորեղբայրը, որը ներկա է եղել դիակերձմանը, հայտնել է, որ դիակերձման ժամանակ Գ. Կոծինյանի վրա հայտնաբերվել են տարբեր բնույթի վնասվածքներ:

Որպես մահվան պատճառ նշվել է սրտի ռեֆլեկտոր կանգ, արձանագրվել են նաև հետևյալ վնասվածքները՝ կրծքավանադակի փափուկ հյուսվածքների, ձախ թոքի, սրտի արյունազեղումներ, աճ անրակի հոդախախտ, աջից գոտկային շրջանի փափուկ հյուսվածքների, աջ երիկամի և մակերիկամի արյունազեղումներ:

Ըստ մորեղբոր՝ դիակերձման ժամանակ բժիշկը պատասխանել է իր բոլոր հարցերին վնասվածքների առաջացման պատճառների վերաբերյալ, և եզրակացությունը միանշանակ է եղել, որ Գ. Կոծինյանը ենթարկվել է դաժան ծեծի:

Նա միաժամանակ հայտնել է, որ որոշ տեղեկություններով Գ. Կոծինյանին ծեծել են նույն զորամասում ծառայող ժամկետային զինծառայողները, որոնք Արտաշատ, Զաջուռ /Լոռու մարզ/, Երևան և Ստեփանակերտ համայնքներից են:

Վանաձորում գտնվող նույն զորամասի սպաներից մեկը, որն ուղեկցել է Գ. Կոծինյանի դիակի հանձմանը հարազատներին, մեր հանդիպման ժամանակ հայտնել է, որ բացի նշված 4 զինծառայողներից, ձերբակալվել է նաև օրվա հերթապահ սպան:

Ըստ մորեղբոր ներկայացրածի, որը հաստատվել է նաև սպայի կողմից, 4 զինծառայողները գտնվել են ալկոհոլի ազդեցության տակ. որոշ տեղեկություններով նրանք նշել են իրենցից մեկի կամ նրա մոր ծննդյան օրը:

Գևորգ Կոծինյանի քեռին՝ Բորիս Ադամյանը նշում է, որ 2 ամիս առաջ եղել է զորամասում, և Գևորգը չի բողոքել ո՛չ ծառայությունից, ո՛չ էլ զինծառայողների վերաբերմունքից: Ավելին, լավ ծառայության համար Գևորգն արժանացել է պատվոգրերի:

Սպանությունից մեկ օր առաջ Գևորգի հետ խոսել է նաև մայրը, որին Գևորգը որևէ բողոք չի հայտնել:

Գևորգի պապիկը նշում է, որ զանգել են զինկոմիսարիատից և ասել, որ Գևորգը ինսուլտ է ստացել, և որ դեպքը տեղի է ունեցել, երբ Գևորգը ցանկացել է բացել զորանոցի դուռը:

Գևորգի քեռին միանշանակ պնդում է, որ Գ. Կոծինյանը մահացել է դաժան ծեծի արդյունքում, բայց որն է բուն պատճառը, առայժմ որևէ վարկած չկա: Միայն կարելի է պնդել, որ, ըստ նախնական տվյալների՝ Գևորգի մոտ ալկոհոլ չի հայտնաբերվել¹⁶⁸:

Գևորգ Կոծինյանի հարազատները նշում են, որ քննչական ծառայությունը գործը սխալ հունով է տանում, քանզի, իրենց կարծիքով, դեպքի առթիվ գործ պիտի հարուցեին սպանության հատկանիշներով¹⁶⁹:

2. 2011 թվականի հուլիսի 29-ին Լեռնային Ղարաբաղի Հանրության դիրքերից մեկում հերթափոխի ժամանակ ծնոտի տակ հասցված հրազենային կրակոցից մահացել է 1992 թվականին ծնված, Հրազդան քաղաքից զորակոչված ժամկետային զինծառայող **Էդուարդ Ալավերդյանը**:

¹⁶⁸ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2011-02-09/article_3940/The_Subsequent_Victim_as_the_result_of_Unconstitutional_Acts.html
¹⁶⁹ <http://www.azatutyun.am/content/article/3540540.html>

Պաշտոնական տեղեկատվություն

Փաստի առթիվ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110 հոդվածի առաջին մասով՝ ինքնասպանության հասցնելը:

2011 թվականի օգոստոսի 10-ին ձերբակալվել է Մասիսի գինկոմիսարիատից զորակոչված ժամկետային զինծառայող, շարքային Սահակ Ասիլբեկյանը:

2011 թվականի օգոստոսի 12-ին Ս. Ասիլբեկյանին մեղադրանք է առաջադրվել Հայաստանի քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի առաջին մասի հատկանիշներով՝ «զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով»¹⁷⁰:

Ոսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Էդուարդ Ալավերդյանի հայրը՝ Սեմյոն Ալավերդյանը նշում է, որ որդու մարմնի վրա բռնության հետքեր են հայտնաբերվել և որ որդու անկենդան մարմինը նեխում էր:

Հայրը նշում է նաև, որ Էդուարդը հերթափոխը պիտի հանձներ և արձակուրդ գար տուն, այդ իսկ պատճառով այն, որ որդին ինքնասպան է եղել, հայրը չի հավատում:

Սեմյոն Ալավերդյանը մեկնել է զորամաս որդու մահվան պատճառները պարզելու համար, սակայն նրան զորամասում միայն ասել են, որ Էդուարդը լավ զինվոր էր, և որ նա ինքնասպան է եղել:

Ս. Ալավերդյանը չի հավատում, թե հանցագործությունը բացահայտելու են¹⁷¹:

3. 2011 թվականի օգոստոսի 26-ին Ստեփանակերտի զինվորական հոսպիտալում մահացել է Լեռնային Ղարաբաղի «Եղնիկներ» զորամասի ժամկետային զինծառայող, 1992 թվականին ծնված, Երևանից զորակոչված **Աղասի Աբրահամյանը**:

Պաշտոնական տեղեկատվություն

Ըստ պաշտոնական տեղեկատվության Ա. Աբրահամյանը անգիտակից վիճակում տեղափոխվել է զինվորական հոսպիտալ, որտեղ մեկ ժամ անց մահացել է:

Մահվան փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի հատկանիշներով՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որն անզուլուրդությամբ առաջացրել է տուժողի մահ¹⁷²:

2011 թվականի օգոստոսի 31-ին ՀՀ պաշտպանության նախարարությունից տարածած տեղեկատվության համաձայն՝ Ա. Աբրահամյանի մահվան փաստի առթիվ ձերբակալվել են 2 զինծառայող, որոնցից մեկը սպա է¹⁷³:

Սպային, ում անունը չի հաղորդվում, մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը¹⁷⁴:

Ժամկետային ծինծառայողին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին կետով՝ զինծառայողների փոխհարաբերությունների կանոնները խախտելը:

2011 թվականի սեպտեմբերի 5-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատա-

¹⁷⁰ http://www.1in.am/arm/armenia_right_29900.html: http://www.1in.am/arm/armenia_right_29900.html

¹⁷¹ <http://www.lragir.am/armsrc/print.right51691>

¹⁷² <http://news.am/arm/news/72167.html>

¹⁷³ http://www.1in.am/arm/armenia_politics_31808.html

¹⁷⁴ <http://www.azatutyun.am/content/article/24316741.html>

րանը բավարարել է մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործով ձերբակալված ժամկետային զինծառայողի նկատմամբ խափանման միջոցը կալանավորում կիրառելու մասին քննիչի միջնորդությունը¹⁷⁵:

Ա. Աբրահամյանի հարազատներին սկզբում ասել են, որ Աղասին թունավորվել է: Նրան տարել են բուժմաս, այնտեղից Ստեփանակերտի զինվորական հոսպիտալ, որտեղ մահացել է:

Սակայն հարազատները իրականությունը բացահայտել են դիախերձարանում, երբ տեսել են, որ Աղասու մարմինը խոշտանգված է՝ կրծքավանդակի մասում, ոտքերի երկայնքով և թաթերին, դեմքին արյունոտ վերքեր, արյան զեղումներ երիկամների վրա, ականջն ընդհանրապես պոկված:

Դիախերձարանում Աղասի ծնողներին բացատրել են, որ մահվան անմիջական պատճառը գլխուղեղի վնասվածքն է եղել, իսկ զինկոմիսարիատը անհետաքննաբանություն է բերել, թե հիվանդանոցում տղան անգիտակից վիճակում անզգույշ շարժում է արել, ընկել է երկու մահճակալների արանքը, գլխի վնասվածք է ստացել և մահացել¹⁷⁶:

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Ըստ ՀԲԱ Վանաձորի գրասենյակի ձեռքբերած տեղեկատվության՝ Աղասի Աբրահամյանը 2011 թվականի օգոստոսի 26-ին, ժամը 04:00-ին շտաբի պետի և 2 զինվորների հետ միասին անգիտակից վիճակում պատգարակով բերվել է բուժմաս:

Այդ պահին բուժմասում գտնվել է հերթապահ բժիշկ Սուրեն Թադևոսյանը: Վերջինս ներարկումներ է կատարել և բուժումներ նշանակել, որից հետո Աղասի Աբրահամյանը գիտակցության է եկել:

Նույն օրը ժամը 10:00-ին զինմասից ինչ-որ մեկը զանգահարել է Աղասի Աբրահամյանին, և վերջինս ինքնուրույն մոտեցել է հեռախոսին և բավականին երկար ժամանակ խոսել: Հեռախոսագրույցն ավարտելուց հետո պառկել է մահճակալին: Նա մահճակալից 3 անգամ ընկել է: 3-րդ անգամ ընկնելուց հետո նրան չեն տեղափոխել մահճակալ, այլ թողել են հատակին, ծածկել են, որպեսզի պառկած մնա:

Ժամը 16:00-ին բուժմաս է ժամանել բուժկետի պետը՝ Վարդգես Պողոսյանը, և տեսնելով Աղասիին պառկած՝ սկսել է ոտքերով հարվածել: Հերթապահ բժիշկ Ս. Թադևոսյանը հարցրել է Վ. Պողոսյանին, թե ինչու է նա հարվածում Աղասիին, քանի որ վերջինս իսկապես հիվանդ է, սակայն Վ. Պողոսյանը զինվորին հորդորել է վեր կենալ, կրկին խփել է ու հրել, իսկ վերջինս գլխով հարվածել է կամ մահճակալին, կամ պատին, որի հետևանքով ուշագնաց է եղել:

Նրան տեղափոխել են Ստեփանակերտի զինվորական հոսպիտալ, որտեղ էլ մահացել է:

- 4. 2011 թվականի սեպտեմբերի 7-ին Լեռնային Ղարաբաղի Ասկերանի մարտական հեՆակետերից մեկում սպանվել է Էջմիածնի զինկոմիսարիատից զորակոչված, 19-ամյա ժամկետային զինծառայող **Հայկ Վասիլի Սկրտչյանը** (Արմավիրի մարզի Ամբերդ գյուղից)¹⁷⁷:

Պաշտոնական տեղեկատվություն

Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 373 հոդվածի 3-րդ մասով (Ձեռքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն առաջացրել է մարդու մահ):

¹⁷⁵ <http://hetq.am/arm/news/4095/>
¹⁷⁶ <http://www.lragir.am/armsrc/right52355.html>
¹⁷⁷ http://www.1in.am/arm/armenia_society_33230.html

5. 2011 թվականի հոկտեմբերի 9-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում հերթապահություն իրականացնելու ժամանակ իրեն ամչակցված ինքնաձիգով ինքնասպանություն է գործել ժամկետային զինծառայող, 19-ամյա **Վլադիմիր Ասատրյանը** (Արարատի մարզի Խարբերդ գյուղից):

Պաշտոնական տեղեկատվություն

ՀՀ ՊՆ քննչական ծառայության 3-րդ կայազորային քննչական բաժնում քրեական գործ է հարուցվել՝ Քր. օրենսգրքի 359 հոդվածի առաջին մասով: Այն է՝ զինծառայողների փոխհարաբարերությունների կանոնադրային կանոնները խախտելը՝ նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայությամբ, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություններով¹⁷⁸:

Գ. Դժբախտ պատահար

1. 2011 թվականի ապրիլի 6-ին Կապան-Շվանիձոր-Մեղրի ավտոճանապարհի հատվածում գրանցվել է դժբախտ պատահար:

ՌԴ սահմանապահ զորքերի պայմանագրային զինծառայող, 27-ամյա **Արամ Թարվերդյանն** իր անձնական օգտագործման մեքենայով գլորվել է ձորը, որի հետևանքով տեղում մահացել է¹⁷⁹:

- 2.-3. 2011 թվականի հուլիսի 22-ին Վայոց ձորի Սերս գյուղի ճանապարհին զինծառայողներ տեղափոխող ՀՀ ՊՆ «Ուրալ» մակնիշի մեքենան վթարի է ենթարկվել, որի հետևանքով մահացել է 2 զինծառայող՝ մեքենայի վարորդ, պայմանագրային զինծառայող **Նորայր Հակոբյանը** (ծնված 1971 թվականին, զորակոչված Եղեգնաձորի զինկոմիսարիատից) և ժամկետային զինծառայող **Պեղամ Ղավթյանը** (ծնված 1991 թվականին, զորակոչված Շահումյանի զինկոմիսարիատից): Վթարի հետևանքով տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել 12 զինծառայողներ¹⁸⁰:

4. 2011 թվականի սեպտեմբերի 12-ին Երևանի Մյասնիկյան պողոտայի վրա տեղի է ունեցել ավտովթար, որի հետևանքով Էջմիածնի զորամասերից մեկի երկու ժամկետային զինծառայողներ տեղափոխվել են Երևանի թիվ 1 համալսարանական հիվանդանոց: Զինծառայողներից մեկը՝ 1991 թվականին ծնված **Վահրամ Խաչատուրովը**, գիտակցության չգալով, մահացել է¹⁸¹:

5. 2011 թվականի սեպտեմբերի 27-ին, ժամը 13.00-ի սահմաններում Իրինդ-Կաթնաղբյուր գյուղի հատվածում տեղի է ունեցել ավտովթար: Վթարի հետևանքով մահացել է ժամկետային զինծառայող, Թալինի տարածաշրջանի Իրինդ գյուղի բնակիչ, 18-ամյա **Սերյոժա Մելքոնյանը**:

¹⁷⁸ http://www.slaq.am/arm/news/43054/%D5%8D%D5%BA%D5%A1%D5%B6%D5%BE%D5%A5%D5%AC_%D5%A7_%D5%AA%D5%A1%D5%B4%D5%AF%D5%A5%D5%BF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%A6%D5%AB%D5%B6%D5%AE%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B5%D5%B8%D5%B2.html#.TpLNb02Drhk.facebook

¹⁷⁹ <http://henaran.am/?p=6835>

¹⁸⁰ http://www.1in.am/arm/armenia_society_27673.html

¹⁸¹ <http://www.hra.am/am/events/2011/09/13/accident>

- 6. 2011 թվականի հոկտեմբերի 16-ին Երևան-Սևան ավտոճանապարհին տեղի է ունեցել ավտովթար:
Ավտոպատահարից տուժել են 3 ժամկետային զինծառայողներ, որոնցից մեկը՝ **Էդմոն Ալեքսանյանը**, հիվանդանոցում մահացել է¹⁸²:

Դ. Ինքնասպանություն

- 1. 2011 թվականի փետրվարի 12-ին Ստեփանակերտի զորամասերից մեկում հրազենի զործադրումից մահացել է 21-ամյա ժամկետային զինծառայող, Գյումրիի զինկոմիսարիատից զորակոչված **Թորգոմ Սարուխանյանը**: Նա ծառայության մեջ էր արդեն մեկուկես տարի:

Պաշտոնական տեղեկատվություն

Կատարվածի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասով՝ «Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզուշուրությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը»¹⁸³:

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական վարչության կողմից ձերբակալվել են նույն զորամասի զինծառայողներ՝ ենթասպա Վիլիելմ Ենգիբարյանը, կրտսեր սերժանտ Հրանտ Կարապետյանը, ովքեր կասկածվում են ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ իշխանությունը չարաշահելը, պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը, իսկ Ռոբերտ Բաղայանը կասկածվում է զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելու, Ենգիբարյանին և Կարապետյանին վերոնշյալ արարքներին դրդելու մեջ¹⁸⁴:

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Թորգոմ Սարուխանյանի հարազատները չեն հավատում ինքնասպանության վարկածին: Թորգոմ Սարուխանյանի մայրը՝ Լենա Սարուխանյանը պնդում է, որ որդուն քնած ժամանակ սպանել են: Մայրը հիշում է, որ որդու մահվանից մեկ օր առաջ Թորգոմը զանգել է իրեն և փորձել է ինչ-որ բան ասել:

Մայրը հիշում է, որ Թորգոմը երբեք չի բողոքել ծառայությունից, միայն ասել է, որ իրեն այնտեղ շատերն են նախանձում:

Թորգոմ Սարուխանյանի հարազատները նշում են, որ Թորգոմի մարմնի վրա, հատկապես դեմքին բռնության հետքեր են եղել:

Լենա Սարուխանյանը չի հավատում նաև նրան, որ որդին նամակ է գրել՝ նշելով, որ ոչ մեկին չմեղադրեն իր մահվան մեջ և չդիտարձակել: Սոր խոսքերով նման նամակ չի եղել, ուղղակի ուզում են սարքել, որպեսզի թույլ չտան դիտարձակում կատարել և բացահայտել սպանության փաստը¹⁸⁵:

- 2. 2011 թվականի ապրիլի 21-ին Բալախովիտ գյուղի մոտ գտնվող զորամասում գրանցվել է ինքնասպանության դեպք:

Պաշտոնական տեղեկատվություն

Շարքային զինծառայող, Հրազդան քաղաքից զորակոչված **Արթուր Գեղամի Ղազար-**

¹⁸² http://www.1in.am/arm/armenia_society_37894.html
¹⁸³ <http://www.azatutyun.am/content/article/2308372.html>; http://www.1in.am/arm/armenia_right_9704.html
¹⁸⁴ http://www.henaran.am/full_news.php?id=8998; <http://www.azatutyun.am/content/article/2313655.html>
¹⁸⁵ <http://www.azatutyun.am/content/article/2316256.html>

յան ապրիլի 21-ին ժամը 22:50-ի սահմաններում իրեն ամրակցված ինքնաձիգից հրագենային վնասվածք է ստացել և հոսպիտալ տեղափոխելու ճանապարհին մահացել է:

Փաստի առթիվ ՀՀ պաշտպանության նախարարության 4-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասով՝ ինքնասպանության հասցնելը: Ձերբակալվածներ չկան¹⁸⁶:

Ոսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Արթուր Ղազարյանի մտերիների խոսքով Արթուրը, երբ մոտակայքում ոչ ոք չի եղել, ինքնաձիգով կրակել է իր վրա՝ ձեռքի վրա թողնելով գրություն. «Խնդրում եմ ոչ ոքի չմեղադրել»:

Դեպքի մասին Հրազդանի զինկոմիսարիատի աշխատակիցները նախ հայտնել են Արթուրի հորեղբորը, վերջինս էլ ասել է եղբորը՝ Գեղամ Ղազարյանին:

Արթուր Ղազարյանի դիակերձմանը ներկա է եղել Արթուրի հորեղբայրը, ով նշում է, որ մարմնի վրա բռնության ոչ մի հետք չի հայտնաբերվել: Հրագենային վնասվածքը միջանցիկ է եղել. գնդակը ներթափանցել է որովայն, վնասել է լեղապարկը, կոտրել ողնաշարը ու դուրս եկել մարմնից:

Արթուր Ղազարյանի հարազատները չեն հավատում, որ նա կարող էր ինքնասպանություն գործել, քանի որ ոչ մի պատճառ չունեի այդ քայլին դիմելու համար:

Ծանոթներից մեկն էլ նշում է, որ Արթուր Ղազարյանը շատ հանգիստ բնավորություն ուներ, ոչ ընտանիքում, ոչ զորամասում որևէ խնդիր չի ունեցել¹⁸⁷:

3. 2011 թվականի հունիսի 26-ին Սյունիքի մարզի Ազարակի տարածաշրջանի Մարզիկ գորամասում արտակարգ պատահար է գրանցվել: Գյումրիից զորակոչված **ժամկետային զինծառայող** /անունը չի նշվում/ ժայռից ընկնելու միջոցով ինքնասպանություն է գործել: Ըստ լուրերի՝ զինվորականը խնդիրներ է ունեցել զորամասում, և վարկած կա, որ նրան սպանել են, այլ ոչ թե ինքնասպան է եղել¹⁸⁸:

4. 2011 թվականի հունիսի 29-ին ՀՀ ՊՆ Ղափանի զորամասին հարակից անտառում հայտնաբերվել է ժամկետային զինծառայող **Տիգրան Համբարձումյանի** դին՝ դեմքի և պարանոցի փափուկ հյուսվածքների բացակայությամբ:

Պաշտոնական տեղեկատվություն

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 9-րդ կայազորային քննչական բաժնում մահվան փաստի առթիվ հարուցվել է թիվ 90554311 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110 հոդվածի առաջին մասով՝ «ինքնասպանության հասցնելը», որը կատարվել է 1) սպառնալիքի, դաժան վերաբերմունքի, կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզուգույթությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը», պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական վարչության պետ Արմեն Հարությունյանի՝ Տ. Համբարձումյանի գործով 2011 թվականի սեպտեմբերի 5-ի դրությամբ կալանավորված անձ չկա, ավելին, չկա անգամ որևէ կասկածյալ¹⁸⁹:

Ոսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Տիգրան Համբարձումյանը ծառայել է Ղափանի 54809 զորամասում: Նա ծառայության

¹⁸⁶ <http://www.iragir.am/armsrc/right46888.html>

¹⁸⁷ <http://www.armtimes.com/24499>

¹⁸⁸ <http://www.hraparak.am/2011/06/28/zoh-2/>

¹⁸⁹ <http://www.azatutyun.am/content/article/24318666.html>

մեջ է գտնվել մեկուկես տարի, զորակոչվել է Մասիսի շրջանի Նորաքաց գյուղից:

Ծնողները որդուն վերջին անգամ տեսել են 2011 թվականի ապրիլի 29-ին, Կարմրաքարում, երբ հերթական անգամ այցելել են նրան: Որդու տրամադրությունը եղել է շատ լավ, ոչ մեկից և ոչ մի բանից բողոք չի ունեցել:

Վերջին հեռախոսազրույցը որդու հետ մայրն ունեցել է նրա անհետացման օրը՝ հունիսի 28-ին, ժամը 11:00-ի կողմերը: Որդին ունեցել է լավ տրամադրություն, մորը խնդրել է լիցքավորել հեռախոսը, վերջինս ասել է, որ զանգի հորաքրոջը: Ժամը մոտավորապես 11:10-ին, երբ հորաքույրը հետ է զանգահարել, Տիգրանը խոսել է հորաքրոջ հետ, խնդրել է լիցքավորել հեռախոսը, ինչպես նաև փող ուղարկել: Ժամանակ առ ժամանակ հարազատները Տիգրանին սովորաբար 5-10 հազար դրամ էին ուղարկում: Ըստ հորաքրոջ՝ Տիգրանի տրամադրությունը եղել է շատ բարձր, նույնիսկ կատակել է:

Նույն օրը՝ հունիսի 28-ին, ժամը 16:00-ի կողմերը Տիգրանի հորը՝ Բենիկ Յամբարձումյանին, զանգահարում է զորամասի հրամանատարը, Գևորգ Մարգարյանը, որն արդեն մեկ ամիս գտնվել է Երևանում դասընթացների մասնակցելու նպատակով, և հարցնում, թե արդյոք Տիգրանը տուն չի եկել, քանի որ նա զորամասում չէ:

Այդ նույն ընթացքում Տիգրանի մորը՝ տիկին Անահիտին, զանգահարում է շտաբի պետը՝ Արսեն Ոսկանյանը, և հարցնում, թե արդյոք նրանք կարող են իմանան, թե որտեղ է գտնվում Տիգրանը, քանի որ նա զորամասում չէ: Ի պատասխան հայրն ասել է, որ նա երբևէ ինքնակամ դուրս չի եկել այդ մեկուկես տարվա ընթացքում և, որ հնարավոր չէ, որ Տիգրանը դուրս գար զորամասից:

Լուրն իմանալուց հետո ծնողները զանգում են Տիգրանին, սակայն նրա հեռախոսն անհասանելի է լինում, և մինչև ուշ գիշեր լուր չեն ունենում: Ժամը 23:00-ի սահմաններում Տիգրանի հայրը զանգահարում է շտաբի պետին և հայտնում, որ ուզում է այցելել զորամաս, սակայն վերջինս նրան պատասխանում է, որ անհանգստանալու կարիք չկա, նա կարող է և չգալ, և ավելացնում է, որ Տիգրանը մի բարեկամի մոտ լինի, և շուտով կգա»:

Հաջորդ օրը՝ հունիսի 29-ին, ծնողներն առավոտյան դուրս են գալիս և գնում զորամաս: Ճանապարհին մտնում են ՎիվաՍել-ՄՍՍ գրասենյակ՝ հարցնելու Տիգրանի հեռախոսազանգերի մասին: Գրասենյակում ասում են, որ Տիգրանի հեռախոսը անջատվել է նախորդ օրը՝ հունիսի 28-ին ժամը 12:30-ին, հեռախոսում եղել է 1097 դրամ, իսկ հետո ըստ ոստիկանների՝ հեռախոսի մարտկոցը «նստած» չի եղել:

Տիգրանի ծնողները գալիս են զորամաս, զինվորներին հարցուփորձ են անում Տիգրանի մասին, և նրանցից մեկն ասում է, որ Տիգրանին տեսել է լվացվելիս հունիսի 28-ին ժամը 12:00-14:00-ի կողմերը, ինչից հետո նա թռել է զորամասի պատի վրայով և գնացել: Լվացվելիս նա նաև զրուցել է զորամասի հավաքարարի հետ:

Զորամասում շտաբի պետն ասել է, որ միայն հայրը գա, հայրը գնացել է, բավականին սպասել է, որպեսզի նա հայտնվի, և վերջապես եկել է շտաբի պետը: Հարցին, թե ուր է Տիգրանը, պատասխանել է, «փախած կլինի», և որ նրանք ժամը 14:00-ի կողմերն են նկատել, որ Տիգրանը չկա:

Տիգրանը հունիսի 26-ին, երեկոյան ժամը 6-ին ընդունել է վերակարգը զորամասի շտաբում և երկու օր շարունակ եղել է նույն ծառայության վայրում, որը սակայն հայրն անընդունելի և անհնար է համարում, քանի որ սա առաջին դեպքն է եղել մեկուկես տարվա ընթացքում, որ Տիգրանը վերակարգի լինի հենց շտաբում:

Նա նաև հայտնել է Տիգրանի մորը, որ «Ես Տիգրանին ասել էի, որպեսզի տարածքը մաքրի, ավլի, և նույնիսկ Տիգրանը կատարելուց հետո եկել է ինձ զեկուցել, և ասել, որ ինքը նպատակ ունի ուղղվելու»: Սակայն հայրը բացառում է, որ Տիգրանը կմաքրեր:

Ընդհանուր գրույցի ժամանակ Տիգրանի հորը հայտնում են, որ Տիգրանը ճաշարանում կամ ճաշարանի հետևամասում վիճելիս է եղել ինչ որ մեկի հետ:

Հունիսի 29-ին, ժամը 15:00-ի կողմերը, Բենիկ Համբարձումյանին, երբ նա գտնվում էր զորամասի տարածքում, զանգահարում է Մասիսի զինկոմը և հայտնում, որ որդուն գտել են անտառում՝ հոշոտված վիճակում:

Հայրը գնում է դեպքի վայր, որը գտնվում է զորամասից ուղիղ գծով 30-40 մ հեռավորության վրա, իսկ արահետով՝ 50-60 մ հեռավորության վրա՝ բաց տարածքում: Տիգրանի հորը, սակայն, 3-4 մետրից ավելին չեն թողնում մոտենալ: Բենիկ Համբարձումյանը տեսնում է որդուն մի մեծ ծառի տակ՝ ուղիղ դիրքով պառկած, բերանքսիվայր, գլուխը խաչած ձեռքերի վրա դրած, գլխի աջ մասի ուղղությամբ վզի հատվածը ասես կամ դանակով կտրտած, կամ ճանկերով կտրված, վզի բացված վարդագույն միսը տեսանելի, իսկ վզից ներքև ոչինչ վնասված չի եղել՝ ոչ մարմնի մասերը, ոչ հագուստը: Ի դեպ, Տիգրանի հագին եղել է սովորական զինվորական ներքնազգեստը՝ առանց վերնազգեստի: Տիգրանի վզից ներքև ընկած հատվածում ոչ մի կապտուկ, կտրվածք կամ վնասվածք չի եղել, բացի մեջքի թեթևակի քերծվածքից, մատների վրա ոչ մի վերք կամ հետք չի նկատվել: Հայրը պատմելիս նշում է. «Ինձ ուզում են համոզել, որ երեխայի գլուխը որդերն են կերել»:

Տիգրանի դիակը նախ տանում են Ղափան, այնուհետև Երևան՝ դիահերձման: Երևանում դիահերձմանը ներկա են լինում Տիգրանի հոր ընկերը և հոր հորեղբոր երկու որդիները:

Պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ Տիգրանի դիակի մոտ հայտնաբերվել է «Ռապիրա» տեսակի ածելի, իսկ նրա ձախ ձեռքի արմնկափոսի շրջանում լայնակի վերք՝ 7-8 սմ չափի հարթ եզրով, 1.5-2 սմ խորությամբ:

Առաջին վարկածը, որ շրջանառության մեջ է դրվել, այն է, որ Տիգրանը գնացել է անտառ քնելու, և գայլերը հոշոտել են իրեն:

Հաջորդ վարկածը, որ Տիգրանը ինքնասպան է եղել՝ ածելիով կտրելով ձեռքը, իսկ անտառի զազանները հոշոտել են նրա գլուխը:

Տիգրանի հայրը՝ Բենիկ Համբարձումյանը, բացառում է, որ գայլերն են հոշոտել որդու գլուխը, քանի որ մարմնի մյուս մասերը թողնելով, հատկապես, որ թևի վրա կտրվածք է ունեցել, գլուխը հոշոտելին:

Բենիկ Համբարձումյանին հայտնել են զորամասում, որ այդ անտառում երբևէ գայլեր չեն եղել, միայն կարող է պատահել վայրի շուն, բորենի:

Տիգրանի մայրը՝ տիկին Անահիտը, հիշում է, որ որդին ասում էր, որ շտաբի պետը լարված հարաբերություններ ունի իր հետ և «տանել չի կարողանում իրեն»:

Միայն Տիգրանի մահից հետո, Տիգրանի եղբայրը հարազատներին հայտնում է, որ դեռևս 2011 թ-ի հունվարին, ինչպես Տիգրանն է հայտնել իրեն, շտաբի պետը ծեծի է ենթարկել Տիգրանին, և նոր միայն հարազատները հասկանում են, թե ինչից է առաջացել Տիգրանի այտի վրայի սպիները:

Ծառայության ընթացքում Տիգրանը լավ ծառայության համար ստացել է շքանշան, նույնիսկ խոստացել են, որ նրան կտան սերժանտի կոչում, Տիգրանը ծառայության ընթացքում ստացել է 18 օր հերթական արձակուրդ¹⁹⁰:

5. 2011 թվականի օգոստոսի 19-ին Ճամբարակի զինկոմիսարիատից զորակոչված 19-ամյա ժամկետային զինծառայող **Վարդան Սևյանը**, ճամբարային հավաքների ժամանակ մտնելով վրանի մեջ, ինքնաձիգից իրեն պատճառել է հրազենային մահացու վիրավորում գլխի շրջանում:

¹⁹⁰ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեղեկատվություն

Պաշտոնական տեղեկատվություն

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասով՝ ինքնասպանության հասցնելը:

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության տվյալներով 2011 թվականի օգոստոսի 24-ի դրությամբ նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն, իսկ հարուցված գործով ձերբակալվածներ չկան:

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական վարչության 2011 թվականի օգոստոսի 24-ի տվյալներով հարցաքննվել են մեկ տասնյակից ավելի վկաներ, ովքեր մոտ են եղել վրանին, իսկ դեպքի ժամանակ վրանում որևէ այլ զինվոր ներկա չի եղել:

Իսկ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության տվյալներով դեպքի ժամանակ վրանում բացի Վարդանից եղել է մեկ այլ զինվոր, ով քնած է եղել և զարթնել է կրակոցի ձայնից:

Պաշտպանության նախարարության առաջ քաշած վարկածի համաձայն՝ Վարդանը ինքնասպան է եղել աղջկա պատճառով, ինչն էլ վկայում է նրա ձեռքին գտնված նկարը և թողած գրությունը:

Ոստանասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Վարդանի մայրը՝ Սուսաննա Սևյանը, չի ընդունում, որ որդին ինքնասպան է եղել, այն էլ աղջկա պատճառով, քանի որ ինքը բազմիցս խոսել է որդու հետ, վերջինս ասել է, որ ընկերուհի չունի: Զինվորի քույրը՝ Արմինե Սևյանը, նույնպես վկայում է, որ Վարդանը ընկերուհի չի ունեցել:

Սուսաննա Սևյանը որդու հետ վերջին անգամ խոսել է 2011 թվականի օգոստոսի 18-ին: «Վարդանը ծառայում էր մեկ տարի ինը ամիս, երեք ամիս էր մնում, որ էրեխեն զար տուն: 18-ին Վարդանս երկու անգամ իմ հետ խոսեց, պոլիգոնից զորամաս տեղափոխվելու օրը, մեկը՝ 5:30-ին, մյուսը՝ 20:00-ին: Կաշկանդված խոսեց ու անջատեց: Էսքան ժամանակ բանակից չէր դժգոհել, ասում էր՝ ոչ մի պրոբլեմ չունեմ, Արտաշատում, Ղափանում շատ լավ էր ծառայում, Գորիս չորս ամիս է տեղափոխել էին: Ինքը էնքան պինդբերան երեխա է եղել, ինձ ասում էր՝ մամ ջան, ծառայություն ա, ամեն ինչ էլ կլինի, հետևիցս եկող ախպեր ունեմ, ծառայում եմ ու գամ», - հիշում է մայրը:

Վարդանի դին բերել է հրամանատարը ու գնացել: Սպայական կազմից ոչ մեկը չի եկել այլևս Վարդանենց տուն:

Մայրը քննիչից պահանջել է ցույց տալ այն նկարը, որ ձեռքին պահել է Վարդանը:

Սուսաննա Սևյանը նշում է, որ տեսել է կրակոցի հետքը՝ ձախ ականջի տակ փոքրիկ սև անցք, ինչպես նաև վզի վրա երկու զուգահեռ կարեր: Մոր համար անհասկանալի է այն, որ եթե Վարդանը ինքնասպան է եղել, նա ձախ ձեռքով չէր կարողանա կրակել իր վրա: Նա գտնում է, որ դա զինվորի արած գործ չէ, այլ շատ մտածված քայլ: Առաջին հերթին Վարդանի վիզը կտրել են, հետո նոր ձևական կրակել¹⁹¹:

2011 թվականի սեպտեմբերի 16-ի դրությամբ Սևյանի հարազատներին չեն ճանաչել տուժողի իրավահաջորդ, և բացի մահվան վկայականից, ոչ մի փաստաթուղթ չի տրվել¹⁹²:

- 6. 2011 թվականի օգոստոսի 29-ին Արաբկիր վարչական շրջանի «Մալականի այգի» կոչվող տարածքում երակները կտրված, անգիտակից վիճակում հայտնաբերվել է Արարատի զորամասերից մեկի ժամկետային զինծառայող 19-ամյա **Արթուր Գրիգորյանի** մարմինը:

¹⁹¹ <http://www.azatutyun.am/content/article/24306619.html>; http://1in.am/arm/armenia_society_32204.html
¹⁹² <http://www.epress.am/2011/09/16/%D5%8F%D4%B5%D5%8D%D4%B1%D5%86%D5%88%D5%92%D4%B9-%D4%B2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A6%D5%B8%D5%B0%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%B8%D6%80%D5%AB-%D5%B4%D5%A1.html>

Պաշտոնական տեղեկատվություն

ՀՀ ՊՆ ռազմական ուստիկանության վարչության պետ Արամ Տեր-Սահակյանը տեղեկացրել է, որ փաստի առթիվ դեռևս քրեական գործ չի հարուցվել¹⁹³:

Ոստմնաստիությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Ըստ ոչ պաշտոնական տվյալների Արթուրի մայրը «Եհովայի վկա» կազմակերպության անդամ է:

7. 2011 թվականի հոկտեմբերի 12-ին Լեռնային Ղարաբաղի Մատաղիսի զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքում հերթապահություն իրականացնելու ժամանակ իրեն ամրակցված զենքով ինքնասպանություն է գործել ժամկետային զինծառայող, 19-ամյա **Յուրիկ Ներսիսյանը**:

Պաշտոնական տեղեկատվություն

Զինծառայող Յուրիկ Գևորգի Ներսիսյանի մահվան փաստով հարուցվել է քրեական գործ քր.օր.-ի 110 հոդվածի հատկանիշներով (ինքնասպանության հասցնելը):

Դեպքի առթիվ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 3-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասով՝ «Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը», պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

8. 2011 թվականի հոկտեմբերի 13-ին ժամկետային զինծառայող, 21-ամյա շարքային **Արամ Աշոտի Մելքոնյանը**, որը բանակ էր զորակոչվել 2011-ի առաջին զորակոչի ժամանակ, Նոր Նորքի զինկոմիսարիատից, զենքը մաքրելիս խախտել է անվտանգության կանոնները և անզգուշությամբ կրակել է, ինչի արդյունքում որովայնի շրջանում ստացած վնասվածքից մահացել է:

Պաշտոնական տեղեկատվություն

ՀՀ ՊՆ քննչական ծառայության 6-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ, ՀՀ քր. օր 110-րդ հոդվածի առաջին մասով (ինքնասպանության հասցնել):

9. 2011 թ-ի դեկտեմբերի 2-ի երեկոյան Վանաձորի «Դուց»-ի զորամասում ինքնասպան է եղել ժամկետային զինծառայող, այս տարվա հունիս ամսին զորակոչված գյումրեցի Նարեկ Դավթյանը¹⁹⁴:

Պաշտոնական տեղեկատվություն

Ըստ քննչական ծառայության՝ դեկտեմբերի 3-ին, կեսգիշերին, զորամասում պահակալետի հերթափոխության ժամանակ հայտնաբերվել է Գյումրիից զորակոչված Նարեկ Դավթյանի դին: Զինվորի դին եղել է պահակակետում, որտեղ նա ժամապահություն էր կատարում: 6 ամիս առաջ բանակ զորակոչված Դավթյանի ծնոտի տակ առկա են եղել մահացու հրազենային վիրավորման հետքեր: Նարեկ Դավթյանի մահվան կապակցությամբ ՊՆ քննչական ծառայության 7-րդ կայազորային քննչական բաժնում դեկտեմբերի 5-ին հարուցվել է քրեական

¹⁹³ <http://yerkir.am/am/news/11580.htm#.TmCAslbHYL8.facebook>

¹⁹⁴ http://1in.am/arm/armenia_society_46696.html

գործ: ՊՆ քննչական ծառայության լրատվական ծառայության ղեկավար Մերի Սարգսյանի փոխանցմամբ՝ քրեական գործ է հարուցվել 110-րդ (ինքնասպանության հասցնելը) հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Կատարվել է դեպքի վայրի զննություն, դիակի արտաքին զննում, վերցվել են անհրաժեշտ նմուշներ, նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն:

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Հարազատները նշում են, որ դիահերձման ժամանակ բռնության որևէ հետք չի եղել:

Հարևանները, հարազատները մինչև այսօր էլ չեն հավատում զինվորի ինքնասպանության վարկածին: Նարեկ Դավթյանը բանակ էր զորակոչվել այս տարվա հունիսին: Նրա դին գտել էին ծնոտի տակից մահացու հրազենային վնասվածքով: Ի դեպ, այդ նույն զորամասում մինչև Նարեկի ծառայությունը, եղբայրն է ծառայել, և նրա վերադառնալուց հետո անմիջապես Նարեկն է ծառայության անցել: Ըստ Նարեկի եղբոր՝ Նարեկի ծառայությունը բնականոն է ընթացել: Իսկ մայրը՝ Գայանեն, հայտնել է, որ ծառայության առաջին ամիսները բնականոն են անցել, և Նարեկը չի դժգոհել ծառայությունից, սակայն վերջին ամիսներին սկսել է նեղվել բանակի վարք ու բարքից. «Նարեկն այն տղան չէր, որ առանց պատճառի ինքնասպան լիներ, ինքը լավ տրամադրությամբ բանակ է գնացել, Նարեկին դրոշ էլ են ինքնասպանության», - նշել է որդեկորույս մայրը՝ ավելացնելով, որ դեպքից մեկ օր առաջ Նարեկը խոսել է տնեցիների հետ. «Ինքը շատ ուրախ է գնացել բանակ, հազարից մի երեխեն է այդ տրամադրությամբ այս օրերին գնում բանակ: Ինքը այնքան ուժեղ տղա էր, որ կարող էր ծածկել, որ մաման չհասկանա, որ ինքը այդպիսի բան է մտածում: Առաջին ամիսներին նրա մոտ ամեն ինչ նորմալ էր, այս ամեն ինչը սկսվել է այս վերջին ամիսներին», - պատմել է Նարեկի մայրը:

Ըստ մոր՝ վերջերս Նարեկը ավելի անտրամադիր էր դարձել. «Նոյեմբերի 19-ին ենք խոսել իր հետ, ինձ չի ցույց տվել, չուզեց, որ մայրն անհանգստանա, Արմոն իրեն հազիվ համոզեց, որ չփախչի, ինքը ասում էր, որ իրեն դուր չի գալիս ծառայությունը, սերժանտ է, աֆիցեռ է, թե ինչ է, Նարեկին ընդհանուր բոլորի ներկայությամբ հայիոյել է, իսկ թե հետո ինչ է կատարվել, չգիտեմ...», - ավելացրել է տիկին Գայանեն:

Մոր խոսքերով, Նարեկն ընդհանրապես վախկոտ չէր, Նարեկն ինքնասպան չէր լինի առանց պատճառի:

Ե. Անվտանգության կանոնների խախտման արդյունքում մահվան դեպքեր

1. 2011 թվականի հուլիսի 15-ին ՀՀ զինված ուժերում տեղի է ունեցել անվտանգության կանոնների խախտման հետևանքով մահվան դեպք:

Հուլիսի 15-ին 20:30-ի սահմաններում 23-ամյա Խաչատուր Թադևոսյանը մարտական հենակետում խախտել է զենքի հետ վարվելու կարգն ու անզգուշությամբ վնասել համաճառայակից 19-ամյա **Կոյա Մեսրոպյանին**, վերջինս մահացել է:

Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդ. 3-րդ մասով (զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը):

Ըստ ՀՀ ՊՆ քննչական ծառայության տեղեկատվության Խաչատուր Թադևոսյանը ձերբակալվել է¹⁹⁵:

¹⁹⁵ <http://news.am/arm/news/68344.html>

2. 2011 թվականի հոկտեմբերի 4-ին «Բաղրամյան» ուսումնական կենտրոնում, ճամբարային հավաքների մեջ գտնվող Պաշտպանության նախարարությանը պատկանող մեքենաներից մեկը զորավարժանքի տարածքում երթևեկելիս վթարի է ենթարկվել: Վթարի հետևանքով Արմավիրի քաղաքային հիվանդանոց են տեղափոխվել 6 ժամկետային զինծառայողներ, որոնցից մեկը՝ ժամկետային զինծառայող ավագ **Յայկ Ղավթյանը** մահացել է:
3. 2011 թվականի հոկտեմբերի 25-ին ճամբարային հավաքներից զորամաս վերադառնալիս Կապան-Գորիս ճանապարհին ՀՀ պաշտպանության նախարարության զինվորական գրահամեքենան դուրս է եկել երթևեկելի գոտուց, շրջվել և գլորվել դեպի ներքևի ճանապարհատված: Վթարի հետևանքով մահացել է գրահամեքենայի ավագ, ավագ լեյտենանտ 28-ամյա **Արամայիս Յրաչիկի Սարգսյանը**: Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայության 9-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 377 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մահ)¹⁹⁶:

Զ. Առողջական խնդիրների պատճառով մահվան դեպքեր

1. 2011 թվականի հոկտեմբերի 29-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանի զորամասերից մեկի տարածքում գտել են 19-ամյա **Արմեն Համլետի Սողոմյանի** դիակը: Վերջինս բանակ էր զորակոչվել Արթիկի զինկոմիսարիատից:

Պաշտոնական տեղեկատվություն

Պաշտպանության նախարարության պաշտոնական վարկածով, զինվորը հանկարծամահ է եղել և կատարված դիախերձման արդյունքում պարզվել է, որ մահը վրա է հասել սրտի պսակաձև անոթների շրջանառության սուր խանգարման հետևանքով: Ըստ պաշտպանության նախարարության լրատվական ծառայության պնդման՝ զինվորի դիակի վրա բռնության որևէ հետք չի հայտնաբերվել:

2. Դեկտեմբերի 15-ին ժամը 01:55-ին ծայրահեղ ծանր վիճակում «Արմենիա» բժշկական կենտրոն է ընդունվել ՊՆ N սպորտային զորամասի զինծառայող շարքային Սիեր Հակոբյանը՝ «կոմատոզ վիճակ, ուղեղի արյան զեղում» ախտորոշմամբ: Ինչպես հայտնել է ՊՆ քննչական ծառայության լրատվական բաժնի ղեկավար Մերի Սարգսյանը դեկտեմբերի 15-ին ժամը 01:00-ի սահմաններում Սիեր Հակոբյանը գտնվել է ընկերոջ տանը, որտեղից էլ ծայրահեղ ծանր վիճակում տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն, որտեղ և գիտակցության չգալով՝ մահացել է:

Պաշտոնական տեղեկատվություն

Սիեր Հակոբյանը ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբի պետի հրամանով դեկտեմբերի 11-ից մինչև 2012 թ-ի հունվարի 30-ը գործուղվել է ՀՀ բռնցքամարտի ֆեդերացիա՝ 2012 թ-ի հունվարին կայանալիք մեծահասակների բռնցքամարտի առաջնությանը մասնակցելու նպատակով:

¹⁹⁶ <http://www.hra.am/am/events/2011/10/26/army10>

Միեր Հակոբյանի մահվան փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայության 4-րդ կայազորային քննչական բաժնում նախապատրաստվում են նյութեր, նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն¹⁹⁷:

Է. Անհայտ պայմաններում մահվան դեպքեր

1. 2011 թվականի հուլիսի 15-ին ժամը 16:30 սահմաններում, չպարզված հանգամանքներում գտնվել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու զինկոմիսարիատից զորակոչված, 1977 թվականին ծնված **Անդրեյ Ալեքսեյի Հարությունյանը**¹⁹⁸:

Ը. Դիտավորյալ սպանություն

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

1. **Վահե Դերձյանը** 2010 թ-ի մայիսի 21-ին Վանաձորի զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ զինված ուժերի 35383 զորամասում (Մարտունի 3) ծառայության: 2011 թ-ի հունիսին հետագա ծառայությունը շարունակելու համար տեղափոխվել է Ասկերանի թիվ 34153 զորամաս, որպես շարքային ավագ հրաձիգ: Այս մասին տեղեկացրել է Վահեի հայրը:

Ծառայության ընթացքում 2011 թ-ի հուլիսի 22-ին գումարտակի կազմով մեկնել են մարտական հերթափոխության թիվ 156 մարտական հենակետ (դիրք), որտեղ պատասխանատու է եղել դասակի հրամանատար լեյտենանտ Միեր Մոսիսյանը: Դիրքի ավագ եղել է կրտսեր սերժանտ Էդգար Գուլանյանը:

2011 թ-ի հուլիսի 24-ին՝ դեպքից երկու օր առաջ, ժամը 01:00-ի սահմաններում Վահեն զինվորական գետնատնակում նկատողություն և հայտոյանք է ստանում սերժանտ Գուլանյանի կողմից՝ իբր զինվորների վրա ջուր շփելու համար, որի պատճառով ապտակում է Գուլանյանին, քանզի ըստ Վահեի՝ ինքը չի եղել ջուր շփողը:

Հուլիսի 26-ին գիշերվա մոտավորապես ժամը 01:40-ի սահմաններում՝ հերթափոխի ժամանակ, Էդգար Գուլանյանը ասել է, որ հարթակի վրա քարեր են նետում, Վահեն լիցքավորել է զենքը, մոտեցել է Էդգարին, որի ձեռքին եղել է պատից պոկված կտոր: Միասին դիտարկել են շուրջը և ոչինչ չնկատելով՝ վերադարձել են զինվորական գետնատնակի մոտ: Այդ ժամանակ շարքային Հայկազ Պողոսյանը հայտնել է, որ մարտական դիրքի հողաթմբի մոտ՝ առջևի մասում, մարդ է նկատել: Վահեն դրանից հետո վերցրել է լապտերը, լույսը զցել է հողաթմբի վրա, այդ պահին սերժանտ Գուլանյանն ասել է. «Հենա մարդ կա» և Վահեի հետ միասին բարձրացել են հարթակի վրա: Վահեն բարձրանալու ընթացքում կրկին անգամ լիցքավորել է իրեն ամրակցված զենքը: Լույսը զցելով՝ նկատել է կենդանու ուրվագիծ՝ շան կամ կատվի, և փակելով զենքը՝ շոջվել է, որ հետ իջնի: Այդ պահին Հայկազը և Էդգարը միասին գոռացել են. «Հենա մարդ կա, հաստատ մարդ է»: Վահեն լիցքավորելով զենքը՝ լույս է զցել և տեսել է, որ ինչ-որ մեկը, կռացած ուզում է փախչել դեպի ձախ: Վահեն անմիջապես մեկահատ կրակոցներ է արձակել իրեն թվացյալ մարդու վրա՝ որպես հակառակորդ, քանզի նրանք գիտեն, որ այդ վայրում միայն կարող է գտնվել հակառորդ կողմը՝ ըստ իրենց՝ «թուրքը»: Եւ քանի որ Վահեն եղել է շփոթված և վախեցած, չի հասցրել ավտոմատ կրակել և շարունակել է մեկահատ կրակներ արձակել: Դրանից հետո Վահեն չի հիշում, թե ինչ է կատարվել, միայն հիշել է, որ

¹⁹⁷ http://www.1in.am/arm/armenia_society_49704.html
http://www.haynews.am/hy/zinvor-1324312421#.Tu9_gVC2Hyo.facebook
<http://www.panorama.am/am/law/2011/12/19/soldier-dead/#.Tu-AfyS1Uns.facebook>
<http://henaran.am/?p=60892#.Tu-FjDvq-Yw.facebook>
¹⁹⁸ http://www.1in.am/arm/armenia_society_26806.html

իրեն մեկը քաշելով իջեցրել է հողաթմբից: Այդ ժամանակ հակառակորդի կողմից իրենց ուղղությամբ կրակահերթ են արձակել:

Դեպքից անմիջապես հետո, զեկուցվել է հրամանատարությանը, որ իրենք «թուրք» են սպանել, և իրենց զինվորներից մեկը չկա: Օգնության հասած շտաբի պետ, կապիտան Շալո Առուստամյանը և վաշտի հրամանատար Արթուր Ստեփանյանը, դասակի հրամանատար Գոռ Մկրտչյանը եղել են հարթակում, սակայն չի եղել շարքային **Ալիկ Աբրահամյանը**: Վահեն հայտնում է, որ նրանք մտածել են, որ Ալիկը վախից ինչ-որ տեղ թաքնվել է: Նրան բարձր գոռալուց հետո, ոչ մի պատասխան չեն լսել: Այդ ժամանակ դիրքում են եղել նաև հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար Վաչագան Խաչատրյանը և սպառազինության գծով տեղակալ Ի. Ավանիսյանը: Կրկին փնտրել են Ալիկին, սակայն չեն գտել: Դեպքից հետո, լինելով հուզված՝ Վահեն չի հիշում, թե սպաներից ովքեր են անցել հողաթմբի հետևից և հանել են Ալիկի դիակը ու դրել հողաթմբի հարթակի վրա:

Դեպքի փաստով հարուցվել է քրեկան գործ՝ ՀՀ քր. օր. 359-ի 1-ին մաս (Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով՝ պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով), 359-ի 3-րդ մաս (սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որն առաջացրել է ծանր հետևանքներ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով), 104-ի 1-ին մաս (սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով) և 358 հոդվածի 1-ին մասով (զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ պետին ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործ դրելը՝ պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով):

Համաճառայակիցներից մի քանիսի ցուցմունքի համաձայն՝ առաջին կրակոցից հետո իբր թե լսել են, որ Ալիկը ասել է. «Վահե, ես եմ, մի կրակիր», և իրենք նույնպես ասել են. «Վահե, ես եմ, մի կրակիր», սակայն Վահեն կրակել է: Վահեն ասում է, որ ինքը լսել է միայն, որ ասել են. «Վահե...» և ուրիշ ոչինչ չլսելով՝ կրակել է, քանզի կատարել է իր պարտականությունը թշնամուն ոչնչացնելու համար:

Ըստ Վահեի ծնողի և ըստ գործի նյութերի՝ այդ ընթացքում Վահեի թիկունքից դեպի հակառակորդը կրակահերթեր է արձակել նաև լեյտենանտ Միեր Մոսիսյանը: Ըստ Վահեի պատմածի՝ կրակահերթերն ավարտելուց հետո՝ ի նշան ուրախության, որ թշնամի են ոչնչացրել, ուրախությունից ծափահարել և բղավել են. «Ուռա՛»: Սակայն, ըստ նյութերի՝ Մոսիսյանը ցուցմունք է տվել, թե իր հրամանով են գոռացել՝ իբր հակառակորդին վախեցնելու համար: Ըստ նյութերի՝ պարզվել է, որ կրակված է դիրքում գտնված բոլոր զենքերից:

Դիտավորյալ սպանության մեղադրանքը հիմնավորում է, որ իբր դեպքից մեկ ամիս առաջ, 2011 թ-ի հուլիսի 8-10-ը, Վահեն վիճաբանության մեջ է մտել նույն զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Ալիկ Աբրահամյանի հետ, վերջինիս՝ մարտական դիրքում քնելու կապակցությամբ, որի պատճառով, Վահեն, արթնացնելով բոլոր ընկերներին, երկու ապտակ է հասցրել Ալիկին, որը չէր կարող պատճառ դառնալ Ալիկին դիտավորությամբ սպանելու համար: Երկրորդ՝ դեպքի օրը, իբր հերթափոխից ուշանալու համար կրկին անգամ Վահեն ապտակել է Ալիկին գետնափորի խոհանոցում, որը Վահեն ժխտում է, իսկ ըստ ցուցմունք-

Ների՝ համաձայնակիցները ասում են, թե իբր ապտակի ձայն են լսել, սակայն ոչ ոք չի տեսել: Միայն լսել են. «Արա հիվա՛նդ ես» արտահայտությունը: Այս դեպքը տեղի է ունեցել Ալիկի վրա կրակելու օրը, կրակոցի դեպքից մոտ 10-15 րոպե առաջ: Սրանից հետո Վահեն դուրս է եկել, կանգնած է եղել տղաների հետ, իսկ Ալիկը մնացել է այնտեղ թեյ խմելու համար: Սրանից հետո կատարվել է վերոնշյալ դեպքը:

Նախաքննության ընթացքում նշանակվել է փորձաքննություններ, որոնցից մեկի համաձայն. «մարմին կպել է 7 կրակոց», իսկ 2-րդ փորձաքննության եզրակացության համաձայն. «բացի այդ 7-ը, հագուստին ևս կրակոց է եղել», սակայն սույն եզրակացությունները ուղարկվել է կրկնակի փորձաքննության 2011 թ-ի դեկտեմբեր ամսին:

Առերեսման ժամանակ համաձայնողներից մեկը, որի ազգանունը հայրը չգիտի, Վահեի՝ «թե ինչու է նման ցուցմունք տալիս» հարցին (որ, իբր թե ինքն էլ է ասել, «մի կրակիր» կամ կապված թեյրանում ապտակի հետ) պատասխանել է. «Բոլորը ասում, գրում են, ես էլ», որը արձանագրված է:

2011 թ-ի հուլիսի 30-ին Վ. Ղերձյանը որպես կասկածյալ ձերբակալվել է, իսկ օգոստոսի 2-ին կալանավորվել է և մինչ օրս գտնվում է կալանքի տակ՝ Շուշիի բերդում:

Այս դեպքի մասին որևէ տեղեկատվություն երբևէ չի հրապարակվել:

թ. Ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք

- 1. 2011 թվականի հունիսի 1-ին բանակ զորակոչված **Յայկ Սովսեսի Խաչատրյանը** զորամասի բուժանձնակազմի անփույթ վերաբերմունքի պատճառով դեկտեմբերի 30-ին, գիշերը ժամը 11:40 մահացել է հիվանդանոցում¹⁹⁹:

Պաշտոնական տեղեկատվություն

Ըստ պաշտոնական տվյալների, որոնք ներկայացվել են տարբեր լրատվական միջոցներով, Յայկ Խաչատրյանի մահվան պատճառ է հանդիսացել ջրծաղիկով հիվանդանալը: Յարուցել է քրեական գործ. «Ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք, որն անզգուշությանմբ առաջացրել է ծանր հետետանք» /ԲՕ 376 հոդվածի 2-րդ մաս/:

Ուսումնասիրությունների արդյունքում ձեռքբերված տեղեկություններ

Յայկը եղել է ֆիզիկապես պատրաստված եւ առողջ, նույնիսկ կարողացել է կիլոմետրերով վազել: Ծառայությունից չի բողոքել: Յայկի հայրը մշտապես, շաբաթական մեկ անգամ տղայի համար սնունդ, հագուստ եւ գումար է ապահովել:

2011 թ-ի նոյեմբերին Յայկը հեռախոսով հոր հետ խոսելու ժամանակ, ասել է, որ հիվանդ է, գրիպ է: Յոր հորդորներից հետո Յայկը այդ մասին հայտնել է հրամանատարին: Սակայն Յայկին մեղադրել են «սիմուլյանտության» մեջ և ստիպել են այդ վիճակում վազել 10 կիլոմետր: 2011 թ-ի դեկտեմբերի 10-ի երեկոյան Յայկի ընտանիքը տեղեկացել է, որ նա գտնվում է հոսպիտալում: Նրա մոտ եղել է խնդիրներ՝ կապված դիմային նյարդի հետ: Յաջորդ օրը, Յայկի ընտանիքը գնացել է տեսակցության եւ նկատել, որ Յայկի վիճակը վատ է: Վերադառնալուց հետո հայրը անընդհատ խոսել է Յայկի հետ եւ տեղեկացել, որ դեղամիջոցներ է ընդունում, բուժում է անցնում:

2011 թ-ի դեկտեմբերի 16-ին հայրը կրկին այցելել է Յայկին: Այդ ժամանակ, Յայկը համատարաբար լավ վիճակում է եղել, հորը թվացել է, որ ամեն ինչ դեպի լավն է ընթանում:

¹⁹⁹ <http://www.a1plus.am/am/social/2012/01/12/jrcaxik#.Tw6o0uLUcOw.facebook>
<http://news.am/arm/news/88803.html>
<http://haynews.am/hy/zinvorakan#.Tw8sbuxWOfU.facebook>
http://1in.am/arm/armenia_society_53871.html

Բժշկուհին տեղեկացրել է, որ անհանգստանալու կարիք չկա եւ ասել է, որ Յայկը 12 օր կպառուկի ինֆեկցիոն հիվանդանոցում ջրծաղիկի բուժման համար, իսկ այնուհետեւ կշարունակեն դիմային նյարդի բուժումը: Յայկի հայրը բժշկին նաեւ հայտնել է, որ կարող է դեղերով ապահովել կամ նույնիսկ ինքը հոգալ Յայկի բուժումը:

Այնուհետեւ հայրը տեղեկանում է, որ դեկտեմբերի 20-ից դադարել են որեւէ բուժում իրականացնել Յայկի նկատմամբ: Իսկ դեկտեմբերի 28-ին որդուն հերթական այցելության ժամանակ հայրը գտնում է Յայկին հիվանդանոցի սենյակներից մեկում լքված: Յարցին, թե կերել է արդյոք ինչ-որ բան այդ օրը, Յայկը պատասխանում է՝ միայն թեյ, որը նրան տվել է հարևան զինվորներից մեկը: Յայկը այդ ընթացքում անընդհատ բողոքել է ստամոքսի ցավից, իսկ բժշկուհիներից մեկը մեղադրել է նրան սիմուլյանտության մեջ:

Դեկտեմբերի 29-ի առավոտյան ժամը 5-ին Յայկի մոտ որովայնի շրջանում սկսվում են ուժեղ ցավեր, այդ թվում նաև էպիլեպսիկ դրսևորումներ, նա երբեմն ընկնում է ցնցումների մեջ: Բժիշկներն ասում են, որ նրա մոտ կա կույր աղիքի բորբոքում, և որ նա պետք է մնա իրենց հսկողության տակ, որպեսզի հարկ եղած ժամանակ ենթարկվի վիրահատության: Նաև հարցնում են՝ երեխան արդյոք հիվանդ չէ էպիլեպսիայով: Նշենք, որ այդ ժամանակ արդեն հայտնի է եղել, որ Յայկի մոտ կա նաև ջրծաղիկի վարակ:

Նրան ինֆեկցիոն հիվանդանոց տեղափոխելու հոր հորդորները մերժվում են այն պատճառաբանությամբ, որ նախ պետք է լուծել կույր աղիքի խնդիրը, այնուհետև զբաղվել ջրծաղիկի բուժմամբ: Այնուամենայնիվ, հոր շարունակվող հորդորներից, սպառնալիքներից հետո, առավոտյան հրավիրված բժշկական խորհրդակցության արդյունքում՝ Յայկը տեղափոխվում է Նորքի ինֆեկցիոն հիվանդանոց, որտեղ հետազոտությունից հետո պարզվում է, որ Յայկի մոտ առկա է ջրծաղիկ հիվանդություն՝ իր ծայրահեղ բարդացած, «ներս զցած» վիճակով:

Բժշկի խոսքերով՝ նրա մոտ արդեն ախտահարված են եղել համարյա բոլոր ներքին օրգանները, և նրա կյանքը փրկելու հույս չի եղել: Արդեն պարզ է դառնում որովայնի շրջանում ցավերի և վերջին օրերի էպիլեպտիկ երևույթների իրական պատճառը: Դեկտեմբերի 30-ին գիշերը ժամը 23:40-ին Յայկը վախճանվում է:

Յայկի հարազատները պնդում են, որ 2011 թ-ի դեկտեմբերի 10-ից մինչև Յայկի վախճանը բժիշկները ոչինչ չեն ձեռնարկել նրա առողջական վիճակը լավացնելու համար: Ավելին, նրան ստիպել են անցկացնել սովորական ծառայություն՝ նման առողջական խնդիրների առկայությամբ: Յայկը հոսպիտալում գտնվել է լքված վիճակում, կատարված բուժումներն էլ եղել են սխալ. ջրծաղիկը բուժել են հակաբորբոքային դեղամիջոցներով: Հիվանդանոցում անընդհատ չարչարել են: Հարազատները դժգոհում են այն հանգամանքից, որ պաշտոնական վարկածում շրջանառվում է այն հանգամանքը, որ Յայկի առողջական խնդիրները ծագել եւ զարգացել են չափազանց արագ, որի հետ նրանք բոլորովին համաձայն չեն:

2010 Թ-ԻՆ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ԵՎ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Նման դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը որպես կանոն մնում է չբացահայտված և անհասանելի:

2010 թվականին լրատվական միջոցներով զինծառայողների նկատմամբ ֆիզիկական բռնությունների մասին տեղեկություն է տարածվել հետևյալ դեպքերի վերաբերյալ:

1. 2010 թվականի ապրիլի 28-ին Արմավիրի 60925 զորամասում, ըստ պաշտոնական հաղորդագրության, ինքնախեղման նպատակով իրեն հասցված վնասվածքներով հոսպիտալ է տեղափոխվել զորամասի գումարտակի հրամանատար, փոխգնդապետ **Խոսրով Շադյանը:**

Պաշտոնական տեղեկատվություն

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության չորրորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ Քրեական օրենսգրքի 110 հոդվածի (ինքնասպանության հասցնել) 2-րդ մասի հատկանիշներով, (այն է՝ ինքնասպանության հասցնելը, որը կատարվել է հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ):

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Ըստ ոչ պաշտոնական տվյալների՝ Խ. Շադյանը ծեծի է ենթարկվել վերադասի կողմից պաշտպանության նախարարին հայիոյելու համար: Վերջինիս կապել են աթոռին, իսկ զինվորներին ստիպել են փոխգնդապետի կողքով քայլելիս վիրավորական արտահայտություններ ասել նրա հասցեին: Խ. Շադյանը կարողացել է ազատել կապված ձեռքերը և դանակով 4 անգամ հարվածել իրեն²⁰⁰:

Հարազատների ստացված տեղեկատվության համաձայն՝ Խ. Շադյանը հոսպիտալում բուժվելուց հետո գտնվել է արձակուրդի մեջ, իսկ բռնությունների փաստով քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի ընթացքի մասին որևէ պաշտոնական տեղեկատվություն չի հրապարակվել:

Նշենք, որ Խ. Շադյանի եղբայրը աշխատում է Մեծամորի ատոմակայանի անվտանգության ծառայությունում:

2. ՀՀ պաշտպանության նախարարության թիվ 51191 զորամասի 3-րդ գումարտակի 9-րդ վաշտի 1-ին դասակի հրամանատար, ավագ լեյտենանտ, 27-ամյա Ալոյանը 2010 թվականի օգոստոսի 11-ին, ժամը 08:30-ի սահմաններում 3-րդ գումարտակի շարահրապարակում վարժություններ կատարելու ժամանակ կոպիտ դիտողություն է արել և քաշքշել նույն գումարտակի 10-րդ վաշտի 3-րդ դասակի ժամկետային զինծառայող Սիմոն Առաքելյանի համազգեստից: Վերջինս այդ կոպիտ դիտողության կապակցությամբ պատասխան է տվել Ալոյանին, ինչից հետո Ալոյանը սկսել է բռունցքով հարվածել Առաքելյանի դեմքին՝ քթի և ձախ աչքի շրջանին, որի հետևանքով Սիմոն

²⁰⁰ <http://www.armtimes.com/8345>

Առաքելյանը ստացել է առողջության տևական քայքայումով միջին ծանրության վնաս:

Պաշտոնական տեղեկատվություն

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանն Ալոյանի միջնորդությամբ կիրառել է արագացված դատաքննություն և ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով դատապարտել 2 տարվա ազատազրկման:

Պատիժը սահմանելիս դատարանը հաշվի է առել այն հանգամանքը, որ Ալոյանը խոստովանել է իր մեղքը, զղջացել է կատարածի համար, ինչպես նաև խնամքին ունի մեկ մանկահասակ երեխա, և տուժողի կողմից էլ որևէ պահանջ չի ներկայացվել:

Արման Ալոյանը բողոքարկել է առաջին ատյանի դատավճիռը վերաքննիչ ատյան՝ խնդրելով նշանակել ավելի մեղմ պատիժ ու այն պայմանականորեն չկիրառել:

Ի դեպ, Արման Ալոյանը առաջին անգամ չէ, որ ենթարկվում է քրեական պատասխանատվության: Նա 2006 թվականի հունիսի 5-ին մեկ անգամ ևս դատվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 356 հոդվածի 1-ին մասով (պետի օրինական հրամանը չկատարելը), ՀՀ քրեական օրենսգրքի 361 հոդվածի 3-րդ մասով (գորամասը, ծառայության վայրն ինքնակամ լքելը)՝ դատապարտվելով ազատազրկման մեկ տարի ժամկետով:

Սակայն այն ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և նշանակվել է փարձաշրջան մեկ տարի ժամանակով:

2006 թվականի հոկտեմբերի 16-ին՝ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի որոշմամբ, «ՀՀ անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 07.07.06 թվականի որոշման 1-ին կետի «բ» ենթակետի կիրառմամբ, ազատվել է պատժի կրումից²⁰¹:

3. 2010 թվականի օգոստոսի 11-ին Լեռնային Ղարաբաղի Մարտունու գորամասի շարահրապարակում շարքով վազելու ժամանակ ժամկետային զինծառայող, շարքային Շահեն Աղասյանը զինվորական գոտիով մի քանի անգամ հարվածել է ժամկետային զինծառայող, շարքային **Մայիս Աղաբաբյանի** դեմքին՝ զուգորդելով նրա հասցեին հնչեցրած հայիոյանքներով:

Պաշտոնական տեղեկատվություն

Մայիս Աղաբաբյանը դեպքի հաջորդ օրը՝ օգոստոսի 12-ին, տեղափոխվել է Մարտունու, ապա Ստեփանակերտի զինվորական հոսպիտալ, իսկ այնտեղից ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ, որտեղ պարզվել է, որ նրա աչքը 7 մմ չափով ճեղքվել է և անհրաժեշտ է շտապ վիրահատություն կատարել: Սակայն ոչ մի վիրահատություն չեն կատարել, փոխարենը նշանակել են բուժում, ինչի արդյունքում աչքի 7 մմ ճեղքից 2 մմ փակվել է և մնացել է 5 մմ: Հոսպիտալում 40 օր մնալուց հետո Մայիսին տարել են հետ՝ ծառայության:

Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայության առաջին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով՝ զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով²⁰²:

Մայիս Աղաբաբյանը քրեական գործով ճանաչվել է տուժող, իսկ փաստաբան Սեդա Սա-

²⁰¹ «Ժամանակ» օրաթերթ, 14.12.10

²⁰² <http://www.armtimes.com/ru/node/18656>

Ֆարյանը ներգրավվել է որպես Աղաբաբյանի պաշտպան:

Նախաքննությունն ավարտվել է և գործն ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին աստյանի դատարան՝ նստավայրը Ստեփանակերտ:

ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի հրամանով Մայիս Աղաբաբյանին 2011 թվականի փետրվարի 9-ին տեղափոխել են Երևանի զինվորական հոսպիտալ, որտեղ պետք է նշանակվեր կրկնակի բժշկական փորձաքննություն²⁰³:

Ի դեպ, առաջին փորձաքննությունն անց է կացվել 2010 թվականի դեկտեմբերին, ինչին մասնակցել է նաև հայտնի ակնաբույժ Ա. Մալայանը:

Հանձնաժողովի քննարկումից հետո ՀՀ զինված ուժերի ռազմաբժշկական վարչության պետ Փարսադանյանը Մայիս Աղաբաբյանի վիճակը գնահատել է բավարար և Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի 08.12.10թ. որոշման համաձայն ՀՀ ՊՆ 175-10 հր. «գ» հոդվածով Մայիս Աղաբաբյանը ճանաչվել է պիտանի ոչ շարային ծառայության համար²⁰⁴:

2011 թվականի փետրվարի 23-ին Ս. Օհանյանը հանդիպել է Մայիս Աղաբաբյանի հետ: Վերջինիս հետ եղել են նաև Կենտրոնական զինվորական հոսպիտալից բժիշկներ, որոնք զեկուցել են նախարարին, որ «Մայիսի աչքը նորմալ տեսնում է»:

Հանդիպման ժամանակ Մայիս Աղաբաբյանը նշել է, որ ինքը չի խուսափում ծառայությունից, այլ միայն ցանկանում է, որ աչքի տեսողությունը վերականգնվի:

Ս. Օհանյանը ծանոթացել է բուժզննման արդյունքներին և ինչպես խոստացել էր, պետք է նշանակվեր կրկնակի փորձաքննություն²⁰⁵:

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Մայիս Աղաբաբյանի մայրը՝ Ռոզա Կարապետյանը նշում է, որ տղան շարունակում է գտնվել ծառայության մեջ, չնայած նրան, որ որդու տեսողությունն օրեցօր վատանում է, ինչը կարող է բերել աչքի կուրացման:

Ռոզա Կարապետյանը հանդիպել է ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի հետ, վերջինս խոստացել է վերահսկողություն սահմանել գործի նկատմամբ, Մայիսին տեղափոխել Երևան և նշանակել կրկնակի բժշկական փորձաքննություն:

4. 2010 թվականի օգոստոսի 23-ին Լեռնային Ղարաբաղի Կուրաթլուի զորամասերից մեկում սպայական կազմի կողմից ծեծի է ենթարկվել զինծառայող **Վարուժան Ղալվաթյանը**, որին անգիտակից վիճակում տեղափոխել են Մուրացանի զինվորական հոսպիտալ: ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայությունը հերքում է այդ հաղորդագրությունը²⁰⁶:

5. 2010թ. սեպտեմբերի 9-ին Արարատի զորամասերից մեկում ժամկետային զինծառայող, շարքային Վարդան Ներսիսյանը գնդակահարել է նույն զորամասի ժամկետային զինծառայող **Հովհաննես Բաղդասարյանին**:

Պաշտոնական տեղեկատվություն

Ըստ պաշտոնական տեղեկության՝ Վարդան Ներսիսյանը հերթապահություն իրականացնելու ժամանակ, լսելով քայլերի ձայն, հարցրել է, թե ով է, և պատասխան չստանալով՝ կրակ է բացել, որի արդյունքում Հ. Բաղդասարյանը հրազենային վիրավորում է ստացել որովայնի շրջանում և նույն օրը վիրահատվել է:

²⁰³ <http://www.lragir.am/armsrc/right43910.html>
²⁰⁴ <http://www.lragir.am/armsrc/right-lrahos43837.html>
²⁰⁵ <http://www.lragir.am/armsrc/right44660.html>
²⁰⁶ <http://www.armtimes.com/16060>

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Աստ ոչ պաշտոնական տվյալների՝ վնասվածքի պատճառով Հ. Բաղդասարյանի ոտքը անդամահատել են, որը պաշտոնական աղբյուրները հերքում են²⁰⁷:

6. 2010 թվականի սեպտեմբերի 11-ին www.youtube.com կայքում տարածվել է տեսանյութ, որտեղ սպան նվաստացնում է 2 զինվորների՝ հարվածելով նրանց գլխին, ականջների, ջուր լցնելով նրանց ականջների մեջ:

Զինծառայողների միջև ոչ կանոնադրական փոխհարաբերությունների վերաբերյալ տեսանյութի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Սեպտեմբերի 18-ին տեսանյութում զինծառայողներին ծեծի ենթարկող Սասուն Գալստյանի նկատմամբ, որը Լեռնային Ղարաբաղի թիվ 38862 զորամասի 2-րդ մոտոհրաձգային գումարտակի հրամանատարի սպառազինության գծով տեղակալ, մայոր է, մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով և նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել էր կալանավորումը:

Ծեծի ենթարկված ժամկետային զինծառայողներ Գարիկ Հարությունյանին և Բակուր Եղիկյանին ճանաչել են որպես տուժողներ:

2010 թվականի նոյեմբերի 5-ին, ըստ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական վարչության տեղեկատվության, գործի նախաքննությունն ավարտվել է, և գործն ուղարկվել է դատարան²⁰⁸:

2010 թվականի դեկտեմբերին դատարանը Սասուն Գալստյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ (պետի կամ պաշտոնատար անձի կողմից իշխանության չարաշահում, իշխանազանցություն կամ իշխանության անգործություն կամ պաշտոնական լիազորությունների սահմանն անցնելը) և դատապարտել է 3 տարվա ազատազրկման²⁰⁹:

7. 2010 թվականի հոկտեմբերի 28-ին Նուբարաշենի զորամասերից մեկում զինծառայող Վաչիկ Սարգսյանը կարտոֆիլ մաքրելու ժամանակ դանակահարել է մեկ այլ զինծառայողի, որին տեղափոխել են հիվանդանոց: Վ. Սարգսյանը ձերբակալվել է: Դեպքի վերաբերյալ քրեական գործ հարուցելու մասին որևէ տեղեկատվություն չի տարածվել²¹⁰:

8. 2010 թվականի հոկտեմբերի 28-ին Նուբարաշենի զորամասի հրամանատարի տեղակալ Արմեն Բարեղամյանը դաժան ծեծի է ենթարկել 5-ամսյա ժամկետային զինծառայող, Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղից զորակոչված 18-ամյա **Էրիկ Գրիգորյանին**:

Պաշտոնական տեղեկատվություն

Է. Գրիգորյանին բազմաթիվ կապտուկներով և վնասվածքներով՝ կոտրված քթով, գլխուղեղի ցնցումով, սալջարդերով, տեղափոխել են Սուրբազանի հոսպիտալ՝ դիմաձնոտային բաժին:

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 4-րդ կայազորային բաժնում դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 375 հոդվածի

²⁰⁷ <http://www.armtimes.com/17369>; <http://www.mil.am/arm/index.php?page=2&p=0&id=1561&y=2010&m=10&d=11>

²⁰⁸ <http://www.azatutyun.am/archive/news/20101105/2031/2031.html?id=2211627>

²⁰⁹ <http://www.news.am/arm/news/41151.html>

²¹⁰ <http://zhamanak.com/news/12583/>

1-ին մասով (պետի կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը)²¹¹:

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական վարչության տեղեկատվության՝ Նոյեմբերի 4-ին Ա. Բարեղամյանը ձերբակալվել է: Մինչև ձերբակալության 72 ժամը լրանալը Բարեղամյանին կառաջադրվի մեղադրանք, և դատարանը կորոշի խափանման միջոցի հարցը:

ՀՀ ՊՆ քննչական ծառայության տեղեկատվության համաձայն՝ Արմեն Բարեղամյանի դեմ ՀՀ Քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով ամիսներ առաջ Նույնպես մեղադրանք է առաջադրվել մեկ այլ զինվորի՝ շարքային Բագրատ Եղիշյանին ծեծելու համար, և գործը հոկտեմբերի 18-ին ուղարկվել է դատարան²¹²: Խափանման միջոց ընտրվել էր ոչ թե կալանքը, այլ չհեռանալու մասին ստորագրությունը²¹³:

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Հարազատների խոսքերով է. Գրիգորյանը հոկտեմբերի 28-ին չի մասնակցել առավոտյան նախավարժանքին, քանի որ ոտքը մեխ է մտած եղել: Ա. Բարեղամյանը դրա համար 1 ժամ 40 րոպե ծեծել է զինվորին, Նույնիսկ վերջինիս ուշագնաց լինելու ժամանակ: Այնուհետև տարել է լվացարան, ջուր է լցրել վրան, որ ուշքի գա, և շարունակել է ծեծը՝ այս անգամ աթոռով:

- 9. 2010 թվականի հոկտեմբերի 10-ին Նուբարաշենի զորամասերից մեկում ժամկետային զինծառայող, շարքային Վաչիկ Սարգսյանը դանակահարել է Վայոց ձորի մարզի Գետափ գյուղից զորակոչված, Նուբարաշենի հատուկ ջոկատի զինվոր, 20-ամյա **Անդրանիկ Արամյանին:**

Պաշտոնական տեղեկատվություն

Դանակահարության պատճառն անեկդոտն է եղել: Անդրանիկ Արամյանը ապարանցու մասին անեկդոտ է պատմել, ինչից վիրավորվել է նրա ապարանցի զինակից ընկերը՝ Վաչիկ Սարգսյանը: Վերջինս դանակով հարվածել է Անդրանիկին, ինչի արդյունքում կտրվել է Անդրանիկի թևից սիրտ գնացող զարկերակը: Նրան շտապ տեղափոխել են Երևանի կենտրոնական զինվորական հոսպիտալ, որտեղ վիրահատել են, որը, սակայն անհաջող է անցել, սխալ բուժում են նշանակել:

2011 թվականի փետրվարի կեսերին Անդրանիկը տեղափոխվել է կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ՝ հույս ունենալով ֆիզիկական բժշկության միջոցով վերականգնել վերին վերջույթի շարժունակությունը:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ: Վաչիկ Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112 հոդվածի 1-ին մասով՝ դիտավորությամբ մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը, որը վտանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ, ինչպես նաև կյանքի համար վտանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով, պատժվում է ազատազրկմամբ 3-7 տարի ժամկետով:

Նախաքննությունն ավարտվել է, և գործը գտնվում է Էրեբունի Նուբարաշեն վարչական

²¹¹ <http://www.tert.am/am/news/2010/11/03/hraparak2/>
²¹² <http://Iragir.am/armsrc/right40418.html>
²¹³ <http://www.azatutyun.am/content/article/2211410.html>

շրջանների ընդհանուր իրավասության դատարանում: Առաջիկա նիստը նշանակված է 2011 թվականի մարտի 10-ին:

Ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված տեղեկություններ

Անդրանիկ Արամյանի քրոջ խոսքերով՝ վիրահատությունից հետո Անդրանիկի վիճակը վատացել է, իսկ բժիշկները ոչ մի օգնություն չեն ցուցաբերել, ինչն էլ պատճառ է հանդիսացել, որ Անդրանիկին երկրորդ անգամ վիրահատեն: 2010 թվականի նոյեմբերի 19-ին Անդրանիկին տեղափոխել են «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնի անոթային վիրաբուժության բաժին, որտեղ կատարել են վիրահատություն: Բժիշկները, սակայն, ոչ մի հույս չեն տվել, որ վնասված ձեռքի աշխատունակությունը կվերականգնվի:

Անդրանիկ Սարգսյանը նաև հայտնել է, որ մի քանի անգամ իրեն զանգահարել են փակ հեռախոսահամարից և սպառնացել, որ չբողոքի, հակառակ դեպքում եղբորը կյանքից կզրկեն:

Ոչ պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ Վաչիկ Սարգսյանը շարունակում է ծառայությունը նույն զորամասում, նրա նկատմամբ որևէ խափանման միջոց չի ընտրվել²¹⁴:

10. 2010 թվականի նոյեմբերի 19-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զորամասի պահպանության տակ գտնվող առաջնային բնագծում տեղի է ունեցել միջադեպ: Միջադեպի հետևանքով հրազենային կրակահերթերից զոհվել են ժամկետային զինծառայողներ Լևոն Եսայանը (Տավուշի մարզ, քաղաք Բերդ), Ներսես Գալոյանը (Շիրակի մարզ, գյուղ Սպանդարյան), Նարեկ Սահակյանը (Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան), Նվեր Սարգսյանը (Լեռնային Ղարաբաղ): Հրազենային տարբեր աստիճանի վիրավորումներ են ստացել ժամկետային զինծառայողներ՝ ***Սանվել Հագորյանը*** (Արմավիրի մարզ, Նալբանդյան գյուղ), ***Սարգիս Մելքումյանը*** (Արմավիրի մարզ, գյուղ Գետաշեն), ***Խաչիկ Ալեքսանյանը*** (Գեղարքունիքի մարզ, գյուղ Աստղածոր), ***Մասիս Գրիգորյանը*** (Լեռնային Ղարաբաղ, Մարտունու շրջան)²¹⁵:

²¹⁴ http://www.1in.am/arm/armenia_society_10347.html; http://1in.am/arm/armenia_society_2426.html

²¹⁵ <http://www.hraparak.am/2010/11/23/krakele-mankutyanyan-enkere/>

2011 Թ-ԻՆ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ԵՎ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

2011 թվականին լրատվական միջոցներով զինծառայողների նկատմամբ ֆիզիկական բռնությունների մասին տեղեկություն է տարածվել հետևյալ դեպքերի վերաբերյալ:

1. 2011 թ-ի հունվարին ԼՂ Մատաղիսի պաշտպանական շրջանի զորամասում Գորիսի զինմոկիսարիատից զորակոչված զինծառայող Հովսեփ Ռաֆիկի Սարգսյանը դաժան ծեծի է ենթարկվել Ստեփանակերտի բնակիչ, կրտսեր սերժանտ Յարություն Յրանտի Գաբրիելյանի կողմից²¹⁶:
Զինծառայող Հովսեփ Սարգսյանը դեմքին և մարմնին ստացած ծանր վնասվածքներով տեղափոխվել է Ստեփանակերտի հիվանդանոց:
2. Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուրի զորամասում փետրվարի 3-ին, ճաշից հետո, երբ ականազերծողների զորամիավորումը ճաշարանից վերադարձել է զորանոց՝ հանգստանալու, փոխգնդապետ, 33-ամյա Սարգիս Տարախչյանը մտել է այնտեղ ու տեսնելով հանգստացող զինվորներին՝ հարձակվել նրանց վրա²¹⁷:
Սկզբում բռունցքներով ծեծել է ժամկետային զինծառայողներին, ոմանց գլուխները խփել պատին, ապա ձեռքն է վերցրել փայտե աթոռը և դրանով շարունակել ծեծը: Իսկ օրեր առաջ նույն փոխգնդապետ Սարգիս Տարախչյանը զորախումբը ճաշի ժամին տարել կանգնեցրել է ճաշարանի մոտ, և առանց թույլ տալու, որ ճաշեն՝ բերել է զորանոց: Մեր տեղեկություններով, երբ աղմուկ է բարձրացել, Սարգիս Տարախչյանը իր կաշին փրկելու համար, հենց երեկ տեղավորվել է զինվորական հոսպիտալում:
Պաշտպանության նախարարի մամուլի խոսնակ Դավիթ Կարապետյանը հերքել է այս տեղեկությունը²¹⁸:
3. 36-ամյա կապիտան Գարիկ Վանեսյանը 2011թ. փետրվարի 23-ին՝ առավոտյան վաշտի լսարանում, չթույլատրված ժամին քնելու համար ապտակել է իր ենթակային՝ ժամկետային զինծառայող, շարքային Վիրապ Սահակյանին և անպարկեշտ ձևով ստորացրել նրա պատիվն ու արժանապատվությունը: Նա ստորագրություն է տվել չհեռանալու մասին և շարունակել ծառայությունը: Ի դեպ, տուժողը ինքն է խնդրել պատժել, բայց՝ չազատագրվել պետին: Պետն էլ մեղադրանքն ընդունել է: Դատարանն էլ հաշվի առնելով, որ նա լավ ծառայող է, բարեխիղճ է և նախկինում դատապարտված չի եղել, 3 երեխաների հայր է՝ Գարիկ Վանեսյանին դատապարտել է ազատագրվման 3 ամիս ժամկետով և պայմանականորեն այն չկիրառելով՝ սահմանել փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով և հանձնել զորամասի հրամանատարությանը: Ավելի ուշ նա ևս համաձայնեցվել է և պատժից ազատվել²¹⁹:
4. Գորիսում ծառայող ժամկետային զինծառայողներ Սարգիս Հակոբյանն ու Ալեքսեյ Սարգսյանը խախտել են կանոնադրքային կանոնները և հայտնվել մեղադրյալի կար-

²¹⁶ <http://www.news.am/arm/news/45962.html>
http://www.1in.am/arm/regional_karabagh_8007.html
²¹⁷ <http://www.tert.am/am/news/2011/02/04/zhamanak/>
http://www.1in.am/arm/armenia_right_8770.html
²¹⁸ <http://www.news.am/arm/news/46876.html>
²¹⁹ www.armtown.com/news/am/zam/20110909/32813

զավիճակում: Սարգիսը և Ալիկը ինչ-որ անհայտ պատճառով վիճել են, միմյանց քաջքշել, և Սարգիսը հարվածել է Ալիկի դեմքին՝ մարմնական թեթև վնասվածք հասցնելով նրան: Երկուսն էլ հանձնվել են հրամանատարության հսկողությանը²²⁰:

5. 20-ամյա Տարոն Մեսրոպյանը 3 տարվա ազատազրկման է դատապարտվել ընկերոջը պաշտպանելու համար²²¹: Ասկերանի գորամասերից մեկում հակատանկային մարտկոցի դասակի վարորդ, շարքային Տարոն Մեսրոպյանին դուր չէր եկել, երբ տեսել էր, որ պետը համաճառայակցի հետ լավ չի խոսում: 2011թ. մարտի 7-ին, առավոտյան ժամը 10:00-ի սահմաններում մտել էր գորանոցի լսարան և տեսել, որ իրենց դասակի հրամանատարի տեղակալը՝ իր անմիջական պետը, սերժանտ Բագրատ Ալավերդյանը վերակարգում ծառայություն կրող իր ենթակա, շարքային Կարեն Տիկրիկյանի հետ՝ օրապահի պարտականությունները ճիշտ կատարելու բացատրական աշխատանքներ է տանում: Բայց քանի որ բացատրության ձևն այնքան էլ դուր չի եկել Տարոնին, նա միջամտել է պետի գործողություններին և նրան «քյալ» անվանելով, բռնություն գործադրելով՝ սկսել քաջքշել: Պետը համարժեք պատասխան է տվել:

Այդ պահին դադարեցրել են վեճը և տեղափոխվել այլ վայր. դուրս են եկել գորանոցից, որտեղ Տարոնը բռնուցքի հարվածով կոտրել է պետ Բագրատի քթոսկրը: Դատաքննության ժամանակ ամբաստանյալ Տարոնն ընդունել է մեղքը և դեպքն այսպես ներկայացրել իր ցուցմունքներում. միջադեպի օրը, առավոտյան, երբ մտել է լսարան և տեսել սերժանտ Բագրատի և շարքային Կարենի զրույցը՝ հասկացել է, որ մի բան այն չէ և միջամտել է: Իր հարցին, թե՛ ի՞նչ է պատահել, Կ. Տիկրիկյանը պատասխանել է, որ գորանոցը մաքրելու համար սերժանտ Բ.Ալավերդյանին ասել է, որ աթոռը հանի, սակայն չի իմացել, որ վերջինս արդեն աթոռը հանած է եղել: Ինքը սերժանտ Բ.Ալավերդյանին ասել է, որ շարքային Կ. Տիկրիկյանը չի իմացել և պետը չի, որ դրանից նեղվի: Սերժանտ Ալավերդյանը պատասխանել է, որ «եթե շարքային Կ. Տիկրիկյանը մի բան չի իմանում, ինչու է ինձ ասում»: Տարոնը այդ ժամանակ նաև նկատողություն է արել սերժանտին՝ ականջակալներով և ձեռքերով խոսելու համար, զգուշացրել, որ հանի, այդպես չխոսի: Սակայն սերժանտը շարունակել է ականջակալներով և ձեռքերով խոսել, ու ինքը նրան անվանել է «քյալ», որի պատճառով իրենց միջև քաջքշուկ է առաջացել, և Բ. Ալավերդյանը ոտքով մեկ անգամ հարվածել է իր են՝ որովայնի շրջանում: Համաճառայողների միջամտությամբ քաջքշուկը դադարել է, սակայն խոսակցությունը շարունակելու համար սերժանտ Բ.Ալավերդյանին հրավիրել է դուրս և գորամասի շենքի հետևի մասում ձեռքով հարվածել սերժանտի քթին: Տարոնը Միաժամանակ նշել է, որ զղջում է կատարվածի համար ու խնդրում դատարանին մեղմ վերաբերվել:

Տուժող Բագրատ Ալավերդյանը Տարոն Մեսրոպյանից բողոք, պարտք ու պահանջ չի ներկայացրել, այդ թվում՝ նյութական, և խնդրել է դատարանին՝ նրա նկատմամբ հնարավորինս մեղմ վերաբերվել: Իսկ իր նախաքննական ցուցմունքում սերժանտը նշել է, որ շարքային Կարեն Տիկրիկյանն ընդգրկված լինելով օրվա վերակարգում որպես ննջարանում մաքրություն կատարող, գորանոցում մաքրության աշխատանքները կատարելու ընթացքում դիմել է համաճառայողներին, այդ թվում նաև իրեն, որպեսզի իրենք դուրս հանեն ննջարանի աթոռակները: Ինքը պատասխանել է, որ աթոռը արդեն հանել է: Ժամը 10-ի սահմաններում Կ. Տիկրիկյանին կանչել է գորանոցի լսարան և բացատրել, որ ոչ ոք պարտավոր չէ աթոռները նախօրոք հանել միջանցք, դա օրա-

²²⁰ http://www.1in.am/arm/armenia_society_32813.html

²²¹ http://1in.am/arm/armenia_society_35985.html

պահի պարտականությունն է և հարցրել է, թե ինչու է դիմել կոնկրետ իրեն, առանց պարզելու՝ աթոռը հանված է, թե ոչ:

Հենց այդ պահին էլ դուր չի եկել ներս մտած Տարոնին. իմանալով եղելությունը, Տարոնը դիմել է սերժանտին՝ «պետք չէ մալադոյին նեղել»: Ինքը պատասխանել է, որ Կ. Տիկբիկյանին չի նեղում, այլ բացատրում է նրա պարտականությունները: Սակայն Տ. Մեսրոպյանը շարունակելով խառնվել գրույցին՝ ասել է. «Եթե Տիկբիկյանը իմանար, որ աթոռը հանել ես, ապա քեզ չէր ասի», միաժամանակ դիտողություն է արել. մնացած մասով էլ ցուցմունքները համընկնում են ականատեսների և ամբաստանյալի ցուցմունքների հետ: Միայն վերջում ավելացրել է, որ համաձայնողների կողմից միջադեպը դադարեցվելուց հետո, երբ գնացել է լվացվելու և հասկացել, որ քիթը վնասված է, կես ժամ անց զորանոցի ննջարանում տեսնելով Տ. Մեսրոպյանին և զայրանալով նրա արարքից՝ զինվորական փայտյա աթոռակով մեկ անգամ հարվածել է նրա ձեռքին: Ննջարան եկած սպաների կողմից վեճը դադարեցվել է: Նախաքննական մարմինը Բագրատ Ալավերդյանի գործողություններում հանցակազմ չի գտել, նրա նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու որոշում է կայացրել, քրեական գործի մասը կարճել:

Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը ամբաստանյալ Տարոն Մեսրոպյանին դատապարտել է 3 տարվա ազատազրկման՝ պետի նկատմամբ բռնություն գործադրելու և միջին ծանրության վնասվածք հասցնելու համար: Այժմ Մեսրոպյան դիմել է ՀՀ Վերաքննիչ քրեական դատարան:

6. Քանաքեռի բնակիչ, ժամկետային զինծառայող, ջոկի հրամանատար, կրտսեր սերժանտ, 20-ամյա Գուրգեն Միքայելյանը 2011 թ-ի մարտին, կեսօրից հետո ընդգրկված է եղել օրվա վերակարգում՝ որպես զումարտակի հսկիչ-անցագրային կետի հերթապահ: Երբ զինվորներից մեկին կապոց են բերել, ցանկացել է բացել այն: Նրա օգնականը՝ վերակարգում ընդգրկված Պողոսյան Արթուրը թույլ չի տվել: Եվ դա առիթ է դարձել, որ Գուրգեն Միքայելյանը վեճի բռնվի իր ենթակայի հետ, բռունցքով հարվածներ հասցնի նրան և անպարկեշտ ձևով ստորացնի նրա պատիվն ու արժանապատվությունը: Նախաքննական մարմինը նրա արարքը դասել է ոչ մեծ ծանրության հանցանքների թվին, և նրան հանձնել զորամասի հրամանատարությանը, որը նրա մասին դրական բնութագիր է տվել դատարանին: Իսկ դատարանը մայիսին նրան մեղավոր է ճանաչել ՀՀ քր.օր.-ի 360-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտել կալանքի՝ 1 ամիս ժամկետով, ապա համաներել, քանի առավելագույնը երեք տարվա ազատազրկման դատապարտման դեպքում օրենքը թույլ է տալիս նման որոշում կայացնել²²²:

7. 2011 թ-ի ապրիլի 21-ին ՀՀ զինված ուժերի զորամասերից մեկը, որն այդ օրերին գտնվում էր Բաղրամյան ուսումնական կենտրոնում ճամբարային հավաքի մեջ, ժամկետային նոր զորակոչված զինծառայողներից մեկին ծեծելով ստիպել են զորամասի ափսեները լվանալ, ինչը վերջինս այդպես էլ չի արել²²³:

Վիճաբանության արդյունքում զինվորը ստացել է մարմնական վնասվածքներ, արնագեղում և գլխուղեղի ցնցում: Վիճաբանության մասնակիցները բերման են ենթարկվել:

²²² www.armtown.com/news/am/zam/20110909/32813

²²³ http://1in.am/arm/armenia_society_17183.html

<http://www.news.am/arm/news/56470.html>

8. Ապրիլի 30-ին Մարտակերտի զորամասերից մեկում ժամկետային զինծառայող Վոլոդյա Թումանյանը լեյտենանտ, դասակի հրամանատար Երվանդ Յ.-ի կողմից ծեծվել ու քթոսկրի կոտրվածք է ստացել: Պատճառը եղել է այն, որ շարքային զինվորը խրամատից դուրս է եկել հակառակորդի տեսադաշտ: Տուժողը տեղափոխվել է զինվորական հոսպիտալ²²⁴:
9. 2011 թ. հուլիսի 16-ին ՀԲԱ Վանաձորի գրասենյակ էր դիմել Ռոբերտ Յովհաննիսյանը՝ իր որդու իրավունքների պաշտպանության համար: Ռ. Յովհաննիսյանը հայտնել է, որ գումարտակի սպա, որդու ձեռքին հեռախոս տեսնելով, վերցրել է այն և հրամայել որպես պատիժ փորի վրա կատարել վարժություն:
Տղան հրաժարվել է կատարել սպայի հրամանը, որից հետո ենթարկվել է ծեծի, բռնությունների և անմարդկային վերաբերմունքի:
Զինծառայողին ծեծի ենթարկելու փաստի առթիվ կազմակերպությունը դիմել էր ՀՀ զինվորական դատախազին և ՀՀ պաշտպանության նախարարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով քրեական գործ հարուցելու և հաղորդման վերաբերյալ որոշում կայացնելու համար: Հաղորդմանն ի պատասխան, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության Եղեգնաձորի զինվորական դատախազ Ս. Սարգսյանը հայտնել էր կազմակերպությանը, որ պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Ռաֆիկ Ռոբերտի Յովհաննիսյանին ծեծի ենթարկելու վերաբերյալ հրապարակման առթիվ քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ Քր. Դատ. Օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով՝ հանցադեպի բացակայության հիմնավորմամբ:
10. Հաղորդի պաշտպանական շրջանի զորամասերից մեկում ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Նարեկ Ստեփանյանը, լինելով դիրքի ավագ, անպարկեշտ ձևով ստորացրել է իր ստորադրյալ Ն. Մխիթարյանի պատիվն ու արժանապատվությունը: Այժմ նա դատվում է իշխանազանցության և զինծառայողին վիրավորանք հասցնելու համար: Նարեկ Ստեփանյանը նախկինում դատված չի եղել²²⁵:
11. Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ 2011 թ-ի օգոստոսի 11-ին 2 տարվա ազատազրկման էր դատապարտել Մարտակերտի զորամասերից մեկի կադրային սպա, զինվորական բարձրագույն կրթությամբ Վասիլ Ծառուկյանին՝ իշխանազանցության համար: Լինելով զորամասում հրետանային դիվիզիոնի ավագ սպա, կոչումով լեյտենանտ, հանդիսանալով պետ, Վ. Ծառուկյանը հանձնարարություն է տվել նույն մարտկոցի հաշվարկող, շարքային Դերենիկ Անանյանին՝ կազմել դասընթացների պլան-համառոտագիր: Դե վերջինս էլ դասընթացների պլան-համառոտագիրը ոչ ճիշտ թեմայով է կազմել, ինչի պատճառով էլ պետ Ծառուկյանը դիտողություն է արել Անանյանին և հանձնարարել նրան այն վերակազմել:
Զինվորը դրանից դժգոհել է: Վասիլ Ծառուկյանը անցնելով իր պաշտոնեական լիազորությունների սահմանը, անձնական շահագրգռվածությունից ելնելով՝ խստապահանջ հրամանատարի տպավորություն թողնելու և իր գերակայությունն ընդգծելու նպատակով ծեծել է Անանյանին, որի ընթացքում ապտակել, ճմկտել, ապա ձեռքերով և ոտքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել վերջինիս մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով առողջության թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով:
Այսինքն՝ էական վնաս է հասցրել շարքային Դ. Անանյանի առողջությանը, զինվորա-

²²⁴ <http://www.armtown.com/news/am/zam/20110507/18914/>

²²⁵ http://1in.am/arm/armenia_society_33559.html

կան ծառայության շահերին և ՀՀ ԶՈՒ կանոնադրքերով սահմանված՝ պետ-ստորադրյալ հարաբերություններին: Ամբաստանյալն ընդունել է առաջադրված մեղադրանքը և միջ-նորդել է դատարանին՝ արագացված դատաքննություն կատարել, որը բավարարվել է: Դատարանը ամբաստանյալ Վասիլ Ծառուկյանի նկատմամբ պատժի տեսակն ու չա-փը որոշելիս, պահպանելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, հաշվի է առել հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստի-ճանը, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները՝ ամբաստանյալը առաջին ան-գամ է կատարել միջին ծանրության հանցանք, ծառայության վայրից բնութագրվում է դրականորեն, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, երիտասարդ կադրային սպա է, կատարածն ընդունելը և զոջալը, պատասխանատ-վությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը: Բացի դա, հաշվի է առնվել, որ տուժող Դ.Անանյանը բողոք, պարտք ու պահանջ չի ներկայացրել: Այդուհանդերձ, դատարանը որոշել է Վասիլ Ծառուկյանի նկատմամբ խափանման միջոց՝ չհեռանալու մասին ստորագրությունը փոխել կալանքով և նրան դատապար-տել 2 տարվա ազատազրկման: Ամբաստանյալը վերաքննիչ բողոք է ներկայացրել դատական երկրորդ աստիճանի և խնդրել պատիժը պայմանականորեն չկիրառել²²⁶:

12. Այս գործամասը վերջերս ևս երկու զինվորի կենսագրության վրա էլ է հասցրել բիծ թող-նել²²⁷. Նույն՝ Սյունիքի մարզի դատարանը այս տարվա օգոստոսի 5-ին սպա Մուրադ Պողոսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քր.օր.-ի 360-րդ հոդվածի 2-րդ մասով և նշանա-կել պատիժ՝ ազատազրկում 3 ամիս ժամկետով, իսկ շարքային, ժամկետային զին-ծառայող Դավիթ Եսայանին՝ նույն մեղադրանքով նշանակել է պատիժ՝ կարգապա-հական գումարտակում պահելով 4 ամիս ժամկետով, և հետև դատարանի դահլիճում կալանքի վերցնելու որոշում կայացրել: Նրանցից երևանցի, 26-ամյա Մուրադ Պողոս-յանը, լինելով հրետանային դիվիզիոնի մարտկոցի հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար, կոչումով ավագ լեյտենանտ, հանդիսանալով պետ, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ ֆիզպատրաս-տության դասընթացների մասնակցելու համար շարքում կանգնելու իր կողմից օրի-նական և սահմանված կարգով տրված հրամանը կատարելուց հրաժարվելու պատ-ճառով 2011 թ. մայիսի 6-ին, ժամը 10.30-ի սահմաններում գործամասի ճաշարանի մոտ անպարկեշտ ձևով ստորացրել է իր նկատմամբ ստորադրյալ, շարքային Դավիթ Եսայանի պատիվն ու արժանապատվությունը՝ ապտակել նրան: Վերջինս էլ պետի այդ վերաբերմունքն անպատասխան չի թողել՝ բռունցքով հարվա-ծել է Մ.Պողոսյանի դեմքին՝ պատճառելով թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք, դրանով իսկ անպարկեշտ ձևով ստորացրել նրա պատիվն ու արժանապատվությունը:

13. Հոկտեմբերի 17-ին ՀՀ զինված ուժերի գործամասերից մեկում ժամկետային զինծա-ռայողների միջև ոչ կանոնադրային հարաբերությունների դրսևորմամբ հերթական միջադեպն է արձանագրվել²²⁸: Յոթ սերժանտներ դաժան ծեծի են ենթարկել իրենց ծառայակից ընկերոջը, տեղացել սեռական բնույթի հայիոյանքներ: Տուժողը մարմ-նական տարբեր վնասվածքներ է ստացել, կոտրել են նրա քիթը: Նրանց ծեծկոտուքը

²²⁶ www.1in.am/arm/a_a_37523.html
²²⁷ http://www.1in.am/arm/armenia_right_37523.html
²²⁸ http://news.armeniatv.com/2011/10/%D5%B5%D5%B8%D5%A9-%D5%BD%D5%A5%D6%80%D5%AA%D5%A1%D5%B6%D5%BF%D5%B6%D5%A5%D6%80-%D5%AE%D5%A5%D5%AE%D5%A5%D5%AC-%D5%A5%D5%B6-%D5%AB%D6%80%D5%A5%D5%B6%D6%81-%D5%AE%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B5%D5%A1%D5%AF/

սկսել է կատակից, վերածվել հայիոյանքների, այնուհետև՝ ծեծի:

14. 2011 թ-ի հոկտեմբերին Արարատի մարզի N գորամասերից մեկում ժամկետային զին-
ծառայողների միջև վիճաբանություն է տեղի ունեցել: Հետևանքը եղել է այն, որ ժամ-
կետային զինծառայողներից մեկը դանակահարել է ծառայակցին, որին տեղափոխել
են տվյալ գորամասի բուժկետ²²⁹:

ՀՀ ՊՆ քննչական ծառայության լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժ-
նի ղեկավար Մերի Սարգսյանը տեղեկացրել է, որ զինծառայողներ Հայկ Գարեգինյա-
նի և Գարեգին Լալայանի միջև վիճաբանություն է ծագել, որի ընթացքում Լալայանն
իր մոտ եղած սվին-դանակով հարվածել է Գարեգինյանի մեջքին՝ պատճառելով չթա-
փանցող մարմնական վնասվածքներ:

15. Հոկտեմբերի 9-ին Henaran.am-ի թղթակցին են զանգահարել «Եղևիկներ» գորամա-
սում ծառայող զինվորներից մեկի հարազատները և հայտնել, որ երեք օր առաջ «Եղ-
ևիկներ» գորամասում հերթական բռնությունն է կատարվել զինծառայողի նկատ-
մամբ²³⁰:

Արթիկից զորակոչված ժամկետային զինծառայողին/նրա զինակիցները ծեծել են,
ծխախոտ հանգրել մարմնին: Ենթադրվում է, որ զինվորի նկատմամբ նաև սեռական
անառակաբարո գործողություններ են կատարել:

Զինվորը տեղափոխվել է Երևանի զինվորական հոսպիտալներից մեկը: Henaran.am-ի
ունեցած տեղեկություններով, զինվորը հոկտեմբերի 9-ին է կոմայից դուրս եկել:

ՀՀ ՊՆ քննչական ծառայության 3-րդ կայազորային քննչական բաժնում քրեական
գործ է հարուցվել ՀՀ քր. օր 359-րդ հոդվածի 1-ին մասով /զինծառայողների փոխհա-
րաբերությունների կանոնադրության կանոնները խախտելը, նրանց միջև ստորադա-
սության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի
պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով
կամ անձի պատվին հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով:

Ժամկետային զինծառայող, շարքային Ժորա Մկրտիչի Մկրտչյանին սուր փսիխոզ
ախտորոշմամբ Երևանի կայազորի զինվորական հոսպիտալի հոգեբուժական բա-
ժանմունք տեղափոխելու փաստի առթիվ հարուցված քրեական գործով հոկտեմբերի
21-ին որպես կասկածյալներ ձերբակալվել են նաև նույն գորամասի ժամկետային
զինծառայողներ սերժանտ Վաչիկ Գաբրիելի Գրիգորյանը ՀՀ քրեական օրենսգրքի
360 հոդվածի 2-րդ մասով (զինծառայողին վիրավորանք հասցնելը, որը կատարվել է
ստորադրյալի կողմից պետի, ինչպես նաև պետի կողմից ստորադրյալի նկատմամբ
զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ) և
շարքային Մովսես Աշոտի Բաղայանը ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին
մասով (զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրության կանոնները
խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության
դեպքում, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորաց-
նելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնու-
թյուն գործադրելով): Քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

²²⁹ http://www.1in.am/arm/press_parmenia_40133.html

²³⁰ <http://henaran.am/?p=42140Henaran.am-%D5%AB>

<http://henaran.am/?p=42183>

http://www.1in.am/arm/armenia_society_36883.html

<http://www.azatutyun.am/content/article/24356597.html>

<http://www.azatutyun.am/content/article/24357258.html>

<http://www.hraparak.am/2011/10/12/noric-exnikner/>

http://www.1in.am/arm/armenia_society_37478.html

**2010-2011 ԹԹ.
ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ**

2010 թ-ի կոռուպցիոն դեպքերը ՀՀ զինված ուժերում

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների, ինչպես նաև ՀԲԱ Վանաձորի գրասենյակի կողմից ձեռքբերված տեղեկատվության միջոցով:

1. 2010 թվականի սեպտեմբերի 10-ին «Ժամանակ» օրաթերթում տպագրվեց Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության համատեղ ռազմական միավորման գեներալ Միքայել Գրիգորյանի գրությունը ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին, որտեղ Մ. Գրիգորյանը խոսում է բանակում տիրող իրավիճակի մասին: Նա բանակը բնութագրում է այսպես. «Բանակը բարդակ է, չկա հայրենիք, պատիվ հասկացություն, գողանում են ամեն ինչ, և դա պետք է կանխել: Գողությունները, կաշառքները, յուրացումները համատարած բնույթ են կրում: Կրոսեր հրամանատարները չունեն որևէ սոցիալական ապահովության երաշխիք, բնակարանային պայմանների բարելավում չկա, և այս խնդիրները պատճառ են դառնում, որ գողություններ կատարվեն զորամասերից: Խաբեությունը, ստախոսությունն այնքան են արմատավորվել, որ մարդիկ, ովքեր ուզում են դրա դեմն անել, կյանքի անվտանգության երաշխիքներ չունեն»:

Նամակում անդրադարձ է արվում նաև ՀՀ պաշտպանության նախարարության ուղեգրով հանգստացող կրոսեր հրամանատարական անձնակազմի մասին, մասնավորապես, ովքեր են օգտվել այդ ուղեգրերից և քանի հոգի են այդ ուղեգրով հանգստացել: Այստեղ հարց է ծագում, թե, օրինակ, ում հաշվին է ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Յուրի Խաչատուրովը գնացել Իտալիա՝ հանգստանալու, կամ մեկ այլ գեներալը՝ Կիպրոս: Եվ ստացվում է, որ Պաշտպանության նախարարության սոցիալական ապահովության համակարգի կոռուպցիան կենտրոնացած է մի քանի բարձրաստիճան անձանց ձեռքում:

2. 2010 թվականի սեպտեմբերի 18-ին «Հրապարակ» օրաթերթի ինտերնետային կայքում հայտնվեց հոդված, որտեղ նախկին ժամկետային զինծառայողը (Նրա անունը անվտանգության նկատառումներից ելնելով չի հրապարակվել) պատմում է, թե Արարատ քաղաքում գտնվող Վազգեն Սարգսյանի անունը կրող զորամասում ինչպիսի անօրինություններ են տեղի ունեցել գնդի հրամանատար Վարդան Մարտիրոսյանի գլխավորությամբ: Նախկին զինծառայողի խոսքերով՝ իր ծառայության ընթացքում հրամանատար Մարտիրոսյանը, նկատելով զինծառայողներից մեկի կողմից ոգելից խմիչքի օգտագործումը, փոխանակ ենթարկելու նրան համապատասխան տույժի, իր մոտ է կանչում զինվորին և սկսում երկկամներին ու մեջքին ոտքով խփել, հրամայել, որպեսզի համբուրի իր կոշիկները: Վերջինս հրաժարվում է համբուրել հրամանատարի կոշիկները, և Մարտիրոսյանը, զինվորի գլուխը գետնին դնելով, սկսում է կրունկով ուժեղ հարվածել նրա գլխին, որի հետևանքով զինվորի դեմքին հաջորդ օրը նկատվում են հրամանատարի կոշիկների հետքերը, և նա նույնիսկ մի շաբաթ չէր էլ կարողանում ուղիղ կանգնել և ինքնուրույն հագնվել:

«Զինվորները Վ. Մարտիրոսյանի կողմից մշտապես ենթարկվել են դաժան ծեծի, և

հատկանշական է, որ Մարտիրոսյանը միշտ խփում էր զինվորների երիկամներին ու մեջքին, որպեսզի կապտուկները չերևան²³¹:

Ըստ ոչ պաշտոնական աղբյուրների՝ Վ. Մարտիրոսյանին հովանավորում է զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ Յուրի Խաչատուրովի որդին՝ Գրիշա Խաչատուրովը, որը նախկինում եղել է վերոնշյալ զորամասի գնդի հրամանատար, իսկ ներկայումս 4-րդ բանակային կորպուսի հրամանատարի տեղակալն է²³²:

Նույն զորամասի գնդի հրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ, փոխգնդապետ Արթուր Կարապետյանի նկատմամբ նույնպես մեղադրանք է առաջադրվել պայմանագրային զինծառայողներից գումարներ շորթելու մեջ, և որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը: Կարապետյանը զինծառայողներից շորթել է մոտ 1 միլիոն դրամ՝ հրամանատարի համար համակարգիչ գնելու համար²³³:

Դատարանի որոշմամբ 2010 թվականի հոկտեմբերի 29-ին գրավի դիմաց ազատ արձակվեց Վ. Մարտիրոսյանը, իսկ ավելի վաղ Ա. Կարապետյանը²³⁴: Վարդան Մարտիրոսյանն ազատ է արձակվել 1 միլիոն դրամ գրավի դիմաց, իսկ Արթուր Կարապետյանը՝ 820 հազար դրամի²³⁵:

2010 թվականի նոյեմբերի 6-ին ՀՀ գլխավոր դատախազությունը վերաքննիչ բողոք է ներկայացրել Արարատի մարզի Վազգեն Սարգսյանի անվան զորամասի գումարտակի Ռոժ մականունով հրամանատար Վարդան Մարտիրոսյանին գրավի դիմաց ազատ արձակելու մասին դատարանի որոշման դեմ:

Տեղեկություններ կան այն մասին, որ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն անձամբ է հանդիպել գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին և հավաստիացումներ ստացել դատարանի հիշյալ որոշումը բողոքարկելու մասին²³⁶:

3. 2010 թվականի հոկտեմբերի 13-ին «Ժամանակ» օրաթերթում տպագրվեց հոդված այն մասին, որ ՀՀ պաշտպանության նախարարությանը պատկանող ուղղաթիռների և ինքնաթիռների վարժանքների համար նախատեսված վառելիքը բախշվում է Երևանի բենզալցակայաններում:

ՀՀ պաշտպանության նախարարության ուղղաթիռները և ինքնաթիռները շաբաթական երկու անգամ վարժանքներ են իրականացնում «Էրեբունի» ռազմական օդանավակայանից: Սակայն, ըստ որոշ աղբյուրների, դրանք ձևական բնույթ են կրում, քանի որ հաստատված կոնկրետ ժամանակի փոխարեն, նրանք մի քանի պտույտ են անում օդում խնայելով մեծ քանակությամբ վառելիք: Խնայված վառելիքը նրանք էժան գնելով վաճառում են բենզալցակայանների սեփականատերերին: Սակայն խնայված վառելիքը, ՊՆ-ում փաստաթղթերով չի ձևակերպվում, քանի որ, ըստ փաստաթղթերի, ինքնաթիռները և ուղղաթիռները օդում անցկացնում են այնքան ժամանակ, որքան նախատեսված է²³⁷:

4. 2010 թվականի սեպտեմբերի 16-ին «Ժամանակ» օրաթերթում տպագրվել է հոդված Իջևան-Ղազախ սահմանագծի վրա գտնվող Զոդագի արհեստական ջրամբարի պոմպերի և խողովակների անհետացման մասին: Տասը տոննայից ավելի կշռող պոմ-

²³¹ <http://www.hraparak.am/2010/09/18/nranc-tikunqum-xachaturovi-vordine/>, <http://www.lragir.am/armsrc/right-lrahos39645.html>

²³² <http://www.hraparak.am/2010/10/14/kdaten-xachaturovi-hovanavoryalin/>

²³³ <http://www.azatutyun.am/content/article/2198208.html>

²³⁴ <http://www.tert.am/am/news/2010/10/30/hraparak/>

²³⁵ <http://www.azatutyun.am/content/article/2207586.html>

²³⁶ <http://www.lragir.am/armsrc/right40522.html>

²³⁷ «Ժամանակ» օրաթերթ, հոկտեմբերի 13, 2010 թ.

պերը և խողովակները սկսել են անհետանալ դեռևս 2009 թվականի տարեվերջին և շարունակվել է 2010 թվականի ընթացքում: Խողովակների և պոմպերի գինը հասնում է մոտ 2, 5 մլն դոլար:

Հետաքրքիր է, թե կրակային գծի տակ ինչպես են անհետացել այդքան տոննանոց պոմպերը ու խողովակները, ում պատասխանատվության տակ է գտնվել, և ովքեր են մասնակցել դրանց անհետացմանը²³⁸:

Ի դեպ, լրատվամիջոցով տարածված տեղեկության վերբերյալ ՀԲԱ Վանաձորի գրասենյակի բազմաթիվ հարցումներին ի պատասխան, ՀՀ զինվորական դատախազության Լոռու կայազորի զինվորական դատախազությունից հայտնել են, որ հարուցված քրեական գործով հիմնավորվել է, որ հափշտակությունը կատարվել է ադրբեջանական զինծառայողների կողմից տարածքի հսկողության ժամանակահատվածում գործով չչարզված անձանց կողմից, իսկ ադրբեջանական տարածքում քննություն կատարելը անհնար է, ուստի գործում է նախաքննությանը խոչընդոտող անհաղթահարելի ուժ:

5. 2010 թվականի սեպտեմբերի 17-ին «Ժամանակ» օրաթերթում տպագրվել է հոդված այն մասին, որ Վանաձոր քաղաքում գտնվող բանակային 3-րդ կորպուսի երկհարկանի շենքը ՀՀ պաշտպանության նախարարությունը վաճառել է բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Լյովա Երանոսյանին և Վանաձորի բնակիչ «Սեզամի» Արմենին²³⁹:
6. Վանաձորից Դիլիջան գնացող ճանապարհի սկզբնամասի տարածքը մի քանի տարի առաջ, չնչին գնեցող սեփականաշնորհել են Դուցի հրամանատար Հակոբ Հարությունյանն ու այն ժամանակվա բանակային երրորդ կորպուսի հրամանատար Արշալույս Փայտյանը: Սակայն հետո այդ տարածքը նորից վաճառվել է պաշտպանության նախարարությանը²⁴⁰:

2011 թ-ի կոռուպցիոն դեպքերը ՀՀ զինված ուժերում

1. Լրատվամիջոցների տեղեկություններով, ՀՀ ԱԺ ՀՅԴ խմբակցության անդամ, պաշտպանության նախարարի նախկին տեղակալ Արթուր Աղաբեկյանը ՀՀ կրթության նախարար Արմեն Աշոտյանին խնդրել է լուծել իր որդուն ժամկետային զինծառայությունից տարկետում տրամադրելու հարցը: «Աշոտյանի առաջարկությամբ ՀՀ կառավարության նիստի օրակարգում ընդգրկվել է Արթուր Աղաբեկյանի որդուն՝ 1992-ին ծնված Մխիթար Աղաբեկյանին մինչև 2012-ի գարնանային զորակոչը պարտադիր զինծառայությունից տարկետում տալու հարցը: Աղաբեկյան կրտսերը 2009-ին ընդունվել է Կանադայի Սենեկայի կիրառական արվեստների ու տեխնոլոգիաների քոլեջ: ՀՀ օրենսդրությամբ՝ տարկետումը տրամադրվում է արտասահմանյան հեղինակավոր բուհերի ուսանողներին, բայց կասկած չկա, որ այս դեպքում բացառություն կարվի: Աղաբեկյան ավագը չի ուզում որդին ծառայի, քանի որ բոլորից լավ գիտի բանակում արտամացած հոռի բարքերը», - գրում է թերթը²⁴¹:
2. Հայաստանյան ուժային կառույցների ձգտումները դեպի եվրոպական ստանդարտներ օր օրի նոր արտահայտություններ են ստանում: Օրինակ՝ ոստիկանությունը զգեստա-

²³⁸ «Ժամանակ» օրաթերթ, հոկտեմբերի 16, 2010 թ.
²³⁹ «Ժամանակ» օրաթերթ, հոկտեմբերի 17, 2010 թ.
²⁴⁰ <http://www.zhamanak.com/news/12046/>
²⁴¹ <http://www.news.am/arm/news/47409.html>
<http://www.news.am/arm/news/47900.html>

փոխության ճանապարհով է ջանում էվոյուցիայի ենթարկվել, բանակն էլ՝ սննդակարգով, ընդ որում՝ թունաքիմիկատներով հարուստ:

Աշխարհը կարտոֆիլի մատակարարման համար հայտարարված մրցույթում ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը հրաժարվել էր 140 դրամ վճարել 1 կիլոգրամ կարտոֆիլի համար, որից հետո մատակարարման իրավունքը տրվել էր մի կազմակերպության, որը թարմ բանջարեղենի փոխարեն ստանձնել է կարտոֆիլի փոշու մատակարարումը՝ 300 դրամով: Փոշու «բարաքյաթն» այնքան մեծ է թվացել, որ մոռացել է տվել առողջական հետևանքների մասին:

Այնուհետև կարտոֆիլի փոշու պատճառով զինվորների մոտ ալերգիա է սկսվել: Այս դժգոհությունները լրատվամիջոցներին փոխանցել են զինծառայողների ծնողները, ովքեր մտահոգված են իրենց որդիների առողջությամբ: Թե ինչու են հարմար գտել թարմ բանջարեղենի փոխարեն փոշով կերակրել զինվորին, լրատվամիջոցը փորձել է պարզել պաշտպանության նախարարությունից հետևյալ բովանդակությամբ. «ՀՀ զինված ուժերի զորամասերում զինծառայողներին տրվող ճաշատեսակների մեջ օգտագործվում է կարտոֆիլ և կարտոֆիլի փոշի: 1-ին ճաշատեսակի պատրաստման ժամանակ օգտագործվում է կարտոֆիլ, իսկ 2-րդ ճաշատեսակի պատրաստման ժամանակ՝ կարտոֆիլի փոշի: Կարտոֆիլի փոշու օգտագործումը տարածված է աշխարհի զարգացած պետությունների բանակներում: Զինված ուժերի խոհարարական դպրոցի շրջանավարտ խոհարարները կարտոֆիլի փոշուց պատրաստում են կոմբինացված և համեղ ճաշատեսակներ»:

Ըստ լրատվամիջոցի տեղեկությունների, ապրիլից սկսած՝ բանակում ձու գոյություն չունի, պակասը կոմպենսացնում են խտացրած կաթով: Ըստ տեղեկությունների՝ եթե նախկինում ձվի առկայության դեպքում մեկ զինվորին մոտ 25 գրամ խտացրած կաթ էր հասնում, ապա հիմա՝ կրկնակի են տալիս:

Այսպիսով, փորձում են պահպանել սնվելու բարձր կալորիականությունը: Իհարկե, ձվի դեֆիցիտի պատճառների մասին ՊՆ-ից հստակ ոչինչ չեն ասել և տվել են լրագրված պատասխան. «Զինծառայողներին տրվող ճաշացանկում առկա է ինչպես ձու, այնպես էլ խտացրած կաթ: Կառավարության 2007թ. 349 որոշմամբ սահմանված են զինծառայողների սննդի օրական չափաքանակները: Ըստ սահմանված չափաքանակի՝ զինծառայողին տրվում է ձու շաբաթական 4 հատ: Ելնելով անհրաժեշտությունից՝ կարող է կատարվել ճաշատեսակների փոփոխություն՝ պահպանելով կառավարության նույն որոշմամբ սահմանված սննդամթերքի փոխարինման նորմաները և կալորիականության համապատասխան չափաբաժինը: Եղել են դեպքեր, երբ ձվի փոխարեն տրվել է այլ սննդամթերք կամ հավելյալ խտացրած կաթ»: Իսկ բանակի ձվագրկման պատճառների մասին ոչ մի խոսք չի ասվել²⁴²:

3. Ռազմական ոստիկանության վարչության Սևանի կայազորի պետի տեղակալ Գևորգ Մոնջյանի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ կաշառք ստանալու մեղադրանքով: Ոստիկանության քրեական հետախուզության վարչության և պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության համատեղ գործողությունների արդյունքում ձերբակալված Գևորգ Մոնջյանը մեղադրվում է նորակոչիկից 1500 դոլար կաշառք վերցնելու մեջ:

Ըստ ՊՆ ներկայացուցչի՝ Կարապետյանի նախնական տվյալներով՝ պաշտոնյայի ձեռքում գումար չեն հայտնաբերել: Նրան ձերբակալել են կաշառք վերցնելու կասկա-

²⁴² <http://www.hraparak.am/2011/04/29/banak-2/>

ծանրի հիման վրա²⁴³:

4. «Չորրորդ ինքնիշխանություն» թերթին հասած լուրերի համաձայն՝ զորամասային օղակներում շատ հաճախ կարելի է հայտնաբերել այնպիսի դեղորայք, որը նախատեսված է հոսպիտալներում բուժման ենթակա պաթոլոգիաների համար, և որոնք, բնականաբար, չեն օգտագործվում զորամասի բուժկետի բժիշկների կողմից: Բուժկետներում, մասնավորապես, կարելի է գտնել սիրտ-անոթային (արյան ճնշումը, սրտի ռիթմերը կարգավորող դեղորայք), լյարդի հիվանդությունների (օրինակ, էսենցիալ ֆորտե) համար նախատեսված դեղորայք, ինչպես նաև թանկարժեք հակաբիոտիկներ (Ամոքսիկլավ): Թե զորամասային օղակում, որտեղ անհնարին է մասնագիտացված բուժօգնության ցուցաբերումը և առկա չեն անհրաժեշտ սարքավորումներ, ինչո՞ւ է հայտնվում նմանատիպ դեղորայք, հայտնի չէ: Նմանատիպ դեղորայքը, չօգտագործվելով զորամասի բուժկետում, վերջիվերջո սպառում է իր պիտանելիության ժամկետն ու հայտնվում աղբամանում: Կա, սակայն, նաև երկրորդ տարբերակը, որը ևս լայնորեն կիրառվում է: Բանն այն է, որ բուժկետերի վրա դուրս գրված այդ դեղորայքը դուրս է բերվում զորամասերից և հայտնվում է քաղաքացիական դեղատներում՝ վաճառքի: Շահույթը՝ ինքներդ դատեք, թե ում գրպանն է գնում: Ստացվում է այնպես, որ պետբյուջեի միջոցներով գնված դեղորայքը, որը նախատեսված է զինծառայողների համար, սակայն վերը բերված պատճառով չի օգտագործվում, հանվում է կրկնակի՝ «լևի» վաճառքի²⁴⁴:

Ջորամասի բուժկետերից դուրս են բերվում, օրինակ, հետևյալ դեղերը՝ «Ամոքսիկլավ», «Էնապ H», «Էսենցիալ ֆորտե»: Այս դեղերը քաղաքացիական դեղատներում վաճառվում են հետևյալ գներով՝ «Ամոքսիկլավ»՝ 1,2 գր 9000 դր (5 սրվակ), «Էնապ H»՝ 1750 դր (2 հաբ), «Էսենցիալ ֆորտե»՝ 2400 (30 հաբ)²⁴⁵:

5. Հայաստանի պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանությունը ձերբակալել է զինված ուժերի փոխգնդապետի կաշառք վերցնելու կասկածանքով: Հայաստանի պաշտպանության նախարարի մամուլի քարտուղարը NEWS.am-ի թղթակցի հետ զրուցյում հաստատել է տեղեկությունը՝ նշելով, որ փոխգնդապետին ձերբակալել են ժամկետային զինծառայողի ծնողներից գումար պահանջելու համար: Նա խոստացել էր զինվորին ուսումնական զորամասից ավելի լավ զորամաս տեղափոխել²⁴⁶:

6. Ըստ դատախազության հասարակայնության հետ կապերի բաժնի տեղեկության՝ ՀՀ գլխավոր դատախազի որոշմամբ հարուցվել է քրեական գործ՝ պաշտոնատար անձի կողմից առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու, պաշտոնեական դիրքն օգտագործելու միջոցով կաշառքի միջնորդություն կատարելու դեպքի առթիվ: Քրեական գործի հարուցման հիմք է հանդիսացել թիվ N զորամասի դասակի հրամանատարի ներկայացրած հաղորդումը, ըստ որի թիվ N զորամասի զինծառայողին սպանելու և ծառայության կանոնները խախտելու մեջ մեղադրվող մեկ այլ զինծառայողի նկատմամբ համեմատաբար մեղմ՝ 8 տարի 6 ամիս ժամկետով պատիժ սահմանելու և հետագայում պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու համար մեղադրյալների հարազատներից ստացել է 7.500 ԱՄՆ դոլար, որից 7.000 դոլարը փոխանցել է կայազորի զինվորական դատախազության դատախազին: Ըստ

²⁴³ <http://www.azatutyun.am/content/article/24307614.html>
²⁴⁴ <http://www.chi.am/index.cfm?objectid=A2C55DC0-EAA2-11E0-B38CF6327207157C>
²⁴⁵ <http://www.chi.am/index.cfm?objectid=4E6E3550-EB63-11E0-B38CF6327207157C>
<http://www.chi.am/index.cfm?objectid=7DEEB220-F1D8-11E0-B38CF6327207157C>
²⁴⁶ <http://news.am/arm/news/81216.html>

հաղորդման՝ վերջինս, համապատասխան պայմանավորվածություններ ձեռք բերելով առանձին պաշտոնատար անձանց հետ, որպես միջնորդ հանդես գալով, գումարը փոխանցել է նրանց²⁴⁷:

7. ՀՀ քրեական օրենսգրքի 311 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործության կասկածանքով (քաղաքացուց 2000 ԱՄՆ դոլլար կաշառք վերցնել) հոկտեմբերի 17-ին ձերբակալվել է ՀՀ ՊՆ Երևանի կայազորի զինվորական հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի պետ, բժշկական ծառայության մայրո Վաղինակ Հովհաննիսյանը²⁴⁸:
8. Շիրակի մարզի Ազատան գյուղի բնակիչները ստորագրահավաք են սկսել և դիմում են պատրաստում ուղղված ՀՀ պաշտպանության նախարարություն, որը գյուղացիներից դեռևս 2 տարի առաջ գնած կարտոֆիլի դիմաց վճարումները չի կատարել: Կարտոֆիլը վաճառվել է մեկ կգ-ն ընդամենը 30 դրամով և ազատացիները դեռ 3 միլիոն դրամ գումար ունեն ստանալու: Պաշտպանության նախարարությունը կարտոֆիլ գնել է միջնորդների միջոցով: Նախարարությունից ասում են, որ իրենք ամբողջությամբ վճարել են, այնինչ միջնորդ կողմն ասում է. «Չեն վճարել. Երբ վճարեն, իրենք կբերեն ազատացիների փողը»: «Պաշտպանության նախարարությունից խոստացել են, որ անպայման կստանանք մեր գումարները: Այս ամենից տեղյակ են նաև Սեյրան Օհանյանն ու Արմեն Գևորգյանը», - ասել է Ազատանի գյուղապետ Վարդան Իկիլիկյանը²⁴⁹:
9. «Չորրորդ ինքնիշխանություն» թերթը գրում է, որ իր սեպտեմբերի 13-ի «Պաշտպանության նախարարությունը Դոմբասից քարածուխ է բերել Հայաստան. Հարուցվել է քրեական գործ» վերնագրով մի հրապարակմամբ էր հանդես եկել՝ հրապարակային 6 հարց ուղղելով պատասխանատուներին: «Հարցերն ուղղել էինք, որպեսզի դրանց պատասխանները ստանալուց հետո հանդես գանք առավել ընդգրկուն հրապարակմամբ: Պատասխանները չստացանք: Փոխարենը հրապարակման հեղինակը ծանուցագիր ստացավ, որով հրավիրվում էր ՀՀ ՊՆ քննչական ծառայություն՝ թիվ 90154311 քրեական գործով՝ որպես վկա ցուցմունք տալու: Ի դեպ, այդ գործով արդեն մեկ անձ ձերբակալվել է: Վերջինս ՀՀ պաշտպանության նախարարության բաժնի պետերից մեկն է, ում հետ կապվում է չարաշահումների թեման», - գրում է «Չորրորդ ինքնիշխանությունը»²⁵⁰:

²⁴⁷ <http://www.hra.am/am/events/2011/10/19/bribe>

²⁴⁸ http://www.1in.am/arm/armenia_society_38002.html
<http://news.am/arm/news/80013.html>

²⁴⁹ <http://news.am/arm/news/47661.html>

²⁵⁰ <http://news.am/arm/news/76042.html>